391.99սկ.

Բարձր

7 – 8 / 92

(1936-1937-1938, «Օրագիր», էջ 138)

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.– ★ ★ ★ ..... Բարի վերադարձ ու բարի ընթերցում

3.– Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ ..... Տեսդեր

44.– ԿԱՐԷՆ ..... Խորհրդանկար

45.– Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ ..... Առաձգական

48.– Յ. ԱՂԱՋԱՆԵԱՆ ..... Խղճի խայթ

69.– ՎԱՐԱՆԴ ..... Անկիւններ

71.– ★ ★ ★ ..... Մերժուած գործեր

72.– Ռ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ..... Մեր գրականութեան
եւ գրական լեզուի ապագայ ուղին

88.– ՄԱՐՈՒՇ ..... Անգլիական արդի բանաստեղծութիւնը

111.– ★ ★ ★ ..... Վերապահութեան օրէնքով

112.– ՍՏ. ՎԱՐԴԱՆԵԱՆ ..... Համաստեղ. Խտեւում մնացած
սխալ նամբաներ

118.– XX ..... «Այդ խլուրդին հետ»...

120.– XX ..... Վերստին յաւելուած

121.– ՀԱՄԱՍՏԵՂ ..... Նամակ՝ Գուրգէն Մահարիին

123.– ★ ★ ★ ..... Համակրելին ու... խլուրդը

125.– ★ ★ ★ ..... Նոր հրատարակութիւններ

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԱ. ՏԱՐԻ 7-8 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 1992 ՊԷՅՐՈՒԹ

ԲԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ ՈՒ ԲԱՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Անցեալ տարի, հայրենի գրող ու մտաւորական շրջանակի մը հետ տեղի ունեցած մտերիմ զրոյցի մը ընթացքին, խօսք բացուեցաւ նաեւ վաթսունական թուականներու սկիզբը «Տօնիկեան» հրատարակչատան կողմէ Հայաստանի պատկան մարմիններուն փոխանցուած Վազգէն Շուշանեանի ձեռագիրներուն մասին, եւ այն մասին, թէ արդեօք կարելի՞ է անձնական գործածութեան համար ունենալ անոնց կարգ մը էջերուն լուսապատճէնները։

Ներկաներէն մէկը, արտասահմանի ընթերցողին փիչ ծանօթ, այլ լայն պատրաստութեան տէր տեսաբան ու բնաղատ Եուրի Խաչատրեան, յայտնեց, որ իր կարծիքով անհնար չէ նման բաղձանքի մը զոհացում տալու գործը, եւ թէ՝ բանի մը օրէն ինք կրնայ առ այդ լուր մը հաղորդել։

Արդիւնքը դրական եղաւ եւ Եուրի Խաչատրեան ինք յանձն առաւ պատճէնահանման գործողութիւնը յաջողութեամբ պսակելու աշխատանքը, եւ կարճ ժամանակի մը մէջ մեր տրամադրութեան տակ դրուեցան ո՛չ միայն բանի մը էջերու, այլեւ՝ եօթը տարբեր գործերու լրիւ պատճէնները, աւելի բան հազար հինգ հարիւր էջ։

2000

digitised by A.R.A.R.@

Ուրեմն՝ քսան տարի Մխիթարեան հայրերու մօտ ի՞նչ թէ անտիպ մնալու սահմանուած եւ աւելի քան երեսուն տարիներ Հայաստանի մէջ չես գիտեր ինչո՛ւ անտիպ մնացած եղերաբախտ գրագէտին ձեռագիրներուն գրեթէ ամբողջութեան կրկնօրինակը այսօր կը գտնուի **«Բագին»**ի խմբագրութեան մօտ։

Դեռ մինչեւ այսօր յայտնի չէ, թէ Շուշանեանի ձեռագիրները որո՞ւ ձեռքով յանձնուեցան Մխիթարեան հայրերուն, Մխիթարեան հայրերէն ան ո՞վ էր, որ զանոնք յանձնեց «Տօնիկեան» հրատարակչատան եւ «Տօնիկեան» հրատարակչատան պատասխանատուները ի՞նչ նպատակով ու պայմաններով զանոնք յանձնեցին Ե. Չարենցի անուան տուն-թանգարանի տնօրէնութեան, երբ ամբողջութիւնը լոյս ընծայելու յանձնառութեամբ յաջողած էին ձեռք ձգել խնդրոյ առարկայ էջերը։ Շուշանեանի այս ձեռագիրներուն մասին բազմաթիւ անգամ խնդիր յարուցուեցաւ հայ մամուլին մէջ, տեղի ունեցան բուռն վէճեր, որոնց ամփոփումներէն մէկը տրուած է բազմաչարչար գրագէտին նուիրուած **«Բագին»**ի բացառիկին (1983, թիւ 1) մէջ։ Չենք կրկներ։

Հետագային կարդացինք մեզի տրամադրուած պատճէններուն ամբողջութիւնը եւ անոնց գոնէ մէկ մասը անձնական գործածութեան ծիրէն դուրս բերելու նախանձախնդրութեամբ նամակային կապեր հաստատեցինք Եուրի Խաչատրեանի հետ, իմանալու համար, թէ Ե. Չարենցի անուան տուն-թանգարանի վարչութիւնը ի՞նչ պայմանով թոյլատրած է պատճէնահանումը ձեռագիրներուն եւ հնարաւո՞ր է արդեօք զանոնք դարձնել հանրութեան սեփականութիւնը։

Ահա այդ հարցին վերաբերող խաչատրեանի պատասխանը.

«Կարծում եմ, ազատ էք դրանց հետ վարուելու խմբագրի ու հրատարակչի պէս։ Դրանց տպագրութիւնը արգելող ոչ մի օրէնք կամ արգելք, յամենայնդէպս, չկայ»։

Այս պայմաններուն մէջ, ընթերցողին առաջին հերթին կը յանձնենք պատճէնահանուած ձեռագիրներէն **«Տենդեր»**ը, որ վստահաբար պիտի ընկալուի սիրով ու կարդացուի այն հետաքրքրութեամբ, որ կարդացուեցան Շուշանեանի բոլոր գործերը, հերիւեր, յափշտակութեամբ։

Ուրեմն՝ բարի վերադարձ ձեռագիրներուն, ու բարի ընթերցում՝ Շուշանեանի գրականութեան երկրպագուներուն...

141-2001
20552-21Հ
digitised by A.R.A.R.@

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՏԵՆԴԵՐ

...Այս գիշեր, հաշուեյարդարի ենթարկեցինք մէկը, որ աւելի քան հինգ տարիէ ի վեր, կը զբաղէր ուշադրութեան անարժան բաներով։ Ատիկա ծնունդով կը պատկանէր մարդոց այն դասակարգին, որ անգութ հեգնութեամբ մը «մտաւորական» կը կոչեն։ Ան գնուած էր ու վատ։ Կը սիրէր զէշ հանոյքներն ու սատիկ ուրախութիւնները։ Կուսակից էր ձրի արարքներու ու անընդունակ էր որեւէ մեծ, գեղեցիկ ու հզօր ստեղծագործութեան։

I

✱ Երբ աշխատելու եւ պայքարելու ժամը հասած է, չյապաղի՛ այլուրեք յանցաւոր ու պղտոր հանոյքներու բով։ Ծուլութեան հետ մեղսակից չըլլալ բնաւ։ Սիրել արագութիւնը՝ մեղկութեան դէմ։ Նախընտրել տենդոտ, բուռն ու աշխոյժ գործը՝ յոյլ ու ապահով կեցուածքներէն, յոգնութիւնը՝ հանգիստէն ու պայքարը՝ խաղաղութենէն։ Մեր երիտասարդութեան ամբողջ անգրբութեամբը երթալ դէպքերուն վրայ եւ մարդոց։ Տիրել իրերուն։ Կռուի ջերմութեան ու սպասումին մէջ՝ խեղդել վշտի ու տկարութեան բոլո՛ր ձայները։

✱ Սէրը հիմական ու կարեւորութեան արժանի զբաղում մը չէ։ Սիրոյ նուիրուած ժամերը կորսուած են առյաւէտ, ստեղծագործութեան համար։ Երբեք չմոռնալ ասիկա ոեւէ աղջկան ներկայութեան։ Հպարտութիւնը, սիրոյ մէջ, համարել օրէնք ու սակաւապիտութիւնը՝ անհրաժեշտութիւն։ Քնքուշ դէմքի մը, մեր մատներով հպած ատեն, երբ մեր մարմնին տենդը կը բարձրանայ՝ մակընթացութեան մէջ եղող ծովի պէս, յիշե՛լ որ փխրուն ու ամէ՛ն օր փլող գեղեցկութիւններէն անդին, կան նուիրումներ,

digitised by A.R.A.R.@

որ այլապէս գեղեցիկ են ու ուրիշ գեղեցկութիւններ, որոնց դրժ-ւար է մերձենալ եւ որոնց խորհուրդին հաղորդուելու համար հարկ է տառապիլ։

Վայրկեան մը կանգ առաւ, կարծես թոյլ տալու համար, որ նախադասութիւնը կազմուի ու հագնի իր վերջնական տարազը։ Իր մտքերու ծփուն ու անորոշ յատակէն, բարձրանան բառեր՝ սահմանուած ու յստակ նշանակութեամբ։ Ջղուտ ու խիստ շարժումով մը, ուր կը յայտնուէր իր տենդահար ու յախուռն երիտասարդութիւնը, բակեց փողկապը, բացաւ շապիկը ու ակռաներով խածաւ գրիչը։ Ցետոյ մնաց մտամոլոր ու շփոթ՝ իր գրած վերջին պարբերութեան առջեւ։ Դուրսը աշնան թրջած ու գէջ իրիկուն մը՝ կը սողար պատերուն տակ։ Մութը տակաւ կը բարձրանար։ Միջոցին մէջ՝ տեղատարափի մը սպառնալիքը պահ առ պահ կը մեծնար։ Բնութիւնը կը տառապէր լիմման ցաւէ։ Եւ ծեր, բայց շատ ծեր կասկենի մը, իր դեղին տերեւներով կարծես կ'իյնար ներս, կիսաբաց պատուհանէն։

Ցանկարծ, ընդհանուր ու անծայր լռութեան դէմ, շատ անակնկալ ու զարտուղի երգ մը բարձրացաւ, լեցուց փողոցը ու մտաւ պատուհանէն ներս։ Ձայն խլեց իր աշխատանքի սեղանէն ու զարնուեցաւ երեսին։ Հնամենի ու աղկաղկ սիրոյ մեղեդի մըն էր ատիկա. թափառիկ ու մելամաղձիկ բան մը, երգուած ծեր դատարկապորտի մը մաշած, անօթութենէ տառապող ձայնով։ Այդ մեղեդին սակայն բնացած բան մը խախտեց իր հոգիին խորը, բան մը՝ որ ոչնչով յատակէն կը բարձրանայ մակերես, օրուան ամէն ժամուն եւ կը նեղէ երիտասարդ մը, աչքերուն առջեւ բանալով հեշտութեան մեծ նկարներ, բան մը՝ որ կը կոչուի.- Սիրոյ ծարաւ։

Անապարանքով վերադարձաւ սեղանին առջեւ ու բաց տետրակին լուսանցքին վրայ՝ աւելցուց հետեւեալը։

—Ուրիշ առթիւ վերադառնալ այս պարբերութեան։ Սիրոյ մասին կարելի չէ այս խստութեամբ խօսիլ։ Մնաց որ, ամէն պընդում ունի իր տկարութիւնը։ Զգուշանալ հապճեպ ու շատ բուռն պնդումներէ։ Երիտասարդութիւնը արդարացում չհամարել։ Կարեւորը բառերուն գեղեցկութիւնը չէ, այլ ճշմարտութեան թանկ բեկորները՝ զոր ժամանակի կարճ կտորի մը համար կը հագուեցնենք այդ նոյն բառերուն խուսափուկ գրաւչութեամբ։ Բառերուն ետին փնտռե՛լ մարդը, որ կը տառապի, կը հիննայ իր առօրեայ աշխատանքին վրայ եւ ընդունակ է մեծ բաներ ի կատար ածել։ Բառերուն ետին՝ փնտռե՛լ արեան տենդ, սրտի բաբախում եւ ստեղծագործ, անկորնչելի զգայնութիւն։

Ցետոյ, իր երիտասարդ ու խոշոր գլուխը հակած սեղանին վրայ, վերսկսաւ շարունակել, մինչ նոյն աղկաղկ ու թափառիկ

digitised by A.R.A.R.@

մեղեդին, այլեւս անօգուտ բանի մը պէս կը լուծուէր միջոցին մէջ ու մութը՝ խով ու մեծ ալիքներով կը թաւալէր գաւառական անդորր քաղաքին վրայ։

* Ո՛չ լռութիւնը ինքն իր մէջ առաքինութիւն է ու միշտ դրական, ոչ ալ խօսքը միշտ կենդանի գործ։ Պարագաներ կան, երբ լռութիւնը կը յայտնէ անկարեկիր քաջութիւն մը ու վայրկեաններ, երբ՝ անկեղծ ու արի խօսքը, ըսուած մեր ձայնին ամբողջ ջերմութեամբը, կը դառնայ ուժեղ միջամտութիւն ու զոհաբերութեան երաշխիք։ Կարեւորը, միշտ ընտրել կարենալն է՝ լռութեան ու խօսքի ժամը։ Այսուհանդերձ յիշե՛լ միշտ, որ լռութեամբ երբեք մեծ բաներ կարելի չէ կառուցանել։ Լռութիւնը, ընդհանրապէս, տեսակ մը կրաւորական կեցուածք է ու նաեւ անհրաժեշտ պաթաց՝ երբ խօսքը երկարատեւ երկունքով մը կը հասունցնայ, բայց երբեք ներգործական ու երիտասարդ կեանքի արտայայտութիւն։ Տեսակ մը ապաւէն նաեւ ու հանգիստ՝ երբ կեանքը շատ դժուար է ու խօսիլը՝ սպառման, անխուսափելի սպառման համազօր։

* Տենդահար ու ուժգին խանդավառութիւն մը, խանդավառութիւն մը՝ որ չի մաշիր, ահա՛ թէ ինչ պէտք է, որպէսզի մեր կեանքը չվերածուի սողուն, ծոյլ ու թշուառ բանի մը։ Ապրի՛լ ուժգնութեամբ այն բոլո՛ր ապառնի օրերը ու օրերուն հետ, երբեք չծերանալ, չհիանալ։ Ամէն առաւօտ արթննալ, կարծես թէ առաջին օրը ըլլար, զարնան առաջին ամսուն եւ ո՛չ վշտի, ոչ ալ ուրախութեան ժամուն չխանգարել ուրիշները։

* Զսնանի՛լ յիշատակներով։ Յիշատակներով՝ որ կա՛մ թունաւոր սնունդ են եւ կամ մեղկացուցիչ ու գարշ ըմպելի, ծխախոտի ծուխ ու կլկլակի ձայն։ Զսնանի՛լ նաեւ երազներով, լուսնահար տղոց պէս, հեռաւոր մարգագետիններու վրայ։ Նախընտրել կեանքի ամենատկար արտայայտութիւնը՝ լուսնի վրայ անցուած խնդրական խնոյքներէ։

Բազուկները խաչաձեւած՝ լայն ու յաղթական կուրծքի մը վրայ, միտքը՝ աշխոյժ ու զարթուն եւ նայուածքը սեւեռուն՝ ներքին դաշտանկարներու, պայքարի կարելիութիւններու ու ապառնի դէպքերու վրայ, վայրկեան մը կանգ առա կրկին, որովհետեւ կը զգար, որ բարդ ու դժուար աշխատանք մը կը կատարուի իր մտքին խորը, բեղուն գործողութիւն մը։ Դէմքին վրայ տաք ու անուշ տենդ մը կար ու ձեռքերը մեղմօրէն կը դողային, վասնզի իր արեան ամբողջ ջերմութեամբը ան կը զգար գրուած բաներուն ամբողջ պատասխանատուութիւնը։

* Ապրիլը նպատակ չէ, ոչ ալ մեր ուրախութիւնը՝ օրէնք։ Երջանկութեան որոնումը՝ զուր ու անպտուղ աշխատանք։ Պէ՛տք է ապրիլ մեծ իրագործումներու, գերագոյն զոհողութիւններու,

digitised by A.R.A.R.@

գօտեպինդ մարտնչումներու համար։ Պէ՛տք է անընդհատ որեւէ մեծ կատարումի մը նամբուն վրայ ըլլալ։

* Աշխատի՞լ։ Շռայլութեամբ տա՛լ, նուիրե՛լ կտոր-կտոր այս պզտիկ կեանքը։ Աշխատի՞լ տենդի եւ խանդավառութեան մէջ։ Մի՛շտ որեւէ անյագ տենդ կրել, այս սահմանափակ մարմնին մէջ եւ որեւէ ծարաւ, դժուարահաճ ու մեծ ծարաւ, որ կարելի չէ լրիւ գոհացնել։ Երբեք աւարտումի մէջ չըլլալ, երբեք չվերջանալ որեւէ տեղ, հոս կամ անդին, այլ անընդհատ աճումի եւ ընթացքի մէջ ըլլալ։

* Ցած չխօսիլ, կիսով չարտասանել բառերը, ըսել ուժգնութեամբ ամէ՛ն բան։ Կէս-խօսքերը, կէս-գայրոյթները, յուզումի կիսերանգները լաւ են քաղքենիներու համար։ Կարենալ պնդե՛լ, երբ գիտենք, որ իրաւունք ունինք։ Վստահութեամբ մեր կոպիտ խօսքը նետել վէճի նժարին մէջ։ Ըլլա՛լ ուղղակի, հատուածական, կէս-լուծումներու, իրաւախոհութեանց, փոխադարձ զիջումներու անզիջող հակառակորդ։ Զօրութեամբ կոուիլ ու լրիւ ըմբռնել պայքարին գեղեցկութիւնը։ Բոլո՛ր ծոյլ խաղաղութիւններուն դիմաց՝ ըլլա՛լ ուխտուած ու քաջ զինուոր։ Յաղթանակե՛լ։

* Չխորշիլ ապքատութենէն (ասիկա խիստ կարեւոր է), ընտելանալ բոլո՛ր զրկումներուն, կարենա՞լ հրաժարիլ կարգ մը իրաւունքներէ, վայելքներէ ու դիւրին ուրախութիւններէ ու ընդունի՛լ բազմաթիւ կարգապահութիւններ։ Կարենա՞լ ծառայել ու սորվիլ ծառայութեան յուզիչ գեղեցկութիւնը։ Փոքրիկ զոհաբերութիւններէն անընդհատ բարձրանալ մեծ նուիրումներու։ Ըլլալ մարդ մը վերջապէս, որ մակընթացութեան մէջ է։ Ըլլալ անընդհատ զօրեղ ձեռքի մը պէս կարկառուն՝ դէպի ապքատութիւնը, տառապանքն ու մանկութիւնը։

* Տկար չըլլալ սակայն։ Գթութեամբ կամ բարեհաճութեամբ չխափանել ազնիւ անգթութեան յաղթական ընթացքը։ Ունենա՞լ երկու չափ եւ երկու կշիռ ու զօրաւորներու յանցանքներուն առջեւ երբեք չտկարանալ խոտելի գթութեամբ մը։ Սորվիլ ատելութեան եւ բռնութեան գեղեցկութիւնը ու երբեք չնմանիլ շրջանառութեան մէջ եղող այն տխուր մտաւորականներուն՝ որ ամէն վատութեան առջեւ որեւէ պատրաստ արդարացում ունին։

* Սիրե՞լ կոպիտ, մկանային, յաղթական աշխատանքը։ Անընդհատ յիշել, որ երկմիտ, վտանգաւոր, երկբայելի զէնքեր են գրիչն ու խօսքը։ Զանոնք գործածելու ատեն ըլլալ զգոյշ, խիստ, հաւատարիմ մեր ներշնչումներուն ու անողոքելի՝ մեր տկարութիւններուն հանդէպ։ Եթէ պատահի, որ մեր ձեռքերը հեռանան ստեղծագործ աշխատանքէ ընդմիշտ՝ ըլլան փափուկ ու սպիտակ, կարենալ արհամարհել զանոնք։ Յիշել, որ նման ձեռքերով է, որ ամենավատ արարքները կը կատարուին։

digitised by A.R.A.R.@

Ցետոյ՝ նո՛յն ջղուտ ու խիստ շարժումով, ուր կը յայտնուէր իր հոգիին ամբողջ տագնապը, տետրակը հրեց անդին, բարձրացաւ ու խոշորաձայն՝ սկսաւ ճեմել սենեակին մէկ ափէն միւսը։ Ցանկարծ անդրադարձաւ սակայն, որ ճեմել նման պահերու՝ խիստ պայմանադրական բան մըն է։ Շատ մը բաղրենի վէպերու մէջ, շատ մը երիտասարդ տղաք՝ այդպէս խոշոր գլուխ մը կ'առնեն իրենց ափերուն մէջ ու յետոյ կը ճեմեն։ Այս մտածումը բաւեց, որ ցուրտ զայրոյթով մը վերադառնայ սեղանին առջեւ ու էջը փակէ, դառն ու անգութ խօսքով մը։

* Այս բոլորը գեղեցիկ բառեր են միայն։ Նաեւ աւելորդ են ու կը մատնեն գէշ ծածկուած մանկութիւն մը։ Ըլլա՜ղ յեղափոխութեան պարզ շարքային մը ու չմեռնիլ հանգիստ մահիճի մէջ, թշուառ մանր-բաղրենիի մը նման, ահա՛ թէ ինչ...

☆ ☆ ☆

Խոնջ ու գրեթէ սպառած ներքին յարաճուն յուզումէ մը, կոթնեցաւ աթոռին ու ընկղմեցաւ կրկին իր մտքերուն խորը։ Ցաղթական ու երիտասարդ տղու իր խոշոր գլուխը ծռած էր լայն ու ամրակազմ ուսի մը վրայ, քիչ մը թողլքուն ու անփոյթ յոգնութեամբ մը։ Մազերը կը ծածկէին ճակտին մէկ մեծ մասը։ Փայլուն, քիչ մը բարձր ու ողորկ ճակատ մըն էր ատիկա, թեթեւրէն ցցուն՝ կարծես ապաստան տալու համար զոյգ մը մեծ, խիստ սեւ ու ցոլարձակ աչքերու՝ որ իրենց ջերմ լոյսով կ'ողողէին դէմքը ու զայն կ'ընծայէին եթէ ոչ գեղեցիկ, գէթ շողուն երիտասարդութեամբ ու անընդհատ պատրաստ կերպարանափոխումի՝ ներքին յուզումի մը ազդեցութեան տակ։

Բերանը քիչ մը մեծ էր ու քիչ մը շատ զգայուն, հաստ ու գրեթէ կարմիր շրթունքներով։ Գրեթէ հրէական բերան մըն էր ատիկա, միշտ քիչ մը տամուկ, պատրաստ սիրոյ եւ յուսահատութեան։ Եթէ լայն, կամակոր ու զօրեղ կզակը չըլլար եւ աչքերուն աղուոր ու գրեթէ բիրտ ցոլքը՝ ամբողջ դէմքը կրնար դիւրութեամբ պատկանիլ շատ զգայասէր մարդու մը։ Ինչպէս որ կար, երիտասարդ տղու այդ տենդահար դէմքը՝ քիչ մը թանձր էր ու շեշտուած գծերով։ Ու աւելի կրնար յարմարիլ յամառ աշխատանքի շնորհիւ յառաջացած ու կրթուած չորրորդ դասակարգի մարդու մը, քան թէ դառնացած ու մեղկ մտաւորականի։ Գծերը այսուհանդերձ կանոնաւոր էին, թէեւ ո՛չ նուրբ։

Ձեռքերը, որ դրած էր հիմա սեղանին վրայ՝ կը մատնէին իր հոգիին ամբողջ ծածուկ յուզումն ու անձկութիւնը։ Խոշոր, գրեթէ լայնշի ու զօրեղ ձեռքեր էին ատոնք, արտայայտիչ ձեռքեր, որ

digitised by A.R.A.R.@

կարծես թէ կրնան ինքնօրէն կեանքով ապրիլ, զայրանալ կամ յուսահատիլ։ Յայտնի էր սակայն, որ երբեք այդ ձեռքերը անոր ուշադրութեան չէին արժանացած։ Այլ ապրած էին գրեթէ լքումի մէջ, առանց մասնաւոր խնամքի։ Հիմա, գիշերամուտի այս ժամուն, անոնք յայտնի անձկութեամբ մը կը հանգչէին բաց տետրակին քով, մինչեւ որ նոյն ջղուտ ու խիստ շարժումով, ուր կը յայտնուէր անգամ մը եւս, ներքին մեծ տագնապի մը հետ ու մակընթաց տենդի մը քովն ի վեր՝ դրական, ճշգրիտ ու ամբողջական ըլլալու ստոյգ ցանկութիւն մը, կրկին լուսացքին վրայ, ան արագութեամբ նետեց հետեւեալ տողերը.

—Կարեւորը, ստոյգ է որ, ապրիլը չէ, ի՛նչ ձեւով ալ որ ըլլայ, այլ ուժգնութեամբ ապրիլը, ներքին յորդահոս, ատոք ու տենդահար կեանքով մը։ Տա՛լ առատաձեռնութեամբ ի՛նչ որ կարելի է տալ, բայց ունենալ չտրուելիք բաներ, ներքին հարստութիւն՝ որ կարելի չըլլայ մեզմէ խլել, հարստութիւն՝ որ չի բաշխուիր, որ կը մնայ անվթար ու ամբողջական բոլո՛ր վտանգներուն դիմաց։

Յետոյ բարձրացաւ ու ջղայնութիւնը կրկին գրաւեց զայն։ Փակեց պատուհանը բարձրացող գիշերուան դէմ ու կեցաւ ոտքի, սենեակին մէջտեղը։ Տեսակ մը լուրջ, տրտում ու նոյն ատեն երջանիկ բան կար իր ամբողջ անձին վրայ։ Ձեռքը դրած էր ճակտին՝ կեդրոնանալ ուզող ու իր տարտղնուած մտքերը գանազան անկիւններէ հաւաքող մէկուն պէս։ Բերանը անզգալիօրէն կը դողար, ամբողջ դէմքին տալով կանխահասօրէն մտորուն ու քիչ մը քէն ըրած տղու արտայայտութիւն։ Աչքերը կը ցոլային խռնաւ ու աղուոր պայծառութեամբ մը՝ կարծես թէ կեցած ըլլար գարնանային դաշտանկարի մը դիմաց, վաղ առաւօտեան ու սպասէր իր սիրեցեալ աղջկան, որ կ'ուշանար։

Մազերը թափած էին կրկին ճակտին վրայ, ջղայնութեամբ նետեց ետ ու անգամ մը եւս վերադարձաւ սեղանին առջեւ։ Վասընգի սիրտը գեղուն էր ու շրթներուն վրայ բառերը կարծես անհանգստութեամբ հերթի կը սպասէին։

* Ահա՛ երկարօրէն մտածելէ յետոյ այս պարբերութեան առջեւ, հոգիս մնաց երկմիտ։ Ո՛չ, կարելի չէ այսպէս հապճեպով, խստութեամբ ու նման բուռն բառերով խօսիլ սիրոյ մասին։ Ո՛չ, հպարտութիւնը կարելի չէ օրէնք համարել ու սակաւապիտութիւնը՝ անհրաժեշտութիւն։ Առանց սիրոյ՝ ես աշխարհը կը տեսնեմ զուրկ կենարար ափշէ եւ աւերակներու կոյտի մը պէս լքուն։ Իսկ հպարտութեան ու սակաւապիտութեան հետ ան մէկ յարկի տակ չի կրնար բնակիլ, որովհետեւ պահանջկոտ է բնաւորութեամբ ու ինքնաբաւ։

Ինչ որ պէտք է ըսել հետեւեալն է։ Սէրը պէտք չէ որ լեցնէ, գրաւէ ամբողջ կեանք մը, վերածէ զայն գաղութի։ Երբ աշխա-

digitised by A.R.A.R.@

տանիի կամ զոհաբերութեան ժամը հնչած է, պէտք չէ տկարութեամբ յապաղիլ ոեւէ աղջկան մօտ։ Գզուանիի ու հեշտութեան պահերուն՝ միշտ մնալ նո՛յն մարդը, իր նո՛յն ատելութիւններով ու խանդավառութիւններով։ Մեր զաղափարներէն կտոր մը, ծուէն մը իսկ չգիջիլ մեր սիրած էակին։ Յիշե՛լ, որ գիջիլ կը նշանակէ անձնատուր ըլլալ, մասամբ յանձնուիլ։ Ու ազատ տղայ մը եւ ազատ աղջիկ մը միայն կրնան իրար սիրել։ Միւս սէրը, որ զարշ հպատակութիւն է եւ անփառունակ գերութիւն՝ ձգել բաղբենիներուն ու աւշային տիկիններուն, որ ուրիշ զրաղում չունին արդէն։

Բարեկամուհի՛ս, երբ այս բոլորը, օր մը՝ ձայնիս ամբողջ տենդովը կ'ըսէի բեզի, մեղմ յուզումով մը, բու շատ սպիտակ ու փափուկ մատներովդ կը շտկէիր յորդառատ վարսերուդ հիւսը ու բիբերուդ խորէն, ուր հանդարտ ջուրերու տակ մարդ կը զգայ միշտ մօտալուտ ալեկոծութիւնը, ծածուկ ու ինչ մը հեգնական ժպիտ մը կը բուսնէր։ Եւ ես կը զգայի, որ սիրոյ մէջ, կիները միշտ աւելին կը պահանջեն, միշտ կարելիէն աւելին։ Ու այդ պահանջը կը բխի սիրոյ էութենէն իսկ։ Եւ արդէն այդ աւելին, այդ անկարելին է, որ թանկ է ու գեղեցիկ։ Գրաւական՝ անխախտ ու անձնուէր սիրոյ. Իդա՜, Իդա՜...

Զսպելու համար իր անընմբռնելի յուզումը, որ յեղակարծ կերպով կը սեղմէր կոկորդը՝ գլանիկ մը վառեց ու սկսաւ ակռաներուն մէջէն սուլել նոյն աղկաղկ ու թափառիկ մեղեդին, որ աւելի արագացուց իր յուզումը։ Աչքերուն մէջ՝ նո՛յն բիրտ ու աղուոր ցոլքովը, որ հիմա կ'արտայայտէր իր հոգիին ամբողջ մանկութիւնը, վրիպած բարկութիւնը՝ սրտին տկարութեան առջեւ ու մարմնին անյագ ծարաւը, ինկաւ ցած բազմոցի մը վրայ, մինչ իր երեւակայութեան պաստառին վրայ՝ աղօտօրէն կ'ուրուագծուէր կնոջական խաղաղ ու տրտում կիսադէմք մը։ Վարսերը զոց խարտեաշ էին, միայն թէ օրուան զանազան ժամերուն, համաձայն լոյսի խաղին, երանգ կը փոխէին։ Երբ անոնց յորդ ալիքներուն մէջ՝ իրիկնային արեւը ցոլար, ամբողջ դէմքը կը զգենուր հեռաւոր ու մշուշային բան մը։ Այդ վայրկեաններուն մարդ կը ցանկար մնալ հեռու ու ընդունիլ զայն իր աչքերուն խորը։ Որեւէ ձեւով չհպիլ անոր ու թողուլ, որ լռութիւնը մնայ կոյս։

Փորի վրայ պառկած՝ բազմոցին վրայ, գլուխը պահած բարձի մը խորը, ան կը նայէր այս տեսիլին ու հետզհետէ իր ծարաւը կը մեծնար, կը ստանար անկարելի համեմատութիւններ։ Մաքուր, ջինջ, այլ շատ զօրաւոր բան մը էր այդ ծարաւը։ Ան կը զգար զայն՝ իր մարմնին զանազան մասերուն մէջ, ձեռքերուն վրայ, որ կը դողային ու կոկորդին մէջ՝ ուր ան կը փոխ-

digitised by A.R.A.R.@

ւէր արտասուելու ցանկութեան։ Յետոյ՝ նոյն ընդհանուր հէնքին վրայ զուգահեռականօրէն, երեք տարբեր երազներ կազմուեցան, նախ երկչոտօրէն, յետոյ՝ աւելի համարձակութեամբ։ Ու հակառակ իր ներքին ընդդիմութեան ու արհամարհական տողերուն՝ որ քիչ առաջ գրած էր, իր ամբողջ անկեղծութեամբը, երազներու եւ յիշատակներու թունաւոր սնունդին դէմ՝ մարմինը ամբողջական լքումով մը անձնատուր եղաւ վայրկեանի յուզումին։ Սենեակին կիսամութը կ'օգնէր, որպէսզի իրերն ու բիրտ իրականութիւնը սուզուին լռութեան մէջ ու կորսնցնեն իրենց գծերն ու ապահովութիւնը։ Տարտամ, մելամաղձիկ ու քնարական պահ մըն էր, ուր կեանքը՝ իր իրաւունքները կը զիջի երեւակայութեան, երբ բազմաթիւ բաներ կարելի ու մերձ կը թուին, յարաւնուն ու ջերմէ բռնուած երազներու մէջէն։

Յանկարծ խեղդուկ ու դժուար ձայնով մը՝ շրթները մրմնջեցին.

—Իդա՜, Իդա՜...

Այո՛, դէմքին վրայ ցանի հատիկներ կային, խարտեաշ ցորենի գոյնով ու ձախ ականջին քով մանրանկար խալ մը։ Բացարձակ ու ամբողջական զեղեցկութիւն մը չէր, ո՛չ։ Փողոցը կամ հանրային վայրերու մէջ մարդիկ կանգ չէին առներ, շփոթ ու արթնցած յանկարծ՝ զգայարանքներու առօրեայ քունէն, զայն իրենց յիշատակին խորը պահելու համար։ Երկար ընտանութիւն մը պէտք էր, հանապազօրեայ մտերիմ ու սերտ հաղորդակցութիւն մը՝ զգալու համար այդ նուրբ ու ծածուկ դէմքին ամբողջ հրապոյրը։ Հարկ էր որ ձայնին մեղմ ու հոսուն թովչանքը, նայուածքին մերկ, գրեթէ համարձակ քաղցրութիւնը, վարսերուն գաղտնապահ ցոլքը ու իր շատ սպիտակ, կարծես մագաղաթեայ ձեռքերուն խաղաղ, թաւշային մերկութիւնը՝ միանային, լրացընէին իրար՝ յայտնելու համար իր թաքուն ու անժխտելի գեղեցկութիւնը։ Հարկ էր որ յանկարծ լռութեան դէմ, երբ խօսակցութիւնը աւարտած է անհրաժեշտ բառով մը ու թարթիչները կախելով իր աչքերուն հանդարտ ջուրերուն վրայ՝ դիմացինը վերադարձնէր կորսուած մանկութեան մը, հարկ էր որ դէմքը երկարած ու անձայն՝ գաղտնի ու մելամաղձիկ ժպիտով մը տար իր ամբողջ բարեկամութիւնը՝ ձեր հոգին կապելու համար իրեն։ Ու այն ատեն, դողահար՝ մարդիկ կանգ կ'առնէին եւ կը զգային, որ երկար համբերութիւն մըն է նաեւ կնոջ մը գեղեցկութիւնը զգալը։

—Իդա՜, Իդա՜...

Թերթերունքներուն շուքը կը հասնէր մինչեւ այտերուն, երբ աչքերը քմահաճօրէն փակէր։ Երբեմն գլուխը կը հակէր՝ աջ ուսին ու կէս-քրոջական, կէս-յանդիմանական հայեացք մը կը ձը-

digitised by A.R.A.R.@

գէր վրան։ Եւ այդ հայեացքը, ինք կը զգար, որ եթէ քիչ մը եւս յապաղէր կրնար փոխուիլ գորովի, սիրոյ գրեթէ։ Կամաց մը կը մօտենար ու իր տաք ձեռքը կը ձգէր ձեռքիդ մէջ, կարծես որպէս գրաւ։ Լռութեամբ կը շարժէր սենեակին մէջ, հագիւ հպելով իրերուն ու կը լսէիր միայն՝ հագուստներուն թելադրիչ շրշիւնը։

—Իդա՜...

Գլուխը խառնակ էր, ծա՜նր։ Աշնան գիշերամուտը յդի էր տեղատարափով։ Թանձր, փլող բան մը կար միջոցին մէջ ու այդ երազները միաժամանակ, զուգահեռականօրէն կը զարգանային, կը մանրամասնուէին, շփոթելով հոգին ու որպէս խոնջէնք իյնալով մարմնին վրայ։

Ահա՛, այդ բանը կը պատահի քաղաքին մէջ։ Գարնան առաջին ամիսն է։ Օդին մէջ բոլո՛ր վերազարթնող բաներուն մրրմունջն ու բոյրը կայ։ Մարդոց աչքերուն խորը՝ կան հեռաւոր տեսիլներ, ծարաւներ՝ որ կը շողան եւ որ պիտի մնան անյագ։ Ու բոլո՛ր աղջիկներուն վրայ, որ կ'անցնին ծառերուն տակէն, այնքան բանաստեղծութիւն կայ ու զարթօնքը՝ քաղաքին վրայ, այնքան ամբողջական է ու ծաղկաւէտ՝ որ կարծես թէ բոլո՛ր խոստումները պիտի իրագործուին ու երեկոյ չեղած, ամէ՛ն մարդ պիտի ունենայ իր երջանկութեան բաժինը։ Ու գիշերը՝ քաղաքին վրայ, պիտի ըլլայ տօնական ու պայծառապոյծ։

Ու յետոյ, տղայ մը կ'անցնի, սալայատակին մէկ ափէն։ Այդ տղան կը զգայ բնութեան այս նորածագ գեղեցկութիւնը ու իր աչքերուն մէջ ծառերը կը տապալին իրենց հասակներով։ Յաղթական ու տարափոխիկ երիտասարդութիւն մը կայ վրան։ Շողուն ու սեւ աչքեր ունի՝ ջինջ՝ ինչպէս քարի մէջ փորուած ակունքներ։ Հագած է բաց գոյն հագուստ, անթերի եւ շատ վայելուչ։ Արդուկը՝ դեռ թարմ։ Փողկապը փափուկ է ու նրբարուեստ ու ամէ՛ն բան իր վրան, սկսելով գալպաներու բաց մոխրագոյնէն մինչեւ փողկապի գնդասեղին գորշ փայլը, ներդաշնակ է ու անառարկելիօրէն գարնանային։

Մաքուր ձայնով մը, ուր հեռաւոր ջուրեր կ'երգեն, երիտասարդ, թեթեւ հագած կին մը կանչեց զայն։ Գլուխը դարձուց ետ՝ բայց միայն օտար դէմքեր կային ու բազմաթիւ աչքեր՝ որոնց հայեացքները երջանկութեան հրաւէրներու պէս էին։

Յետոյ փողոց մը եկաւ, սեւ սալաքարերով։ Յետոյ գիշեր էր ու ամբողջ քաղաքը ընկղմեցաւ քունի մէջ։ Յետոյ կրկին, այս անգամ յստակօրէն, ցայգային տարածուն աղմուկէն անջատուեցաւ երիտասարդ, թեթեւ հագած կնոջ մը ջինջ ձայնը.

—Իդա՜, Իդա՜...

Այո՛, երեկոյեան պիտի մեկնինք։ Ձեռքերդ, որոնց կը հպիմ ահա՛, կը դողան սիրոյ տենդէ։ Իրանդ սպիտակ է ու գեղեցիկ։

digitised by A.R.A.R.@

Ծառերը, այդ երկրին վրայ՝ կը բուսին ջերմ ու խանդավառ հողին ու անասուններու աչքերուն մէջ՝ բարբարոսութիւնը դեռ կը շողայ սեւ լոյսով մը։ Սէրը պիտի յաղթանակէ։

—Իդա՜...

Եթէ դուն ես, լսէ։ Արիւնս կը կանչէ քեզ։ Ձախ ականջիդ քով խալ մը կար ու դէմքիդ վրայ, ասդին-անդին, ցանի հատիկներ, խարտեաշ ցորենի գոյնով։ Պիտի հեռանանք այս թաց ափերէն ընդմիշտ։ Պիտի հոս ձգենք մեր սողուն ու յամառ հոգերուն ամբողջ բեռը։ Մարդոց խենէշ հեգնութեան ու ժամանակի դեղին քրքիջին պիտի պատասխանենք՝ սիրոյ հծծիւններով։ Քիւբերուդ մէջ սեւ բիծեր կան։ Եկո՛ւր, քեզ պիտի վերադարձնեմ դալարագեղ մանկութիւններու։ Եթէ դուն ես, լսէ՛...

—Իդա՜...

Յետոյ, գիշերամուտին, մէկը բախեց դուռը։ Ու տեղատարափի թաց ձայնին հետ հանքային բանուոր մը մտաւ ներս։ Հագուստներէն կարծես կը կաթէր քարածուխի եւ ծխախոտի թրջուած հոտ։ Գլուխը հակեց յուսահատօրէն ուսին վրայ ու արցունքի խոշոր կաթիլներով՝ իր վիշտը ձգեց տախտակամածին վրայ։ Յետոյ լռեց ու կարծես թէ չկար։

Յետոյ՝ տեղատարափը կրկին մտաւ սենեակ ու աչքերուն մէջ մեռաւ։

Անշուշտ երկրին ընդերքը սեւ է եւ խախուտ։ Ու յանկարծ փլաւ։ Երկար, անկարելի կերպով հեռու զարնան առաւօտներէն՝ խոնաւ ու սեւ միջանցքներ կային։ Կային պեղումի խուլ ձայներ, անկումի աղմուկ ու տարտամ լոյսի կտուցներ՝ ստորեկրեայ խաւարին մէջ։ Դրէ՛ք կնոջ սպիտակ ձեռք մը, գրեթէ մագաղաթեայ, վրան՝ կարմիր մեծ զոհարով մը ու պիտի զգաք, թէ ինչպէս բացարձակ, անխուսափելիօրէն գեղեցիկ ու վաւերական է յեղափոխութիւնը մարդոց հոգիներուն մէջ։ Եթէ յաղթական անցքութիւնը խոշորաձայն չվերադառնայ, ո՞վ է յանցաւոր։ Ո՞վ։

Մանուկներու աչքերուն մէջ, վերը, ապառնի ուրախութիւններ կը ծլէին ամէն օր։ Ու բանուորուհիներու որովայնները կ'ուռէին արգասաւորութեամբ։ Եւ յետոյ տաք բառերով, ուր նեպոտականութիւնը բարձունքներու անյազ ծարաւը, սրբազան քինախընդրութիւնը, պայքարի տենդը կը հրէին իրար՝ մարդիկ կային, որ կը խօսէին վերջնական յաղթանակի ու մեծ **երեկոյեան** մասին։ Նշենիները, ձմրան վերջին ամսուն, կը սկսէին զարթնուլ ու յետոյ, աւելի ուշ, արեւածաղիկները իրենց խոշոր պսակները կը կարկառէին առաւօտեան լոյսին։ Վերը բզէզները կը ցատկէին առէջէ առէջ ու աղջկան մը ձայնը մերկութեամբ կը բակուէր, վարը՝ տղու մը սեւ կուրծքին վրայ։ Սուրհանդակը, մութը չինկած, տունէ տուն կը տանէր իր կոշիկներուն ձայնը։ Վերջապէս,

digitised by A.R.A.R.@

լռութեան խորէն երգեր կը փրթէին, օրօրուն ու դիւրասահ բաներ, թոյնի պէս մղուող ու ինաբեր։ Կարելի էր նաեւ զինովութիւնը, ուշ գիշերներուն։ Այն ատեն գիսաւոր աստղեր կ'իյնային բանուորներու բիբերուն խորը եւ կը խեղդուէին։

Աւելի քան անկարելի կերպով հեռու էր զարնան առաւօտնեբէն, երկրի ընդերքին մէջ բացուած այդ կոյր փոսը։ Պատին միւս կողմէն հարուածի խուլ ձայներ կու գային ու կը մեռնէին ոտքերուն տակ։ Առաւօտը, տանը շեմին վրայ, մանուկը փաթթուած էր ոտքերուն եւ ծլարձակ աչքերով՝ իր պզտիկ հոգին պահ դրած էր կաշիէ մախաղին մէջ։ Մինչեւ հանքահորին մուտքը՝ բազմաթիւ բարեւներ հաւաքած էր։ Եւ ընթրիքէն յետոյ պիտի երթար կուսակցական ժողովի։ Երբ մեռելը հանեցին դուրս՝ մեծ ու պատառոտուն աղաղակ մը փրթաւ, վիրաւորեց համր լռութիւնը, զարնուեցաւ կնոջ մը մարմնին՝ որուն թեզանիքներէն մանուկներու ծաղկանման դէմքեր կը կախուէին ու յետոյ լուծուեցաւ մակընթաց ու մեծ աղմուկի մը մէջ։ Յետոյ՝ գիշեր էր կրկին։

—Իդա՜, Իդա՜...

Բարձրացաւ բազմոցէն ու ձեռքերով՝ որ կարծես իրեն չէին պատկաներ, բացաւ պատուհանը։ Օ՜, թանձր, այս փլող բանը, որ կար միջոցին մէջ։ Ցանկարծ խաւարը պատռեցաւ լոյսի շողիւնով մը։ Տեղատարափը խուժեց փողոցին վրայ։ Ձեռքերը հանեց դուրս։ Ու այդ տենդահար ձեռքերը ուրախութեամբ ընդունեցին ծանր ու խոշոր ջուրի կաթիլները։ Կարծես թէ մարմինը մաքրուեցաւ ու երակներուն մէջ արիւնը ազատեցաւ թունաւորումէ։ Գիշերուան զով շունչը սարսեց իր հոգին։

Սեւ կատու մը, քսուելէն իրերուն, գնաց խրեցաւ բազմոցին խորը։ Կիսամութին մէջ՝ գէջ ու կանաչ լոյսերով կը վառէին անոր աչքերը։ Հոգիին խորէն բարձրացաւ հայրենական մոռցուած երգ մը ու զայն վերադարձուց բիրտ իրականութեան։ Նայուածքը մոլորուեցաւ ու գնաց ինկաւ լուսանկարի մը հեռաւոր աչքերուն մէջ։

Ո՞վ եմ ես.—

Ո՞վ...

Ձօրեղ ու քաջ քայլերով գնաց սեղանին առջեւ։ Եւ իր խոշոր գլուխը (ուր տարբեր գաղափարներ անընդհատ կը բախէին իրար) ափերուն մէջ, կարդաց ամբողջ գրածը։ Ու քանի՛ կը յառաջանար, ա՛յնքան աչքերը կը ցոլային ցուրտ ու անգութ ցոլքով մը։ Արհամարհանքը՝ իր պզտիկ ու զանցառելի անձին հանդէպ, հասակ կը նետէր ու խենէշ հեգնութեամբ մը, շրթներուն թաց անկիւններովը, կը բարեհաճէր ժպտիլ։ Թշուառ մէկը ըլլալու տխրութիւնը նստեցաւ աչքերուն խորը։ Եւ աշնան գէջ գիշերը՝

digitised by A.R.A.R.@

խքանեց իր ցուրտ բարկութիւնը, հծծելով կարծես մեղսակից ինքուշութեամբ մը.—Իդա՜, Իդա՜...

Ապրի՜լ հոս, բազմութիւններու եւ սեւ բաղաքներու հիւանդ տենդովը տառապիլ, զգա՜լ քունքիդ վրայ մուրճերու խուլ աղմուկը ու մնալ նո՛յն մարդը։ Կենա՜լ հսկայ հեռանկարներու դիմաց ու նայի՜լ ետ, երիտասարդ կնոջ մը աչքերուն։ Երկրին ընդերքը սեւ էր ու խախուտ եւ յանկարծ փլաւ։ Երբ մեռելը հանեցին դուրս ու դուն տեսար, որ աչքերը պայթած էին ու թափած գետին, ու՞ր էր հոգիդ։—Իդա՜, Իդա՜, բոլոր վշտերէն կը վերադառնամ բեզի, նայուածքդ կը տաքցնէ զիս ու արիւնս խենք ջուրերու ձայնովը կը խնդայ։ Դիր ձեռքերդ ճակտիս վրայ ու ըսէ՛, որ սէրը աւելի զօրաւոր է, քան մնացեալ բոլո՛ր բաները։ Վերադարձուր զիս կարկաչուն մանկութեանս, յաղթանակէ՛...

Ո՞վ եմ ես...

Ո՞վ...

Եւ յետոյ սկսաւ գրել։ Ալ չէր երկնչեր բառերէն, որ հիմա այլեւս կը հնազանդէին իրեն։

* Այս տողերը դեռ կը յայտնեն մէջս գէշ ծածկուած զգայավարութիւն մը՝ հասարակ, ծոյլ ու մանր-քաղքենի։ Կը զգամ, որ հակառակ երեք-չորս տարիներէ ի վեր մղած անխնայ պայքարիս՝ դեռ բազմաթիւ քաղքենի տարրեր ու մնացորդներ կան կեանքիս մէջ։ Տակաւին պզտիկ ու գէշ թեկնածու մըն եմ մտաւորականութեան։ Ու պատրաստ անարժան ցաւերու ու սուտ թշուառութեանց առջեւ՝ ունայն յուզումներ ունենալու եւ յետոյ հպարտանալու պատճառներ գտնելու հոգ։

Տակաւին, հակառակ բոլո՛ր պնդումներուս, դասակարգերու լուսանցքին վրայ հինցող տղայ մըն եմ։ Որովհետեւ մարդ չորրորդ դասակարգին կրնայ պատկանիլ համակրութեամբ, զոհողութիւնով, պայքարելով։ Այս պատկանումը սակայն անկատար բան մըն է։ Պէտք է ծնիլ այդպէս, չորրորդ դասակարգի մարդ։ Այլապէս հասարակ ուղեկից մըն ես, յաւէտ կասկածի ու վերապահութեան առարկայ։

—Զախողանքներու առջեւ ինքնարդարացումներ փնտռելը երբեք զիս չէ մխիթարած։ Մխիթարութիւնը արդէն՝ տկար մարդոց համար է եւ կիներուն։ Ահա՛ թէ ինչու հակառակ ակնայտնի անյաջողութեան, հակառակ զուր ճիգերուս՝ մտաւորականի այս աղտոտ մորթը փոխելու, հոգիս ուրախ է դեռ ու մարմինս՝ յօժար պայքարի մէջ։ Եւ չեմ կարծեր, որ մարդիկ կարենան զիս ալ խառնել իրենց հոդակպիկ թափօրին։

Գիտեմ, մարդիկ կան, որ այս տարիքին արդէն կը սկսին ծալել իրենց բոլո՛ր արդար բարկութեանց դրօշակները։ Բոլո՛ր գեղեցիկ խօսքերը կը հանեն դուրս ու բոլո՛ր վրէպներուն դէմ

digitised by A.R.A.R.@

զօրակոչի կը կանչեն բոլո՛ր արդարացումները։ Այս մարդոցմէ չպիտի ըլլանք մենք եւ երբեք նահանջողներու, վատերու եւ դաւալիքներու շարքերուն մէջ մեր աւրուած, այլ անկեղծ դէմքը մարդիկ չպիտի տեսնեն։

Մահը մեզ պիտի գտնէ արշաւի մէջ, մեր խոնջ անդամներովը, այլ ամբողջական ատելութեամբ։ Եւ եթէ մեռնինք, գէթ մեր մորթը պէտք չէ զղջայ մեզ պատսպարած ըլլալուն համար։ Գէթ մեր մորթը՝ դաւաճանի, վատի, հաւատուրացի փորոտիքներ պէտք չէ կրէ։ Պէտք է ըլլանք մարդ մը՝ որուն տապանաքարին վրայ իր ընկերները չպիտի վարանին գրել.—Աստ կը հանգչի մէկը՝ որուն ամբողջ փառասիրութիւնը յեղափոխութեան յաջողակ, արի եւ անապական զինուոր մը ըլլալ եղաւ։ Ամբողջ կեանքի ընթացքին, ո՛չ մէկ ներողութիւն գտաւ իր սխալներուն համար։ Եւ իր միակ ուրախութիւնը դրօշակ մը էր, որուն մէջ փաթթեցինք իր վաստակաբեկ մարմինը։

Ու յետոյ՝ ինքնաքննադատութեան անյագուրդ ծարաւը այնքան մեծցաւ, բռնութեան, խարազանումի, կարծես ահաբեկման պէտքը դարձաւ այնքան որոշ՝ որ խեղդուկ ու տառապագին ձայնով՝ ուր կը յայտնուէր վերելքի եւ հերոսութեան ի խնդիր փորձած իր ամբողջ յուսահատական յամառութիւնը՝ սկսաւ հայհոյել իր հեռաւոր տարիներէ ի վեր գործած բոլոր գէշ բաներուն դէմ։ Ցիշատակներու մութէն՝ կ'արթնային ծածկուած յանցանքներ ու ցոյց կու տային իրենց սեւ դէմքերը։ Իր գաղափարներուն եւ առօրեայ կեանքին մէջ, կը բացուէր մեծ պարապ մը։ Եւ իր բոլոր խանդավառութիւնները չէին կրնար լեցնել զայն։ Ու դուրսը, միշտ գէջ էր գիշերը։

Ամբողջ հասակովը տապալեցաւ բազմոցին վրայ ու սկսաւ ծխել։

Յետոյ՝ քունը յաղթեց իրեն։ Նստաւ ուսերուն։

Մէկը պարզեց հսկայ ու նախանձամական ձեռք մը ու լայն շարժումով մը սրբեց բոլո՛ր գէշ հետքերը, որ կային իր կեանքին վրայ։ Յանցաւոր արարքներէ՝ մաքրուեցաւ իր յիշողութիւնը։ Ու ինկաւ երազներու կապոյտ լիճի մը մէջ։

Ո՞վ էր...

Ո՞վ...

Երկաթէ ջիղեր ունէր եւ իր քառակուսի ու թուխ դէմքովը կը խնդար, մռայլ քրքիջով մը, փողոցէն անցնող կանացի մարդոց գունատ կերպարանքին։ Ձեռքերը սորված էին կրկին մկանային կոպիտ եւ յաղթական աշխատանքին գեղեցկութիւնը։ Նայուածքը՝ խիստ էր, զօրաւոր, պողպատի ցոլքի պէս ու ձայնին մէջ ցասում կար, հաւատք դէպի ապագան ու եղբայրական գորով՝ դէպի մանուկները, տառապողներն ու ընչազուրկները։

digitised by A.R.A.R.@

Հագուած էր անփութութեամբ, բայց ինքնեկ ու բոլորովին բընական անփութութեամբ մը։ Թաւամազ ու լայն կուրծքը բաց էր։ Հաստ շրթունքէն՝ կախուած էր թուխ մարմինով ծխամորճ մը ու կը մրմռար նո՛յն աղկաղկ ու թափառիկ մեղեդին։ Շուրջը, բանուորներու եւ բանուորուհիներու ծովածաւալ բազմութենէ մը կը բարձրանար մեծ ու պարտադիր աղմուկ մը։ Ծեր մարդ մը ծխախոտ կը ծամէր ու աղջիկ մը, իր մանուկ աչքերուն մէջէն, կը խոստանար իրեն այն ամբողջ երջանկութիւնը, որ հնարաւոր է աշխատաւորի մը երդիքին տակ։ Ահա՛ հոդ էր ինք, երբ յանկարծ, այդ մեծ աղմուկին դէմ բարձրացաւ **իրենցմէ մէկուն** ձայնը ու արագութեամբ թալեց, տիրեց բազմութեան։

Ցետոյ փողոց մը եկաւ։ Ցետոյ ուրիշ բազմութիւն մը՝ որ կարմիր գետի մը եզերքը, անկարելի զիշերուան մը ընթացքին, իր գլուխները կ'երկարէր՝ որպէսզի բիրերով մարդիկ ջախջախէին զանոնք։ Ու բազմաթիւնը՝ իր անհամար գլուխներովը, պահ առ պահ կը հոնդար։ Ու ինք կը զարմանար, թէ ինչու՞ բոլո՛ր ձեռքերը կը մնային ծոյլ ու առանց սրբազան բարկութեան։ Ու բոլոր գլուխները կ'երկարէին յանցաւոր յուսահատութեամբ դէպի արիւնոտ բիրերը։

Ցետոյ ուզեց լիաթոք շնչել այդ անկարելի զիշերուան վայրենի շունչը ու իր ամբողջ ձայնովը հրաւիրել կռուի, այդ բոլոր գլխահակ ու ծնկաչոք մարդիկը։

—Ոտքի՛ ելէք, խածէ՛ք ձեզ հարուածող ձեռքերը, յաղթանակեցէ՛ք...

Բառերը սակայն խեղդուեցան կոկորդին մէջ, որովհետեւ տեսաւ, որ բոլորն ալ կիներ էին, մատաղատի աղջիկներ եւ մանուկներ։ Քարի մը քով՝ իրանէն բաժնուած ու խարտեաշ գլուխ մը դեռ կ'արիւնէր։ Մեծ պտուղի մը պէս գայն առաւ ափերուն մէջ եւ երբ նայեցաւ կապոյտ աչքերուն խորը, իր արիւնը յանկարծ հնչեց քունքերուն վրայ ու պզտիկ քրոջը կորսուած ժպիտը, տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով, վերադարձաւ իրեն։ Մեծ աղաղակ մը փրթաւ կոկորդէն։ Արթնցաւ ու լսեց տեղատարափին ձայնը՝ յուսահատօրէն անկարեկիր։

Բարձրացաւ։ Ու մութին մէջ, կարծես գաղտնի ու հիւանդ շարժումներով հագուստները ձգեց գետին։ Աչքերը կիսախուփ էին ու ձեռքերուն վրայ՝ իր երիտասարդ արեան տենդը հետզհետէ կը մեծնար։ Կռնակի վրայ ինկաւ ու անկողինը խուլի աղմուկով մը ճռնչաց։ Ծունկերը կը կթոտէին յուզումէն։ Կարծես, խաւարին հեռաւոր յատակէն ձայներ կը բարձրանային ու կը բախէին իրարու։ Իր քունը սակայն խուլ էր։

—Պղնձարջասպով եղծէ՛ անոր դէմքին գեղեցկութիւնը։ Թո՛ղ միայն աչքերը մնան՝ իրեց տառապանքէն արիւնելու համար։

digitised by A.R.A.R.@

—Երգէ՛։ Բոլո՛ր դէպքերը պատրուակներ են միայն ու բոլո՛ր տառապանքները պատուանդան, որովհետեւ բառը պիտի յաղթանակէ։ Հրդեհէ՛ ամբողջ քաղաք մը, եթէ հարկ է, որպէսզի վերջնական գեղեցկութեամբ նախադասութիւն մը կերտես։

—Զա՛րկ, յաղթանակէ՛։ Բարձրացի՛ր բոլորէն վեր ու թո՛ղ նայուածքդ իյնայ որպէս զթութիւն վարի մարդոց վրայ։ Եղի՛ր անգութ...

...Յետոյ, իր աչքերուն ապակիներէն ներս գիւղաքաղաք մը խաղաղօրէն արքնցաւ իր քունէն։ Ցանկապատէ մը վարդեր կը կախուէին գետին։ Մանուկ մը՝ հողին վրայ նստած, կ'ուզէր անկարելին։ Սիրոյ երգ մը զարնուեցաւ ուրբերուն։ Զանգը հնչեց։ Ու զանգը ըսաւ.—Ահա՛ կորսուած էիր ու գտանք քեզ։ Ասիկա քու հայրենի քաղաքդ է։ Նայէ՞...։ Մօտակայ դուռէ մը՝ սպիտակ հագած կին մը ելաւ դուրս։ Անոր շարժումներուն մէջ ընդարձակ մայրութիւն մը կար։ Դէմքը ծածկուած էր, սակայն մազերուն մէջ կարմիր ծաղիկներ կային։ Եւ ան, դիւրահոս ու վճիտ ձայնով մը, ուր անառարկելի մայրութիւն մը կը յայտնուէր, ձեռքէն բռնեց եւ ըսաւ՝

—Եկուր, կուրծքիս վրայ հանգչէ՛, զաւա՛կս...

Յետոյ՝ քունը թանձրացաւ ու գիշերուան մնացեալ մասին համար, հաստատեց իր թագաւորութիւնը։

141-2001

II

Յետոյ ծագեցաւ առաւօտը։ Քաղաքին վրայ՝ զարթօնքը ծոյլ էր ու գորշ։ Մոխիրի պէս անձրեւ մը կը լուար քարերը։

* Կարելի չէ լրջութեամբ պնդել, թէ ամէն բան ըսուած է, մեզմէ առաջ։ Օրինակ, երբեք լիակատար որեւէ էջ չեմ կարդացած տարբեր զարթօնքներու մասին։ Էջ՝ որ տար զարթօնքի զանազան հոգեկան վիճակներու ամբողջ մելամաղձիկ բանաստեղծութիւնը։

Երբ պզտիկ տղայ մըն էի, զարթօնքը կ'անցնէր աննկատ։ Մանկութիւնս այնքան զօրաւոր էր եւ յաղթական՝ որ օրուան մտահոգութիւններուն դիմաց ակռայ ցոյց կու տար սրտառուչ յանդգնութեամբ մը։ Արեւնս մէջ խենթութիւն կար, ու աչքերուս մէջ՝ անզուսպ ճառագայթ։ Քաղցր ու անտենդ քունէ մը յետոյ, ամբողջովին նորոգուած կ'արթննայի, ձեռքերուս վրայ շարժումի

digitised by A.R.A.R.@

ծարաւով ու մարմնիս մէջ՝ ապրելու անապարանքը կը խայտար։ Անգիտակից, գրեթէ անասնական, այլ առողջ ու բիրտ ուրախութիւն մը կը ցնցէր մարմինս։ Որեւէ վաղահաս գիծ չէր եղծեր ճակտիս պայծառութիւնը։ Ու ամբողջ դէմքս կարծես կը բրբջար ու ասպարէզ կը կարդար ապագային։

Յետոյ, օրերը այնքան գէշ էին, որ մէկէն մանկութիւնս ընկղմեցաւ յիշատակներու խաւարին մէջ։ Գիշերը ապաւէնի պէս էր, ու երազը՝ երկնառաք մանանայի։ Պատանութեան ամբողջ անյագ ծարաւովս կը խրէի խաւարին գիրկը ու առաւօտը գոչումի պէս դառն էր։ Մնաց որ, բունը երբեք բաւական չէր այն տարիներուն։ Բունը բաղցր էր ու կը նմանէր մասնակի մահուան։ Երբ կ'արթննայի՝ անորոշ անհանգստութիւն մը իր ներկայութեամբը կը ներէր զիս։ Կարծես անընդհատ վտանգ մը կար, որ դարանակալ կը սպասէր ինձ։ Բազմաթիւ հոգեր գլուխ կը ցցէին ու կարգ առ կարգ, առաջին ժամուն իսկ, կը ներկայանային։ Տխուր բան մըն էր զարթօնքը ու առնուազն ժամ մը անհրաժեշտ էր՝ կրկին վարժուելու համար առօրեայ աշխատանքիս։

Աւելի յետոյ զարթօնքը լուրջ ու պատասխանատու բան մը դարձաւ։ Կեանքի իմ եղերական, խանդավառ ու ամբողջական ըմբռնումիս հետ՝ մեծցաւ նաեւ զարթօնքի ուրախութիւնն ու տառապանքը։ Երբեմն մեծ պարապ մը կ'ըլլար հոգւոյս խորը առաջին ժամուն ու ուրիշ օրեր ալ՝ լիութիւն։ Եւ ամէն երջանկութիւն եւ հրճուանք կը թուէին հնարաւոր. բայց ժամը չէ, սեղանիս առջեւ նստած էջ մը մրոտելու։ Մնաց որ, հիմա ամէ՛ն զարթօնք ունի իր անակնկալը, իր գեղեցկութիւնն ու պատմութիւնը։ Ու բոլո՛ր զարթօնքներս հիմա այլապէս յուզիչ են։

Անապարանքով սկսաւ հազուիլ։ Աշնան առաւօտեան անձրեւոտ թախիծը պատած էր իր հոգին, բայց մշուշին մէջէն կը բարձրանար երիտասարդ կնոջ բաղցր կիսադէմք մը։ Ու կիսադէմքը, բարակ հովի մը պէս, կը բուէր աչքերուն։ Ու այդ հրպումը կը տաքցնէր արիւնը։ Ու մի՛շտ մոխիրի պէս անձրեւ մը կը լուար սեւ բարերը։—Իդա՜, Իդա՜...

Բերանը պրկուեցաւ ծամածուռ ժպիտով մը։ Դէմքը կորսընցուց իր խաղաղութիւնը ու աչքերը ցոլացին հեգնութեամբ։

—Այո՛, բառերը, այս բոլոր գեղեցիկ բառերը պէտք է վերջապէս դադրին ստութեան անօթ ըլլալէ։ Դիւրին է գործուած յանցանքները որակելը, դասաւորելը, դիւրին է նաեւ անողոք ինքնանդատութիւնը։ Ինչ որ դժուար է՝ եզրակացութեան մը յանգիլն է...

Անշուշտ կը սպասէին իրեն։ Աշունը ցուրտ էր։ Ու այդ տան մէջ, սովորութիւն ունէին փայտածուխի կրակով սենեակը տաք-

digitised by A.R.A.R.@

ցընելու։ Ընդհանրապէս պարտէզին դուռը բաց կ'ըլլար։ Դրացի շուն մը կը հաչէր։ Իսկ ան՝ շնորհալի անփութութեամբ մը կը բարձրանար, կը փաթթէր զայն իր նուրբ, այլ շռայլ ժպիտով, թերթերումներուն կը կախէր իր աչքերուն հանդարտ ջուրերուն վրայ ու ընկերոջ զգուող ու ուրախ ձայնով մը, ուր իր երիտասարդ կնոջ հոգին կարծես կը զսպէր աւելի ինքուշ ըլլալու ակընայտնի փափաքը, կ'ըսէր՝

—Բարե՛ւ, Աշոտ, նորէն ուշացած ես...

Յետոյ՝ ձայնը կը փոխուէր կարծես, կը դառնար ընտանի, քիչ մը սովորական, անտարակոյս նորութենէ ու խորհուրդէ զուրկ։ Ու այդ ձայնով էր, որ կը կանչէր, գլուխը թեթեւօրէն դարձուցած անդին, իր ամուսինը՝ որ միւս սենեակը, բազկաթոռի մը վրայ երկնցած կը ծխէր, թղթատելով որեւէ գիրք կամ սահելով օրուան թերթերուն վրայէն։ Ու միշտ, հակառակ երկար ընտանութեան, կ'ելլէր ոտքի ու անաղմուկ կու գար իր սպիտակ ձեռքը բոպէ մը հանգչեցնելու անոր ձեռքին մէջ։ Ու այդ ձեռքի սեղմումը կ'աւարտէր՝ երբ ամուսինը զար, ցցուէր դէմերնին։

—Իդա՜, Իդա՜...

Պարբերական ջերմի, տագնապի պէս բան մըն էր ատիկա, այդ յանցաւոր ու ծածուկ սէրը։ Յանկարծ կու գար, կը վերադառնար իր ամբողջ յամառ ուժգնութեամբը ու կը պղտորէր խաղաղութիւնը։ Գիշերով, ցերեկով, բառի մը ետեւէն կամ եղանակի մը նուաղուն ալիքներովը կու գար, կը վերադառնար այդ սէրը ու մարմնին մէջ կը փոխուէր ջերմի, սիրոյ ծարաւի՝ որ անկարելի էր ուրիշ կնոջ մօտ լիովին յագեցնել ու սեւ, անփարատելի տխրութեան։ Հարկ էր երթալ, գտնել զայն ու անոր ձեռքերուն վրայ խղճի խայթի պէս թողուլ այդ բեռը։

—Իդա՜...

Ահա՛ պայքարը սկսած էր մեծնալ, տաքնալ։ Կեանքը կու գար ու խոշոր ալիքներով կը զարնուէր իրեն։ Ժամանակն էր յայտնուելու, տալու՝ իր կարողութիւններուն ամբողջ չափը։ Ու ի՞նչ կ'ընէր ինք...

Ոչ, պիտի չերթայ այսօր։ Պիտի կենայ հոս։

Ու գրքի մը էջերուն վրայ, օրով մը պիտի հինենայ։

Օձիքը բաց՝ թուխ կուրծքին վրայ։ Մազերը՝ խառնիխուռն, աչքերուն մէջ՝ աշնան գորշ անձրեւը՝ գնաց ինկաւ բազմոցին վրայ ու սկսաւ ընթերցումի։ Կը կարդար սակայն տողընդմէջ կամ լուսանցքի վրայ։ Ու ի՞նչ որ կը կարդար՝ անշան յիշատակներ էին, պզտիկ բաներ։ Քաղաքին վրայ առաւօտը միշտ ծոյլ էր ու գորշ ու նո՛յն մոխիրի պէս անձրեւը կարծես կը տեղար հիմա սենեակին մէջ...

digitised by A.R.A.R.@

☆ ☆ ☆

✳ Այնքան փոքր ու չնչին բաներէ կախուած է կնոջ մը անձնատուութիւնը, որ մարդ երբեմն կը յոգնի յուսալէ։ Հարկ է հաշուի առնել ամէնէն պզտիկ մանրամասնութիւնները ու նկատի ունենալ դիպուածը՝ որ մերթ թեր է մեզի, մերթ դէմ։ Անշշան խօսք մը, կամ մեզմէ դուրս պատահած զանցառելի դէպք մը կին մը կրնան մղել դէպի մեզ կամ վերջնական կերպով հեռացնել։

Յետոյ՝ պատեհութիւնները կան։ Պէտք է ամէ՛ն բան ժամանակին ըսել ու ժամանակին ընել։ Միշտ չի բաւեր գեղեցիկ ըլլալ, կամ հարուստ եւ կամ շատ համակրելի, այլ կարենալ ընտրել պահը։ Գիտնալ օգտուիլ պատեհութիւններէն։ Միշտ պատրաստ ըլլալ։ Միշտ ունենալ մեր աչքերուն մէջ ցանկութեան բաղցր ճառագայթը, բայց չխօսիլ միշտ այդ մասին։

Կարեւոր է նաեւ ներկայութիւնը։ Լաւ կամ գէշ օրի, միշտ ըլլալ հոն, պատրաստ սիրոյ։ Բայց ներկայութեան բազմաթիւ ձեւեր կան ու բազմաթիւ եղանակներ։ Կարելի է ներկայ ըլլալ նոյնիսկ՝ երբ հեռու ես։ Ու ատիկա այլապէս գեղեցիկ է, որովհետեւ պարագաներ կան, երբ բացական իրաւունք կ'ունենայ միշտ։ Գիտնա՛լ գործածել նաեւ բացակայութիւնը, յոգնեցուցիչ ներկաներուն դէմ։

Քայլ առ քայլ ու պատնէշ առ պատնէշ՝ քաղաքի մը գրաւումին չափ երբեմն դժուար է աղջկան մը հոգիին մերձենալը։ Երկար ու յամառ համբերութեան մը հետ, անհրաժեշտ է իրական ու ազնիւ բարեկամութիւնը՝ որ մարդուն դէմքին վրայ կը ցոլայ, ներքին լոյսի պէս։ Եւ երբեք պէտք չէ կարծել, թէ բոլո՛ր կիներուն կարելի է յաղթել նոյն ձեւով։ Ձէնքեր կան, որ լաւ են մէկուն համար, ու ապարդիւն՝ միւսներուն։ Ոմանց պէտք է մօտենալ մեղմ ու տաք բառերով եւ գուցէ նաեւ որոշ երկչոտութեամբ, մեր աչքերուն մէջ։ Իսկ ուրիշներ կը սիրեն բուռն, արագ ու ինքնավստահ շարժումները։ Աղջիկներ կան, որ կը սիրեն պաշտպանել։ Կուտակուած զորով ունին՝ որ կը թափի իրենց ձեռքերէն ու կանխահաս մայրական զգացում մը՝ որ գուրգուրանքի առարկայ կը փնտռէ։ Իսկ ուրիշներ՝ որ մանուկի պէս կը կծկուին կուրծքիդ վրայ ու կատուի պէս դրուժան են ու քմահաճ։

Մեծ փորձառութիւն մըն է աղջիկ մը ճանչնալը, սիրելը զայն։ Ամէն էակ ունի իր դոյզն նորութիւնը։ Այլեւ իր ինքնատիպ հոգեկան կառուցուածքը, գեղեցկութիւնը։ Ու ամէն էակ տալու եւ ստանալու իր եղանակներն ունի։ Ոմանք կու տան առաջին առթիւ իսկ, սրտառուչ պարզութեամբ մը եւ ուրիշներ, որ ժլատ են ու անառիկ, կու տան կաթիլ-կաթիլ ու երկար ընդդիմութենէ յետոյ։ Եւ ասիկա այլապէս գեղեցիկ է։

digitised by A.R.A.R.@

Ես յոգնած եմ այս բոլո՛ր գուր ու չնչին խաղերէն եւ հոգիս պէտք ունի մնայուն ու ապահով բարեկամութեան մը։ Ծունկերուդ վրայ ապաստան տուր ինձ ու նայուածքս թող սուզի աչքերուդ լիճին մէջ։ Քու բարեկամութեանդ ազնիւ կրակովը տաքցուր հոգիս, նուաճէ՛ զիս, Իդա՜...

* Եւ յետոյ, մէկ քանի տարի առաջ էր, տարօրինակ գիշեր մը։ Խօսք եղաւ նաեւ վարդերու մասին։ Ես երջանիկ էի ու շատ երիտասարդ։ Փախցուցած ըլլալով արուարձանի վերջին շոգեկառքը, լեհ ընկերուհիս՝ Հանիան, սենեակս գիշերեց։ Ընկերաբար՝ անկողինս բաժնեցինք երկուքի, ինք պառկեցաւ գետինը, իսկ ես բարձը։ Դուրսը՝ անձրեւը շառաչածայն ու սանձարձակ աղմուկով մը կը վազէր փողոցէն։ Լոյսի կտուցի մը տրտում ցոլքը կ'իյնար տախտակամածին վրայ։ Միջանցքէն կը լսուէր գրամեքենայի մը աղօտ ձայնը։ Մէկ քանի տարի առաջ էր, տարօրինակ գիշեր մը։

Քիչ յետոյ ինք քնացաւ. իսկ ես մնացի զարթուն։ Հին յուշերու կտորներ կ'որոնայի՝ խաբելու համար սիրոյ ծարաւը, որ արեանս մէջ կը խայտար։ Այն միտքը, թէ կիսամերկ ու երիտասարդ, ան քայլ մը անդին էր, իմ սաւանիս մէջ, զիս կը մղէր անպարկեշտ փափաքներու։ Կ'ուզէի բարձրանալ ու մերձենալ իրեն ու ատիկա լաւ չէր։ Որովհետեւ վստահութիւնը, զոր ունեցած են վրաս ուրիշները՝ մի՛շտ լաւագոյն հարստութիւններէս մէկն է եղած.

—Հանիա,— ըսի,— քնացա՞ծ ես...

Ձայնս ընկղմեցաւ լռութեան խորը անպատասխան։ Սիրոյ ծարաւս կը մեծնար սակայն ու արիւնս հետզհետէ կը տաքնար։ Եւ մեղսակից ու անեզրօրէն հիմա լուռ գիշերը կ'օգնէր, որպէսզի մտովի՝ վատ բաներ ընեմ այդ աղջկան հետ։ Կը զգայի, որ եթէ անկողնէս բարձրանալու տկարութիւնը ունենամ՝ այլեւս դժուար պիտի ըլլայ կանգ առնել։ Ու եթէ չըրի ատիկա, որովհետեւ զայն գիտէի անապատէն գիշերուան մէջ ու անձնատուր բարեկամութեանս։

Անձրեւը հիմա դադրած էր ամբողջովին։ Գիշերը զով էր։ Լոյսի կտուցին ցոլքը սրսփալէն կը ցոլար իր դէմքին վրայ։ Անկողին դեռ չմտած, երկդիմի ժպիտ մը աչքերուն մէջ, մանուկի իր պզտիկ ձայնովը հծծեց.

—Աշո՛տ, լոյսը հանգչեցո՛ւր...

Երբ լոյսը հանգչեցուցի, դուրսի ցոլքը եկաւ ու գրկեց զայն։

Կ'ուզէր հանուիլ, բայց ներկայութիւնս կը նեղէր զինք։ Կը նայէր աչքերուս եւ կը ժպտէր։ Դէմքը խեղկատակ շարժումով մը ծամածռեց ու կարծես վերագտնելով իր ամբողջ մանկութիւնը, լեզու ցոյց տուաւ ինձ։

digitised by A.R.A.R.@

—Պզտիկ յիմար, պատին դարձուր գլուխդ...

Աչքերս փակ՝ կը լսէի հագուստներուն նուրբ շրշիւնը ու իր թափառիկ երգը, որ շրթներէն կը թափէր գետին։ Յետոյ՝ ակամայ աչքերս բացի ու կիսալոյսին մէջ զայն տեսայ բնիկ ու շատ ցանկալի։ Ուսերը թօթուեց՝ նո՛յն մանուկ անփութութեամբ։

—Հո՛գս,— ըսաւ ժպտուն։

Ու հապճեպով մտաւ անկողին։ Յետոյ՝ լռութիւնը սենեակիս մէջ մակաղեցաւ։

Յետոյ՝ աստղերը շողացին կրկին՝ թրջած կապոյտին խորը եւ մէկէն, սենեակիս լռութեան կիսախաւարին մէջ, մանուկի յուզիչ զանգատի մը պէս հնչեց Հանիայի կցկտուր ձայնը.

—Մի ըներ, անդին գնա՛,— կ'ըսէր,— լաւ չէ ըրածդ...

Յետոյ՝ կարծես ես պատասխանած ըլլայի իրեն, դառնութեամբ մը՝ ուր այսուհանդերձ թշնամութիւն կամ սրտմտութիւն չկար՝

—Վաղը կը զղջաս ըրածիդ համար,— կ'ըսէր,— հանգիստ ձգէ՛ զիս, պզտիկ յիմար, բուն ունիմ։ Ուրեմն ասո՞ր համար էր, որ զիս հիւրասիրեցիր։ Ձգէ զիս։ Չեմ ուզեր, ո՛չ, չեմ ուզեր...

Յետոյ արթնցաւ, ընդոստ նստաւ անկողինին մէջ, թօթուեց իր առատ վարսերը, աչքերը շփեց ու զգալով, որ գոհ է երազին՝ բաղցրութեամբ ժպտեցաւ աչքերուս։ Բարձրացաւ, լոյսը բացաւ ու յանկարծ յիշեց, որ կիսամերկ է։ Վերարկուովս ծածկեց իր մերկութիւնը, նստաւ անկողնիս վրայ ու ձեռքերս ափերուն մէջ՝

—Կը կարծէի, թէ ձեռքերուդ մէջ դեղին վարդեր կան ու անկողնիս եզերքը նստած կը փորձես շապիկս հանել,— ըսաւ,— եւ տարօրինակը այն է, որ եթէ ըրած ըլլայիր, չպիտի զայրանայի, գիտե՞ս, շատ տարօրինակ է...

—Քանի որ այդպէս է, Հանիա, ուրեմն սկսիմ շապիկդ հանել,— յարեցի ժպտուն։

Վերարկուին բացուածքէն դուրս կը ցայտէր իր խարտեաշ մերկութիւնը։ Մազերը թափած ու ծածկած էին դէմքին մէկ մասը ու ձեռքերը չափազանց տաք էին։

—Փաթթուինք ու բնանանք, երկու անգէտ մանուկներու պէս,— ըսաւ երկդիմի ու նուրբ ժպիտով մը,— պայմանաւ, որ խոստանաս, թէ պիտի գոհանաս ատով ու պատահածը վաղը առաւօտ պիտի մոռնաս...

—Այո՛,— ըսի անյոյս։

Արեւածագին երբ արթնցայ՝ բազուկներով փաթթուած էր պարանոցիս, գլուխը կը հանգչէր գլխուս բով ու կուրծքերը հազիւ զգալի ցունցերով կը դողային կուրծքիս վրայ։ Կապոյտ ու կարծես ուրախութենէ թրջած աչքերը բացաւ ու հարցուց.

—Մի՞ւր են դեղին վարդերը...

—Ի՞նչ վարդեր, Հանիա, խե՞նթ ես, վարդ չկայ սենեակիս մէջ։

digitised by A.R.A.R.@

—Տարօրինակ է, վստահ էի, որ վարդեր կայիր, դեղին ու մեծապսակ վարդեր։ Ու մտքէս կ'ըսէի. «Այս վարդերը շատ սուղ են ու երէկ գիշեր Աշոտը դրամ չունէր»...

Յետոյ՝ բազուկները բակեց ու նո՛յն մանուկ, երկդիմի եւ նուրբ ժպիտը աչքերուն մէջ, սաւանով ծածկեց կուրծքերուն ցայտքը, աւելի սեղմուեցաւ մարմնիս։

—Առաւօտը ցուրտ է, կը մսիմ...

Դուրսը արեգակ կար սակայն։ Առաւօտը կը խոստանար ըլլար գաղջ ու լի։ Գորովով սկսայ մազերուն ու ձեռքերուն հետ խաղալ ու ըսի.

—Եթէ լաւ աղջիկ ըլլաս՝ համբոյր մը կու տաս, Հանիա, որպէս շնորհակալութեան ապացոյց...

—Իրաւ ես,— յարեց,— ուրիշ մը քու տեղդ կ'օգտուէր պատեհութենէն, ա՛ռ...

Բերանը քիչ մը տամուկ էր ու կարծես ջերմի մէջ։

—Հատ մըն ալ վարդերուն համար, որ քիչ յետոյ պիտի գնեմ, Հանիա...

—Դրամ չունիս, պզտիկ յիմար, բայց լա՛ւ,— աւելցուց բերանը երկարելով,— ա՛ռ...

Ու այս վերջին համբոյրը այնքան տաք էր, սրտանց ու ամբողջական, որ երբ մեր բերանները բաժնուեցան՝ մարմինս քաղցր խոնջէնքի մը մէջ մնաց։ Անորոշ խռովք մը կը քալէր երակներէս։ Կը զգայի, որ եթէ համարձակիմ, կրնամ ամէն բան ստանալ։ Բայց կ'երկնչէի իր աչքերէն, որ կրնային պղտորիլ։ Իր բարեկամութիւնը աւելի քան թանկ էր ինձ համար ու չէի ուզեր, ո՛չ մէկ գնով, կորսնցնել զայն։ Ձեռքերս շփոթութենէ կը դողային ու մարմնիս խոնջէնքը հետզհետէ կը վերածուէր սիրոյ տենդի։

—Օ՜,— ըսաւ բերանը կլորցնելով,— կը տեսնես վտանգը, որ մեծաքայլ կը յառաջանայ...

—Հանիա՜, Հանիա՜...

—Այո՛, ի՞նչ,— ըսաւ, քմահաճ,— ի՞նչ կայ...

Յետոյ՝ ափերը դրաւ բերնիս վրայ։

Ըսաւ.— Էէ՛, լէ՛, պզտիկ յիմար...

Մանկուհիի մը պէս գլուխը դրաւ ուսիս ու կծկուեցաւ մարմնիս։ Կուրծքը ուժեղ ցունցերով կը զարնէր ու ձեռքերը, ուսերուս վրայ՝ կը մատնէին իր ամբողջ խռովքը։ Արեգակի ճառագայթ մը կը խաղար քարձին վրայ։ Մայիս ամսու անուշ օր էր։

—Ի՞նչ մանուկ ես,— ըսաւ, իր նո՛յն նուրբ ու տարօրինակ ժպիտովը,— հաւատացիր երէկ գիշեր, թէ երազի մէջ էի...

—Անշուշտ, Հանիա, քեզմէ չէի սպասեր նման չարաճճիութիւն մը...

—Պզտիկ յիմար, կը տեսնե՞ս որքան նրբամիտ են տղաքը...

digitised by A.R.A.R.@

Յետոյ կրկին համբուրեց գիս՝ իր մսոտ ու ջերմ բերանովը։ Բերանը ծանր էր ու համբոյրին մէջ կը կարծես շատ լուրջ ու տրտում բան մը կար։ Ձեռքերով կը չարչարէր գիս ու բրբջար իր երկդիմի խնդուքովը՝ տղու շփոթ միամտութեանս դիմաց։

—Գիշեր մը կորսնցուցինք բու պատճառաւ։ Գարնան աղուոր գիշեր մը...

—Կրկին կը շահինք, Հանիա՛. այս գիշեր կու գաս հոս...

—Օ՜,— յաբեց կրկին բերնի իւրայատուկ շարժումով մը,— կ'աճապարես, պզտիկ Աշոտ. ամէն օր մարդ նոյն տրամադրութիւնը չ'ունենար։ Առիթ էր՝ փախցուցինք։

Լռութիւնը կրկին մակաղեցաւ սենեակիս մէջ։ Յետոյ ան, թէ՝

—Հիմա, ելլե՛նք ոտքի...

Բայց ո՛չ ինք, ո՛չ ես չշարժեցանք։ Նայուածքս աղապատանքով կախուեցաւ բիբերէն։ Երկուքս ալ յուզուած էինք։ Կարծես անկարելի էր պաեր ու ամէն բան պիտի խզուէր հոդ, երբ ներքին մղումով մը՝ մեծ զորովով գրկեցինք իրար։ Մեր ձեռքերը կը դողային։ Ու առաւօտը մեղսակցութեամբ կը ժպտէր մեզի՝ բաց պատուհանէն։

Մեր նայուածքները գտան իրար ու հոգիս դողաց։ Եւ երկուքով գացինք, մեծ զգուանքներու վրայէն, հեռու ափեր։

☆ ☆ ☆

Գգուանքներուն նուրբերն ու ամէնէ՛ն թելադրիչներն ու անառակները սորվեցուցիր ինձ, Հանիա՛։ Եւ երբ իմ արուի անծայր միամտութեամբս՝ իւրաքանչիւր նոր գիւտի, պզտիկ, այլ անփոխարինելի զգուանքներու առջեւ կը մնայի շփոթ, դուն կը ժպտէիր նո՛յն նուրբ, երկդիմի ու տարօրինակ ժպիտովդ, որուն նշանակութիւնը երկար ատեն չէի գիտեր։

Ձեռքերուդ գիտութեան, հոգիիդ անեզր հարստութեան եւ աչքերուդ աղուոր կրակին առջեւ՝ ադամատ տղայ մը եղայ միշտ, Հանիա՛, զգայուն ու հաւատարիմ, Հանիա՛, եւ երբեք չյաջողեցայ ստացածիս փոխարէնը տալ։ Ձախաւեր՝ սիրոյ ժամուն, կոպիտ ու հողին մօտ, գիս գտար նախնական մարդու մը պէս պարզ, բայց երբ գացիր, մարմինս արդէն գիտէր գուրգուրանքներուն, թեթեւ հպումներուն եւ բոլո՛ր խենթութիւններուն համը։ Քու աչքերուդ մէջ խեղդեցի յանախ բոլո՛ր հոգերս ու ձեռքերուդ վրայ մոռցայ, որ մարդիկ վատ էին եւ ես վէրքեր ունէի։ Եւ ասիկա երբեք չպիտի մոռնամ։

—Հանիա՜, Հանիա՜...

Երբ տխրութիւնս մեծնար, երբ հոգիս ապերախտութեամբ լքէր բեզ ու երբար թափառիլ **միւսին** տանը շուրջը, ցանկապատն ի վեր մագլցէր ու սենեակէ սենեակ իր յուսահատ սէրը

digitised by A.R.A.R.@

տանէր ընծայ, ներողութեամբ կը նայէիր աչքերուս, մատներով կը խառնէիր վարսերս ու նախադասութեամբ մը ցաւս կը վերածէիր մանկական կատակի։ Կ'ըսէիր.— Ո՞ւր ենք, Աշոտ, կրկին մեկնեցանք, կարծեմ...

Նախադասութեանդ կէսին ես կը վերադառնայի ետ։ Կը նայէի աչքերուդ...

—Տե՛ս Իդան, Աշո՛տ, նստած է պատուհանին առջեւ ու կը նայի պարտէզին ծաղիկներուն։ Ուսին վրայ թռչուն մը թառած է, կտուցին մէջ գիտե՞ս ինչ կայ...

Ճակտիս վրայ կը համբուրէիր զիս։ Ցնծուն ու սպիտակ դէմքդ կը շողար մանկութենէդ ու զիս տանելով իրեն՝ կը վերադարձնէիր բեզի ու վիշտս կը խաղաղէր բերնիդ վրայ։

●—Օ՜,— կ'ըսէիր,— նամակ մը, կտուցին մէջ՝ պզտիկ, յիմար նամակ մը...

Ու խոշոր գլուխս կ'առնէիր ափերուդ մէջ։ Եւ երկդիմի բառերովդ երկարօրէն կը խօսէիր։ Եւ միասին կը նամբորդէինք՝ զրգռանքներու վրայէն, հեռու այս բոլո՛ր վշտերէն։

—Հանիա՜...

Ինքզինքդ ընծայեցիր ինձ սրտառուչ քաղցրութեամբ մը, երբ չէի սպասեր այդ շնորհին։ Ու կը թուէր, թէ միշտ դուն էիր պարտական ինձ. մինչդեռ ես գիտէի, որ ո՛չ մէկ բանով կրնամ հատուցանել բեզ մեծ պարտքս։ Որովհետեւ հոգիս այլուր էր։

Գիշերներ կայինք՝ երբ մէկ բառով զիս կը մղէիր աշխատանքի ու ուրիշ բառով մը կը վերադարձնէիր մեր անծայր ու խելակորոյս հեշտութեան։ Աչքերուս մէջ կը զգայի քու ամբողջ անձնուիրութիւնդ ու թաց, թաց շրթներուդ վրայ՝ հոգիդ ամբողջ տենդը, եւ երբ ձեռքերդ յոգնէին զիս սիրելէ՝ բառերդ հանգիստի եւ ուրախութեան պէս էին։ Ու ճանճրոյթը երբեք մեր միջեւ չկրցաւ սպրդիլ։ Մինչդեռ հոգիս անընդհատ կը տառապէր՝ որովհետեւ չէր կրնար ամբողջութեամբ պատկանիլ բեզի։

Երբ մեկնեցար, աչքերդ խոշորցած էին ու շատ վշտահար, բայց քաջութեամբ ըսիր՝

—Այսպէս է կեանքը, Աշո՛տ, հանդիպեցանք, սիրեցինք իրար՝ դո՛ւն հոգիդ մէկ մասովը, ես գուցէ քիչ մը աւելի ու օրեր կայինք, երբ երջանիկ եղանք։ Հիմա, պէ՛տք է բաժնուիլ։ Կը յուսամ, որ յիշատակներուդ մէջ պզտիկ անկիւն մը պիտի ունենամ...

—Հանիա՜, Հանիա՜...

☆ ☆ ☆

Անշուշտ կը սպասէին իրեն։ Աշունը ցուրտ էր։ Ու այդ տան մէջ սովորութիւն ունէին՝ փայտածուխի կրակով սենեակը տաք-

digitised by A.R.A.R.@

ցընելու։ Հապճեպով վերարկուն կը նետէր աթոռի մը վրայ, մինչ տանը փոքրիկը կը փաթթուէր սրունքներուն եւ իր սեւ ու խոշոր աչքերով կը ժպտէր։ Հրաշալիօրէն փխրուն ու քնքուշ աղջնակ մըն էր ատիկա, պզտիկ, շատ կարմիր բերան մը ունէր, կարծես դժուարաւ բացուող, Մարտի ծաղիկներուն պէս։ Անոր թեթեւ մարմինը բարձրացուցած օդին մէջ՝ ամրան մաքուր ու անուշ պտուղի մը պէս կը ճզմէր, կը չարչարէր այդ բերանը, մինչեւ որ մայրը յանդիմանութեամբ նայէր աչքերուն։ Այն ատեն պզտիկը կ'առնէր ուսին վրայ ու կ'երգէր իր տաք ու մատնիչ ձայնովը սիրոյ հինցած մեղեդի մը։ Ու ի՛նչ ալ երգէր՝ կը յաջողէր բառերուն տալ երկրորդ նշանակութիւն մը, առաջինին ետեւ ծածկուած, բայց պատրաստ յայտնուելու։ Ու իր երկմիտ երգերը կը նշանակէին, պարագային համեմատ, բազմաթիւ բաներ։

—Իդա՛, Իդա՛...

—Եթէ յանդիմանութեամբ պիտի շարունակես նայիլ այդպէս, ահա՛ որեւէ պատրուակ պիտի գտնէ ու մեկնի։ Պզտիկ բաներու համար չ'արժեր, որ իր սիրտը խոցեն։ Ինք սիրոյ մուրացիկ չէ...

—Մազերդ պիտի քակուին կարծես։ Զգո՛յշ։ Ենթադրէ՛, որ դողդոջուն ձեռքերով ահա կը հպիմ անոնց, գոց խարտեաշ վարսերուդ։ Այսօր ինչու չես ժպտիր ինձ, ըսէ՛...

—Իդա՛, կեցի՛ր հոս ու նայէ՛ աչքերուս։ Գիտե՛ս, որ ինձմէ վախնալու պատճառներ չունիս։ Տե՛ս, աչքերս ինչպէ՛ս տրտում են...

Մեծաքայլ սկսաւ ճեմել սենեակին մէջ ու բազմաթիւ կորսըուած բաներ վերադարձաւ յիշողութեան։ Գարունը հեռուն է բարեբախտաբար։ Նոյնպէս իր մարմնին անդիմադրելի, վտանգաւոր զարթօնքը։ Տարիներէ ի վեր այսպէս է կեանքը, անկատար երազներու, անկարելի ծարաւներու, տենդերու անվերջ շղթայ մը։ Գա՜ր վաղահաս ծերութիւնը, գա՜ր։ Բաւէ՛ն գրքերն ու ծխամորճը։ Նստէ՛ր թիկնաթոռի մը խորը ու խաղաղութեամբ դիտէր աւարտող բաներուն գեղեցկութիւնը։ Ո՞վ էր, որ կը բախէ իր հոգիին դուռը։ Պէտք է մոռնալ բոլո՛ր երգերը։ Ահա՛ կու գան աշխատանքի երկար ամիսներ։ Անձրեւները պիտի թափին հողին վրայ։ Աշունը ծանր է յղութեամբ։

Ո՞վ է, որ կը բախէ իր հոգիին դուռը...

Ձեռքերուն վրայ զգուանքներ կային։ Շրթները ուռած էին իր մակընթաց յուզումէն։ Դուրսը առաւօտը ծոյլ էր միշտ ու կը սոդար պատերուն տակ։ Ու մոխիրի նման անձրեւ մը աչքերուն մէջ կ'արտասուէր։ Փորի վրայ նետուեցաւ բազմոցին խորը ու սկսաւ իր մանկութիւնը փնտռել։ Պատին քով՝ մեծ թզենի մը կար, որ ափաձեւ եւ լայկան տերեւներով, գրեթէ կը քսուէր հողին։ Ամրան շունչը խիստ տաք էր ու շնչել կարելի չէր այդ պարտէզին մէջ։ Հեռաւոր տարուան մը ընթացքին էր ատիկա։

digitised by A.R.A.R.@

Մէկը կը բախէ իր հոգիին դուռը։ Ո՞վ է, թո՛ղ տայ իր անունը։

Սկսաւ ծխել։ Յետոյ՝ աչքերը ցոլացին, ձեռքերուն վրայ հոգոյն տենդը արագացաւ։ Շարժումներուն մէջ՝ հիւանդ անապարանք մը գայն կը մղէր սենեակին մէկ ափէն միւսը։ Հապճեպով հագուեցաւ ու ելաւ դուրս, աշնան գորշ առաւօտեան մէջ։ Ու մեծաքայլ գնաց կայարան։ Խոշոր գլուխը ափերուն մէջ, կառաշարին պատուհանէն, ահա՛ կը նայի թրջած դաշտանկարներուն։ Խուսափող բաները կ'ընկղմին անձրեւին մէջ։ Ու մէկը կը բախէ իր հոգիին դուռը եւ հեգնութեամբ կ'ըսէ.— Պիտի կենայի՛ր հոդ հապա. գրքի մը էջերուն վրայ պիտի հինայիր հապա...

Ո՛վ որ է՝ թո՛ղ տայ իր անունը։—Իդա՜...

☆ ☆ ☆

Սանդուխներէն բարձրացած ատենը՝ հասակը թեթեւօրէն կը դողար։ Եւ նետած իւրաքանչիւր քայլին հետ, քիչ մը նեղ ու վայելուչ վերարկուին տակէն, կը յայտնուէր երիտասարդ աղջկան իր քիչ մը լեցուն ու պիրկ մարմինը։ Հակառակ մարմնի վարի մասին քիչ մը հեշտաւէտ թանձրութեան, կոնքի լայնքին, սրունքները բարեձեւ էին ու ջղուտ։ Առողջ ու վայրի բան մը կար վրան։ Արագութեամբ կը բարձրանար. աչքերուն մէջ անհանգստութիւն կար սակայն, երբ դուռը բախեց։

Յետոյ՝ իր քայլերուն ձայնը ընկղմեցաւ լռութեան մէջ։ Վիշտը ու նեղսրտութիւնը նստան աչքերուն խորը։ Ծուլօրէն իջաւ փողոցն ի վար։

Կիրակնօրեայ զանգակներ, տէրունական ու երկարաձիգ տրտմութեամբ, անձրեւին մէջէն պատասխանեցին իրարու։ Շըւայտ ուսանող մը, աչքերուն մէջ լպրծուն ժպիտով մը՝

—Կարելի՞ է ընկերանալ, օրիորդ...

Գէշ օր է աշունի։ Ու այս անձրեւը, մոխիրի պէս կը նստի տուներուն, փողոցներուն, սրտերուն վրայ։ Անկարելի է հաւատալ մարդոց...

III

Առաստաղը ցած էր, սեւ ու վիշտի պէս կը փլէր մարդոց վրայ։ Ծուխը լայն խաւերով կը լենար փողոց ամէն անգամ, որ նորեկ մը մտնէր ներս։ Այն ատեն բազմաթիւ բառեր՝ բարեւի,

digitised by A.R.A.R.@

բարեկամական կշտամբանքի, սիրալիր յանդիմանութեան, զարմացումի, հրաւէրի, եւայլն՝ խուլ ու գրեթէ հաճելի աղմուկին մէջ, կը բախէին իրարու ու կ'իյնային նորեկին գլխուն, կը դիմաւորէին զայն։

Անբաւարար ու աղտոտ լոյս մը կը խուէր պատերուն ու կը թափէր սեղաններուն վրայ։ Ցատակը հողէ էր, գէշ հարթուած։ Պանդխտութիւնը, երեկոյեան ժամը եօթէն յետոյ, յանկարծ չես գիտեր ուրկէ՞ կը վերադառնար ու կը շողար մարդոց աչքերուն խորը։ Ու պանդխտութիւնը ո՛չ միայն մարդոց աչքերուն մէջ էր, այլեւ՝ օդի բուրումին, գինիի բարկ համին, արեւելեան աղանդերներուն ու սպասներուն կեղտին, սփոցներու արատներուն, խաղի մաշած, հինցած թղթերուն ու ասդին-անդին, նահատակ կամ հերոս ընկերներու պատերէն թափած ժպիտներուն մէջ։ Յետոյ՝ գաղթական արեւմտահայերէնի՝ չարչարուած, տխուր բառերը կային, զանազան բարբառներու այլակերպ, տարօրինակ, յուզիչ խառնուրդը։ Ու այդ լեզուն ինքնին կը կազմէր այս բոլոր մարդոց եղերական պատմութիւնը։ Հարկ չկար հարցնել, թէ ո՞վ էին, ուրկէ՞ եկած էին։ Կը բաւէր, որ մէկ քանի նախադասութիւն արտասանէին, որպէսզի յայտնի ըլլար՝ թէ այս մէկը, որուն աչքերը արդէն պղտորած են ոգելից ըմպելիէն, Բարձր-Հայքէն էր, իսկ միւսը՝ դաշտային Կիլիկիայէն։

* Հայու դէմքե՛ր, քիչ մը շատ թուխ ու քիչ մը շատ կոպիտ, ձեր սեւ աչքերուն տակ ու վայրենի ցոլքովը, հայու դէմքե՛ր, ձեր բերաններուն հաստ բարութեամբը, երբեմն զօրաւոր ու կամակոր կզակներով՝ որ կը յայտնեն ձեր տէրերուն դարաւոր, սրտտանուչ յամառութիւնը, հայու դէմքե՛ր՝ ակօսուած, հոգէ, բեռէ, վշտերէ հինցած, մթնած նակատներով, յաճախ ծաղկաւեր կամ ծամածուռ, երբեմն բիրտ ու նոյնիսկ քիչ մը անասնական, հայու դէմքե՛ր՝ ձեր պեխերուն անփոյթ, յուզիչ անկումովը, ահա՛ օրերէ ի վեր չածիլուած երեսներով, որոնց վրայ սեւ ու գէշ խնամուած վարսերը իրենց տխուր ստուերը կը ձգեն, հայու դէմքե՛ր՝ ընչաքաղց ու ծածկամիտ, բարի ու արեւելեան, այլ շատ հին ձեր իւրայատուկ գեղեցկութեամբը, հիմա ես ձեզ կը սիրեմ՝ մնայուն ու մեծ սիրով մը ու ձեր յայտնութիւնը, որեւէ փողոցի մը կիսամութին մէջ, սիրտս կը ցնցէ քաղցր յուզումով մը, բանուոր հայերու վայրի դէմքեր...

Դուրսը նո՛յն անձրեւը, որ օրերէ ի վեր բարակ մոխիրի պէս կ'իջնէր քաղաքին վրայ, կը թրջէր նամբան։ Հեռանկարը խրած էր անվերադարձ կերպով կարծես, գիշերուան գիրկը։ Միօրինակ ու շատ մելամաղձիկ երգի կտորներ կը հնչէին, յետոյ կը լուծուէին սեւ դաշտերու լռութեան մէջ։ Ու ամէն բան այնքան տխուր էր՝ որ ո՛չ մէկ ուրախութեան յոյս այս գիշեր կրնար ծլիլ որեւէ սրտի մէջ։

digitised by A.R.A.R.@

Աղօտ ու աղբատ լոյսեր կ'իյնային տուներու առջեւ լճացած մութ ջուրերուն մէջ։ Հազուագիւտ ու աշնանահար ծառեր կը մսէին։ Ու յանկարծ թռչունի մը ճիչը վիրաւորեց լռութիւնը։ Եւ յետոյ՝ սիրոյ երգ մը փրթաւ համատարած լռութեան խորէն ու միւսներէն աւելի երկարատեւ մաղեցաւ, դողաց ցուրտ գիշերուան մէջ։

Այո՛, աչքերը՝ ոգելից ըմպելիէն բիչ մը աւրուած էին, այդ ընկերոջ, որ Բարձր-Հայքէն եկած, ինկած էր այս ափերուն վրայ։ Սպիտակուցը կարմրած էր ու բիբերը զէշ ցոլքով մը կը վառէին։ Ամէ՛ն անգամ, որ բաժակ մը օդի նետէր կոկորդը՝ մարմինը կը ցնցուէր բաղցր, այլեւ խարխլող դողով մը ու աչքերը կարծես աւելի կը պղտորէին։ Դեռ գինով չէր սակայն, միայն ձեռքերը բիչ մը կը դողային ու հողագոյն դէմքը թեթեւորէն սենդէ բռնուած էր։ Դարձած էր տաք, համակրելի։

Պէխերը կը թափէին իր խոշոր ու հաստ բերնին վրայ ու բիչ մը թրջուած էին։ Երբեմն իր չարքաշ եւ մաշած ափերովը կը հրէր գանոնք անդին, որպէսզի նախ՝ արտասանած բառերը չըկորսուէին հոդ, եւ երկրորդ՝ որպէսզի ատեն ունենար զսպելու կարօտն ու յուզումը, որ հիմա խոնաւ տխրութիւն մը կը դնէին աչքերուն մէջ ու ձայնը կը դարձնէին դողդոջ, կտոր-կտոր։ Յետոյ՝ հոգին կը փակուէր, կը հանուէր ու ցոյց կու տար իր ամբողջ թշուառութիւնը։ Խոշոր, ծանր գլուխ մը ունէր՝ որ կը հակէր աջ կամ ձախ, համաձայն իր խօսակիցներու դիրքին։ Ու ամէ՛ն գլխու շարժումի հետ, մարմնին ամբողջ վերի մասը տխուր անկումով մը կը ծռէր։ Յետոյ յոգնեցաւ այլեւս։ Ցիշատակները անշուշտ շատցան ու սեղմեցին կոկորդը, որովհետեւ ումպով մը կուլ տուաւ օդի բաժակը ու հառաչեց։ Եւ այդ հառաչանքը կարծես կու գար երիկամուքներէն։

—Օ՜ֆ, օ՜ֆ...

Անշուշտ երկրին ընդերքը սեւ է եւ խախուտ հոս։ Վարը, հանքահորին մէջ, սեւ ու խոնաւ միջանցքներ կան՝ անկարելի կերպով հեռու գարնան առաւօտներէն։ Ու անել։ Պեղումի եւ անկումի ձայները կը խեղդուին բարձուխի բիրտ դէզերուն տակ։ Արշալուսային վտիտ ճառագայթ մը եթէ ըլլա՜ր զէթ՝ երկրին ընդերքի մեծ խաւարը պատռելու համար...։ Ծառ մը կանա՜չ, մատաղատի կոյսի մը ձայնը...

Միայն բրիչի խուլ ձայները՝ որ կը պատասխանեն սրտերու կարօտին։ Միայն սեւ ու ամէ՛ն տեղ թափանցող ածուխի փոշին։ Բառերը կը խեղդուին սեւ լռութեան մէջ՝ վիրաւոր թռչուններու պէս։ Ու մարդիկ զէշ ստուերներու պէս կը լեցնեն խաւարը։

—Օ՜ֆ, օ՜ֆ...

Լեռներու կապոյտ գիծը ու ակունքներու բաղցր կարկաչը կը պատկանին պատմութեան։ Կ'ըսես՝ որ ձեր գիւղէն կ'երեւէին

digitised by A.R.A.R.@

Երկոքին Մասիսները։ Այդտեղ տարօրինակ ոչինչ կայ։ Կ'երեւին նաեւ Վանայ լճի ափէն, երբ օդը պայծառ ըլլայ հայոց աշխարհին վրայ ու եթէ մարդ բարձրանայ որեւէ սարի կատար։ Այս բոլորը սակայն, հո՛ս, մասնաւոր կարեւորութենէ զուրկ են։ Դուրսը անձրեւը կը շարունակէ տեղալ։ Ու բոլո՛ր տուներէն ներս կը սպասեն այս բոլո՛ր մարդոց վերադարձին։ Ընթրիքի ժամն է։

Վերադարձէ՛ք, վերադարձէք...

Ձեր տուներուն աղտոտ ու աղքատ լոյսերը կ'իյնայինն դռներուն առջեւ լնացած մութ ջուրերուն մէջ։ Մանուկները կը ճչան՝ մաշած ու թշուառ ծիծերու վրայ ու պզտիկ մանուկի տաք բերաններ ահա՛ կը սորվին աղքատութեան դառն համը։ Կը յիշեմ, որ անգամ մը բարթիչներս թրջած են, երբ դողահար ձեռքերով ձեր փոքրիկ ու անմաքուր ոտքերը շոյած եմ եւ զգացած՝ կեղտի ու թշուառութեան մէջ հասակ նետող ձեր փխրուն մարմիններուն վտիտ գեղեցկութիւնը, նժդեհ, բանուոր հայո՞ւ մանուկներ։ Պալարներ, աղտ, սրնունդի պակաս, թաց ու թշուառ հագուստներ, ահա՛ ձեր բաժինը, ի՛մ խեղճ տղաքս։ Մեծցէ՛ք, մեծցէ՛ք, վաղը հարկաւ պիտի ծագի արեւածագը, պիտի ժպտի՞ նորածիլ ծաղիկներուն ու մեծ ջուրերու եզերքը պիտի խաղաք սպիտակ գառնուկներուն հետ։

Նայուածքս կը դեզերի տունէ տուն, անձրեւին տակ կը թրջուի ու արեւածաղիկի չորցած ցողունները տակ կը յոգնի տխրութենէ։ Ո՞վ է այս տղան, որ մեսրոպեան այբուբենը կը հեգէ հանքի լապտերի մը սպիտակ լոյսին տակ։ Աչքերը կապոյտ են, միայն դէմքին վրայ տաք երկրի մեծ սպի մը կայ։ Տաք կեբակուրի բոյրը բռնած է սենեակը։ Լուացուած ու ներսը՝ չուանները վրայ փռուած ներմակեղէնները կ'արտաշնչեն ու խոնաւութիւնը կը թափանցէ ամէնուրեք։ Մանուկ մը կը խաղայ յատակին վրայ՝ կատուի ձագի մը հետ։ Յատակը քար է։ Ո՞վ իր մայրը, վերցո՛ւր զայն, դի՛ր բազմոցի մը վրայ, չորցո՛ւր իր յուզիչ ու պզտիկ դէմքը, տե՛ս, աչքերը ի՞նչ անուշ են...

Վերադարձէ՛ք, վերադարձէ՛ք...

Յետոյ՝ երգ մը կը փրթի, կ'անջատուի աղմուկէն ու կը հպի բոլորին սրտի թելերուն։ Արտասուքի կաթիլներ կը կախուին խանձած թարթիչներէ։ Ու եղանակը, քաջալերուած՝ կ'ընդարձակուի ու կը լեցնէ միջոցը։ Յետոյ՝ դուռը կը բացուի եւ ծուխին մէջէն կը յառաջանան երեք մարդիկ։ Եկած են քաղաքէն։ Քիչ յետոյ՝ ժողով կայ։

☆ ☆ ☆

Բնաւ չպիտի պատահի՞, բնա՞ւ, որ որեւէ ջինջ ու ընդարձակ ուրախութիւն խորունկէն գայ ու նորոգէ, մաքրէ բոլո՛ր այս մար-

digitised by A.R.A.R.@

դոց հոգիներուն ժանգը։ Նորոգութեան մեծ ալիք մը ազատէ զիրենք այս անյատակ ֆունէն, վերադարձնէ վաղուց կորսուած մանկութիւններու, կանչէ առաւօտեան, արթնցնէ զիրենք այս կոբամակ գերութիւնէն ու իրենց աչքերուն խորը զետեղէ զարթօնքի անբացատրելի հրճուանքը։

Երբեմն անցորդ ընկերներ կու գան ու անոնց հոգիներու խաւարին մէջ կը վառեն խանդավառութեան ու յոյսի ջահեր։ Տենդը կը բարձրանայ ու ապագայ պայծառ ակնկալութիւններու լոյսը կը շողայ նուաղած աչքերու խորը։ Արտասուքի կաթիլներ կը դողան ցօղի հատիկներու պէս։ Յետոյ, յաջորդ օրը՝ նո՛յն մութը կը չոքի իրենց հոգիներուն վրայ։ Ամէ՛ն բան կը դառնայ աղքատ, գորշ, անփարատելի։

Լեռներու կապոյտ գիծը եւ ակունքներու ջինջ կարկաչը կը պատկանին պատմութեան։

Ո՞վ պիտի կարենայ քիչ մը ծաղիկներու բոյր, գեղեցիկ բաներու ծարաւ ու յագեցումի կարելիութիւն, քիչ մը սիրոյ երգ, քիչ մը բարձունքներու լոյս դնել այս բոլոր կեանքերուն մէջ։ Բանալ երջանկութեան դուռը ու ըսել.—Մտէ՛ք...

Պեխերը միշտ կը թափէին իր խոշոր ու հաստ բերնին վրայ եւ իր չարքաշ ու մաշած ափերովը կը սրբէր զանոնք։ Աչքերուն խորը կարծես լոյս վառեցին։ Մեծ ու ծանր գլուխը եղբայրութեամբ հակած, խմող մարդու տաք ձայնով մը կ'ըսէր՝

—Մէ հա՛տ ըմ ալ խմէ, ընկե՛ր Աշոտ...

Քիչ մը գինով էր հիմա։ Ձեռքերուն դողը մեծցած էր։ Բազմաթիւ յիշատակներ կը վերադառնային իր մոլար հոգւոյն։ Օղիի բաժակը տրտունջով կը դողար ոսկրուտ մատներուն մէջ ու պարունակութիւնը կաթիլ-կաթիլ կը թափէր աղտոտ սեղանին վրայ։ Իր չարքաշ ու լայն ձեռքով կը զարնէր Աշոտի ուսին։ Մարմնին յարաճուն ջերմը կը ցոլար աչքերուն մէջ։ Ու մակընթաց գինովութիւնը կ'ազատէր զայն իր սովորական վերապահութենէն։ Յետոյ սկսաւ երգել գրեթէ ծեր մարդու յուզիչ, կերկեր, ծխախոտէ եւ ոգելից ըմպելիէ կարծես խեղդուած, փակուած ձայնով մը.

Լուր տարածեցէք դուք համայն հայութեան,
Հայոց պաշտպան Բեռին մտաւ գերեզման...

Ամբողջ գիտցածը՝ գրեթէ այս էր, այդ երգէն ու յետոյ ուրիշ տող մը՝ որ կարճ լռութիւններէ յետոյ կ'երկարէր, կը ձգուէր ու կը լուծուէր ընդհանուր ու հաճելի աղմուկին մէջ։ Ու այդ տողին վրայ՝ հոգին կը բացուէր պատմութեան ամբողջ տենդահար հեռանկարի մը առջեւ, կ'երեւային խուլ տարիներ, դէմքի կտորներ, տուներ, իրենց գիւղը ու զուցէ նաեւ զոյգ Մասիսները։ Կը վերադառնար իր արեան կռուի օրերու ջերմը ու քիչ մը հերոսութիւն՝ այս մթամած օրերուն մէջ.

digitised by A.R.A.R.@

Չորրորդ գնդի հրամանատար Բաջ Քեռի...

Քանի մը երիտասարդներ խլեցին երգը իր տամուկ շրթներէն ու ահա՛ հայրենիքը։ Հազարամեայ հողերու վրայ ոսկորներնին ու իրենց մանուկներուն արիւնը սփռած աշխատաւոր մարդոց հայրենիքը խոշորաձայն վերադարձաւ ու այս ցած, ծուխէ բեռնաւորուած առաստաղին տակ հաստատեց իր թագաւորութիւնը։ Լեռներու կապոյտ գիծը ու ակունքներու ջինջ կարկաչը կը պատկանին պատմութեան։ Բայց այս երգերը կարելի չէ խլել իրենցմէ։ Ծուէն-ծուէն, պատառոտուն, աղբատ այս երգերը...

Ռըվանտուզի մէջ, Քեռիի կողքին էր, երբ վէրք ստացաւ։ Խոշոր ու ծանր գլուխը հակած Աշոտի ուսին՝ ջղային ու ջերմէ բռնուած մատներով բարձրացուց կապոյտ տաբատը ու ցոյց տուաւ ծունկէն վեր երկար սպի մը։ Աչքերուն մէջ հիւանդ ու գրեթէ վայրի ցոլք մը կար ու շարժումներուն մէջ՝ գինովի խարխուլ ու անբնական յուզում մը։ Մազոտ, վտիտ, շատ նիհար սրունքները կը դողային ու ծունկերուն կափարիչներուն վրայ դեռ ածուխի փոշի կար։ Յուսահատութեամբ ցոյց կու տար սպին ու կ'աւաղէր։ Յետոյ, յստակատեսութեան յեղակարծ վերադարձով մը թօթուեց գլուխը ու նոր բաժակ մը օղի նետեց կոկորդը։ Գլուխը ծռեց աջ ուսին ու քինախնդութեամբ լռեց։ Ամբողջ անձին վրայ մեծ վիշտ մը կար եւ չարքաշ ու մաշած ձեռքերը, լքուած իրերու պէս՝ մնացին անոք, ծունկերուն վրայ։

Երիտասարդ մը սարսեց զայն, բռնելով ուսէն։ Կարծես մեկնած էր ու վերադարձաւ։ Յետոյ՝ նո՛յն յոգնած ձայնով աղաղակեց նաշարանատիրոջ ծաղկաւեր դէմքն ի վեր՝

—Շան տղա՛յ, մէ՛ շիշ ըմ էլ բեր, ըսինք...

Ո՛չ, այսպէս գէշ, յուսահատ օրեր չէր տեսած։ Գարնանամուտին քսանմէկերորդ տարին պիտի վերջանայ։ Քսանմէկ տարիէ զինուոր էր այս կուսակցութեան ու այսպէս գէշ, յուսահատ օրեր չէր տեսած։ Այս տղաքը չեն գիտեր ի՞նչ է կուսակցութիւնը։ Հանդէս, ժողով, անդամավճար, միօրեայ տուրք, ռամկավար ու բարեգործական եւ կարմիր տետր, դրօշակ։ Դողահար ձեռքով կը զարնէր Աշոտի ուսին՝

—Էս կուսակցութիւն չէ, էս յեղափոխութիւն չէ, Աշո՛տ ջան, Է՛ս...

Այս տղաքը չէին գիտեր։ Կային՝ որ դեռ այս տարի մտած էին դրօշի տակ, պանդխտութեան մէջ։ Արեան մկրտութիւն չունէին։ Ջղայնութեամբ խուզարկեց գրպանը ու դուրս քաշեց սեւցած, աղտոտ, կարմիր տետրակ մը։ Ցոյց կու տար դրոշմաթղթերը ու ձայնին մէջ վաւերական, տարափոխիկ յուզումով մը կ'ըսէր՝

—Կպցուր մէ՛ հատ, տասը հատ ու տո՛ւր հանդիպողի ձեռք, եղաւ կուսակցակա՞ն...

digitised by A.R.A.R.@

Նայուածքը կախուած մնացած էր միւսներու դէմքէն՝ կարեվէր, տխուր, ապրած ու տառապած մարդու քաջ նայուածք մը։ Ու կը սպասէր պատասխանի։ Յետոյ՝ այդ նայուածքը մնաց յուսահատ ու հանդիպեցաւ ցուրտ, քար լռութեան։ Եկած, մօտեցած էին բոլո՛րը։ Մեր, հին ընկերոջ խօսքերուն ջերմ շեշտը զանոնք բոլորը վերադարձուցած էր նո՛յն հոգեկան տագնապին, նոյն մտահոգութեան։

Քաջ, սեւ դէմքով տղայ մը, նայուածքը առանց բարձրացնելու յարեց՝

—Քամակներնիս կաշի կապեցին հանքը փորելէն, վրանիս մարդու շնորհք չմնաց...

Յետոյ՝ իր սեւ, զարթուն աչքերը բարձրացուցած Աշոտին, իր զուրկ երիտասարդութեան ամբողջ ցաւը ձայնին մէջ, ցոյց տալով կոշկոռ կապած, այլանդակուած, վիրաւոր ձեռքերը՝

—Փորէ՛, փորէ՛, ծարը ելած չունի...

Բնաւ չպիտի պատահի՞, բնա՛ւ, որ որեւէ զարնանային շունչ մաքրէ, լուայ այս բոլոր մարդոց հոգիներուն վրայ նստած փոշիի թանձր խաւը։ Յատակէն՝ սրբէ տանի այս ամբողջ մրուրը։ Հողակպիկ ու խոնաւ այս տուներէն՝ բարձրանան քիչ մը վեր ու զգան վերազարթնող բաներուն անկորնչելի գեղեցկութիւնը։ Բանաստեղծութիւնը՝ վերջապէս իջնէ՞ վրանին որպէս մանանայ ու թրջուին երաժշտութեան անձրեւին տակ։

Բնաւ չպիտի պատահի՞, որ իրենց մոռացումը փնտռեն բաժակ մը օդիէն անդին...

* Եւ յետոյ մէկ քանի տարի առաջ էր կրկին, գարնան կիսաթափանց ու անգայտ իրիկուն մը, ոստայնի մը փափկութեամբը՝ կ'իյնար քաղաքին վրայ։ Հոգիս ձայնը ձգած կ'երգէր իր ուրախութիւնը։ Հանիան գրեթէ անկատելի ժպիտով մը, ափերուն մէջ կասկենի սպիտակ, ծանրաբոյր ողկոյզ մը, հոգիս կը հրաւիրէր խաղաղութեան։ Քնքուշ թաթիկներով մանուկներ աւազէ երազներ կը կառուցանէին աւազանին քով ու իմ նայուածքս անառակութեամբ կը շրջէր Հանիայի սպիտակ գեղեցկութեան շուրջ։ Օրը կը տարաժամէր. ծառուղիներն ու թագուհիներու գորշ արձանները ոռոգուած էին երեկոյեան վերջին լոյսերով։ Ուսանողներ կ'անցնէին սուլելէն։ Գիշերը պիտի ըլլար քարի ու առատաձեռն։

Յետոյ՝ մութը ինկաւ։ Լռութիւնը կրնար բովանդակել երազներուն ամէնէն անկարելին։

Համբուրեցի Հանիայի տաք ափը ու շրթներս կշտացան իրենց անօթութենէն։

—Գիտե՞ս,— ըսաւ,— նեղ, բանուորական, կարճ ու կիսամութ փողոցի մը մէջ պզտիկ ճաշարան մը կայ։ Սնունդը մաքուր է ու առողջ, լաւ գինի կայ, երթա՛նք ընթրենք...

digitised by A.R.A.R.@

—Ինչու՞ հոդ եւ ո՛չ ուրիշ տեղ...

—Որովհետեւ, տարօրինակ է, հոգիս այսօր պէտք ունի խոնարհ մարդոց բարեկամութեան։ Տեղ մըն է՝ ուր հոգիներու հաւասարութիւնը կարելի է։ Ընտանութիւնը՝ անհրաժեշտ բանի մը պէս է ու, հաւատա՛, հոդ կարելի չէ լռել ու վերապահ ըլլալ...

Ջեռիէս քաշեց ու բարձրացուց։ Իր երկմիտ ժպիտը կրկին բուսաւ բիբերէն։

—Դէմը հանրայինն տուն մը կայ, ամբողջովին դեղին ներկուած։ Երեւակայէ՛ անունը...

Բազուկը նետեց ուսիս։ Մատները հանգչեցան ծոծրակիս վրայ։

—«Պտուղներու կողով»,— յարեց մանկութեամբ,— ու վայրը ապահով է։ Տասը-տասնհինգ աթոռ կայ միայն, ցած, գրեթէ աղտոտ, մէկ լոյսի կտուց մը ու լաւ ծերուկ մը միայն՝ որ կերակուրները կը պատրաստէ ու կը սպասարկէ նոյն ատեն...

Ցետոյ հասանք։ Ու առաջին բոպէին իսկ՝ քաղցս մեծցաւ։ Խորոված ու թարմ մսի ախորժաբեր բուրումը զարկաւ ռունգերուս։ Կարմիր ու անխարդախ գինին տաքցուց արիւնս։ Հանիայի մեղսակից ու անուշ ժպիտը՝ խոստումի պէս էր։ Ու ոչխարի կոդիկները, իրենց թարմ արեան համով, կը գրգռէին ախորժակս։ Գդակը աչքերուն վրայ քաշած բանուոր մը, ծխամորճը հակառակ կողմէն զարնելով սեղանին, մոլտաց՝

—Ուսանող ընկեր, ախորժակդ տեղն է...

Իսկ հունգարական հրեայ մը՝ որուն աչքերուն մէջ կարծես թէ մանրանկար կատուներ կային, պզտիկ խնդուքով մը քրքջաց ու աւելցուց՝

—Կարծես թէ քար կրած է, կամ թէ...

Եւ երկուքն ալ նայեցան Հանիային՝ կողմնակի ակնարկով մը։ Ուրախ ու ընկերական ծիծաղ մը վարակեց բոլորը։ Իսկ Հանիան առանց շփոթելու՝

—Բան մըն ալ ըրած չենք, տղա՛ք, կը սպասէինք գիշերուան...

Շինուքեան բանուոր մը՝ որ ներս մտնելու վրայ էր եւ որուն աչքերը արդէն պղտորած էին գինիէն, յարեց՝

—Լաւ մը գուարճացէք, տղա՛ք, եւ երբ յոգնիք՝ փաթթուեցէք ու քնացէք...

Հաստ վանառորդուհի մը՝ անտաշ ու անխնամ գլուխով մը ինկաւ ներս ու գոռաց՝

—Պատրո՛ն, ի՞նչ կայ ուտելիք...

—Ոչխարի թարմ կոդիկ, խորոված, գետնախնձոր ու աղցան,— պատասխանեց ծերուկը, շարժելով գաղիական հին ու անփոյթ պեխերն ու մօրուքը,— մտի՛ր ներս, աղաւնեա՛կս...

—Ծերո՛ւկ, բոլորին ալ գինի լեցո՛ւր,— ըսաւ շինուքեան բանուորը։

digitised by A.R.A.R.@

Յետոյ՝ բոլորը միասին սկսան խօսիլ։ Պզտիկ բանուոր մը Հանիայիին կենաց կ'առաջարկէր.

—Ադուոր աչքերուդ, քոյրի՛կ ջան...

Նայուածքս գինով էր եւ անյիշալար։ Կ'ուզէի ընկերուհիիս գլուխը առնել ափերուս մէջ ու ճզմել գինիէն թրջած թերանը։ Բայց ժամանակ չեղաւ, որովհետեւ պզտիկ բանուորը, որուն հասակը կը խարխլէր, ոչխարի խոշոր ու տաք աչքերով կը նայէր Հանիայիին ու գինովի աղապատանքով՝ ցոյց կու տար վաղահաս ու չարագործ աշխատանքէ յոգնած ճակատը ու կը մնջէր՝

—Համբոյր մը, քոյրիկ ջա՜ն...

Ակնարկս սիրով հանգչեցաւ ընկերուհիիս բերնին վրայ։

—Համբուրէ՛, Հանիա,— ըսի գրեթէ գունատ ու ինձ թուեցաւ, թէ ես ու պզտիկ բանուորը հեռաւոր ժամանակներէ ի վեր լաւ ընկերներ էինք,— համբուրէ՛ շրթներուն վրայ, Հանիա՛, համբուրէ՛ շրթներուն վրայ...

Յետոյ՝ պզտիկ բանուորը ձեռքս թօթուեց։ Արտասուքի խոշոր կաթիլներ կը գլորէին այտերն ի վար։ Բանուորական ճաշարանի այդ աղմուկը կրնար բովանդակել երազներուն ամէնէն անկարելին։ Դիմացէն թոչուն պարերգ մը կը լեռնար ներս։

—Քոյրս, անցեալ շաբթուն, հիւանդանոցը մեռաւ,— ըսաւ արցունքներուն մէջէն,— կեանքը դժուար է, մարդ երբ շատ մտածէ, կրնայ խենթենալ...

—Հա՛, դիւրին չէ,— յարեց շինութեան բանուորը փիլիսոփայօրէն,— պատրո՛ն, կարմիր գի՛նի...

Յետոյ՝ դուրս եկանք ու փողոցին անկիւնը, կիսամութին մէջ՝ մեր մարմինները անգուսպ գինովութեամբ մը երկարօրէն գրկեցին իրար։ Բերնին վրայ գինիի համ կար ու նայուածքը խոստումի պէս էր։ Ինձ թուեցաւ, որ կեանքը դիւրին է եւ կը բաւէ, որ մարդ երկարէ ձեռքը, իր բաժին ուրախութիւնը ստանալու համար։

☆ ☆ ☆

Յանկարծ, խօսակցութեան ընդհանուր աղմուկէն անջատուեցաւ մանուկի երկչոտ ձայն մը։ Զգայուն ու յուզիչ բան մըն էր այդ ձայնը, որ եկած էր յիշեցնել՝ վարի աղքատ տուներուն մէջ սպասող կիներուն անձկութիւնը։ Յիշեցնել՝ որ սեղաններ յարդարուած էին, ընթրիքը պատրաստ էր ու ամբողջ տունը կը սպասէր հօրը վերադարձին։

Խնուն, անխնամ մազերով տղայ մըն էր։ Ձեռքերը աղտոտ էին, դէմքը՝ նոյնպէս։ Բայց աչքերուն մէջ կար մանկութեան աղուոր ճառագայթը։ Պզտիկ գլուխ մը ունէր ու գէշ կոփուած, նեղ ճակատ մը։ Հին ու տաքեւ հագուստները աւելի կ'այլանդա-

digitised by A.R.A.R.@

կէին արդէն անհամաչափ մարմինը։ Ու ամբողջ իր պզտիկ անձէն կը յայտնուէր զրկանքի ու նեղութեան մէջ ապրող ընտանիքի մը թշուառութիւնը։ Տղու իր ձայնը սակայն բիչ մը պայծառութիւն մտցուց վշտէ ծանրացած մթնոլորտին մէջ։ Իր վտիտ մանկութիւնը՝ սեւ պատի մը տակ ծլող բոյսի մը պէս, մելամաղձոտօրէն զուարթ էր։

Մէկը՝ իր հաստ ձեռքերուն մէջ առաւ անոր գլուխը ու ձախաւեր բառերով, ուր ի զուր հինցած ձայն մը կ'ուզէր իջնել մինչեւ մանկութիւն, աշխատեցաւ խօսեցնել զայն։ Բայց մանուկը շփոթ՝ այդքան հասակաւորներու մէջտեղ, կը կծկուէր հօրը սըրունքներուն մէջտեղ ու յամառութեամբ կը լռէր։

Նոյն բաջ, սեւ դէմքով տղան սկսաւ գլանիկ մը փաթթել, հայրենի երգ մը մրմռալէն։ Հաստ ու կաշի կապած մատներուն մէջ գլանիկը կը դառնար անընպատակ արագութեամբ մը։ Առանց վերջացնելու՝ խզեց լռութիւնը ու նոյն վշտաբեկ ձայնով բսաւ՝

—Ոսկորներնիս պիտի փտին հոս, երիտասարդութիւն չտեսած ծերացանք...

Մազերուն մէջ սպիտակ թելեր ինկած էին ու ճակտին վրայ՝ կանխահաս կնճիռներ։ Ձայնը հետզհետէ կը ստանար խուլ, բինախնդիր շեշտ մը։ Դուրսը անձրեւին ձայնը մեծցաւ ճամբուն վրայ։ Առաւօտը շատ հեռու էր՝ բոլորին հոգիներէն։ Եւ այս բոլոր արտասանուած խօսքերը կը սպասէին պատասխանի։

Հոգին կը նմանէր լիճի՝ յետմիջօրէին։ Յետոյ՝ մութը ինկաւ վրան ու գիշերուան հողմը խորունկէն պղտորեց ջուրերը։ Ծառերը սկսան հեծել եգերքներուն վրայ։ Հիմա արդէն ալեկոծութիւն էր։ Մէկը կը կանչէր գինքը կարծես։ Ո՞վ էր, ո՞վ...

—Մէ՛ հատ բմ ալ լից Աշոտին, խմէ՛, տղայ, արիւնդ կը տաքնայ...

Հոսուն ու նրբօրէն սպրդող ջերմ մը կար արդէն երակներուն մէջ։ Կէս-բունի մէջ եղող իր ատելութիւնները ահա՛ կ'արթննային մէկիկ-մէկիկ։ Ու անոնց բովն ի վեր, նաեւ՝ միշտ ետ հրուած, մութի մէջ ձգուած սիրոյ բռնակալ փափաքներ։ Շրթները ծարաւ էին համբոյրի ջերմութեան։ Սիրելի թերան մը թող փակէ՛ր զայն ու բառերը թո՛ղ մնային անտարտ։ Նուրջը զարնան լոյսը կը սպրդի մարգերուն մէջ ու խոտերէն կը բարձրանայ արթնցող բուսականութեան ստողջ ու կենարար շունչ մը։ Բզէզներ, զատկամիջատներ, երփներանգ թիթեռնիկներ կը ցատկեն ծղօտէ ծղօտ։ Քիչ մը վարը ջուր մը ջինջ, գաղտնի ջուր մը՝ գրեթէ անլսելի կարկաչով մը կը սահի մարգերու եգերքն ի վար։ Ծաղիկներէն զով ու մեծ բուրում մը կը բարձրանայ, կը գրաւէ միջոցը։ Սաղարթներուն մէջ՝ սիրոյ ծարաւէ խեղդուած թռչուններու էգ ձայներ կան։ Բնութիւնը ամբողջ զարթօնքի եւ ստեղծագործութեան մէջ է։ Կակաչի կարմիր

digitised by A.R.A.R.@

բաժակներ կ'արիւնին ճամբաներուն եզերքը։ Ինք միշտ այսպէս տեսած է շրջանակը՝ ուր երիտասարդութիւնը պիտի յագենայ իր բոլո՛ր ծարաւներէն։ Այս ծանր, խոշոր գլուխը պիտի հանգչեցնէ փափուկ ուսի մը վրայ ու պիտի ըսէ՝

—Ահա՛ կը սկսի առաւօտը, Իդա՛. ծաղիկները կ'արթննան իրենց նինջէն ու հոգիս կը զարթնու։ Տե՛ս, աչքերուս մէջ գէշ մեռած մանկութիւնս, որ կը ժպտի բեզի։ Ձեռքերս խստապահանջ չեն, հակառակ իրենց տենդին եւ բերանս, տե՛ս, ինչպէս հեզ է...

—Հարկ չկայ խզել այս համատարած ու մեղմանուշ երգը։ Բառերը աւելորդ են։ Հեռուն մնացած վշտերը կրնան վերադառնալ մեզի։ Վայրկեանին լիութիւնն է միայն բացարձակ։ Իդա՛, ափդ դի՛ր շրթունքներուս վրայ...

—Քաղաքը մեզմէ դուրս է ու գիշերը անկարելի։ Կը բաւէ մտածել վերադարձի մասին՝ պղտորելու համար առաւօտեան ջինջ զեղեցկութիւնը։ Շնչէ՛ բոյրը՝ որ կը բարձրանայ ծաղիկներէն, հպէ՛ խոտի ծղիկներուն, աչքերուդ մէջ ընդունէ՛ ամբողջ առաւօտը։ Տե՛ս, ծառերը ինչպէս կը դողան, կարծես մերկ կիներու իրաններ ըլլային...

Երազը կ'երկարաձգուի իրականութեան մէջ։ Ձեռք մը կը բարձրանայ ու լուռ անգթութեամբ մը կը տապալէ այս փխրուն շէնքը։ Քունքին վրայ սիրտը կը զարնէ հապճեպով եւ ահա՛ կէսքունի մէջ եղող բոլո՛ր արդար զայրոյթները կ'արթննան։ Արմուկով ծռած սեղանին վրայ՝ կը խածնէ վարի շրթունքը ու բառերը կը հասուննան, կմախք կը կապեն հետզհետէ։ Աչքերուն խորը թեթեւ գինովութեան մը անուշ լոյսը ահա՛ կը վառի եւ ձեռքերը կտրուկ շարժումներու, կրքով արտասանուած նախադասութիւններու մէջտեղ, յուզումը կէտադրելու ծարաւը ունին։ Գլուխը ծանր է, մեծդի ու հասուն հասկի մը պէս կը հակի վար։ Եւ դուրսը անձրեւին ձայնը կը մեծնայ։ Աշունի գէջ գիշեր է, դըժուար պիտի ըլլայ վերադարձը։

Երբ առաջին անգամ խօսք առաւ՝ բազմամարդ ժողովի մը մէջ, ամբողջ մարմինը ջերմութեան ու մակընթացութեան մէջ էր։ Ձեռքերը սեղանին վրայ կը տառապէին տարօրինակ դողով մը։ Շուրջ հինգ-վեց տարի առաջ էր։ Կզակը հազիւ սկսած էր սեւնալ եւ երէց ընկերները՝ երբ փողոցը հանդիպէին իրեն, բարձրէն ցած իջնող ձայնով մը կ'ըսէին.— Աշո՛տ, ինչպէ՞ս ես, լա՞ւ ես, տղաս...։ Կային ուրիշներ ալ՝ որոնց ձայնը շահախնդիր, կարծես գաղտնօրէն զձուռ շեշտ մը կը ստանար, երբ կ'ըսէին.— Է՞հ, այս տղաքն են կուսակցութեան վաղուան յոյսը...։ Բայց մարդ կը զգար յետընթաց, այլեւս սնանկ սերունդի մը անկումի անվերադարձ վախը, իրենց տեղը ո՛չ մէկ գնով գիջիլ չուզող մարդոց սուտ աղապատանքը այդ բառերուն մէջ։ Հիմա,

digitised by A.R.A.R.@

որ լաւ կը ճանչնար բոլորը, գիտէր, որ այսուհանդերձ լաւ, բաջ ընկերներ էին այդ պայքարի մէջ հինցած, մաշած մարդիկը։ Բայց այն ատեն՝ իր ամբողջ երիտասարդութիւնը կ'ընդվզէր երէցներուն դէմ, որ պատեհ կամ անպատեհ ժամու, իրենց տարիներու ծառայութեան ծանրութիւնը կը նետէին վէճի նժարին մէջ։ Անողոքելի, խիստ ու ոխակալ ձայն մը կը բարձրանար հոգիէն ու կ'ուզէր ընդմիջել ու գոռալ, երբ գէշ ծամածռութեամբ մը, դառնալով երիտասարդներուն, կը սահեցնէին թունաւոր սպրդուք մը՝

—Քսան տարի առաջ՝ մե՛նք ալ այն նո՛յն խօսքերը նո՛յն խանդավառութեամբ կրկնած ենք, երիտասարդ ընկերներ, բայց կամուրջին տակէն շա՜տ ջուրեր անցան անկէ ի վեր...

Եւ այս «երիտասարդ»ը իրենց հմայաթափ շրթներուն վրայ՝ թաքուն նախատինքի մը պէս էր եւ կու գար դաշոյնի պէս կը խրէր սրտին մէջ։ Հաւասարութեան, ընկերական ազնիւ մեծանձնութեան մեծ ծարաւ մը կը բարձրանար հոգիէն, բայց կը լռէր։ Մէկը կար մանաւանդ, կասկածելի անձնազոհութեամբ ու գէշ դէմքով մէկը, որ անընդհատ կը խօսէր «քսանեօթը տարուան փորձառութենէ»։ Այդպէս «տաքարիւն երիտասարդներ շատ տեսած էր»։ «Թող ցոյց տա՛ն ինքզինքին, բան մը ընե՛ն, յետոյ կը խօսին»։ Ու անշուշտ հրապարակը փակ էր միշտ, արմունկներով պէտք էր ճամբայ բանալ՝ կարենալ յայտնուելու համար։ Պայքարի, աշխատանքի, պատասխանատուութեան բոլո՛ր կէտերը գրաւուած էին՝ հիներու կողմէ։ Կարելի չէր կենդանի գործի տենդին մէջ, իյնալով-ելլելով՝ կոփուիլ, հասունցնալ, ոսկոր կապել։ Բայց այդ պատճառ մը չէր, որ նո՛յն մարդիկը, ծածուկ ուրախութեամբ մը չգոչէին.—Եկէ՛ք, աշխատեցէք, ասպարէզը բաց է բոլորին առջեւ։ Մեծ-պզտիկ չկայ այս կուսակցութեան մէջ...

Բաժակ մը օղի նետեց կոկորդը ու գլուխը, շատ ատոք հասկի նման աւելի ծռեցաւ։ Շուրջը՝ տղաքը կը վիճէին։ Գէշ տարիներ էին, կարծես փակուղի էր, կարծես ելք չկար։ Մէկը դառնութեամբ յարեց՝

—Ի՞նչ պիտի ըլլայ վերջերինիս, ի՞նչ պիտի ըլլայ...

Հինգ-վեց տարին՝ կուսակցական կեանքի մէջ, մեծ բան մը չէ, բայց վերջապէս...։ Գիտէ ո՛վ է խախուտ, ո՛վ է ամուր։ Խոշոր բառերուն ետեւէն՝ կը ճանչնայ մարդիկը ու այլեւս իրենց քսան-քսանհինգ տարիներովը չեն կրնար անվաւեր ու անարժան հեղինակութիւն մը պարտադրել իրեն։ Հիմա՝ ի՛նք ալ՝ ունի ի՛ր պատասխանը, վայրագութեամբ կը նետէ յամառող մարդոց երեսին զայն։ Կ'ըսէ՝

—Այս սերունդը գետնէն վերցուց ձեր պատառոտուն դրօշակը։ Ձեր խարխլած հասակներուն քով՝ նեցուկ եղաւ։ Եկաւ կու-

digitised by A.R.A.R.@

սակցութեան անշահախնդրութեամբ, գէշ օրի, պարտութեան եւ տեղատուութեան մէջ՝ ձեզ բերաւ իր ջերմ ու ամբողջական նուիրումը։ Երբ մէկիկ-մէկիկ կը լրէիք դիրքերը, ձեզ իր վիրաւոր ուսերովը հրեց առաջ։ Համարձակութիւն պէտք է, ընկերնե՛ր, նուիրապետութեան խնդիր յարուցանել, երբ պայքարը տաք է ու ամէն րոպէ պէտք է պատրաստ ըլլալ...

Ու յետոյ, այս սերունդը դժբախտաբար զուրկ է ամէ՛ն փառասիրութենէ։ Այլապէս կուսակցութեան վարիչ մեքենային մէջ՝ վաղուց է կ'ունենար իր ղեկավարութեան բաժինը։ Ցոյց տուէ՛ք պայքարի մէկ հատ դիրք, պատասխանատուութեան մէկ կէտ՝ ուր երիտասարդ մը կանչուած ըլլայ աշխատանքի։ Եթէ կը կարծէք, որ կարելի է յեղափոխական դառնալ՝ առանց մխրճուելու կռուի փրովին մէջ, առանց ուղղակի ու պատասխանատու ձեւով մասնակցելու կենդանի, հրատապ գործի, եթէ կը կարծէք...

Ու հոս անգութ եւ հպարտ ժպիտ մը բուսաւ բիբերուն խորը։ Երկար նայուածք մը նետեց շուրջի գլուխներուն վրայ, իջաւ մարդոց աչքերուն խորը։ Ու գրեթէ ուրախ, գրեթէ յաղթական կիրք մը արթնցաւ ձայնին մէջ։ Ահա՛ բառերը կու գային ու կը խոնուէին շրթներուն վրայ։ Ահա՛ կը զգար, որ այդ բոլո՛ր հարցերուն պատասխանը կը սպասէին իրմէն։ Իրենց լիումին մէջ՝ փրկութեան լաստի մը պէս է ինք։ Ու գիտէ, թէ ի՞նչ պիտի ըսէ։ Գիտէ՛ բառերուն ներքին մեծ զօրութիւնը ու գիտէ գործածել զանոնք, մէկիկ-մէկիկ արթնցնել իրենց քունէն ու կանչել պայքարի։ Յետոյ՝ երիտասարդ է անառարկելիօրէն, հրաշալիօրէն երիտասարդ է ինք եւ գիտէ այդ անգութ ու մակընթաց ուժին ամբողջ արժէքը։ Զայնը ուժեղ է ու աչքերուն մէջ վայրի, անպարտելի, յամառ բան մը կայ...

Այո՛, կզակը հազիւ սկսած էր սեւնալ՝ երբ առաջին անգամ խօսք առաւ։ Ատիկա մեծ, շատ կարեւոր ու անտարակոյս յուզիչ եղելութիւն մըն էր իր կեանքին մէջ։ Կը զգար, որ այդ օրէն ի վեր այլեւս քաղաքացի էր։ Կը զգար, որ անհրաժեշտ է այլեւս ապրիլ աւելի պատասխանատուութեամբ։ Քրքրելով իր կեանքին փոքր մանրամասնութիւնները, յետադարձ ակնարկ մը նետելով տարիներու այս կոյտին վրայ, կը տեսնէր, որ միշտ սկիզբները անգիտակից ու աղօտ կերպով, աւելի յետոյ՝ յստակ նախասիրութեամբ մը, ինք գերադասած էր գաղափարներու բուռն զեղեցկութիւնը, զգացումներու յորդ ու անձեւ բանաստեղծութենէն։ Անընդհատ, մարմնին ամբողջ տենդովը, հատուածական ու քինախնդիր յամառութեամբ մը՝ պատշպանած էր գաղափարներու այսինչ խումբը՝ միւսին դէմ։ Ու իր մեծ ցաւերը, գրեթէ միշտ, կու գային գաղափարական հիասթափութիւններէ, երբ կը տեսնէր բնազդներուն եւ եսասէր զգացումներուն չարագործ զօրու-

digitised by A.R.A.R.@

թիւնը ու մարդոց դասալքութիւնը, տկարութիւնը, վատութիւնը՝ պայքարի մէջ։ Ու ինչ որ ահա՛, բարեկամութեան այս բաղցր ժամուն, երբ նստած է ընկերներու խումբի մը մէջտեղ՝ հոգին կը մղէ ուրախութեան ու տեսակ մը ազնիւ ու մեծանձն հպարտութեան, այն մտածումն է, որ երբեք չէ պատահած, որ իր բառերը սուտ խօսած ըլլան։ Խօսած է միշտ, իր արեան ամբողջական երիտասարդութեամբը, տառապելով, մաշելով բառերուն վրայ ու իր ամբողջ մարմնով, իր նեարդներով, իր ամբողջ ըզգայնութեամբ մասնակցելով արտասանած բառերուն ստեղծումին։ Աշխատած է, որ երբեք յետին միտքը, անձնական մանր ոխերը, փոքր հաշիւներն ու զձուձ փառասիրութիւնը չեղծեն անոնց ամբողջական անկեղծութիւնը։ Անշուշտ յաջողած չէ միշտ, երբեմն վրիպած է ու պզտիկ եւ յամառ ատելութիւններ՝ պզտիկ ու կարեւորութենէ զուրկ մարդոց հանդէպ, շնատամի արմատներու պէս փաթթուած են իր մտքերու ժայթքումին ու խեղդած անոնց աղուոր ցայտքը։ Բայց երբ նստի ընդհանուր հաշուի՝ ո՛չ մէկ կասկած, որ այս վերջին տարիներու իր բոլո՛ր արարքներուն մէջ դրական տարրերը կը շահին՝ բացասական յատկութիւններու վրայ։ Եղած է բուռն, ուղղակի, անխնայ, գուցէ ո՛չ փափկանկատ, բայց ուղիղ ու հո՛դ է իր արդարացումը։

Յետոյ եղած է միշտ պայքարի առաջին զծին վրայ։ Ուր որ կարծած է, թէ կրնայ որեւէ անառարկելի գործ կատարել՝ միշտ եղած է առաջին ժամուն։ Լայն կուրծքը ցցած, դիմանալով ամէն հարուածի, մեծամասնութեան հետ կամ մեծամասնութեան դէմ՝ մնացած է միշտ անոդոքելի՝ իր սեփական սխալներուն եւ տկարութիւններուն հանդէպ։ Եղած է տենդով, կռուի մոլութեամբ լեցուն, եղած է երիտասարդ ու առանց յուսահատութեան իր կարելի տուրքը մտցուցած է կուսակցութեան բարոյական գանձանակին մէջ։ Կեցած է պատնէշի վրայ մինչեւ կռուի վերջին ժամը։

...Երբ սկսաւ խօսիլ՝ վիճաբանութիւնը գրեթէ սպառած էր։ Ժամը ուշ էր ու բոլորը անորոշ կերպով կը սպասէին մեկնումի պահուն։ Աչքերուն մէջ կիրք կար ու ձայնին մէջ՝ անհանգստութիւն ու դող։ Նայուածքը ուղղած էր նախագահական աթոռին, զգալով ունկնդիրներուն անբարեհաճ ու ցուրտ ուշադրութիւնը։ Բայց բաւեց, որ քանի մը նախադասութիւն արտասանէ՝ որպէսզի բիրտ ու անհամբեր ձայներ բարձրանան, ընդմիջեն զինքը։ Գաղափարական կիրքը մէկէն արթնցաւ իր թմրութենէն ու մարդոց շարժումներուն մէջ շահագրգռութիւնը մեծցաւ դէպի զինքը։ Ու քանի՛ կը զգար, որ բառերը կը հասնին իրենց նպատակին, ա՛յնքան տենդը կը մեծնար ու մտքերը կը գտնէին իրենց ճշգրիտ տարազները։ Վերջացուց քիչ մը ուշ, երբ արդէն սպառելու վրայ էր ընդհանուր ուշադրութիւնը։ Եւ զգաց, որ անցուցած է

digitised by A.R.A.R.@

պատեհ վայրկեանը։ Վերջին ճիգով մը սեղմեց, բանտարկեց իր մտքերը քանի մը հատու նախադասութիւններու մէջ ու գունատ, դողահար նստաւ, նայուածքը չհամարձակելով բարձրացնել եւ պահելով ձեռքերը, որոնց դողէն կ'ամչնար կարծես։

Յետոյ՝ խօսք առաւ զեկուցաբերը ու միւսներու կարգին՝ պատասխանեց նաեւ իրեն։ Անոր խօսքերուն մէջ անտարակոյս տակաւին կար բարձր ու վերամբարձ շեշտ մը, տակաւին՝ կը զգացուէր, որ որոշ զիջում մըն է՝ այդ պատասխանը։ Բայց այդ օրէն՝ սկսան հաշուի առնել զինքը։ Փոքր ու անշնաշ յիշատակներ են այս բոլորը, բայց որքան յուզիչ։ Կը յիշեցնէին իր մարմնին քաղցր ջերմութիւնը՝ երբ վիճաբանութիւնը կը տաքնար ու ինք ամբողջ էութեամբ կ'ընկղմէր պայքարի բովին մէջ։ Ջարթուն, գրեթէ գերազրգռուած ուշադրութեամբ մը կը հետեւէր խօսողներու մտքերուն ու կը զարգացնէր զանոնք, կը տանէր եզրակացութեան։ Աւելի յաճախ սակայն՝ չգոհանալով տրուած տարազէն՝ մտքի մեծ ու դժուարահաճ ճիգով մը, փխրուն կաւի բեկորի մը պէս՝ ջղայնութեամբ կը դարձնէր, կը չարչարէր տուեալ միտքը, իր անհամբեր ափերուն մէջ, գտնելու համար ճշգրիտ ու միաժամանակ ձեւով կատարեալ ու զգացումով բաբախուն տարազ մը։ Ու իր դէմքը յաբաշարժ ու շատ զգայուն, լոյս, արտայայտութիւն ու գոյն կը փոխէր՝ խօսողին մտքերուն հետ։ Ամէ՛ն հակասական խօսքի առջեւ՝ տհաճ ծամածռութիւն մը կ'ակօսէր ճակատը եւ կամ աչքերը կը ցոլային՝ երբ հոգին կը գոհանար արտասանուած խօսքի մը գեղեցկութենէն, ուժէն ու ճշդութենէն։ Դիւրազգած ոսպնեակներու պէս՝ իր խոշոր աչքերուն մէջ, կարելի էր հետեւիլ վիճաբանութեան վայրէջքին, տագնապներուն կամ վերելքին։

Ու միշտ անորոշ անձկութեամբ մը, ծածուկ, այլ հաճելի դողով մը կը բարձրանար ժողովավայրը։ Մթնոլորտը կը մղէր բուռն, յարաճուն աշխատանքի՝ իր մտքի մեքենան։ Կը զգար, որ այս է իր հոգւոյն յարմար կլիման, բայց միշտ կը վարանէր՝ խօսք առնելէ առաջ։ Հատու շարժումով մը կը բարձրացնէր ձեռքը ու կը պահանջէր կարծես, որ անապարեն, ազատեն հրապարակը։ Այդ վայրկեանէն սկսեալ, մտքերը խումբ առ խումբ կու գային, կը խոնուէին իր մտքի բեմին վրայ ու կը պահանջէին ազատ անցք։ Մարմնին տենդը կը մեծնար։

Յետոյ դանդաղօրէն մեծցաւ, բարձրացաւ իր վստահութիւնը։ Ընդհանուր զարգացումին, ընթերցումներու խորութեան ու խնդիրներու աւելի հիմնական ըմբռնումին հետ՝ շեշտուեցաւ, ուժեղցաւ, աւելի անջատուեցաւ միւսներէն՝ բուռն ու անկարեկիր մարդու իր բնորոշ անհատականութիւնը։ Կային օրեր՝ երբ մարդիկ կ'անհանգըստանային իր խօսքերու բուռն, տենդահար նկարագրէն։ Պահեր

digitised by A.R.A.R.@

կային՝ երբ իր բառերը կը պղտորէին գաղջ ու ծոյլ խաղաղութիւնը եւ անկարելի կը դարձնէին ամէն իրաւախոհութիւն։ Վարանողներն ու երկչոտները կը հրաւիրէր աւելի՛ խստութեան ու կը ջանար, որ միշտ մարդիկ տէր ըլլան իրենց գաղափարներուն ու նախանձով եւ վայրագութեամբ պաշտպանեն զանոնք...

Դուրսը կը յառաջանար գիշերը, անձրեւը կ'իյնար ճամբուն վրայ՝ տրտում ու յամառ աղմուկով մը։ Շուրջը, տղաքը կը խօսէին միշտ, պարզ ու յոգնած բառերով ու երջանկութեան ծարաւը անոնց աչքերուն մէջ՝ հետզհետէ մօտեցող երգի մը պէս կ'ընդարձակուէր։ Բռունցքները սեղանին վրայ, մտքի յեղակարծ ոստումով մը, վերադարձաւ յիշատակներու բաւիղէն, հո՛ս, այս բոլոր մարդոց մէջ ու խօսելու, արեան տենդը յազեցնելու ընդարձակ ծարաւ մը շարժեց ամբողջ մարմինը։ Յետոյ կրկին, խօսակցութեան անորոշ շշուկին մէջէն բարձրացաւ երգի կտոր մը ու լեցուց սրահը։ Մինչդեռ նոյն սեւ, քաջ դէմքով տղան, ետեւի դրան մէջէն կը գոչէր՝

—Ընկերնե՛ր, ժողովի պիտի սկսինք։ Եկէ՛ք...

Այսուհանդերձ, ամէ՛ն ոք կը յապաղէր եւ հակառակ ընդհատուած խօսակցութիւններուն եւ արդէն դիւթանքը կոտրած մթնոլորտին, դեռ ո՛չ ոք կը շարժէր տեղէն։ Գինիի եւ օդիի պարապ բաժակները կը մնային լքուած։ Դուռը ամբողջովին բացին, որպէսզի օդը մաքրուի եւ անձրեւին ձայնը աւելի զօրացաւ սրահէն ներս։ Բռունցքները սեղանին վրայ՝ ականջ կու տար աղմուկին, մինչ զանազան մտքեր, ջղային հապճեպով մը կը հրէին իրար, կը խոնուէին մտքի պաստառին վրայ։ Յետոյ բարձրացաւ եւ դանդաղօրէն ուղղուեցաւ ժողովավայր։ Անձրեւը ուրախացուց զինք՝ հակառակ իր աշնանային թախիծին ու լաւ, պայծառ օրերու յոյսը զօրացաւ, մեծցաւ։ Իր յաղթական ու քաջ երիտասարդութեան առջեւ՝ բացուեցան պայքարի ու երջանկութեան բազմաթիւ կարելիութիւններ ու մութին մէջէն, աղօտօրէն եւ դանդաղ քաղցրութեամբ մը բարձացաւ նո՛յն սիրելի ու համբուրելի դէմքը։ Մարմինը թեթեւօրէն ջերմի մէջ էր ու սիրոյ ծարաւը կարծես թէ մեծ հեռաւորութենէ մը կը վերադառնար իրեն։ Անձրեւի ձայնին մէջ մեղմ սոյլեր կային ու խեղճ ծառի մը տերեւներուն վրայ՝ կարծես զարնան մնացորդներ։ Ահա պատրաստ էր ամէն զոհողութեան ու ամբողջովին կը պատկանէր այս մարդոց, իր ընկերներուն։

Յետոյ կրկին մեկնեցաւ, անձրեւին թեւերուն վրայէն, սիրելի ժամերու։ Երգեր կ'արթնային շրթներուն վրայ ու սուլելու պէտքը կը դառնար հրամայական։

Յեղակարծ կերպով կը յայտնուէր դրան մէջ, ժպտուն աչքերով։ Հատու հարուածներով կը բախէր բաց դուռը։ Եւ կը սպասէր՝ մինչեւ որ անոր բնքուշ ձայնը ծնէր, բարձրանար լռութեան

digitised by A.R.A.R.@

մէջ։ Այդ ուրախ ու գգուող ձայնին կը հետեւէր անոր շռայլ ու նուրբ ժպիտը։ Յետոյ կ'ըսէր՝

—Այդ դուն ես, Աշո՛տ, մտիր...

Կը նստէին պարտէզին վրայ բացուող պատուհանին առջեւ ու կը լռէին, մինչեւ որ այլեւս վտանգաւոր դառնար այդ լռութիւնը ու մատնէր իրենց ներքին մեծ ուրախութիւնը։ Այն ատեն Իդան էր միշտ՝ որ գերազանց պարզութեամբ մը կը սկսէր հարցուփորձել զայն՝ անոր աշխատանքներուն, գրադումներուն վրայ։ Երկար թերթերունքները կախ՝ աչքերուն հանդարտ ջուրերուն մէջ, կը բացուէին նո՛ր հորիզոններ։ Ձայնը կը ստանար ծածուկ գորովի՝ նուրբ, այլ յուզիչ շեշտ։ Իրերը կը սկսէին շնչել գեղեցկութեամբ, ու ամէ՛ն բան, ամէ՛ն բան հնարաւոր կը թուէր։

—Իդա՜, Իդա՜...

Երբ աչքերուն յամր ու տամուկ ցոլքովը կ'ողողէր յամառ ու հպարտ տղու իր զօրաւոր դէմքը՝ ամէ՛ն յանդգնութիւն կը թուէր աւելորդ եւ ամէ՛ն բուռն խօսք՝ տգեղ ու անտեղի։ Ակնարկով մը զայն կը հրաւիրէր փափուկ ու մաքուր զգացումներու, գեղեցկութեան եւ հանոյքի աւելի՛ թաքուն, աւելի՛ ազնիւ, կարծես աւելի՛ նուրբ ըմբռնումի մը։ Նայուածքը գուրգուրանքի պէս կը ձգէր աչքերուն խորը ու կարծես կ'ըսէր՝

—Զգոյշ, Աշո՛տ, բուռն եւ ուժեղ բաներու սէրդ՝ պէ՛տք չէ որ քեզ տանի կոպտութեան եւ քիրտ արարքներու։ Զգացումներու ծաւալը չէ միայն, որ կարեւոր է, այլեւ՝ ներքին գեղեցկութիւնը։ Կարեւորը գաղափարներու ծառայելուն ձեւը չէ, այլ՝ անոնց վերջնական ու արդար յաղթանակը։ Ձաւարտած բաները միշտ աւելի գեղեցիկ են՝ քան յաղթական գաղափարները, որ կը մաշին։ Բռնութիւնը միշտ գեղեցիկ չէ...

—Իդա՜, Իդա՜...

Ձեռքերուդ վրայ՝ նայուածքս կը հանգչի իր տխրութենէն։ Ձայնդ գիս կը վերադարձնէ զարնան ու բոլո՛ր ճամբաներէն, քեզի հետ, կը հասնինք գաղջ արեւածագերու։ Ոտքերուս տակ կապոյտ ջուրեր կը խոխոջեն եւ խաղաղութեան իմ ամբողջ կարօտը արեանս մէջ կը զարթնու։ Հանգչեցուր, ձեռքերուդ բարութեամբը, նակտիս տապը։ Թոյլ տուր հպի՛մ վարսերուդ, Իդա՜...

Ո՞վ է այս, որ կ'աղաղակէ, տաք ու մեծ ձայնով մը՝

—Ընկերնե՛ր, լռութի՛ւն, ժողովը բացուած է...

Յետոյ կը դառնայ Բարտուղարին ու կը յարէ՝

—Կարդա՛ նախորդ ժողովին արձանագրութիւնը, աւելի՛ բարձր...

Դուրսը՝ կը մեծնայ անձրեւին ձայնը։ Գէշ գիշեր է աշունի։ Քաղաք վերադառնալ կարելի չէ։

(Շար. 1) ՎԱՉԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Digitised by A.R.A.R.

Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԱՌԱՁԳԱԿԱՆ

Եւ դիմեցի հտպիտներուն՝
իմ մանկական հիացմունքս փնտռելու,
իսկ անոնք լուռ կը ժպտէին...

Լարախաղացներ ուզեցին
զիս բարձրացնել
ձողերուն վրայ։
Կորսնցուցած էի արդէն
հակակշիռը մարմնիս,
մկանները բազուկներուս
թուլցած էին...

Իսկ հոն ամէն ինչ հրաշք էր —
պարմանները՝ պիրկ լարերուն վրայ
կ'ոստոստէին, կը ցատկէին
յանդգնօրէն.
կը խախտէին օրէնքները ֆաշողութեան։

Ահա շարքը հտպիտներու...
Կարգով, մէկ-մէկ դէմս ելան —
առաջինին քիթը երկար՝
կը զարնուէր կարծես դէմքիս։
Ծերմակ-կարմիր բերանը մեծ
այդ երկրորդին՝
տարօրինակ բառեր ըսին,
լեզուով մը, որ չէի լսած
մանկութենէս։
Երրորդը մեծ ձեռքեր ունէր,

digitised by A.R.A.R.@

իսկ չորրորդը՝ տխրադալուկ
բանաստեղծի կապոյտ աչքեր...

Այսպէս, ամէնքը տողանցել
սկսան եւ անդրադարձայ,
թէ շարունակ կը ճամբորդեմ
վայրի մը մէջ գերզգայուն,
ուր ամէն ինչ կարելի էր,—
կշռոյթը կար թմբուկներու,
Բարիպեան եղանակներ խելացնոր...
Լարերուն վրայ՝
ցլամարտիկներ սկսան վազել
եւ պարուհիներ գնչու, թխաչեայ։
Ձեւեր՝ կրնային
իրենց արտաքին կերպարը փոխել։
Իսկ ես այնտեղ կը փորձէի դիմագրաւել՝
ներքին վախը անկումներու,
յաղթահարել՝
փորձութիւնը փախուստներու...

Ապա՝ ես թոչող մարգաձողերուն,
սկսայ ահեղ պտոյտներ գործել —
գահավիժիլ կամ սաւառնիլ՝
օձաճապուկ մարմիններու հետ թարմատի։
Իմ մարմինիս
տէրն էի ես վերստին,
ամբողջ խումբին հետ ներդաշնակ՝
կրնայի նուրբ ձեւեր առնել առաձգական
ու բրբջալ արծաթաձայն...

Արդէն միտքս կը նուաճէր
վայրի, խոպան նոր սահմաններ —
ընձուղտի մը վիզն ի վար
կը սահէի։

digitised by A.R.A.R.@

Դանիէլին պէս չէի նստած
առիւծներուն մէջ գիշատիչ,
այլ՝ վռիմակին
արիւնարբու, գորշ գայլերու,
փորձառութեամբ մը դարաւոր, առհաւական...
Դեռ կրնայի
առեւանգուած, սպաննուած ծանօթներու
յարութիւն տալ
եւ հազար այլ հրաշք գործել...

Կը թուի թէ տարուած էի
ի՛մ իսկ խաղէն սահմանազանց...
Հտպիտները
լուսարձակները մարեցին,
պարանները նետեցին վար.
ինչպէս զոռոզ, անհանդուրժող կիսաստուածներ՝
վտարեցին զիս կրկէսէն։

Բայց հոն՝ տղաս, արդէն անվախ,
դալար մարմինը իր լարած,
լարերուն հետ կը սաւառնէր՝
ինձմէ անկախ...



ՑԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ
1-4 Մայիս, 1992

digitised by A.R.A.R.@

Ց. ԱՂԱՋԱՆԵԱՆ

Ծնուել եմ Երեւան Քաղաքում 1940թ.։ Աւարտել եմ Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը։

Նշանակալից ի՞նչ կարող էի անել ֆիզիկայի ասպարէզում...։ Ինչո՞ւ հեռացայ ֆիզիկայից եւ ինչի՞ց մղուած ակնեցի գրել։ Հարցեր են, որոնց պատասխանը դեռ կը տրուի։

Դրսում եմ արդէն Քսան տարուց աւելի։ Իսկ ինչո՞ւ չեմ ուզարձուել կամ բնակադրուել այդ Քսան տարիների ընթացքում...

Ցաւոտ հարցեր են...։ Իմ պիեսներն ընթերցելուց յետոյ գուցէ ընթերցողն ինքը կը գտնի դրանց պատասխանը։

ԽՂՃԻ ԽԱՅԹ

(ԴՐԱՄԱ ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ՝ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ. ԱՅԱՔՍ

ԱՅԱՔՍ
ԻՈՆԱՍԱ
ՄԱՐԿՈՍ
ՄԵԼԻՍԱ
ԹԵՐՍԻՏԷՍ - զինուոր
ՑՈՒԼԻԱ - ստրկուհի
Ցոյն կանայք եւ տղամարդիկ
Այաքսի պապի ուրուականը

Ռմն իմաստուն
Հովիւ
Երգչախումբ
Դիմակներ.-Մտքերի Ոգի
Զայրոյթի Ոգի
Քէն ու Ոխի Ոգի
Վրէժի Ոգի
Խղճի եւ Գութի Ոգի։

Անցքը տեղի է ունենում հին Տրոյան շրջապատող յոյների ճամբարում։

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Ամրոց. առջեւով ճանապարհ է իջնում դէպի ծովը։ Բաց դարպասներից ներս՝ սիւնաշար տերրաս-պատշգամբում, Այաքս, Իոնասա, Մարկոս, Մելիսա, Թերսիտէս, յետոյ՝ Ցուլիա։

ՄԱՐԿՈՍ.- *Աքիլլէսի մահից յետոյ մնացին աստծոյ ձեռքով կռած նրա ոսկեղէն զէնք ու զրահը։ Ըստ աստծոյ պատուիրանի, դրանք պէտք է տրուեն այն մարդուն, ով ամէնից աւելի է աչքի ընկել Աքիլլէսի մարմինը թշնամիներից պաշտպանելիս։ Մեծազօր Այաքս, դու*

digitised by A.R.A.R.@

բարձրացրիր նրա գին եւ տարար դէպի յունական նաւերը, իսկ Ոդիսեւսը պաշտպանում էր քեզ՝ եւ մղելով թշնամիների գրոհը։

ԻՈՆԱՍԱ.- Ուրեմն, զէնք ու զրահը պիտի ստանայ իմ ամուսինը՝ Այաքսը։

ՄԵԼԻՍԱ.- Կամ Ոդիսեւսը։ Մէվ է աւելի արժանի դրան։

ԻՈՆԱՍԱ.- Ի հարկէ իմ ամուսինը։

ՄԱՐԿՈՍ.- Ինչպէ՞ս է յուծուելու այդ վէճը։ Երկու հերոսներն էլ արժանի են դրան։ Ես կարծում եմ, որ պէտք է վիճակ գցուի։ Այդ է պահանջում արդար դատը։ Թէեւ դու իմ ընկերն ես, Այաքս, բայց ես չեմ կարող անտեսել նաեւ Ոդիսեւսի սխրանքները։ Հարկ է, որ վիճակ գցուի։

ՄԵԼԻՍԱ.- Ճիշտ որոշում է։ Իմ ամուսինը ճիշտ է, այդ համաձայնութեան մէջ բռնութիւն չկայ։

ԻՈՆԱՍԱ.- Դու քո ցանկութեամբ ես մեկնաբանում իմ ասածները, Մելիսա։ Այսինքն, եթէ շատ էք ուզում...

ՄԵԼԻՍԱ.- Թէեւ Մարկոսը իմ ամուսինն է...

ԻՈՆԱՍԱ.- Եթէ ճիշտ որոշում է, ուրեմն, պէտք է ստանայ Այաքսը։

ՄԵԼԻՍԱ.- Ահա, թէ դու ինչպէս ես մեկնաբանում իմ ասածները։

ԱՅԱՔՍ.- Մի վիճիք։ Աստուածնե՛րը եւ մարդկանց պատի՛ւը... Մէվ պիտի ստանայ զէնք ու զրահը։ Ես ուզում եմ լսել ի՛մ անունը։ Այո, ես հիւանդ եմ։ Եթէ այն չէն տալիս, ես ուզում եմ գոռալ, ճայերին կանչել։ Եթէ չեմ գոռում, շրթունքներս ճաքճաքում են, նրանք կպչում են իրարից։ Ես ուզում եմ լսել իմ անունը, որ տալիս են ուրիշները, ոչ թէ՝ իմ կպչուն շրթունքները։ Նրանք ճիշտն են ասում, ես ուզում եմ, որ ճիշտն ասեն նաեւ ուրիշները։ Ճիշտն ասի նաեւ վիճակը, որը դեռեւս չեն գցել։ Վիճակը իմ օգտին դուրս պիտի գայ։ Աստուածնե՛րը եւ մարդկանց պատի՛ւը...

ՄԱՐԿՈՍ.- Ճի՛շտ են աստուածները։ Եթէ ճիշտ են մարդիկը, ապա գցուած վիճակը չի խաբի։

ՄԵԼԻՍԱ.- Վիճակը պատահականութիւն է։

ԻՈՆԱՍԱ.- Քեզ ի՞նչ պատահեց։ Դու գոռում ես։

ԱՅԱՔՍ.- Ես չեմ գոռում։

ԻՈՆԱՍԱ.- Դու գոռում ես, Այա՛քս։

ԱՅԱՔՍ.- Այո, ես գոռում եմ։ Ես հիւանդ եմ։

ԻՈՆԱՍԱ (քարձր).- Ցուլիա՛։ Ցուլիա՛։ Մի սկահակ բուժիչ թուրմ բեր։

Գալիս է Ցուլիան եւ սկահակը մատուցում Այաքսին։

ԱՅԱՔՍ.- Ես չեմ գոռում։ Ես հիւանդ չեմ։

ԹԵՐՍԻՏԷՍ.- Տեսա՞ք։ Ուզեցի՛... եւ վերջ։ Այաքս, դու փիլիսոփայ կը դառնաս։ Դու քո ցանկութիւնը իրականութիւն համարեցիր եւ հանգստացար։ Փիլիսոփան պէտք է ամուր կամք ունենայ, որ բախտին հաւատալիս գլուխը վրան մնայ։ Մարդիկ բախտի հարուածից գլուխը կորցնում են։ Ուզեցի՛... եւ վերջ։ Եւ այդքա՛նը։

ԱՅԱՔՍ.- Մի՛ ծիծաղիր, երբ Այաքսի բախտը բարգաւաճելու է։

ՄԱՐԿՈՍ.- Չէ-է՛։ Բայց ի մի՛ջի այլոց...

ԱՅԱՔՍ (Թերսիտէսին).- Ի՞նչ։ Ուրեմն, քո ասելով գազտագողի ինձ է մօտենում բախտը, որ...

ԹԵՐՍԻՏԷՍ.- Ինչ վերաբերում է բախտին, նա ամէն դէպքում հաշիւները կը մաքրի մեզ հետ։

digitised by A.R.A.R.@

ԱՅԱՔՍ.- *Դու կեանքի հանդէպ անհաւատ ես։ Իսկ հաւատը սարեր է շարժում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Միայն յայտնի չէ, թէ ինչ ես հասկանում հաւատ ասելով։ Ի՞նչ է հաւատը, կարո՞ղ ես բացատրել։*

ԱՅԱՔՍ.- *Այդ ամէնը դու ասացիր ինձ, մտածելով, որ ես իմ պատիւը կը կարողանա՞մ պաշտպանել։ Ես եթէ չկատաղեմ էլ, կարող եմ իմ պատիւը պաշտպանել։ Ես չեմ կատաղի։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ես ողջունում եմ դա։*

ԻՈՆԱԱՍ.- *Այսօր գարունն իր ամենալաւ օրն է ապրում։*

ՄԵԼԻՍԱ.- *Իսկ արեւի ամէն մի ճառագայթ, ուր մտնում է, իր հետ ջերմութեան, յոյսի եւ թարմութեան մի շշիւն է լցնում։*

ՄԱՐԿՈՍ.- *Եթէ մարդիկ երջանիկ ապրելու առիթ են ուզում, այդ օրը այսօ՛ր է։*

ԱՅԱՔՍ.- *Մարդիկ ցնծագին գոռում են արեւն ի վեր։*

(Ցուլիան ծիծաղում է)։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ծիծաղը աստուածների եւ մարդկանց առանձնաշնորհն է։ Նաեւ՝ սարուկների։ Ես կարեկցանքով զննում եմ ծիծաղող դէմքը։*

ԻՈՆԱԱՍ.- *Ես յուզմունքով զննում եմ նաեւ մանեակը, Մելիսա։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Մարդիկ վաճառում են ո՛չ միայն գիտելիքներ, արուեստ եւ անպամ զգացմունքներ, այլեւ՝ մանեակ...*

ՄԵԼԻՍԱ.- *Դու իմ մանեա՞կն ես ուզում։ Դու նայում ես աստղին։* (Աչքերը անթթիթ յառած մանեակին)։ *Ա՛ստղ իմ...։ Իմ մանեակը աստղ է։ Օ՜, նրա մէջ որքա՜ն գմայլանք կայ, անդիմադրելի հրապոյր, եւ նա համընդհանուր ուշադրութեան առարկայ է ամէնուր։ Աստուածները մարդուն օժտել են թանկարժէք իրերի հանդէպ իմաստուն արտով, յաւիտենականութեան սլացքով։ Իմ ամուսնու նուէրն է նա։*

ԻՈՆԱԱՍ (Նուրբ ակնարկով Այաքսին).- *Ամէն ամուսին նուիրում է, ինչ ուզում է կամ ինչ կարող է։*

ՄԵԼԻՍԱ.- *Նայիր աւելի ուշադիր։* (Հանում է մանեակը վզից)։ *Նուրբ զարդագրերով շղթայիկ՝ մուգ ոսկուց, կենտրոնում երկու փայլուն աստղեր, վառ դեղին էլեկտրոնից, ինչպէս երկու աչքեր, որոնք փորձում են տեսնել ապագան՝ անլայտ ճակատագիրը գալիքի անչափելի հեռուից։ Նայիր աւելի ուշադիր։*

ԻՈՆԱԱՍ.- *Ցուլիա՛, ինձ բեր մանեակը շղթայիկով։*

ՄԵԼԻՍԱ.- *Ցուլիա՛, ուշադիր եղիր։ Ուղիղ նայիր ինձ։ Ես ձեռքումս մի հրաշք մանեակ ունեմ, որը հիմա պիտի ազատ արձակեմ...*

Մելիսան մանեակը դնում է Ցուլիայի առաջ պահած բաց ափերի մէջ։ Ցուլիան ձեռքերը առաջ պարզած՝ հանդիսաւորութեամբ գնում է դէպի Իոնասա։

ԻՈՆԱԱՍ.- *Մարդիկ զգոյշ քայլերով գաղտագողի գնում են դէպի իրենց խորհրդաւոր նպատակները...*

Ցանկարծ Ցուլիան սայթաքում է, ձեռքից վայր ցցելով մանեակը։ Իոնասա ձեռքով շառաչուն հարուածում է նրա երեսին։ Ցուլիան եղունգները խրելով ափերի մէջ, ֆիչ է մնում հեծեծայ։

digitised by A.R.A.R.@

Օդը լցուցած է սեւ մաղձի գոլորշիներով... (Յուլիային)։ *Ես ուժ չունե՞մ։* (Կրկնում է հարուածը)։ *Կեանքը անվերջանալի բռնոցի է, լիշի՛ր...։ Կորի՛ր։* (Ձեռքն է առնում մանեակը եւ զննում։ Մի աչքը կկոցած է, յօնքերն իրար եկած։ Յուլիան ձեռքը դրած երեսին՝ շուարած կանգնած է)։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Դու կարեկցանքով ես նայում այդ իրին։ Իսկ ստրկուհին...*

ԻՈՆԱՍԱ (ձեռքն է առնում երկաթէ կանթեղը եւ շպրտում Յուլիայի վրայ).- *Անպէտք կով, ամենանե՛նգը օձերից, կորչի՛ր աչից, ստրուկ, դու այս մանեակը...*

Յուլիան ակամայից ձեռքերով պաշտպանւում է կանթեղից։ Յուսահատական աղաղակից յետոյ արցունքները սրբում է մազերով եւ դուրս գնում։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Օ՜, Իոնասան հիմա որքան հեղհամբոյր է եւ քնքոյշ։*

ՄԱՐԿՈՍ.- *Սէրն ու ատելութիւնը մարդու բնութեան մէջ յայտնւում են փոխն ի փոխ։ Զայրոյթի պահերին չկայ անմատչելի եւ անձեռնմխելի բան՝ թշնամի են եւ՛ թշնամիները, ե՛ւ բարեկամները, ե՛ւ երեխաները, ե՛ւ աստուածները, ե՛ւ անշունչ առարկաները։*

ԻՈՆԱՍԱ.- *Կանայք բարկացկոտ են տղամարդկանցից։ Ես հակուած չեմ ամէնուր լենուելու նուրբ զգացումների եւ վստահութեան վրայ, այլապէս ինձ աւելի կոպիտ սխալներ է վիճակւում թոյլ տալու։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Նուրբ զգացումները, հաւատը, վստահութիւնը փոս են փորում մարդու ոտքերի առաջ։ Կարելի է գայթել փոսի վրայ եւ աւելի ցաւոտ է լինում անկումը։ Զգուշութիւնը պէտք է ետ պահի այդ փոսից։ Եւ, թւում է, զգուշութիւնը միշտ էլ վանում է ե՛ւ հաւատը, ե՛ւ վստահութիւնը։*

ԱՅԱՔՍ.- *Ուրիշի ցաւի հանդէպ ոչինչ չզգալը, տառապանքի գնով ուրիշին կործանելը ցանկութի՞ւն է, ստորութի՞ւն, այլեւ՝ զգուշութի՞ւն... ինչպէս ասում ես դու, Թերսիտէս։ Բայց ես ինձ միշտ չեմ կարող ապահովագրել անտարբերութեամբ, եթէ իմ մտքերը անգամ թունաւորուած են այդպիսի զգուշութեամբ կամ այդպիսի ստորութեամբ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Իսկ զայրոյթը փքում եւ այլանդակօրէն աղաւաղում է դէմքը՝ է՛լ աւելի է այլանդակում ձայնը։*

ԱՅԱՔՍ.- *Մարդ չի կարող հարթ եւ փափուկ պահել իր լեզուն։ Զայրոյթի կրակը անընդհատ սնունդ է առնում եւ բորբոքւում։ Իսկ ժամեր յետոյ ես ջանասիրաբար հետեւել եմ ինքս ինձ՝ ձգտելով մնալ բարեխօս եւ զերծ այնպիսի վարմունքից, որ յետոյ ծնում է մեծ խռովք ու ամօթալի զղջում։*

ՄԱՐԿՈՍ.- *Այաքս, դու իսկապէս փիլիսոփայ կը դառնաս։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Իոնասա, ծանակում ես, անարգում... դու քեզ մսխում ես շրթունքներդ կծոտելու, ատամներդ կրճտացնելու վրայ։ Դրանք հիմա ծիծաղելիօրէն ընկնում են, չհասնելով նպատակին։*

ԻՈՆԱՍԱ.- *Իսկ դու տեսե՞լ ես դոնէ մէկին, որ կարողանար այլ կերպ անել։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Չեմ տեսել։ Այդ կարգն է աստուածների մէջ եւ մարդկանց մէջ։ Ծառան արհամարհում է մեր անարգանքները ո՛չ թէ մարմնով, այլ՝ հոգով։ Նրա ինքնասիրութիւնը թէեւ վիրաւորուած է, իսկ մարմինը խոցելի, բայց նա չպիտի կորցնի ինքնատիրապետումը։ Օրէնքը նրա համար ո՛չ թէ իրաւունք, այլ քարի համբերութիւն է պա-*

digitised by A.R.A.R.@

հանջում։ Փորձիր երգել ոտքդ դրած նրա մարմնին եւ տես, թէ ինչպէս կը հնչի։

ԱՅԱՔՍ.- Դէ, խորհուրդ տուր, թէ ինչպէս վատը լաւ դարձնել։ Գուցէ այդպիսի մարդ ծնուի, կարողանալ այդպէս։ Գուցէ այդպիսին կը լինի հենց այն մարդուկը, որ այժմ ծնուում է։

ԻՈՆԱՍԱ (խայթելով).- Կ'ուզէի տեսնել։

ԱՅԱՔՍ.- Ես իմաստութիւն եմ տեսնում դրա մէջ։

ԻՈՆԱՍԱ.- Միայն չգիտեմ անկե՞ղծ ես, թէ չինծու։ Քո տաքարիւնութիւնը եւ զայրացկոտ կոպտութիւնը տեսնողը ի՞նչ կ'ասի։

ԹԵՐՍԻՏԷՆ.- Ես մարդկանց խօսքերի եւ արարքների մէջ համապատասխանութիւն չեմ տեսնում։ Այդպէս բոլոր մարդկանց մօտ եւ՝ ձեզ մօտ։ Լեզուի ծայրին դրած խօսքերը զարդարուն են, իսկ արարքները բխում են բուն էութիւնից։ Արարքները՝ ըստ մեր էութեա՛ն են։ Իսկ ես այնքան խելք ունեմ, որ մեզանից ոչ մէկին չեմ աստուածացնի։

ՄԵԼԻՍԱ.- Կանայք անկեղծ են տղամարդկանցից։

ԹԵՐՍԻՏԷՆ.- Ես չեմ կարող սիրալիրութիւնից զրկուած զոհաբերել իմ կարծիքը։ Թէեւ այդպիսի սադրիչ խօսակցութիւնները կանանց հասարակութիւնից փոխանցւում են տղամարդկանց հասարակութիւն։

ԱՅԱՔՍ.- Ինչո՞ւ ենք բարեհաճօրէն մեզ վերագրում լաւ մարդուն վայել այն յատկանիշները, որոնք իրականում չկան։ Ես վերացրել եմ կասկածանքս, եւ քանի որ չեմ կարող լինել մեղմ ու զիջողական, չեմ կարող տալ նաեւ կեղծ վկայութիւն։ Բայց մի՞թէ ձայնի բարձր տոնը առաւել բարձրի նկատմամբ ցածրի նշանակութիւն չի ստանում...

ԻՈՆԱՍԱ.- Կնոջ քեֆին կպչել եւ անպատասխա՞ն մնալ ես ուզում, ստրկուհի...։ (Շուտ ու մուռ է տալիս մանեակը)։ Ինչքա՞ն կ'արժենայ։

ՄԵԼԻՍԱ (կարծես պատրաստ սպասում էր այդ հարցին).- Հարիւր տաղանդ ոսկի։

ԱՅԱՔՍ.- Ի-ի՞նչ...

ԻՈՆԱՍԱ (փորձախոյզ խոշոր աչքերը շրջելով Մելիսայի կողմը).- Դա կարծես հարիւր անգամ աւելի է իմ կարծածից։

ՄԱՐԿՈՍ (մեկուսի, ինքն իրեն).- Ով որ միայն քչի կարիք է զգում, նրան չի ճնշում շատի ներկայութիւնը։

ՄԵԼԻՍԱ.- Մարդիկ տեսնում են չքեղութիւնը եւ նախանձում են։ Եթէ այդ մանեակը քոնը լինի...

ՄԱՐԿՈՍ (Այաքսին).- Իսկ քո հողակտորը Աթենքում հարիւր տաղանդ չարժէ՞...

ԱՅԱՔՍ (կարծես ծուղակ տեսնելով այդ հարցի մէջ).- Աթենքո՞ւմ...։ (Զննում է Մարկոսի քմծիծաղ տուող դէմքը)։

ԻՈՆԱՍԱ (շուրթերը ծռմռուած, մի աչքը կկոցած, յօնքերն իրար եկած).- Այաքս, այս մանեակը իմն է լինելու։

ՄԱՐԿՈՍ.- Կանայք անվերջ թանկագին զարդեր են վրան կախում տղամարդկանց հաշուին։

ԹԵՐՍԻՏԷՆ.- Ոսկու կոյտեր կամ հողակտոր Աթենքում՝ այդ մանեակի դիմաց։ Նրան ամուսինը կարող է պատասխանել մի մեծ՝ ՈՉ։ Առաւել բարեացակամը, որուն կ'ասի. «Կի՛նս, մենք կարող ենք խաբուած լինել»։ Եւ եթէ ուզենայ, կ'աւելացնի. «Ես անպայման կը դնէի այս մանեակը, եթէ...»։ Իսկ շատախօս շաղակրատը կը պատասխանի կնոջ խնդրանքին այսպէս. «Սոսկ խաբէութեան մասին է, որ ես

digitised by A.R.A.R.@

մտածում եմ հիմա։ Ես չեմ կարող քեզ մերժել։ Բայց եւ չեմ կարող կատարել քո պահանջը նշածս հանգամանքներում։ Եթէ այդպէս է, մենք չենք շահում։ Քամուն տալ մեր ունեցուածքը կամ գետնովը տալ քո խօսքը...։ Այդ մանեակը չգնելով մենք պէտք է քեզ հետ միասին գտնենք յարմար մի մերժում»։

ԱՅԱՔՍ (առաջ գալով).- Լռիր, Թերսիտէս։ Շատ բարիք կայ լռելու մէջ։

ՄԱՐԿՈՍ.- Բառը լսողի համար է։ Լռել չկարողացողը լսել չի կարողանում ուրիշի խօսքը։

ԹԵՐՍԻՏԷՍ (ծանակելով).- Ես չեմ կարող ծակ ամանը լցնել, իմ խօսքը հեղելով Այաքսի վրայ։ Եթէ ասածը տեղ չի հասնում։

ԱՅԱՔՍ.- Շատախօս՛ս Թերսիտէս, ամենագատարկ բառը ընկնելով շատախօսութեան ականջը, իսկոյն տարածւում է չուրջբոլորդ։

ԹԵՐՍԻՏԷՍ.- Ես չեմ կարող փակ ամանը լցնել, իմ խօսքը հեղելով Մարկոսի վրայ։ Նրա ականջը փակ է մնում ուրիշի ձայնին։

ՄԱՐԿՈՍ.- Լռի՛ր, Թերսիտէս, շատ բարիք կայ լռութեան մէջ։

ԹԵՐՍԻՏԷՍ.- Լսելը հեշտ է լռելուց։ Լեզուն մէկ հատ է, ականջները՝ երկու։ Բայց քո ասածը ընկնում է ոչ թէ իմ հոգին, այլ մնում է քո լեզուի վրայ։ Քանզի թուլանում է քո խօսքի դիպուկութիւնը իմաստի պակասութիւնից։

ՄԱՐԿՈՍ.- Մեծագոյն բարիքը լսելն ու լսուած լինելն է։

ԹԵՐՍԻՏԷՍ.- Ինչ խօսք։ Սակայն երբ սեփական բերանները կողպուած եւ փակ չեն պահում, խօսքեր դուրս հեղելով ինչպէս որ Պոնտոսի հունը, ըստ երեւոյթին, այդ մարդիկ բառը համարում են ամենաչնչին ունեցուածքը։ Եթէ այս մանեակը արժէ հա-ըի՛ւր տա-ղա՞նդ...

ՄԱՐԿՈՍ.- Շատախօ՛ս Թերսիտէս։

ԹԵՐՍԻՏԷՍ.- Բայց նա կը տայ հողակտորը Աթենքում ծնկի գալով եւ նշելով կանացի էութեան յաղթանակը ալրականի դէմ։

ԱՅԱՔՍ.- Լռի՛ր, Թերսիտէս։

ԹԵՐՍԻՏԷՍ.- Ահա, լեզուիս առջեւում ես տեղաւորում եմ ատամներիս պահակախումբը։ Ես գլուխդ տարայ, փիլիսոփայ։ Լռում եմ, քանզի անառակութեան հակուած տղամարդկանց սերմն անպտուղ է, շատախօս մարդու խօսքն էլ անպատակ է եւ անօգուտ։

ԻՈՆԱՍԱ (ծեծում է սիւնը՝ երկու ձեռքերը միացրած, մէկ բռունցք արած, ձեռնափերի մէջ մանեակը).- Այս մանեակը իմն է լինելու։

ԹԵՐՍԻՏԷՍ.- Ցոյժ անմիտ բան է եւ ձանձրալի նորից պատմել այն, ինչ արդէն պատմել ենք մի անգամ։ Ասել անհրաժեշտը եւ սակայն՝ ո՞վ իրեն թոյլ չի տայ բերանից բան թոցնել ի վնաս այն մարդու...

ԱՅԱՔՍ.- Կամ լռել կարիքի դէպքում...

ԻՈՆԱՍԱ.- Այա՛քս, մի՞թէ իմ խօսքը չդիպաւ քո հոգու լարին։ Բանականութիւնը մի՞թէ չհնազանդուեց կնոջ սիրասուն ձայնին։

ԱՅԱՔՍ.- Ուրեմն, ես քեզ ոչինչ չեմ նուիրել, եւ դա ամո՞թ է...

ԻՈՆԱՍԱ (ձեռքերը շուրջանակի տանելով զգեստի վրայով).- Այաքս...

ԱՅԱՔՍ.- Ամէն ինչ հոսում է, փախչում, երկու անգամ նոյն գետը մտնել չես կարող։ Տես, թէ ինչքան հեռու է տանում դեղին նարգիզը, որ ես ջուրը գցեցի։ Սրա նման է եւ մարդկային կեանքը։ Ամէն մի ակընթարթ, երանութիւն կամ ցաւ իր տեղը զիջում է ուրիշին, ամէն մի հնչիւն լռում է, ամէն մի բոյր կորչում եւ անընդհատ շարժում է, մարդկային սիրտն էլ անընդհատ շարժում է։ Ուրախութիւն եւ ձրգտում անընդհատ փոխւում են, եւ կնոջ պահանջն էլ նորանոր ձեւեր է ստանում։

digitised by A.R.A.R.@

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Օհ՜... փիլիսոփայ...*

ԻՈՆԱՍ.- *Ասպետն էլ իր անելիքը ունի կնոջ պահանջի հանդէպ։*

ԱՅԱՔՍ.- *Ես կը գնեմ մանեակը։*

ՄԱՐԿՈՍ.- *Հոդակտորո՞վ... որ Աթենքում է։*

ՄԵԼԻՍԱ.- *Կամ ոսկով։*

ՄԱՐԿՈՍ.- *Հոդակտորո՛վ։* (Ցուցամատը զաղտնաբար միացնում է ցկոյթի հետ։ Այդ նշանացի շարժումը Մելիսան հասկանում է)։

ՄԵԼԻՍԱ.- *Վաճառքը՝ հոդակտորով է։*

ԱՅԱՔՍ.- *Ես կը գնեմ մանեակը։ Ինչքա՞ն դանդաղ է շրջագիծ քաշում այս չինարու ստուերը։ Արեւը միշտ նոյն արագութեամբ է շարժւում։ Շարժումը չի արագանայ կամ դանդաղի իր հաւասարաչափութիւնից եւ կանգ չի առնի ոչ մի ակնթարթ։ Մարդիկ էլ զգոյշ քայլերով գաղտագողի գնում են դէպի իրենց խորհրդաւոր նպատակները։*

ԹԵՐՍԻՏԷՍ (անցնելով սեան ետեւը).- *Խաբուած փիլիսոփայ...*

ԱՅԱՔՍ.- *Լռի՛ր, շատախօս։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Այաքսը իմ ընկերն է, ինձ ինչո՞ւ չի կարելի միշամտել այդ վէճին։* (Ելնում է սեան հետեւից)։ *Ամէն ինչ շարժում է, համաձայնութիւնը իր տեղը զիջում է անհամաձայնութեանը։*

ՄԱՐԿՈՍ.- *Դու խարդախում ես։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ով իմաստութիւնը չի խեղդել գինու մէջ, նա հասկանում է, որ ամօթի եւ մեղաւորութեան զգացումը մարդկանց համար է։*

ՄԱՐԿՈՍ.- *Մռայլ երազներից արթնացած շատախօս։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Մարդիկ սիրում են հաճոյքները, բայց նրանց խորթ չէ նաեւ ամօթի եւ մեղաւորութեան պատնէշը։ Թէեւ յաճախ ոտի տակ են տալիս այդ պատնէշը եւ, անցնելով նրա վրայով, ամօթից ու մեղաւորութեան զգացումից զուրկ այլեւս, կտրում են ամէն մի տարածութիւն, մոռանալով, որ երբեւէ եղել է այդ պատնէշը, որը չպէտք է անցնէին։*

ՄԵԼԻՍԱ.- *Պէտք չէ գլուխ դնել շատախօսի հետ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Մի կին տուեց մանեակը, միւսը՝ շահեց։ Բայց ով տուեց՝ նա էլ շահեց։ Նման դէպքում շատախօսութիւնը հրապուրիչ է կնոջ համար, ինչպէս արօտավայրը անասունի համար։*

ԻՈՆԱՍ, ՄԵԼԻՍԱ (միաբերան).- *Գռեհի՛կ զաւառական...*

ԱՅԱՔՍ (յենուելով սեանը).- *Ոչ, կացէք, ամօթի եւ մեղաւորութեան պատնէ՞շը, ինչպէս է այն առաջացել... Էվրիկա՛։ Հոգու զուարթ կէսը միշտ էլ փոխւում է արագ եւ դառնում միւս մռայլ կէսի նման։ Եւ միշտ մնում է երկու մռայլ կէսը, եթէ կարողանում են իրենց աբարքներից մռայլուել մարդիկ։ Կատաղած եւ չար քմծիծաղ տուող դէմքը յանկարծ կարող է փոխուել, եւ ամէն ինչ քարանում է իր շարժման մէջ, երբ ամօթն ու մեղաւորութիւնը արթուն պահակի պէս պատնէշ են դառնում մեր արարքներին։ Ինչպէ՞ս է առաջացել այդ պատնէշը...։ Թերեւտէս, դրա վրայ արժէ գլուխ կոտրել։ Շատախօ՛ս, քեզ ոչ միայն հայհոյելն է բաժին ընկել։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Քեզ՝ ոչ միայն կատաղելը։ Գուշակում եմ՝ կատաղել եւ հառաչել...*

ԱՅԱՔՍ.- *Խառնաշփոթութիւնը հարկադրում է կարգուկանոն ստեղծել գլխի մէջ։ Կանչենք պարուհիներին թող մեզ զուարճացնեն։* (Ծափ է զարկում)։

digitised by A.R.A.R.@

Գալիս են կիսամերկ պարուհիները՝ զօտիներից կախուած ապակէ գոյնզգոյն հիւսած հուլունքներ, եւ սկսում են մեղմօրէն պարել արթնացող յաւերժահարսի պէս։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ի պատիւ Արտեմիսի նրանք պարում են հպարտ ու վեհասքանչ պարը։ Նրանք քարացել են շարժման մէջ։ Ասես ամէն մէկն իր սէրն է պատմում։ Իսկ աղջիկներն ընտրուած են շատ խնամքով, բոլորն էլ լաւիկն են։*

ՄԱՐԿՈՍ.- *Ես սիրում եմ հաճոյքները։ Այստեղ ապրում է երջանկութիւնը։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Չէ՞ս չափազանցում։* (Առանձին՝ Մարկոսին)։ *Որպէսզի միշտ ձեռքիդ տակ լինեն, ու դու կարողանաս մերկացնել նրանց։ Քեզ երկա՞ր ոտքերն են դուր գալիս։*

ՄԱՐԿՈՍ (առանձին՝ Թերսիտէսին).- *Ինձ դուր է գալիս, երբ նրանց տրնտրղում եմ ամբողջութեամբ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ամբողջութե՞ամբ...։ Բայց չէ՞ որ յոյներին վայրի ու անհեթեթ է թւում այդպիսի սէրը՝ գեղեցկութեան բերկրանքով հիանալու փոխարէն, հանգարտ խորհրդածելու, իր մէջ խորասուզուելու փոխարէն։*

ՄԱՐԿՈՍ.- *Հելլէնները սիրում են իրենց վրայ կրել պաշտելի կանանց։* (Մելիսայինն նստեցնում է իր լայն ուսին եւ շրջում)։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Եւ չեն լացենում սիրոյ մոլի արուեստի ու ջանքի միջեւ...*

ՄԵԼԻՍԱ.- *Անամո՛թ շատախօս...*

ՄԱՐԿՈՍ.- *Պարուհիները ցատկոտում են՝ ինչպէս տառերը պապիրոսի վրայ։* (Այաքսին)։ *Ի՞նչ սատանայ մտաւ մէջդ։ Միծաղիր ինձ հետ մէկտեղ։ Միծաղիր բոլորիս հետ։* (Կնոջը իջեցնում է ուսից)։

ԱՅԱՔՍ (նայում է սրաթափանց աչքերով եւ զգուանքի շարժում է անում)։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Աքիլլէսի աքաղաղի բարձր կատարով սաղաւարտը, պղնձակուռ զրահը եւ վահանը, երկայր թուրն ու դաշոյնը, այդ ամէնը... խելայեղ լարուածութեամբ կարող է յարուցել թախծի նոպա։*

ԱՅԱՔՍ.- *Լռի՛ր, Թերսիտէս։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Աչքերս ոչինչ չեն տեսնում, մտքերս են տեսնում։ Էվրիկա՛, այդ պատկերը վառ կարմիր է, արեան գոյն ունի։*

ՄԱՐԿՈՍ.- *Դա Այաքսին է վերաբերում։ Ես չեմ համարձակում իմ մասին հարցնել։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Աքիլլէսի զէնք ու զրահը չի փայլում նրա ձեռքին։ Այո, այո։ Ես սովորաբար դէմքերը լաւ եմ տեսնում։ Այո, այդ ուրիշ դէմք է։*

ՄԱՐԿՈՍ.- *Հիանալի է։ Ես չեմ համարձակւում իմ մասին հարցնել։ Այդ խմբի մէջ յոյներ երեւո՞մ են։ Ինչպիսի՞ն ես տեսնում նրանց։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Եղջիւրներով, պոզերով։*

ՄԱՐԿՈՍ.- *Ես կարող եմ լաւ տեսնել, շատ լաւ տեսնել եղջիւրները։ Գիտէ՞ք, ես զանազանում եմ դեռ հեռուից։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Թշնամիների պոզե՞ր...*

ՄԱՐԿՈՍ.- *Ոչ ոք անսխալական չէ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ուրեմն, մի՛ յամառիր։ Դրանք մարդկանց պոզեր չեն։*

ՄԱՐԿՈՍ.- *Էլ ի՞նչ ես տեսնում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Աղերսող ձեռքեր, գետնատարած ձեռքեր, թուլացած-կախուած...*

ԱՅԱՔՍ.- *Լռի՛ր, շատախօս։ Այո, ես հիւանդ եմ, տխեղծ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ոչ ոք խելօք չէ, եթէ խելօքը բթամիտ է, անմիտ, եւ եթէ անմտութիւնը լաւ է խելքից։ Ամօթն ու մեղաւորութիւնը խաղի մէջ*

digitised by A.R.A.R.@

են մտնում, եթէ մարդն իր դէմքն է կորցնում։ Այդպիսի ժամին ես գայլերի ոռնոց եմ լսում։ Զարմանալի են այն մարդիկ, որոնք իրենց մտքի եկածը կարող են ասել։ Աքիլլէսի զէնք ու զրահը...։ Ի՞նչ զէնք ու զրահ...։ Ա՜հ, ի՞նչ զէնք ու զրահ է։ Աստծոյ կամքին հլու՝ նրա դարբնոցի փուքսերը բորբոքեցին հնոցի կրակը մերթ հանդարտ, մերթ էլ բուռն թափով։ Իսկ աստուած հնոցի մէջ էր գցում պղինձ, անագ, արծաթ եւ թանկարժէք ոսկի։

ՄԱՐԿՈՍ.- *Ապա առջեւը դրեց գնդանը եւ ձեռքն առաւ իր հսկայական մուրճն ու աքցանը։ Ամէնից առաջ զարմանահրաշ պատկերներով զարդարելով, Աքիլլէսի վահանը կռեց։ Նրա վրայ պատկերեց երկիրը, ծովն ու երկինքը, իսկ երկնքում՝ արեւ, լուսին ու աստղեր։ Ի՞նչ զէնք ու զրահ, ա՜հ, ի՞նչ զէնք ու զրահ...*

ՄԵԼԻՍԱ.- *Վահանի վրայ երկու քաղաք եւս պատկերեց։ Մի քաղաքում հարսանեաց հանդէս է. փողոցով ընթանում է հարսանեկան երթը, իսկ կանայք իրենց տների շեմքին կանգնած նրանց են նայում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Այնտեղ պատկերուած է նաեւ, թէ ինչպէս չորսբոլորը նրստած քաղաքի ծերերը, իւրաքանչիւրն իր ձեռքն առնելով արքայացուպը՝ արձակում է իր վճիռը վիճելի հարցի շուրջը։ Բայց, ահա, այնտեղ պատկերուում է նաեւ երեւացող նախիրը, որ յափշտակել էր թշնամին։ Քաղաքացիները եւս են խլում կովերն ու ոչխարները։ Արիւնահեղ մարտ է սկսւում։ Մոնչում են ոխի ու խռովութեան աստուածները։ Ի՞նչ զէնք ու զրահ...*

ՄԱՐԿՈՍ.- *Աստուած պատկերել էր նաեւ ցորենի հունձը։ Հնձուորների մի մասը հնձում է, միւսները խուրձ են կապում, իսկ երեխաները հասկ են հաւաքում։ Հրճուանքն է տիրում առատ բերքը հաւաքողներին։*

ԻՈՆԱՍԱ.- *Միւս կողմում կանայք ճաշ են պատրաստում հնձուորների համար։ Պատանիներն ու աղջիկները բերում են գամբիւղներով լի խաղողը։ Մի պերճ պատանի նուագում է քնարի վրայ։ Կողքին՝ ձեռք ձեռքի տուած կաքաւող պատանիների ու աղջիկների խմբապարն է։ Ի՞նչ զէնք ու զրահ...*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Իսկ վահանի շուրջը աստուած պատկերել էր ովկիանոսը, որ ողողում է երկրի շուրջբոլորը։ Վահանը պատրաստելուց յետոյ աստուած կռեց Աքիլլէսի հուր հրատող բոցի նման գունագեղ զրահն ու ծանր սաղաւարտը։ Աշխատանքն աւարտելուց յետոյ ողջ սպառազինութիւնը տրուել է Աքիլլէսին։ Հերոս Աքիլլէսը ընկաւ։ Հիմա ո՞մն է հասնելու զէնք ու զրահը։* (Առանձնաձայով՝ ԻՈՔՈ իրեն)։ *Իսկ դու, Այաքս, դուր ես սնում քո բերկրանքն անընդհատ, յոյսերով լի քաղցր ու պայծառ խրախճանքդ գուրգուրում։*

ՄԱՐԿՈՍ.- *Պարուհիների շարքը շրջուեց արեւի ուղղութեամբ, պատկերելով աստղերի շարժումը։ Մասնատելով շարքը, դուրս եկան արագաշարժ աղջիկները, որոնց ամբողջ հագուստը կազմում են գօտիներից կախուած ապակէ գոյնզգոյն հիւսած հուլունքները։ Լարերի պոռթկուն զեղգեղոցի եւ թմբուկների գարկերի տակ պտտւում, գալարւում ու խաղացնում են ազդրերը։ Իսկ հիմա հերթն է բանաստեղծների, թող նրանք յանպատրաստից լօրինեն կիթառայի նուագակցութեամբ, գարկելով լարերին թող պատմեն յոյների հերոսների սխրագործութիւնների մասին։ Մի երիտասարդ գորշակապոյտ զգեստով եւ սեւ սանդալներով՝ գարկելով լարերին սկսում է երգել։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Օ՜, նա ունկնդիրներին գրաւում է Ոդիսեւսի սխրագործութիւնների մասին իր տողերի ուժով։*

digitised by A.R.A.R.@

ԱՑԱՔՍ.- *Ոդիսեւսի՞...:* (Ծափ է զարկում: Բանատեղծին ու պարուհիներին): *Զքուէ՛ք: Ես գոռում եմ:*

ԻՈՆԱՍԱ.- *Գնանք, Այաքս: Քեզ հանգիստ է պէտք:*

Միւսների հայացքների ուղեկցութեամբ Իոնասան Այաքսի թեւը առած իր ուսերին՝ հեռանում է տերրասով:

☆ ☆ ☆

Տեսարանը բացւում է նոյն տեղում:
Իոնասա եւ Թերսիտէս:

ԻՈՆԱՍԱ.- *Արեգակի վերջին ճառագայթներն ենք որսում: Այաքսը հանդարտ է հիմա: Նրա գոռը անցաւ, երբ նրան քո խօսքերը ասացի, որ ամէն ինչի նախահայրը պայքարն է: Նա հարցրեց, թէ ի՞նչ է նշանակում գոռանալ զէնք ու զրահ: Ես պատասխանեցի քո խօսքերով. «Ուր գտնւում է գայթակղութեան քարը, ինչը որ չկայ, այն դեռ կարող է լինել, եթէ յոյսը չռայլորէն իրականացնի բախտ: Բայց յոյսը երբեմն կործանում է այն»: Ահա իմ նոր մանեակը, որ գնեցի Մելիսայից: Իսկ Այաքսը գնաց յոյների ճամբարը:*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Այն ամէնը, ինչ ցանկանում են ամուսինները, միմիանցից ձեռք են բերում ոչ թէ վէճերով ու փոխադարձ հայհոյանքներով, այլ՝ համոզելով: Ով թուլութեան պատճառով չի կարող բարձրանալ ձիու վրայ, նստում է ձիուն, սովորեցնելով նրան ծնկները ծալել, իսկ ամուսինը, որ իր կնոջ հանգէպ խիստ է չափից աւելի՝ չարժանացնելով նրան ծիծաղի ու վայելքի, նա իր կնոջն ստիպում է հաճոյքներ որոնել դրսում:*

ԻՈՆԱՍԱ.- *Դու ինձ հակաճառու՞մ ես, շատախօս:*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Օ՜, ո՛չ: Միայն ուզում եմ յիշեցնել, որ այնպիսի հայելին, որի մէջ ուրախ դէմքը մռայլ է երեւում, իսկ մռայլն ու խոժոռը երեւում է ուրախ ու շառագոյն, փչացած է ու անպէտք:*

ԻՈՆԱՍԱ.- *Դու համարձակուիր ծիծաղել ու կատակել: Այսօր մի վախեցիր յանդուգն ու սանձարձակ երեւալուց մեր տանը:*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Այն կինը, որ երեսը չի լուանում, որովհետեւ երեսը կարմրացրել է, ներկւում է ոչ իր ամուսնու համար: Իսկ քո ուրախութիւնն այսօր աւելի զրուցասէր է, տիրուհի՛: Ինչպէս զօրականը յո՛յժ հաճութեամբ է պատմում ճակատամարտի մասին, որն ինքը չահել է:*

ԻՈՆԱՍԱ.- *Ես չահել եմ մանեակը: Եթէ կինը չահել է, եւ նրա հոգին լի է ցնծութեամբ, այդպիսի դէպքում շատախօսութիւնը կարող է հրապուրիչ լինել կնոջ համար:*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ինչու՞ մենք մեր սեփական արարքներին մշտապէս չենք դէմ առնում, այլ մի մոգութեամբ շրջանցում ենք դրանք, դրանք չնկատելով, դրանց կողմը չենք դարձնում ո՛չ յոյսը, ո՛չ մեր հայեացքը: Իսկ ուրիշի բացերը տեսնում ենք խոշորացոյցի տակ: Մենք մերկացնում ու ի յայտ ենք բերում ուրիշի պակասութիւնները ու ա-*

digitised by A.R.A.R.@

բատները, իսկ մեր արատները ծածկուած են մնում չիրմայով։ Լաւ-լաւ խօսակցութիւններն էլ մեր մասին հենց նրա համար են, որ չը-տեսնելու տանք մեր արատները։ Իսկ կանանց աւելի չատ տհաճու-թիւն են պատճառում այն քամիները (մատնացոյց անելով Իոնասայի բղանցքները), որոնք վեր են բարձրանում նրանց զգեստները։ Օ՛, մեր ունեցուածքից մենք կարող ենք բաժին հանել ուրիշին, միայն ոչ մեր գաղտնիքները։

ԻՈՆԱՍԱ (շրջազգեստի եզրերը քաշելով ծնկներին).- *Անպատկա՛ռ, չենք թաքցնում, երբ ոչ մի վատ բան չկայ։* (Ակամայ մերկացնում է ձեռքը մինչեւ արմուկը)։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ինչ գեղեցիկ ձեռք է։*

ԻՈՆԱՍԱ.- *Բայց ո՛չ մատչելի ամէնքին։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Կինը ո՛չ միայն իր ձեռքը, այլեւ խոսակցութիւնները չպէտք է ցուցադրի, եւ ուրիշների ներկայութեամբ ձայն տալն էլ պէտք է ամօթ լինի նրա համար, քանզի ձայնը մատնում է ե՛ւ խօսողի բնա-ւորութիւնը, ե՛ւ նրա հոգու յատկութիւնները, ե՛ւ տրամադրութիւնը։*

ԻՈՆԱՍԱ.- *Կնոջը վայել է լռութիւնը։ Նա հնչիւնները արձակում է ո՛չ իր շուրթերով։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Կինը զգեստի հետ ամօթն էլ է հանում։*

ԻՈՆԱՍԱ.- *Կինը զգեստը հանելով ամօթով է զգեստաւորուում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Նաեւ պահւում է գաղտնիքը, նաեւ սնւում ու մեծանում է չարութիւնը ուրիշի հանդէպ։ Եթէ ինչ-որ մի բանում գաղտնիք է ամփոփուած, զգուշացիր դրան մօտենալուց, այնտեղ կուտակւում է թաքուն զայրոյթը, այնտեղ մտքում հասունանում է թաքուն վրէժը։ Հեռու փախիր այդ սեւ խոտացող թխպերից, թաքնուածն է դուրս պոռթկալու։ Դու գաղտնի՞ք ունես, տիրուհի։*

ԻՈՆԱՍԱ.- *Ճառախօս զինուոր, տղամարդը աւելի երկար պարանով կա-րող է շրջել, քան կնոջ համար թոյլատրելի է։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Տղամարդը շրջում է բացէիրաց, իսկ կինը՝ գաղտնի։ Լսիր ուրիշին, քո խօսքը դիր փակի տակ։ Խօսքը խօսք է բերում, եւ գաղտնիքն է բացւում։*

ԻՈՆԱՍԱ.- *Արածի համար մենք երբեմն զղջում ենք, չանելու դէպքում այդպիսի հնարաւորութիւն չկայ։ Ես քեզ կ՚ապտակէի, Թերսիտէս։ Բայց եկ վերջացնենք շաղակրատելը, Այաքսը այս կողմ է գալիս։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ես քեզ եմ սպասում, Այաքս։*

ԱՅԱՔՍ.- *Հաւատարիմ զինուոր, ես քեզ հաւի ճտի պէս կը թոցնեմ ճա-նապարհիցս, եւ ամէն ինչ կը վերջացնեմ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Տեսէք, թէ ամէն ինչ որքան հեշտ է։*

ԱՅԱՔՍ.- *Երբ լուսինն ու աստղերը մոռանում են երկրի գոյութիւնը, եւ խաւարում շողարձակում են միայն մարդկանց կրակները, մարդիկ վիճակ են զցում...։ Իսկ իմ երակներում արեան հարուածները խը-լացնում են ձայները։*

ԻՈՆԱՍԱ.- *Քո տեսքն արդէն թունաւորում է մեզ սպառնալիքների եւ սարսափների թոյնով։*

ԱՅԱՔՍ (արհամարհական ծիծաղում է).- *Բայց իմ ձեռքը դեռ արնոտ չէ, եւ ձեռքումս սուր չկայ։ Միայն հաղարշը կարող է արեան նման կարմիր լինել։*

ԻՈՆԱՍԱ.- *Ես... Ես...* (Բոլորովին կտրուող ձայնով)։ *Ո՛չ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ո՛չ, դու չես։*

ԻՈՆԱՍԱ (Այաքսին).- *Դու դողու՞մ ես...*

digitised by A.R.A.R.@

ԱՅԱՔՍ (ուտում է Նրան խանդոտ հայեացքով).- *Ո՛չ։ Այո, այդպէ՛ս կը լինի։*

ԻՈՆԱՍԱ.- *Դու այսօր բարի ես։*

ԱՅԱՔՍ.- *Ո՛չ։ Բախտը անորոշ նաւարկում է։ Բախտի հանած վիճակը աւելի շատ ոգեւորում է, քան նուաստացնում...*

ԻՈՆԱՍԱ.- *Քո խօսքն աւելի կարճ էր, քան ուզում էիր ասել։*

ԱՅԱՔՍ.- *Ամէն ինչի դարպասները փակել, ամուր կողպել, որպէսզի ճանճն անգամ չկարողանայ անցնել, բացի վրէժից։ Մարդու դէմքը ես ուզում եմ դանակի հետ համեմատել։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Իսկ ես վախկոտ չեմ։*

ԱՅԱՔՍ.- *Ամէն մի մասնիկս «վրէ՛ժ» է գոռում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ու՞մն ես հայհոյում։ Ասա վերջապէս։*

ԱՅԱՔՍ.- *Ատրեւսի որդիներին։ Նրանք փոխեցին ինձ համար դցուած վիճակը, խարդախեցին, եւ Աքիլլէսի զէնք ու զրահին տիրացաւ Ոդիսեւսը։ Ամէն մի մասնիկս «վրէ՛ժ» է գոռում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Մերուններն աւելի զգոյշ, կասկածամիտ են, երիտասարդները՝ անխոհեմ, իսկ Այաքսը՝ անհամբեր։ Շտապողականութեան քամին անհամբերութիւնից է ծնւում։ Աւարտը դառնում է անխոհեմ արարք։*

ԱՅԱՔՍ.- *Զգուշութիւնս սրիս ծայրն է։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Զգոյշ կաց կռուից, կամ կռիւն սկսիր այնպէս, որ ոսոխիդ համար քեզնից զգոյշ մնայու դաս լինի։*

ԱՅԱՔՍ.- *Փոխեցին դցուած վիճակը, խարդախեցի՛ն...*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Այդ դէպքում զօրականն հանում է սուրը։* (Իր սուրը դուրս է քաշում պատեանից)։

ԱՅԱՔՍ (մերկացնում է սուրը եւ սրի ծայրը ցցում է երկիրքի).- *Դիտակցութիւնս եմ ես կորցնում, մոլեգնութիւնն է ինձ իշխող։ Ասես նետւում եմ անվերջ խենթացնող վազքի մէջ, եւ լեզուս է համրանում։*

ԹԵՐՍԻՏԷՍ (առանձին՝ ինքն իրեն).- *Ինչպէս անփորձ եւ նոր լծուած մի հովատակ սանձդ ես անվերջ դու կրծոտում։*

ԻՈՆԱՍԱ (ոտքերը ամուր խփելով գետնին, աջ ձեռքը Այաքսի նման ցցում է երկիրքի).- *Վրէ՛ժ...*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ցուզմունքը թելադրում է, վրէժը սուրն է հանում։ Դու ի՞նչ ծրագիր ունես։*

ԱՅԱՔՍ.- *Ցառա՞ջ հաստատակամ դէպի վառուող վրէժի լուսաշող աստղը։ Այն այնքան էլ հեռու չէ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ոխով թելադրուած արարքներ եմ կանխազգում։ Վրէժի կիսադէմը աւելի զարհուրելի է դառնում։ Տեսնում եմ դաւադրութիւն եւ ջարդ։ Իսկ խոհեմութիւնը ծեծկուած կատուի պէս կծկուել է անկիւնում։ Կանխաբար երջանկութիւն չպէտք է հաշուել ոչինչ, քանի որ մինչեւ մարդու կեանքի վերջին սահմանը դեռ աղէտի փորձութիւն է։*

ԱՅԱՔՍ.- *Վատի համար ես կը հոգամ, լաւագոյնը ու՞մն է մնում...*

☆ ☆ ☆

Ամրոցի առջեւ.
Ցոյների բազմութիւն, յետոյ՝ Այաքս։

digitised by A.R.A.R.@

ԱՌԱՋԻՆ ՑՈՑՆ.- *Թշնամի տրոյացիները մոտակայքում են, բայց դու մի ուրիշ ինչպիսի դանդաղ ծամող ծնօտի տակ ես ընկել, խեղճ յոյն ժողովուրդ։*

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՑՆ.- *Ցուլերի նախիրը մեծաթիւ էր՝ նրանց պահպանող յոյն հովիւներից։ Նրանց բոլորին Այաքսի ծնօտը ծամել է։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՑՆ.- *Բոլոր հանդիպողներին նայել է իբրեւ թշնամի, եւ ոչինչ չի կասեցրել ճակատագրի ընթացքը։*

ԵՐՐՈՐԴ ՑՈՑՆ.- *Մինչեւ դէպքը տեսել են նրա սպիտակուցների փայլկըտալը աչքերի անկիւնում՝ չար բարքի նշանը։ Գտնուելով դիպուածի իշխանութեան տակ, միտքը մթագնել է։*

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՑՆ.- *Այաքսը չէր կարող չցանել այնտեղ, ուր մարդ չէր ուզենայ պտուղ ունենալ։ Փղերին չի կարելի մօտենալ սպիտակ զգեստով, ցուլերին՝ կարմիրով, որովհետեւ ասուած գոյներից այդ կենդանիները ընկնում են ամենաաստիկ մոլեգնութեան մէջ։ Այաքսին մոլեգնութեան է հասցրել գէնք ու զրահի համար գցուած վիճակը։ Կրակը սնունդ է ստացել եւ բորբոքուել է, ու նա գլուխը երկինք է հանել։*

ԱՑԱՔՍ (անկատելի կանգնելով խօսող յոյների կողմին).- *Ե՞ս... Ի՞նչ է եղել, որ...*

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՑՆ (մի կողմ է քաշւում եւ պատասխանում թշնամանքով).- *Ինչպէս առարկաները թուխպի միջով, այնպէս էլ գառները, ցուլերն ու հովիւները քո ցասման ամպի միջով արտաքնափոխուել էին։ Դու քո վրէժը գառնարած յոյն աղջիկներից ու ցուլերի նախիրից ես առել։ Կատաղութեամբ բռնուած՝ քո սրով ծուատել ես գառներին, ուլերին, երեխաներին։ Ահա, գլուխները կորցրած յոյն կանայք քո տնաղն են անում։ Վայրագ՝ ո՛չ։ Անողորմ՝ ո՛չ։ Դա էլ այն չէ։ Ի՞նչ անուն գտնեն քեզ համար։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՑՆ.- *Ինչպէս լիրիական քամին է թափանցում մարդկանց ոսկորները, դու պատժել ես հապճեպ, անկարեկից, ինչպէս վալել է գազանին։ Այնտեղ գզգզուած ցնցոտիներով հովիւ աղջիկներն են քնած, բայց չեն արթնանալ, որ արածդ պատմեն։ Իսկ դու ախ մի քաշիր։ Նրանց վէրքերը կը սպիանան գերեզմանում։ Նրանք մեռել են քո սրից։ Վէրքերը գերեզմանում էլ են սպիանում։ Իսկ հիմա կրելու ես մարդկանց ծաղրանքի հարուածը։*

ԿԱՆԱՅՔ (ողբում են).- *Օ՜, վիշտ...։ Օ՜, դժբախտութիւն...*

ԱՑԱՔՍ.- *Ի՞նչ է եղել, որ...*

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ.- *Ի՞նչ է ուզում այդ գինովը։*

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ.- *Գառնարած աղջիկների արիւն եւ մորթուած գառների մսիւն։*

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ.- *Նա իր յոյն թշնամիներին շփոթել է ցուլերի ու հովիւների հետ։ Սրի է քաշել, կարծելով, թէ Մենելաոսը եղջիւրաւոր այծ է, իսկ մի գառնուկ մորթել է, կարծելով՝ արքայ Ագամեմնոնն է։*

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ.- *Փա՜ռք Այաքսին։ Իսկ հիմա արժանի ծէս անենք նրան։*

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ.- *Թող մէկը ապտակի նրան, եւ նա ապտակը կուլ կը տայ կախականջ կենդանու նման։ Որովհետեւ այդ ճիշտ է, բացարձակ ճիշտ է։*

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ.- *Այաքս, քո մի այտը միւսից աւելի կարմիր է։*

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ.- *Բայց նա չի տեսնում, հայելի տուէք։*

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ.- *Ապտակը շառաչեց այտիդ, եւ ձայնը առայ, դու հօ չե՞ս ուզում ասել, որ ապտակը չդիպաւ։*

digitised by A.R.A.R.@

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ.- *Այաքսի մի ուրիշ տեղը ցաւոտ է, դրա համար ապտակի ցաւը չի զգում։*

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ.- *Կամ նա հարբած է։ Կոնծե՞լ ես։*

ԱՅԱՔՍ.- *Կացէ՛ք։ Հեռու՛ ինձանից, յոյներ, եւ մի՛ ծաղրէք։ Դուք ազատորէն էք խօսում, որովհետեւ Այաքսի դառնութիւնը զսպում է նրան։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՅՆ.- *Այ մարդ, ամօթից գառնուկի հեզութիւն ես առել։*

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ.- *Ես կը գոռա՞մ...։ Ես ոտքի կը հանեմ ամբողջ քաղաքը։*

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ.- *Ամօթն ու մեղաւորութիւնը, տես, ինչպէս են թառել նրա երեսին։ Նրանց գոյնն ու ձեւը տես ի՛նչ արտայայտիչ են։*

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ.- *Եկէք, մարդիկ, ամօթը տեսնելու՝ յանձին Այաքսի։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՅՆ.- *Ոչ ոք վրէժ չի գոռում։ Գործը վերջացած է եւ փակւա՞ծ, ոչ մի փոխհատուցո՞ւմ այլեւս...։ Պատուի խորհրդանիշո՞վ խփեմ։* (Ապտակում է Այաքսին)։

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Ո՞վ չահեց ապտակների ճակատամարտը։*

ԵՐՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Ամօթը։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՅՆ.- *Նա ապտակին չի պատասխանում։*

ԵՐՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Նա իր կնոջ վիզն է ուզում համբուրելու համար։ Ես կ'ասեմ, որն է կնոջ համբուրելու տեղը։ Ո՛չ, սխալւում ես, Այաքս, յետոյքը չի։*

ԱՅԱՔՍ.- *Ինչ լիմար վիճակի մէջ եմ ընկել։ Բայց դա մէկ բոպէից աւելի չի տեւի։*

Գալիս է Թերսիտէսը։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Այստեղ բոլորը վիճում եւ գոռում են։ Մարդկանց ամբոխը գործում է, իսկ դու, Այաքս, ունես միայն կեցուածք եւ հայեացք։*

ԱՅԱՔՍ.- *Բայց դա մէկ բոպէից աւելի չի տեւի։* (Ապտակում է երրորդ յոյնին եւ վայր գցում)։

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ (Այաքսին).- *Իսկ քո ամօ՞թը։ Զարութեա՛ն դիմակ։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ձեզ թանկ կը նստեն այդ սոփեստութիւնները, ամէն բանի մասին թեր ու դէմ խօսել կարողանալը, յոյներ։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՅՆ.- *Ցուլին սպանելու նոր միջոց է գտնուել, գիտե՞ս դու, Թերսիտէս։*

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Այսինքն՝ Այաքսը կենդանիների փորոտիքով ուզել է գուշակել սեփական ճակատագիրը։*

ԵՐՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Եւ էլի անսովոր ու տարօրինակ բաներ, որ քեզ հրաշք կը թուային։*

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Որպէս բարեբախտութիւն նա հիմա պէտք է ամբողջ կեանքն անցկանցնի որպէս բուժման կարիք ունեցող։ Նրա բնածին խելքը մթագնել է։ Եւ հիմա նրան ներելատուկ է այն միտքը, թէ իր նկատմամբ ցուցաբերում են անլարգալից վերաբերմունք կամ արհամարհանք։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Դու լռո՞ւմ ես, Այաքս։* (Յոյներին)։ *Ի՞նչ էք կուտակուել՝ ինչպէս կրէտների պարս։*

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Նա գազանի պէս իր գայրոյթն է թափում ամէնքի վրայ, ուրիշի ցաւի հանդէպ այնպիսի հակումով, որ ցանկութիւններից ամենագազրելին է։ Նա ու՛մ հաւատարիմ բարեկամ է թուացել, եւ ո՛վ բարի կարծիք է ունեցել նրա մասին եւ վստահել է նրան, պիտի նրա մէջ տեսնէր ե՛ւ վչտի, ե՛ւ սանձարձակութեան սերմեր։*

digitised by A.R.A.R.@

Իսկ դու, Թերսիտէս, լսիր, եթէ ուզում ես լսել անհրաժեշտը, եւ պատասխանիր սիրալիրութեամբ, եթէ կարող ես։

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ինչպէ՞ս շուրթերիցս չպոռթկայ մի հեղեղ։ Ինչպէ՞ս Թերսիտէսը չհանի իր լեզուի խալթոցը։ Զարալեզու, բայց ճշմարտացի ձեր քաջարի ռազմիկը, որը իր դիպուկ լեզուով հաւասարապէս կոտրում է թէ՛ թագաւորի, թէ՛ վահանակրի գոռոզութիւնը։*

ԵՐԿՐՈՐԴ ՅՈՅՆ.- *Եթէ նա իր կատաղութիւնը թափէր ծառի կամ քարի վրայ, մարդկանց համար կը դառնար պակաս վտանգաւոր։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ո՞վ...*

ԵՐԿՐՈՐԴ ՅՈՅՆ.- *Այաքսը։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Դու լռո՞ւմ ես, Այաքս։*

ԵՐԿՐՈՐԴ ՅՈՅՆ.- *Ինչու՛ խօսել, չէ՞ որ բառերը անիմաստ ու անօգուտ են լինում, քան արարքները, քան ապականիչ ու կործանիչ կրքերը։ Դու դրա մասին կ'իմանաս այն հովիւ տղայի պատմածով, որ միակ փրկուած մազապուրծն է նրա սրից։*

ԱՌԱՋԻՆ ՅՈՅՆ.- *Թող պատմի հովիւ տղան։*

ՋԱՅՆԵՐ.- *Թող պատմի, թող առաջ գայ։*

Բոլորի դէմքերը արտայայտում են լարուած սպասում։

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ.- *Այդպիսի բան դեռ չի եղել Հելլադայում։*

Առաջ են մղում հովիւին։

ԱՌԱՋԻՆ ՅՈՅՆ (Այաքսին).- *Ճանաչու՞մ ես սրան։ Նոյն հովիւն է սա։ Ի՞նչ է աչքիդ երեւացել՝ մա՞րդ, թէ՞ գառնուկ...*

ՀՈՎԻՒ.- *Գալիքն ամբողջովին ես նախապէս իմացայ, երբ աղմուկը հասաւ հեռուից։ Երբ մօտեցող ամէն շչուկ գարձաւ հառաչ զարհուրելի, եւ բառաչին ու մայիւնին գառնուկների խառնուեց յանկարծ մի տեսարան։ Նա արնածոր սրի ծայրին դեռ թողել էր արեան հետքեր...*

Գալիս է երգչախումբը։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.- *Ո՞վ էր...։ Ո՞վ էր...։ Ցոյց տուր նրան, եթէ գիտես այս մարդկանցից ո՞վ է եղել։*

ՀՈՎԻՒ.- *Բայց թուլացող հոգով տեսայ, որ հաճոյք էր իսկապէս սուրը նրա բանեցնողին։*

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.- *Ասա՛ նրան, թէ տեսնում ես այսքան մարդկանց մէջ կանգնածին։*

ՀՈՎԻՒ.- *Ինչպէս պտոյտի մէջ մրրիկ ու հողմը գալարում են փոշի՝ պտտւում էր արեան միջով, երբ ինձ տեսաւ։*

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.- Նրան այստեղ կանգնած տեսնո՞ւմ ես։ Զկա՞յ մէկը, որ նման է։ Թէ չես ուզում ցոյց տալ նրան։

ՀՈՎԻՒ.- *Սիրտս ահից ոստոստում է, դողդողում է կրծքիս տակ։ Եթէ ասեմ, Օ՜հ, աւելի դաժանարար չե՞մ կործանուի։*

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.- Պէտք չէ արդէն ոչ մի վկայ եւ ապացոյց։

Նա հենց ինքը է խոստովանանք եւ բաւութիւն իր արածին։
Մենք տեսնում ենք շարքի առաջ նրան հնազանդ եւ գլխահակ։
Այաքսին ես տեսել, հովիւ, նախիրի մէջ սուրը ձեռքին կոտորելիս։

digitised by A.R.A.R.@

ՀՈՎԻՒ.- *Հանգոյց բացել ես չեմ կարող։*
ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Նա՛ է եղել։
ԱՅԱՔՍ.- *Բայց ուզում եմ մտաբերել... ի՞նչ եմ լիշում։ Ցոյներն էին ինձ հետ խօսում...*
ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Ցոյե՞ր էին երեւում Քեզ։
ԱՅԱՔՍ.- *Ցոյներն էին խօսում ինձ հետ, գոչում էին. «Մենք ենք, Այաքս, քեզ խաբողը»։*
ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Դու ես խօսել Քո բերանով, թուացել է, թէ յոյներն են։
ԱՅԱՔՍ.- *Ես էլ նրանց ուղղում էի իմ խօսքերը. «Ի՞նչ նոր բան կայ ինձ յայտնելու, պատմէք իսկոյն։ Ինչ էք խօսքը դէս-դէն գցում, շուտ-մուտ տալիս»։*
ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Պատասխանել ես յոյներին, թէեւ Քեզ ես պատասխանել։
ԱՅԱՔՍ.- *Ցոյներն էին խօսում ինձ հետ. «Կ՚ասենք հիմա քեզ իսկ եւ իսկ՝ փուստ վիճակը, որ քեզ ընկաւ»։*
ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Ցոյն չի եղել, եղել է լոկ նախիր, գառներ։
Դու խօսել ես Քեզ ու Քեզ։
ԱՅԱՔՍ.- *Ես էլ նրանց ուղղում էի իմ խօսքերը.«Ամուսնի դէմ չեմ դանդաղի։ Իմ կարճ ուղին երկարատեւ կը դառնայ, երբ որ անցնեմ սուրը ձեռքիս ձեր շարքերով։ Կը խլանամ, կը համրանամ վերեւ պարզուած ձեր ձեռքերի աղերսական հալցումին։*
ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Եւ խփել ես գառ ու ցուլն հայհոյանքով աղմկարար,
Արհամարհող ժանտ հայեացքով, անզգոյ, անչափ եւ անյագ։
ԱՅԱՔՍ.- *Ե՞ս եմ արել։ Համոզմունքս ահաւոր է։ Իմ վրէժը նախիրից ու հովիւներից եմ ես առել։*
ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Ճակատագրի ծաղրով, այո։
Թէեւ հիմա դու տխրութեան ամպի թխպով ես ծածկուած։
Ցիշիր մեռած հովիւ աղջիկների աչքերը, մահառաջի աղաղակը։
ԱՅԱՔՍ.- *Ես եմ արել, խօսքի խրատն ի զուր է արդէն ինձ։*
ԿԱՆԱՅՔ.- Ինչ որ պէտք էր, արդէն տեսար եւ իմացար։
Դու հնձեցիր նրանց այսպէս դեռածաղիկ
Եւ թողեցիր մեզ՝ մայրերիս լաց ու կական։
Տես մեռածի աչքերը...
ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Այաքս...։ Այաքս...։ Տես մեռածի աչքերը...
ԱՅԱՔՍ.- *Հովիւ աղջկայ գանգրամազ գլուխ, մեռածի աչքե՛ր...*

Կարճատեւ լռութիւն։ Մարդիկ կարծես թեր ու դէմ կարծիքներ են փոխանակում։ Կանայք ձեռքերը վեր պարզած դիմում են երկինք։

ԵՐԳԶԱՆՈՒՄԲ.- Գնա՛ մոլոր։ Այդ մտքերից
Քո կարճ ուղին երկարատեւ կը դառնայ։

Այաքսը թերսիտէսի ուղեկցութեամբ հեռանում է։

☆ ☆ ☆

Ծովափին. մենատոր արմատնի։
Այաքսը մենակ։

ԱՅԱՔՍ.- *Ես բացեցի այն դուռը, որի ետեւում թափառող ձայները մէկ-մէկ ու ընդհատ սահելով սարսռալի անունս են տալիս։ Ձեռքերը*

digitised by A.R.A.R.@

դէպի վեր, որ գութ են աղերսում, ձեռքերն ի երկինք...։ Վա՜յ, Այաքս, Այաքս, կանչերով դէմքերն ինձ են մատնացոյց անում։ Օ՜օ՜օ՜...։ Օ՜հ-հ...։ Ինչն է աւելի մռայլ, քան արեգակը՝ մեռածի աչքերով եւ հովիւ աղջկայ գանգրամազ գլուխը վրան...։ Օ՜օ՜օ՜...։ Օ՜հ-հ...։ Ձեռքերը դէպի վեր, որ գութ էին աղերսում, ձեռքերն ի երկինք կանչերով՝ վա՜յ, Այաքս, Այաքս...։ Նիրհելու տոչորով փակում եմ կոպերս, եւ մեռածի աչքերը կանգնում են իմ առաջ, եւ ձեռքերը գթացող, որ պարզուել են երկինք, Օ՜օ՜օ՜...։ Օ՜հ-հ։ Վեր եմ թռչում ոռնալով, շտապ բացում աչքերս, որ թողնեն-հեռանան...։ Սակայն էլի նրանք են...։ Ուզում եմ գնալ, բայց անբաժան իմ ստուերը պոկել չեմ կարող, իմ մեղքն ու ամօթը...։ Որը Ոգի է, Մտքերի Ոգի։

Մեռածի աչքերը, այդ զարմանալի աշխարհը, այդ ցաւի աշխարհը, որ մեռած է՝ մեռածի հետ, եւ յաւէտ կենդանի՝ ապրողի հետ...։ Երբ ես վերջին անգամ նայեցի մեռնողի աչքերին...։ Պապս ասում էր...

Ցանկարծ ամէն ինչ սկսում է մշուշապատուել։ Մշուշի բուլաների մէջ հետզհետէ պարզւում է ամբողջովին սպիտակ հագած ճեփ-ճերմակ մազ ու մօրուքով մի փառահեղ ծերունու կերպարանք։ Այաքսը գլուխը մի փոքր վեր է բարձրացնում, ձեռքին յենած ծնօտը ցնցւում է, եւ սարսափահար ոտքի է ցատկում։

ԱՅԱՔՍ.- *Դո՞ւ...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ես։ Մի՞թէ չէիր սպասում ինձ։*

ԱՅԱՔՍ.- *Տեսի՞լք է...։ Կասկա՞ծ։ Հեռացի՛ր։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Մեռածները ուշքի չեն գալիս, բայց գալիս են ողջերի կանչով մեռելահարցուկի։ Ողջերը կանչում են մեռած մարդկանց հոգիները եւ հարցնում են նրանց, երբ քշուած են լինում իրենց տարաբախտ կեանքից դէպի այսպիսի միաւոր, լուակեաց վայրեր, ազատ ամէն մի շունչ ու արարածից։ Եւ ելնում են մեռելների հոգիները պատասխանելու ողջերի տուած հարցերին։*

ԱՅԱՔՍ.- *Հեռացի՛ր։ Ես քեզ չեմ կանչել։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Խոստովանիր, մոլորուա՛ծ։ Խոստովանիր։*

ԱՅԱՔՍ.- *Ես քեզ չեմ կանչել։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Դու ինձ ձայն տուիր։*

ԱՅԱՔՍ.- *Հեռացի՛ր։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ (ջերմեռանդ).- *Աշխարհքը մուտք չունի այնտեղ, ուր մենք ենք, բայց մենք գալիս ենք ապրողների կանչով այնտեղ, որտեղ մէկ անգամ ապրել ենք արդէն։ Ուր կեանքը վայելք է ձեզ... թէ՞ կեանքը խաղում է մարդու հետ։ Ի՞նչ առնական եւ ուժեղ ես դու, եւ ի՞նչ երիտասարդ։ Իմ սուրը, որ երեսուն տարի ծառայել էր ինձ, հիմա քո ձեռքին է։ Իսկ ձեռքը զօրեղ է։ Իմ թո՞ռ...*

ԱՅԱՔՍ (աչքերը միշտ գետին, մի տեսակ անկամք).- *Իմ պա՜պ...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ասա՛, ասա՛։*

ԱՅԱՔՍ.- *Ասեմ ի՞նչը։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Այնտեղ կռիւ էր ու փոթորիկ, իսկ այստեղ լուռ է ու խաղաղ։ Դու, որի հոգին ես որձաքարի պէս ամուր էի կարծում, ինչու՞ ես խոնարհել այդ հպարտ գլուխդ ցած։*

digitised by A.R.A.R.@

ԱՅԱՔՍ.- Ես նայում եմ հողին, հողում լուշեր են թաղուած, խո՜ր ու խաղաղ, ա՛յս կողմը, ա՛յս կողմը, հողում արեան հետքեր կան...: Մի անցաւոր ու պատահական դիպուած նրանց դարձրեց մեռած...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Դուք՝ կենդանի, մենք՝ մեռած: Առնենք իրար թեւ թեւի: Դուք՝ կենդանի, մենք՝ մեռած: Հարցնենք իրար, պատմենք իրար:

ԱՅԱՔՍ.- Հո՜՛, հո՜՛...: Բայց չէ՞ որ նա մեռած է արդէն, հովիւ աղջիկը:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ինչպէս ես՝ վաղու՜ց, վաղու՜ց...

ԱՅԱՔՍ.- Վաղու՜ց, վաղու՜ց, եւ իղձերն անվերջ, տագնապն ու տենչը էլ չկան...: Եւ սիրքերը տերեւների մէջ, եւ հաւքերը թփերի տակ՝ բոլորը լուռ են, եւ չկայ կարկաչ աղբիւրի շրթունքին, բոլորը լուռ են:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Այդպէս է ա՛յն աշխարհում: Ա՛յս ունայնութեան փոսի աշխարհում, ուր պիտի մտնեմ քիչ յետոյ:

ԱՅԱՔՍ.- Ես էլ իմ փո՞սն ունեմ:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ուր էլ լինի մարդ, աշխարհներ շրջի եւ ապրի իր կեանքը, յետոյ գալիս է իր փոսին: Առնում է իր գերեզմանի փոսը ու պառկում: Եւ ինչ պարանով էլ շրջած լինի նա կեանքում, վերջը կանգնում է իր փոսի մօտ, առնում է իր փոսը ու պառկում: Մարդուն ունայնութեան փոսն է բաժին: Միայն թէ ոչ ոք, քանի կենդանի է, նախապէս չգիտէ, ուր է իր փոսը:

ԱՅԱՔՍ.- Ո՞ր է իմ փոսը, ո՞ր է իմ փոսը...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Չգիտես եւ չես իմանայ: Սակայն փոս է, որին կապուելու ես ընդմիշտ: Երբ գայ օրը, կը տան քեզ քո բաժին փոսը, կ'առնես քո փոսը եւ կը պառկես մէջը: Ոչ ոք դժգոհելու իրաւունք չունի, բոլորին էլ նոյնն է, նման:

ԱՅԱՔՍ.- Ես կը լցնեմ քո փոսը:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Մարդիկ են փորել իմ փոսը: Փորողների համար ուրիշները փոս կը փորեն: Փոսը լցնողը աւելի խելօք չէ փորողից: Փորելը աւելի է հասկանալի:

ԱՅԱՔՍ.- Գնա՛, ես քեզ չեմ կանչել:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Մեռած մարդու բացակայութիւնը զգալի չի ձեր աշխարհում: Բայց դու ինձ կանչել ես:

ԱՅԱՔՍ.- Կեանքը քիչ բան ունի մեզ տալու:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Մի՛ տրտնջայ՝ քիչ է, թէ շատ: Ինչ որ տուել է, մէկ է:

ԱՅԱՔՍ.- Դու էլ ինձ պէս ես մտածում: Ես մեռածի պէս եմ մտածում:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ճշմարտութիւնը դա է:

ԱՅԱՔՍ.- Դա է:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Այնպէս հիւսուած են իրար յիշողութիւնները, անցած կեանքի քաղցր վայրկեանները, որ հիմա ներկայանում են ինձ: Եւ այս օրը մեռելահարցուկի: Կ'ուզէի՞ր, որ կրկնուէր կեանքիդ քաղցր վայրկեանները, մարած մոխիրը խառնել, որի իմաստը միայն թախծի երանգ ունի իր մէջ:

ԱՅԱՔՍ.- Հարցը ի զուր է, եւ պատասխանը միակն է: Եւ մի՞թէ կեանքը տառապանք չէ:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ճշմարտութիւնը այն է, որ շրթունքս երբեք չի ուզում արտասանել, որ ես ու դու վախենում ենք իրար աչքի մէջ խոր ու շիտակ նայել:

ԱՅԱՔՍ.- Ում երեսին շիտակ եմ նայել, հիմա կ'ուզէի քաւութիւն խնդրել նրանցից: Մեռածների վիշտը ապրողների մրմունջի նման դէպի երկինք է միւում:

digitised by A.R.A.R.@

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Միտքը երբեմն թեւեր ունի, որ մեզ հեռու է տանում մեր փոսից։ Տապը թում է աւելի այրող ու սաստիկ։ Զափազանց մեծ է մահուան հնութիւնը։*

ԱՅԱՔՍ.- *Ինչպէս նետի թռիչքը, կեանքի ուղին ճեղքում է հարթավայրը եւ հասնում մահին։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Զօրաւորնե՛ր, զարկէ՛ք, ով ձեր դէմն է, ով կը փակի ձեր ճամբան։ Զարկէ՛ք, յաղթողը մենք ենք։*

ԱՅԱՔՍ.- *Արդեւոզը թշնամի է։ Զարկէ՛ք։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ինչ լաւ է յաղթող լինել։*

ԱՅԱՔՍ.- *Ցաղթելը հրճուանք է։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ (խոժոռ ու մտախոհ).- *Բազկիդ զարկերի տակ նրանց բոլոր ճիգերը յաղթահարելով, ա՜, այդ կոի՛ւը...*

ԱՅԱՔՍ.- *Ասա՛, ասա՛...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Քո արարքը ներելի չէ։ Իմ արարքները եղել են համբաւաւոր կամ որոշ արարքների համար երբեմն զղջացել եմ։ Բայց քո արարքը ներելի չէ։*

ԱՅԱՔՍ (ձեռքերը կրծքին դնելով).- *Թող որ մեղքերս քաւեմ ձեր աշխարհում։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ(ձեռքով բացասական շարժում է անում).- *Մեղքերը քաւում են ձեր աշխարհում։ Մարդ պէտք է ունենայ այդ զգացումը։ Սեփական մեղքի մէջ զգացումը մի նստուածք է թողնում։ Մեր հոգու այդ նստուածքը իր կնիքն է թողնում մեր հետագայ վարքի ու որպիսութեան վրայ։*

ԱՅԱՔՍ.- *Ես պիտի ասեմ...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ո՞ր են մտքերդ, Այաքս։*

ԱՅԱՔՍ.- *Այո, այո, մեղք է, գիտեմ, մեծ մեղք։ Եւ այդ բոլորը գլխիցս ջնջել չեմ կարող։ Բայց ինչ հրաշալի բան է մոռացութիւնը։ Ո՛չ, ո՛չ, մոռացութիւնը մի նոր մեղք կը բարդի ինձ վրայ։ Մոռացութիւնը կը նշանակի դաշինք կնքել մեղքի հետ։ Ես լիշելով, հաւաստում եմ զղջումը։ Իմ զղջումը մեծ է, պապ։ Ես կուրծքս լայն բացում եմ նրա առաջ, գուրգուրում նրան։ Ես զղջալով ամոքում եմ ինձ։ Մարդու զղջումը բուժիչ է մեղքերից։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ամէն մէկը իր արարքների ու մեղքերի գիտութեամբ քաւում է իրեն։ Դրանց մոռացութիւնը կատարուած մեղքից յետոյ՝ մի նոր մեղք է բարդում մարդու ուսերին։ Մեղքի մոռացութիւնը մեղքերից վատթարն է։*

ԱՅԱՔՍ.- *Ի՞նչ մոռացութիւն, պապ, երբ այն կողքիս է գիշեր ու զօր։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Դու քաւութեան ես ձգտում։*

ԱՅԱՔՍ.- *Ձգտո՞ւմ...։ Ինչ ես զգում եմ, դրա դիմաց չնչին է այդ խօսքը։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ամէն մէկը իր անցեալ վարք ու բարքի մէջ կարող է գտնել մեղքի սերմերը։ Օ՜, եթէ մենք փորում ենք մեր հոգին եւ դրա մոխիրների մէջ երբ կարողանում ենք տեսնել վատթարը, ուրեմն, կը փրկենք մեր հոգին։*

ԱՅԱՔՍ.- *Փրկութիւն մեզ։ Հոգիներ, ելէք, ելէք հոգիներ, պատմէք ձեր մեղքերը, ձեր դաժանութիւնները, ձեր փակ ու գոց դիտաւորութիւնները, որ ուղղեցիք ուրիշների դէմ եւ պատճառ դարձաք նրանց տառապանքներին։ Ելէք հոգիներ, կշռէք ձեր մոլեգնութիւնը, որ հիմա դրուած է զղջման նժարին։ Օ՜, եթէ ձեր զղջումը մեծ է իսկապէս։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ (ետ-ետ է գնում՝ յափշտակուած նայելով Այաքսին։ Յետոյ նայում է ռտիերի տակ, ուր գերեզմանի բացուած փոսից ձայներ են

digitised by A.R.A.R.@

լուում).- Նրանք կանչում են։ Ես չեմ փախչի, ես չեմ կարող հեռանալ իմ փոսից։ Ամէն մարդ կապուած է իր փոսին պարանով։ Կենդանի մարդկանց պարանն աւելի երկար է։ (Նորից յափշտակուած նայում է Այաքսին)։ Այաքս, ես գիտեմ...

ԱՅԱՔՍ.- Գիտե՞ս...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ես գիտեմ, Այաքս։

ԱՅԱՔՍ.- Այն գիշեր վիճակ գցեցին լոյները Աքիլլէսի զէնք ու զրահի համար եւ խարդախեցին։ Իսկ այն, ինչ մոլեգնութիւն է ծնում...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Գիտեմ։

ԱՅԱՔՍ.- Մեռած հովիւ աղջկայ աչքերը, դանդրամազ գլուխը, թոլ ու թալկացած մատները...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ես գիտեմ, Այաքս։

ԱՅԱՔՍ.- Թող, որ պատմեմ նորից ու նորից։ Բայց ո՛չ։ Դրանից վերքը նորից է բացւում։ Դրանից ցաւը չի ամոքւում։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Զգոյշ, հողով չլցնես փոսը։

ԱՅԱՔՍ.- Դու վախենում ես, որ փոսը հողո՞վ լցուի։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Փոսը հողով լցուել չի կարող։ Կենդանի մարդկանց փոսն էլ հողով չէ լցուած, նրանց փոսն էլ դատարկ է։ Դա սոսկ մեր երեւակայութիւնն է, թէ փոսը կարող է հողով լցուել։ Օ՜, փոսը դատարկ է, ամէն մէկի փոսը դատարկ է, ամէն մէկի տեղը պահուած է իր փոսում։ Ոչ մի փոս հողով լցուած չի լինում։ Իմ փոսն էլ է դատարկ, քո փոսն էլ է դատարկ։ Զգո՛յշ, չքանդես։ Դատա՜րկ թող մնայ, դատա՛րկ, դատա՛րկ, հասկանո՞ւմ ես, որ երբեք, երբեք չի լցուելու։

ԱՅԱՔՍ.- Օ՜, մարդ արարած, ի սէ՛ր աստծոյ, ափսոսում է իր փոսի համար։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ոչինչի համար չպէտք է ափսոսալ, ափսոսալ թերեւս արժէ փոսի համար։ Նա է սոսկ մնայուն՝ այս դատարկ փոսը, որ ինչքան փորես, այնքան աւելի դատարկ կը դառնայ։ Այս դատարկ փոսի հետ ի՛նչ նմանութիւն ունի կեանքի ունայնութիւնը։ (Ցանկարծ քարեր են պոկում։ Լսում է փոսի մէջ ընկող նրանց գղրդոցը)։ Զգոյ՛շ, Այաքս։

ԱՅԱՔՍ.- Նա ափսոսում է իր փոսի համար։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Փոսը լցուել չի կարող, ես միայն վախենում եմ իմ մտքից։ Թէեւ այդպէս լինել չի կարող, բայց յանկարծ ափսոսացի, որ կարող եմ զրկուել իմ փոսից։ Քարերը, որ ընկան փոսի մէջ, իմ մէջ ուժեղացրին վհատութիւնը։ Էլ ի՞նչ ունեմ ես աշխարհում բացի փոսից, եթէ այդ անիրաւ քարերը ծածկեն իմ փոսը, եթէ յանկարծ զրկուեմ նրանից...

ԱՅԱՔՍ.- Ի սէր աստծոյ, նա ափսոսում է։ Այդ ափսոսանքը խորթ չէ ոչ մէկին։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ես ափսոսում եմ զրկուելուց, իսկ դու՞...

ԱՅԱՔՍ.- Կենդանի մարդը երբեմն ափսոսում է, որ դեռեւս չունի փոս։ Կարծես շատ անգամ նա ուզում է, որ աւելի մօտենայ այդ օրը, երբ կ'առնի իր փոսը եւ կը պառկի։ Չէ՞ որ նա ի վերջոյ կը ննջի...։ Կը ննջի հանգիստ, չմտածելով, որ իրեն սպասում է առաւօտը, կեանքի դժոխքը, որը միայն մահուան հանգիստ նինջով կը դառնայ դրախտ։ Երբ մարդն այդեւս այդ հասկացել է, ինչու՞ չպիտի ափսոսայ, որ իրեն ուշացնում են տալ այդ պարգեւը։ Հանդերձեալ կեանքի յաւիտենական երանութիւնը։

digitised by A.R.A.R.@

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ինձ ինչու՞ կանչեցիր։ Որ տաս այն խրատը, ինչ ես արդէն լա՞ւ գիտեմ։ Իսկ քեզ համար գեռ շարունակուելու է այդ խրատը։*

ԱՅԱՔՍ.- *Կանչեցի՞, ե՞ս...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Հոգիդ կանչեց ինձ, ու եկայ։*

ԱՅԱՔՍ.- *Հոգի՞ս...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Դու չզգացիր էլ, թէ ինչպէս կանչեց հոգիդ։*

ԱՅԱՔՍ.- *Հոգի՞ս...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Կանգնիր։* (Աելի է մօտենում փոսին եւ սկսում իր ծէսը խորհրդաւոր կանչող շարժումներով։ Մշուշն սկսում է շարժուել փոսի մէջ, մշուշի մէջ աղօտ նշմարւում են դէմքեր, մարմնի մասեր, գոյներ, կայծեր)։ *Նրանք բոլորն էլ նոյն բանից են տանջւում։ Միայն կենդանի մարդիկ չէ, որ տանջւում են։ Դու էլ ես տանջւում։ Բոլորի հոգում նոյն Մտքերի Ոգին է։*

ԱՅԱՔՍ.- *Հովիւ աղջկայ թալկացած մատների թալկացած սարսուռն է...։ Մեռածի աչքերի ցաւոտ աշխարհն է...։ Սարսուռը դրած նժարին կրկնում է՝ քոնն էլ այդպէս եթէ ցաւէր, քոնն էլ այդպէս եթէ լինէր...։ Մեռածի աչքերի ցաւոտ աշխարհը իմ աչքերի մէջ նոյն ցաւն է լցնում, եւ նրա թալկացած մատների թալկացած սարսո՛ւռն է իմ մատներին տալիս...։ Կշեռքի նժարին դրել է երկուսիս՝ նրանն է, իմն է...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Այդ Մտքերի Ոգին է քո մէջ խօսողը։ Ինձ մօտ էլ է եղել այդպէս։ Եւ դու հիմա կարծես առընչւում ես քո հեռաւոր նախնիների զգացմունքներին։ Մտքերի Ոգին այդ կապը տանում է սերնդից սերունդ։ Քո Մտքերի Ոգին ժառանգաբար պիտի թրթռայ քո գաւակի մէջ, ինչպէս իմը քո մէջ։ Եթէ արարքի հիմքը մեղքի վրայ է դրուած, հոգում այն թողնում է իր նստուածքը՝ Մտքերի Ոգին։ Իմ հոգում էլ կայ այդ նստուածքը։ Դրանից մի բան, թւում է, ինձնից անցել է քեզ։ Պապից՝ թոռին, իսկ քո Մտքերի Ոգին կը խօսի քո գաւակի մէջ, եւ անցնելով սերնդէ սերունդ, ի վերջոյ, մի օր, երբ մարդն ուրիշի ցաւը զգայ՝ ինչպէս իր ցաւը, Մտքերի Ոգին կը լինի կատարեալ։*

ԱՅԱՔՍ.- *Նախնիներից ինձ է անցել, եւ հիմա իմ գործած արարքով աւելի է իմ մէջ ուժգին բաբախում Մտքերի Ոգին։*

Անեբեւոյթ տարերքը բնաւորուելով ցնցում է գետինը, եւ յանկարծ ուրուականը անհետանում է գետնի տակ։

ԱՅԱՔՍ.- *Նա անցաւ գետնի տակ, ես մնացի մի անչափ, անձեւ, մաշող անձկութեամբ, ես հիւսուածք դարձայ հառաչանքների, եւ վայ ու ողբ եմ բառ ու շարժումով։ Ո՛չ պաշտելի եմ, ոչ էլ բարեգութ, այլ՝ սուկ այնպիսի՛ն, որ դատաստանի ձեռքով մատնուած եմ Մտքերի Ոգուն։*

Ընկնում է, ծնկելով գետնին, կքուած հողին եւ ձեռքերի ափերով երեսը ծածկած։

(Շար. 1)

ՑՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԱՋԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՐԱՆԴ

ԱՆԿԻՒՆՆԵՐ

Օ՜, հանդիպել են նրանք քարուղում.
Թէ յարատեւի տաք սէրը նրանց
Ու պտղի, ինչպէս դեղձենին կրակ,
Ուրեմն նրանք
Հանդիպել են այն անկիւնի վրայ,
Ուր ծաղիկներ են ծախում բազմերանգ։

Օ՜, հանդիպել են նրանք խաչուղում.
Թէ խաչուի նրանց սէրը բովանդակ,
Ու տաք արիւնը կաթկըթայ,
Որպէս վերջին մայրամուտ,
Ուրեմն նրանք
Հանդիպել են այն անկիւնի վրայ,
Ուր եկեղեցու
Պարիսպներն են մութ։

Իսկ հանդիպե՞լ են նրանք երբեւէ.
Թէ չեն հանդիպել,
Ուստի անցել են
Երրորդ անկիւնից,
Ուր գինետուն կայ մի կիսախաւար,
Եւ որտեղ մարդիկ, խենթ ու խելագար,
Խմում են կեանքի, կեանքի անհամար
Խաղերի համար։

digitised by A.R.A.R.@

Իսկ թէ անցել եմ, անցել անպայման
Ու իրար տեսել,
Սակայն մի՛ վայրկեան,
Տեսել մի վայրկեան՝
Եօ՛թ յաւերժութիւն,
Ծաղկել եմ, խաչուել
Ու նաեւ հարբել իրար հայեացքում,
Ուրեմն անցել եմ այս անկիւնից ցուրտ,
Ուր կանգնել եմ ես
Ու երգ եմ ասում։

20-9-90, Հայկաշէն

ՎԱՐԱՆԴ

digitised by A.R.A.R.@

Իմաստական Հարուստ

ՄԵՐԺՈՒԱԾ ԳՈՐԾԵՐ...

Սփիւռքի ընթերցող ու մտաւորական շրջանակներուն ոչ-ծանօթ հայրենի երկու անուն ունինք **«Բագին»**ի ներկայ համարին մէջ, առաջինը՝ կանխող էջերուն թատերական գործ մը ստորագրած Յովհաննէս Աղաջանեան, իսկ երկրորդը՝ հետագայ էջերուն լեզուական տեսութիւն մը պարզած Ռաֆայէլ Համբարձումեան:

Պարզ զուգադիպութեամբ մըն է, որ նոյն թիւին մէջ կ'երեւին անոնք, այլ տարբեր մարզերու մէջ մտաւորական իրենց բախտը փորձած ըլլալով հանդերձ, հրատարակչական առումով բախած են մերժողական նոյն վերաբերումին:

Քիչ անդին դուք տեսաք Յովհաննէս Աղաջանեանի տրտունջը, ահաւասիկ եւ Ռաֆայէլ Համբարձումեանի տասնամեայ դառնութեան լուռ վկայութիւնը.

«Այս յօդուածը մի քանի տարի դեզերել է Հայաստանի բոլոր թերթերում եւ ամսագրերում: Ոչ ոք չի տպագրեց:

«Խնդրում եմ աչքի անցկացնէք, եթէ յարմար գըտնէք, տպագրէք ԲԱԳԻՆի մէջ»:

Աչքէ անցուցինք, ուշի ուշով եւ, ինչպէս կը տեսնէք, տպագրութեան անյարմար չգտանք, ինչպէս տպագրութեան անյարմար չգտանք Աղաջանեանի թատերգութիւնը: Բացարձակ նորութիւն չէ անշուշտ մէկը ու յայտնութիւն չէ միւսը, բայց նաեւ նորութիւններ յայտնաբերելու եւ յայտնութիւններու հանդիպելու ճամբան այս չէ: Մարդոց առջեւ թումբ կանգնելով չէ, որ բախտը կը ժպտի տուեալ ազգին: Մշակութային նուաճումները կը խմորուին ու կը ձեւաւորուին բաց ասպարէզներու մէջ եւ այդ պատեհութիւնը, ցաւօք, զլացուեցաւ մեզի ամբողջ եօթանասուն տարի, առանձնաշնորհեալ հերթական խմբակներու մականին տակ:

Եւ մշակութային բոլոր մարզերուն մէջ: Անոնց պատմութիւնը պիտի գրուի անշուշտ օր մը: Մինչ այդ՝ **«Բագին»** բաց պիտի պահէ իր էջերը այս կամ այն իմաստով որեւէ արժէք ներկայացնող մերժուած բոլոր գործերուն առջեւ...

digitised by A.R.A.R.@

Ռ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ԱՊԱԳԱՅ ՈՒՂԻՆ

Ց. 06. 82թ.
Երեւան

Մեծարգոյ տիար Վարդգէս Պետրոսեան

Գրական լեզուն միշտ էլ սուր վէճեր յարուցած քննարկումների առիթ է տուել: Ձեզ քաջ յայտնի են այդ մասին գրած Տէրեանի, Թումանեանի, Զարեանցի, Դեմիրճեանի եւ միւսների յօդուածները:

Որքան գիտեմ, վերջին մի քանի տասնամեակում գրական լեզուի խնդիրը, որպէս գրական երկի հում նիւթ, առանձնապէս մեծ սրութեամբ չի արծարծուել մեր մէջ՝ թէեւ այն արժանի է ամենալուրջ խօսակցութիւնների:

Իմ կարծիքով պէտք է անյապաղ սկսենք այդ խօսակցութիւնը: Ձեզ ներկայացուող նիւթը հենց այդ նպատակով է գրուած:

Խնդրում եմ աչքի անցկացնէք սա եւ եթէ Ձեզ հետաքրքիր թուայ, թոյլ տամ Գրողների Միութիւնում կարդամ բանավէճ բացելու ակնկալիքով:

«Գիտէ՞ք արդեօք, որ գրականութիւնը... ապրումի հանդէս է, խտացեալ ձեւերու տակ մեզի բերելու հոգիները մեզ կանխողներուն»:

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Հայ գրականութեան եւ գրական լեզուի արդի վիճակը եւ մանաւանդ զարգացման միտումը պատկերացնելու համար մի թռուցիկ հայեացք ձգենք մեր գրականութեան պատմութեան վերջին 200 տարուայ վրայ: Այս հայեացքը պէտք է, որովհետեւ, մեր կարծիքով արդի հայ գրականու-

digitised by A.R.A.R.@

թիւնը եւ գրական լեզուն այնպիսի խմորումների մէջ են, որը յատուկ էր անցեալ դարի կէսերին։

Ուստի՝ պիտի փորձենք հայ գրականութեան պատմութեան լոյսի տակ քննել այսօրուայ գրականութիւնում տիրող, մեր կարծիքով, անցման փուլը։

Օշականի վերյիշեալ խօսքը այսօրուայ գրականութեան համար ես այսպէս կը ձեւափոխէի՝ «մեզի մեզ յաջորդողներին կտակելու»...

Գրաբարալեզու գրականութիւնը մեռաւ, որովհետեւ այդ լեզուն չկարողացաւ հաշտուել ազգի ՏՈՒԵԱԼ ՎԻՃԱԿԻ հոգեբանութեանն ու ԼԵԶԻՆ։ Հոգեվիճակը պատկերացնելու, մարդը կերպաւորելու, մեզի մեզ յաջորդողներին կտակելու, մեզ հասկանալի անելու եւ մեզ դաշնակցելու համար երկու կարեւոր հանգամանք է պէտք.

ա) Գրականութեան նիւթը վերցնել այսօրից (կամ անցեալից վերցրած նիւթը արդիացնել).

բ) Այդ նիւթը ԱՐՏԱՑԱՏԵԼ խօսակցական լեզուի մտածողութեամբ։

Այս երկու հանգամանքներն են գրականութեան ազդեցութեան, ընկալունակութեան ու տարածման գլխաւոր պայմանները։

Միջին հայերէնից յետոյ Մխիթարեանների մշակած գրականութիւնը գրաբարը պահելու ճիգն էր. ուստի՝ այն մնաց ժամանակից դուրս եւ ինչպէս հարկն է չմերուեց ժամանակի մարդու արեանը։ Այդ գրականութիւնը մեր մէջ առաջադրեց հպարտութիւն, ազգային արժանապատուութիւն, ԱՐԹՆԱՑՐԵՑ մեր գրականութիւնն ու մշակոյթը հերկող մի ամբողջ սերունդ, մեզ կապեց մեր անցեալին, մի խօսքով՝ ամէն ինչ արեց, բացի մեր մէջ ոգու իսկական թիւրտոցներ ու սարսուռներ, սրտի բերկրանք ու գեղագիտական արբունք առաջացնելուց։ Որովհետեւ թէ՛ նիւթն էր ժամանակից դուրս, դարերի խորքից եկամուտ, թէ՛ լեզուամտածողութիւնը[1] եւ թէ ոգին։

Լեզուամտածողութեան տեսակէտից նոյնն էր նաեւ Ալիշանի, Սմբատ Շահազիզի եւ այլոց նորաբողբոջ աշխարհաբարը գրապաքարի սկզբին։ Այդ աշխարհաբարը թէ՛ հասկանելիութեան իմաստով եւ թէ մանաւանդ մտածողութեամբ, մեծ առաւելութիւն չունէր գրաբարի հանդէպ։ «Վէրք»ի հրատարակումից սկսուող վերջամուտ գրականութիւնը մերժեց թէ՛ գրաբարը եւ թէ աշխարհաբարը. եւ հենց խօսակցական լեզուի ու բարբառային մտածողութեամբ ստեղծեց հզօր գրականութիւն (Պարոնեան, Թումանեան)։

Հետեւաբար՝ գրականութիւնը այնժամ է դառնում վաւերական, երբ լեզուն ու իր արտայայտած նիւթը, պատկանելով ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆԸ, ինչպէս Կոմիտասը կ'ասէր՝ «համբուրում են իրար»։

Հին գրականութիւնը կենսական է նրանով, որ ժամանակի մտածողութեան, լեզուի ու ապրելակերպի պատկերը լինելով՝ «խտացեալ ձեւերի տակ մեզի բերում է հոգիները մեզ կանխողներուն», այսինքն՝ մեր այսօրը տակ մեզի բերում է հոգիները մեզ կանխողներուն։ այսինքն՝ մեր այսօրը կապում է հնին, ստեղծում է այն, ինչին ԱՐԻՆԱԿՑՈՒԹԻՒՆ են ասում։ Իր դարաշրջանի եղծուած ոգին ներկայացնող գրական երկը ո՛չ արժէք ունի, ո՛չ ապագայ։

Բայց գրականութիւնը որքան էլ կեղծ, որքան էլ չինծու լինի, անհնար է, որ ԺԱՄԱՆԱԿԻ չունչը չպարունակի։ Խօսքն այստեղ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒԱԾ ՈԳԻՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՁԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ է։ Որքան մեծ եւ խորին է այդ ընդգրկումը, այնքան հզօր է այն եւ այնքան ՏԻՐՈՒՆԱԿ։

Սովորաբար անցման փուլերում, աւելի ճիշտ՝ պատմական զարգացման հերթական փուլի քայքայման եւ նոր փուլի սաղմնաւորման շրջա-

digitised by A.R.A.R.@

նում հասարակութիւնն ինքը երերուն է։ Որովհետեւ հինը ծերացել է, իսկ նորը դեռ չի ծնուել։ Այսպիսի փուլերում երերուն է նաեւ գրականութիւնը։

Այս երեւոյթը շատ լաւ է երեւում կլասիցիզմից յետոյ, մինչեւ ռոմանտիկներն ընկած ժամանակի քննութիւնից (Զամուռճեան, Խաչ. Միսակեան, Նիկ. Զորոյեան, Ստ. Ոսկան, Գր. Չիլինկիրեան, Սմբ. Շահազիզ, Գր. Օտեան, Ռ. Պատկանեան, Յովհ. Յովհաննիսեան եւ այլք)։

Այժմ տեսնենք ինչ էր կատարւում նոր գրականութեան սկզբնաւորման շրջանում։

Այս հարցին պատասխանելու համար, ինչպէս ասուեց, պէտք է անպայման հաշուի առնենք հայ ժողովրդի պատմութեան զարգացման շրջափոխութիւնը, աւելի ճիշտ՝ միտումը, որը ընդհանրութիւններ եւ աղերսներ ունենալով համաշխարհային պատմութեանը, ունի խիստ իւրայատուկ, աւելի ճիշտ՝ ՄԵԶԱՅԱՏՈՒԿ հանգամանքներ, որով դառնում է հայոց պատմութիւն, իսկ դրա հոգեխառնութիւնը՝ հայ գրականութիւն։

Ո՞րն էր միտումը։

ԺԷ դարակէսի հայը իր կենցաղով, մտածողութեան ձեւով ու բոլոր ժամանակների մարդուն յատուկ «յաւերժական երեւոյթների» հանդէպ ունեցած ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՈՎ շատ քիչ էր տարբերւում ԺԹ դարակէսի հայից։

1930 թ. հայը կենցաղավարութեամբ եւ հոգեբանօրէն մօտաւորապէս այնքան էր տարբերւում 1880ական թուերի հայից, որքան ԺԷ դարակէսի հայը ԺԹ դարասկզբի հայից։

Այսօր մենք 1960ական թուականների հոգեբանութիւնից այնքան ենք տարբերւում, ինչքան 1930 թ. հայը 1880ական թուերի հայից։

Այսինքն՝ որքան մօտենում ենք 1985 թուին, այնքան աւելի կարճ ժամանակում ենք փոխւում մեր կենցաղի ու բնաւորութեան բովանդակ համալիրով։

ԺԹ դարակէսին, երբ Դուրեանը ծնուեց, մեր 90 տոկոսը կա՛մ գիւղացի էր, կա՛մ արեւելեան տիպի քաղաքացի եւ այդպէս մնաց մինչեւ մեր դարի սկիզբը։ Փաստօրէն մենք ունէինք իւրայատուկ, արեւելեանից բաւական տարբերուող գիւղ, բայց չունէինք ուրիշներից ՏԱՐԲԵՐՈՒՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ։

Ազգային դէմք ունեցող քաղաքի ու քաղաքացու բացակայութիւնը ունէր պատմական պատճառներ։

Քաղաքային աշխոյժ ու տեւական կեանք մշակած միջնադարեան Հայաստանը (լիշենք Անին, Արծնը, Կարինը, Կարսը, եւայլն) պետականութեան կորստից յետոյ կորցրեց նաեւ մօտ 10-12 դար մշակուած-լցկուած ու ազգային իւրայատուկ դէմք ստացած քաղաքը։

Սելջուկների ներխուժումից (1064) այս կողմ եւ մանաւանդ Կիլիկիայի հայոց թագաւորութեան անկումից (1375) յետոյ, արեւելեան ցեղերը քայքայեցին հայկական քաղաքը։ Կործանուած քաղաքների հետ քանդուեց նաեւ հայկական քաղաքային հոգեբանութիւնն ու գեղագիտութիւնը։ Այսինքն՝ մի քանի դարում հայկական քաղաքներում արմատաւորուեց արեւելեան կացութիւնը։ Այս երեւոյթի ազդեցութիւնը ակնյայտ է դառնում, երբ քննում ենք այդ դարաշրջանի հայ բովանդակ մշակոյթը՝ ճարտարապետութիւնից ու մանրանկարչութիւնից մինչեւ երաժշտութիւն եւ գրականութիւն։

Հայ ընդօրին մշակոյթը 15-18րդ դարերում համալրուեց արեւելեան գոյներով՝ առանց սակայն խաթարելու մեր ընդհանուր ոգին ու գեղագի-

digitised by A.R.A.R.@

տութիւնը (միջին հայերէնի քերթութիւնը, թէեւ լեզուի ու ոճի մէջ եղած բազմաթիւ արեւելեան տարրերի, մենք համարում ենք հայ գրականութիւն։ Նոյնը նաեւ ճարտարապետութեան, խաչքարագործութեան, նկարչութեան եւ մեր արուեստի միւս ճիւղերի առումով)։

Քանի որ մեր խօսքը գրականութեան մասին է, իսկ գրականութեան հումքն ու ատաղձը լեզուն է, տեսնենք ի՞նչ կատարուեց։ ԺԲ-ԺԳ դարից ձեւաւորուեց միջին հայերէնը՝ հայոց նոր գրական լեզուն, որը գրաբարին զուգընթաց դիմացաւ մինչեւ ԺԸ դարավերջ։ Միջին հայերէնի լեզուն փաստօրէն արեւելեան բառերի ու դարձուածքների ընդգծուած կնիք ունի։ Կոստանդին Երզնկացու, Յովհաննէս Թլկուրանցու, Գրիգոր Ախթամարցու, Ֆրիկի եւ միջնադարի միւս տաղերգուների ու քերթողների գրաբարախառն լեզուի հետ կողք կողքի զարգանում էր նաեւ այսպէս կոչուած ոչ-պաշտօնական, ժողովրդական-գուսանական, իսկ ԺԶ դարից՝ նաեւ աշուղական ոտանաւորը։ ԺԷ-ԺԸ դարերից այդ երկու երակները միաւորւում են մէկ միասնականի մէջ՝ մեր գրականութեանը պարգեւելով Նաղաշ Յովնաթանի ու Սայաթ-Նովայի նման մեծութիւններ, որոնցից առաջինին կարելի է հայ նոր գրականութեան սկզբնադիրը համարել։

Միջին հայերէնին զուգընթաց ծաղկում էր նաեւ գրաբարալեզու մատենագրութիւնն ու գրականութիւնը եւ գեղջուկ բանահիւսութիւնը։ Ընդորում՝ գրաբարալեզու մշակոյթը ԺԸ դարից սկսած բաւական լուրջ յաջողութիւններ է արձանագրում թէ՛ հասարակական ու բնական գիտութիւնների եւ թէ գրականութեան մէջ։

Գրաբարախառը միջին հայերէնը չի դիմանում մրցակցութեանը եւ իր վերջին խոշոր դէմքը ծնելուց յետոյ (Քուչակ), հետզհետէ մասնատւում է ժողովրդական ու գուսան-աշուղական ոտանաւորի եւ գրաբարի մէջ եւ վերջնականապէս դադարում ԺԷ դարակէսերին։ Գուսանը, աշուղը եւ միջին հայերէնով գրող բանաստեղծը իր մէջ ձուլած Նահապետ Քուչակը փաստօրէն շրջադարձիկ երեւոյթ է միջին հայերէնի ու աշուղական նորածագ գրականութեան սահմանագծում՝ դառնալով մի տեսակ կամուրջ միջին հայերէնից աշուղութեան՝ շօշափելիօրէն նպաստելով վերջին տեսակի գրականութեան ձեւաւորմանը։ Քուչակից յետոյ մենք ունէինք արեւելեանից տարբերուող գիւղ, բայց չունէինք ուրիշներից տարբերուող ԱՌԱՆՁՆԱՑԱՏՈՒԿ քաղաք եւ քաղաքացի։

Այսպիսով՝ ԺԷ դարից միջին հայերէնի գրականութեանը հերթափոխելու է գալիս աշուղական գրականութիւնը[2], որը փաստօրէն վիթխարի նշանակութիւն ունեցաւ աշխարհաբարի արմատաւորման գործում։ Փաստօրէն աշխարհաբարը, որը պէտք է ԺԹ դարի երկրորդ կէսին յայտնի դուրս գար, Խ.Աբովեանից մէկ-մէկուկէս դար առաջ գրականութիւն բերին աշուղները։

Հայկական արեւելահակ քաղաքային մտածողութեան արդիւնք միջին հայերէնի եւ դրանից յետոյ եկող աշուղականի հետ զուգաքայլ զարգանում էր գուտ գեղջկական, կամ ինչպէս ընդունուած է ասել՝ ժողովրդական գրականութիւնը՝ բանահիւսութեան տեսքով։ Այս վերջին անգիր գրականութիւնը ամենաազգայինն էր, որովհետեւ ծաղկում էր արեւելեան կացութաձեւից անխախտ հայ գիւղում։

ԺԸ դարից սկսած Մխիթարեանք սկսեցին արեւելեան հեղինակագուրկ քաղաքակրթութեան տեղակ եւրոպական քաղաքականութիւնը մեր մէջ տարածել՝ երբեք չմոռանալով գրաբարալեզու հայ մշակոյթի վեր հանումն ու տարածումը։

digitised by A.R.A.R.@

Նրանց նպատակը ազգը արեւելեան հոգեբանական ազդեցութիւնից ազատագրելն էր՝ հասունացնելու համար ազգային ազատագրութեան հեռահար գործը։

Իրօք՝ հայկական քաղաքները արեւելեան կացութիւնին անցնելուց եւ ազգային դէմքը կորցնելուց յետոյ, հայ ոգին, խառնուածքն ու բնաւորութիւնը սերունդների համար գիւղը պահեց։

Ահա թէ ինչու ԺԹ դարի գարթնքի սերունդը, Աբովեանից սկսեալ, հայ ոգին վերազտնելու դեղերումներում ուշքը բեւեռեց անհամեմատ անաղարտ գիւղի վրայ։ Ընդ որում՝ Զարթնքի սերունդը հենց սկզբից երկու ճիւղաւորում ունէր. առաջին ճիւղը համալրում էին Մխիթարեան եւ Էջմիածնական դպրոցն անցած մտաւորականները, որոնք սկսեցին պեղել հայ գիւղը՝ ազգային արժէքները վեր հանելու համար (Գ. Սրուանձտեանց, Խ. Աբովեան եւ այլք)։ Երկրորդ թեւի ներկայացուցիչները, հիմնականում Պոլսի, Թիֆլիսի եւ այլ քաղաքների գրական ասպարէզը գլխաւորող գրողներ (Պէշիկթաշլեան, Նալբանդեան, Սունդուկեան, Դուրեան, Շահազիզ եւ այլք) ճիգեր էին գործադրում «յարութիւն տալու» հայկական ազգային քաղաքին։

Առաջին թեւի հետեւորդների լեզուն եւ միջավայրը հայ գիւղն էր (Թումանեան, Մնձուրի, Պոռչեան եւ այլք), երկրորդ թեւի հետեւորդները մշակում էին մեր գրականութեան քաղաքային ճիւղը (Երուխան, Զօհրապ, Նար-Դոս, Շիրվանզադէ)։

Պոլիսը եւրոպական իմաստով մեր առաջին քաղաքն է, թէեւ տարբեր գաւառներից հաւաքուած հայութիւնը այն շատ է նմանեցնում Թիֆլիսին։ Դա նշանակում է, որ Պոլսի հայութիւնը ապրում էր քաղաքային այն կեանքով, որին Երեւանը հասաւ մեր դարի 50-60ական թուերին։ Եւ ահա Պոլսում ԺԹ դարի 60ական թուերից ծնուեց այդ քաղաքային գրականութիւնը։ Պէշիկթաշլեանը առաջին հայ քաղաքային բանաստեղծն էր (ես բերում եմ վաւերական քերթողների անունները), նրա քերթութիւնը սակայն դեռ չէր ձերբազատուել Մխիթարեան ՄՏԱՒՈՐԱԿԱՆ, այսինքն՝ գրքունակ լեզուից (գրաբար) եւ մտածողութիւնից։

Դուրեանը մի քայլ առաջ անցաւ իր տաղանդաւոր նախորդից։ Հանճարեղ պատանին դասական դարձաւ մեր «արուեստագէտ» սերնդի կրկէս իջնելուց յետոյ (1890ական թուեր)։ Երբ 1908 թ. տպուեցին Մեծարենցի ու Տէրեանի առաջին գրքերը, Դուրեանը ժամանակակից բանաստեղծ էր, այսինքն՝ ժամանակի մէջ էր։

Արեւելահայ գրականութեան մէջ եւրոպական չափանիշներով առաջին քաղաքային խոշոր բանաստեղծը Տէրեանն էր՝ թէ՛ մտածողութեամբ եւ թէ մանաւանդ լեզուով։ Տէրեանը մեզ համար ժամանակակից էր եւ այդպիսին մնաց մինչեւ Պարոյրի «Մարդը ափի մէջ»ը։ Պարոյր Սեւակը մրցեց Տէրեանի հետ, բայց չկարողացաւ հնացնել ԺԹ դարի մեր ոսկեդարի արդիւնք եւ այդ ոսկեդարը փակող Զարենցին։ Տէրեանը 50-60ական թուերին «ուտում էր», որովհետեւ Զարենցը դեռ նոր էր տպուել, իսկ Երեւանն էլ դեռ չէր վերածուել իսկական քաղաքի։ Քանի դեռ Երեւանը եւրոպական իմաստով չէր դառել քաղաք։ Տէրեանը մտաւորականութեան ամենասիրելի բանաստեղծն էր, որովհետեւ Երեւանը նոր էր մտնում Տէրեանի քաղաքին։ Այսինքն՝ տարեց տարի շատանում էին ոչ թէ քաղաքաբնակները, այլ՝ քաղաքային բնաւորութիւն եւ մտածողութիւն ունեցող քաղաքացիները։

Քաղաքացի դարձած հայութիւնը Տէրեանին մարսելուց յետոյ միայն ընկալեց վիթխարի Զարենցին։

digitised by A.R.A.R.@

Որպէս ժամանակների խաչմերուկում բուսնած հանճար, Չարենցը, լինելով ԺԹ դարի ոսկեդարի վերջին մեծ բանաստեղծը, վերածնութիւնն էր միջնադարեան հայ-ազգային-քաղաքային մտածողութեան, խառնուածքի, լեզուամտածողութեան ու հոգեբանութեան։ Սա է Չարենցին Ժ-ԺԶ դ. հայ միջնադարեան քերթութեանը կամարող հանգամանքներից գլխաւորը։

Չարենցից յետոյ ազգը բուժում էր Առաջին աշխարհամարտին ստացած ողնաշարի ջարդուածքը։ Առաջին աշխարհամարտին կէսը կորցրած հայութիւնը, որպէս հոգեբանական-մշակութային միաւոր, փաստօրէն զըլխատուած էր։ Տարբեր վայրերից Հայաստան հաւաքուած ժողովուրդը այդ փուլում նախ ձեւաւորուած չէր մի ընդհանուր հոգեբանութեան, լեզուամտածողութեան, կենցաղի ու սովորոյթի մէջ, երկրորդ՝ ապրում էր արագ քաղաքայնանալու փուլ։ Այդ տարիներին Երեւանի եւ միւս քաղաքների բնակչութիւնը աճում էր գիւղացիութեան, տարբեր հանրապետութիւններից, ինչպէս նաեւ հայրենադարձութեան հաշուին (1926 թ. Հայաստանի բնակչութեան 81 տոկոսն էր գիւղացի, 1981 թուին՝ 30 տոկոսը)։ Երեւանը եւ միւս քաղաքները ընդունում էին տարբեր բարբառներով խօսող (այն է՝ տարբեր մտածողութիւն ունեցող) բնակչութիւն, որը նկատելի ազդեցութիւն թողնելով Երեւանի (իմա՝ քաղաքների) վրայ, այնուամենայնիւ ձուլւում է նրա մէջ։ Բնակչութեան քաղաքայնացումը առաջ է բերում բարբառների միաձուլում եւ համակենտրոնացում։ Տարասեռ բնաւորութիւնների ու խօսուածքների խառնարան քաղաքը, նրա երերուն բարբառը եւ աշխարհի չորս ծագերից ու Հայաստանի տարբեր շրջաններից ներմուծուած կենցաղն ու սովորութիւնները սկսում են քանդել գիւղականնահապետականը։ Դա էր պատճառներից մէկը, որ դիտարկուող փուլը Բակունցից եւ Չարենցից յետոյ նրանց հաւասար գրականութիւն չի ծնում։ (Սփիւռքահայ գրականութիւնը ձեւաւորած Վ. Թէքէեանը, Մ. Զարիֆեանը, Մնձուրին, Համաստեղը եւ միւսները, Աւ. Իսահակեանի, Չարենցի, Բակունցի ու Երիազի նման անցեալ դարավերջի հոգեւոր զարթօնքի սերունդից էին եւ չեն մտնում 1910-15 թուերից սկսող սերնդի մէջ)։ 30-50ական թուերի սովետահայ գրականութեան ասպարէզը հիմնականում մնում է ֆոլկլորային միջակ մտածողութեան ոտանաւորին։ Հայ գրականութիւնը կտրւում է ընից։ Խախտւում է օրինաչափ զարգացումը։ Բայց դա շատ կարճ տեւեց։

Երկրորդ աշխարհամարտից յետոյ, 50ական թուերից սկսած, նկատւում է հոգեւոր զարթօնք, այսինքն՝ նորածագ գրականութիւնը ակունքներին շաղկապելու միտումներ։

Հայ արձակը աւելի յաճախ է անդրադառնում «պապերին ու տատիկներին», դրանով իսկ անցեալի արժէքների հանդէպ ժխտական մօտեցման դէմ մի իւրայատուկ հաւասարակշռիչ միտում հանդէս բերելու ձգտումով։

Քերթութիւնը շուտով գնում է արձակի ետեւից։

Ահա այդ խմորումների ժամանակ է, որ այդ նոյն ժամանակը Պարոյր Սեւակին տաղանդը նետեց հայ քերթութեան ալգեան ախոռները խորթելու տաժանքին։

Պարոյր Սեւակի մի խոշոր մասը սպառուեց քաղաքացիական անկեղծ, ուստի՝ կաղապարագերծ շեշտերը գրականութիւն ետ բերելու վրայ։ Նրա այդ տեսակի ոտանաւորները, լինելով դարի տրուփը ժամանակներին կտակող երկեր, որպէս գրական-գեղարուեստական արժէք, բանաստեղծի իսկ խօսքերով, չեն կարող մրցել իր լաւագոյն բանաստեղծութիւնների հետ։

digitised by A.R.A.R.@

Իրօք, այս տեսակի գրական երկերը, որպէս հրապարակախօսութիւն, օդի նման պէտք լինելով ՏՈՒԵԱՎ ժամանակին եւ հսկայական դեր խաղալով հասարակութեան գեղագիտական ու քաղաքացիական ըմբռնումները կազմակերպելու մէջ, միաժամանակ դրանց միշտ էլ վիճակուել է տուեալ երեւոյթը ծնող ժամանակի հետ էլ գնալ ժամանակների ծոցը եւ դատապարտուել անհետ կորչելու հայ գրականութեան վաւերական արժէքների շարքից։

Պարոյր Սեւակի քերթութիւնը գնահատելու եւ արժեւորելու տեսակէտից խիստ կարեւոր է նկատի առնել եւս մի երկու հանգամանք։

Ինչպէս ասացինք, եւ կ'ասենք էլի, 1960ական թուերի քաղաքաբնակ հայութիւնը դեռեւս գիւղացուց քաղաքացի անցնելու ընթացքում էր։ Այսինքն՝ ո՛չ քաղաքացի, ո՛չ գիւղացի, այլ՝ երկուսի իւրայատուկ խառնուրդ։ Ազգի նման վիճակը հայ գրականութեան վրայ չէր կարող վճռական ազդեցութիւն չունենալ։

Պարոյրը, իբրեւ բանաստեղծ, ո՛չ գիւղացի էր, ո՛չ քաղաքացի, այլ այս երկուսի խառնուրդն էր՝ Պաղաբայիմ մտածողութեամբ (նոյնը կարելի է ասել նաեւ արձակի առումով Հրանտ Մաթեւոսեանի 60ական թուերի գործերի վերաբերութեամբ)։

Իրօք, Պարոյր Սեւակը, թէեւ Հայաստանեայց հայութեան մէկ քառորդը կազմող ժողովրդի՝ Երեւանի բնակչութեան բանաստեղծն էր, բայց հոգեբանութեամբ ոտից գլուխ գիւղացի, որովհետեւ որպէս անհատ ձեւաւորուել էր գիւղում։ Նրա հիմքը գիւղն էր եւ նա այդ հիմքի վրայ էր ձեւաւորուել որպէս քաղաքացի։

Դա շատ լաւ երեւում է իր 50-60ական թուերի քերթութեան հոգեբանական մանրաղնին քննութիւնից, որտեղ շատ ուշադիր ընթերցողը երբեմն կը նշմարէ քաղաքացի երեւալու թոյլ ձգտման չորշոփներ։

Հետեւաբար, Պարոյրը հանդէս իջաւ այն ժամանակ, երբ ժողովրդի կէսը քաղաքացի դառնալու, եւ այն էլ Եւրոպայից տարբեր հայկական քաղաքացի դառնալու ընթացքի մէջ էր, տաղմնաւորման փուլում։ Այսինքն՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ դարձող քաղաքաբնակ հայութիւնը, հնից նորին անցնելու ճանապարհը դեռ չէր կտրել եւ բարուրի մէջ էր։

Ուստի՝ Պարոյր Սեւակը ՆՈՐ ՍԱՂՄՆԱՒՈՐՈՒՈՂ ԵՐԵՒՈՅԹԻ՝ Եւրոպայից տարբեր ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ձեւաւորման շրջանի քերթող էր։

Հայ ժողովրդի ամենամօտ անցեալը լցնող այս դարձակէտային երեւոյթը քննելու պարագային մենք ստիպուած պիտի լինէինք չեղուել մեր հիմնական նիւթից, ուստի՝ նշենք միայն հետեւեալը։ Այս խիստ բարդ, խճճուած եւ երերուն երեւոյթը մեր գրականութեան հետագայ պատմաբաններին պէտք է պատրաստ պահի ամենալուրջ եւ անսպասելի հետեւոյթների։

☆ ☆ ☆

Այժմ անցնենք մեր գրականութեան այսօրին։

Այսօրուայ գրականութեան զարգացման միտումը ընկալելու համար, ՊԱՐՏԱԴԻՐ է ժողովրդի տուեալ վիճակի ընկերաբանական հետազօտութիւնը։

Ամենաթռուցիկ հայեացքից երեւում է, որ մենք այսօր կրկին նմանւում ենք ԺԹ դարակէսին։ Հայութիւնը այսօր անցման փուլում է։

Մեր ժողովրդի կեանքում ԱՐՄԱՏԱԿԱՆ լեղաշրջում է կատարուել։ Ազգի ապրելակերպը եւ կենցաղը փոխուել է։ Ազգը հոգեբանօրէն չուռ է եկել։

digitised by A.R.A.R.@

ԵԹԷ 100 տարի կամ 60 տարի առաջ մեր 40 տոկոսն էր քաղաքացի (իմա՝ քաղաքային հոգեբանութեան կրող), այսօր մօտ 80-85 տոկոսը ապրում է քաղաքային կեանքով (ես ի նկատի ունեմ նաեւ Հայաստանի քաղաքամերձ շրջանների գիւղացի երիտասարդութեանը, որոնք փաստորէն վաղուց են ի տեսութիւն ասել նահապետական կեանքին, բարքերին, ապրելակերպին ու հոգեբանութեանը)։ Դարասկզբի իրագործութիւններով մօտ 50 տարի արհեստականօրէն կասեցուեց հայկական քաղաքի ձեւաւորումը։ Այսօր քաղաքը իր մէջ է ձուլել գաղթականութիւնը, տարբեր շրջանների ազգագրութիւնն ու կենցաղը։ 70ական թուականներին քաղաքային, եւ անպայման ՀԱՑԿԱԿԱՆ քաղաքային հոգեբանութիւնն ու լեզուամտածողութիւնը, տարբեր բարբառներն ու կենցաղավարութիւնը եւ դրանց հիմքի վրայ ծնուած կացութիւնները մերում է մէջը։ Մեր կենցաղը ներթափանցած եւրոպական արուեստն ու գրականութիւնը եւ հոգեբանական շերտերը աւելի ու աւելի են ընդգծում քաղաքային կեանքի տիրապետութիւնը։ Այսօր մենք ունենք Հայաստանի բնակչութեան մի խոշոր զանգուած (մօտ 30 տոկոս), որն արդէն քաղաքային հոգեբանութեան, կենցաղի ու դրանց վրայ յենուած՝ խիստ առանձնայատուկ լեզուամտածողութեան արգիւնք է[3]։ Եւ այդ 30 տոկոսը ԱՆԸՆԴՀԱՏ աճում է։

Այսինքն՝ Հայաստանի քաղաքներում ձեւաւորուել է մի զանգուած, որը ԱՐՄԱՏԱԿԱՆ տարբերութիւններ ունի եւրոպական իմաստով քաղաքացուց։ Այն է՝ ձեւաւորուել է հայկական առանձնայատուկ եւ միւսներից ՀՈԳԵԲԱՆՕՐԷՆ տարբերուող հայկական քաղաքն ու քաղաքացին։ Այդ քաղաքացին ձեւաւորուել է Երեւանի բնակչութեան մի քանի, եթէ կարելի է ասել, «ազգագրական» խմբերի խառնուրդից, որոնք իրենց հերթին համադրոյթ են հանրապետութեան ու աշխարհի տարբեր վայրերից եկած բնակչութեան (այդ «ազգագրական գոտիների» մասին՝ քիչ յետոյ)։

70ականների վերջերին ԵՒՐՈՊԱԿԱՆԻՑ ՏԱՐԲԵՐՈՒՈՂ հայկական քաղաքային մտածողութիւնը, հոգեբանութիւնն ու կենցաղը գառնում են՝ տիրապետող, որին անընդհատ միանում են բոլոր ոճերն եւ ձուլում նրա մէջ։

ՀԱՑԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԸ 50 տարի ուշացումով ոտքի է կանգնում որպէս ո՛չ արեւելեան, ո՛չ արեւմտեան, այլ՝ ՀԱՑԿԱԿԱՆ ՔԱՂԱՔ՝ թէ՛ հոգեբանութեամբ եւ թէ այդ ամբողջի հիմք՝ կենցաղով ու կացութիւնով։

Եթէ մենք քաղաքային կեանքով ապրող Հայաստանեայց հայութեան 80-85 տոկոսի կէսին նկատենք որպէս գիւղական մտածողութեան վերապրումներով ապրող քաղաքացիներ, ապա կարելի է անվարան պնդել, որ Հայաստանի բնակչութեան առնուազն 30-35 տոկոսը եւրոպականից տարբերուող ՀԱՑԿԱԿԱՆ ինքնուրոյն եւ անչափելի քաղաքի քաղաքացի է՝ թէ՛ հոգեբանութեամբ, թէ՛ կենցաղով եւ թէ խիստ իւրայատուկ կացութեամբ, իսկ մնացած մասը անցման փուլի մէջ է եւ անընդհատ համալրում է վերոյիշեալ պայմանական 30-35 տոկոսը։

Այսքանով հանդերձ, մենք գեռեւս արդէն վերացած գիւղականը շարունակում ենք ազգի հոգեբանութեան ամենաբնորոշ ու «հայեցի» ատաղձը համարել. ճիշտ այնպէս՝ ինչպէս անցեալ դարի 70-90ական թուերի մեր պապերը։

Ահա մեր կարծիքով մեր գրական մամուլում վերջին 10-15 տարիների գիւղագիր-քաղաքագիր հակացութիւնները զատորոշելու բանալին (ի դէպ՝ քաղաքային եւ գիւղական գրականութիւնների միջեւ պայքարը ընդէպ՝ կրսուել է անցեալ դարի 50-60ական թուերից։ Գիւղագիրներն ու նրանց հետեւորդները քաղաքագիրներին մեղադրել են ազգայինից հեռանալու

digitised by A.R.A.R.@

մէջ, իսկ վերջիններս գիւղագիրներին՝ գաւառային նեղ սահմաններում շրջափակուելու մէջ։ Այդ վէճը գրապայքարի սկզբում փաստօրէն դրսեւորւում էր որպէս գրաբար-աշխարհաբարի պայքար։ Գրաբարի հետեւորդները գեղջուկ լեզուով գրողներին համարում էին ռամիկ հոգեբանութեան կրողներ՝ թէեւ գրապայքարի սկզբի աշխարհաբարը խրթին ու անհասկանալի լինելու տեսակէտից գրաբարից շատ չէր տարբերւում)։

Այս դիտակէտից շատ հասկանալի եւ բնականոն է, որ այսօր կամաց-կամաց վերանում է սրան-նրան գիւղագիր համարելու միտումը։

Բայց անժխտելի է նաեւ այն փաստը, որ գիւղագրութիւն կայ եւ ապրում է իր ՀՈԳԵՎԱՐՔԸ։ Մեռնելուց առաջ գիւղագրութիւնը արձակի մէջ մոհիկան է թողնում Հր. Մաթեւոսեանի 60ական թ.թ. գործերը, Մ. Գալչոյեանի ստեղծագործութիւնը, իսկ քերթութեան մէջ՝ Հ. Սահեանին եւ միւսներին։ Իրօք՝ վերջիններից ոչ մէկի ԼԵԶՈՒԱՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ լիովին հայկական քաղաքացու լեզուամտածողութիւն չի կարելի համարել։ Նրանց լեզուամտածողութիւնը հիմնուած էր մեր միջից արդէն հետզհետէ անհետացող գիւղական կենցաղի, ապրելակերպի եւ բնաւորութեան վրայ։ Անցման փուլի այս գրողները մեր լեզուն հարստացրին բարբառներում խամրող բազմաթիւ բառերով ու ձեւերով, բայց քաղաքային մտածողութեան եւ լեզուի տարրեր չբերին գրականութիւն։ (Հր. Մաթեւոսեանի 80ական թ.թ. գործերում քաղաքային տարրը բաւական ընդգծուած է։ Դրա պատճառը Ծմակուտի քաղաքայնանալն է)։

Քաղաքային գրականութիւնը սկզբնաւորող այսօրուայ գրողների մասին եւս դա չի կարելի ասել։ Նրանք ո՛չ բարբառային մտածողութիւն եւ լեզու են բերում գրականութիւն, ոչ էլ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ մտածողութիւն եւ լեզու։ Եթէ մենք այդ գրողների ու բանաստեղծների լեզուի մէջ նշմարում ենք քաղաքային տարրեր, ապա այդ տարրերը ո՛չ թէ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԱՂԲԻՒՐԻՑ ԱՌՆՈՒԱԾ տարրեր են, այլ՝ ՄԻՋՆՈՐԴԱՒՈՐԻԱԾ։ Այսինքն՝ մեր այսօրուայ գրողները դեռ չեն սնում ԱՆՄԻՋԱՊԷՍ «քաղաքային-ժողովրդական» լեզուամտածողութիւնից, այլ այսօրուայ քաղքենիական միջավայրից են գրականութեան նիւթ առնում։ Ե՛ւ քաղաքային մտածողութիւն, ե՛ւ բառեր մուտք են գործում հիմնականում մտաւորականութեանն ու բիւրոկրատիային պատկերող այդ երկերի երկրորդական կերպարներից (վարորդ, բանուոր, վաճառող), որոնց մի մասի լեզուն քաղաքային այսօրուայ լեզուն է, մի մասինը՝ գեղջուկ բարբառների ու Երեւանի խօսուածքի համադրութիւնը։ Քանի որ բանուորը, վարորդը, վաճառողը, արհեստաւորը, մի խօսքով՝ այսօրուայ ժողովուրդը ըստ ամենայնի գրականութիւն չի մտել դեռեւս, ուստի՝ չկայ միջավայր, որի արդիւնքն է ամէն մի լեզուամտածողութիւն։ Փաստօրէն այսօրուայ գրական երկերի ճնշող մեծամասնութեան լեզուն եւ լեզուամտածողութիւնը անջատուած է մեծամասնութեան լեզուից ու կենցաղից։

Այսօր խիստ զգացւում է խօսակցական լեզուի ու գրական լեզուի անջրպետ։ Այդ անջրպետը, եթէ մի տասնամեակ առաջ անընդհատ մեծանում էր, այսօր շատ թոյլ, բայց, այնուամենայնիւ, նշմարւում է հակառակ միտումը, որը ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք, շարունակուելու է։

Խօսքի ու լեզուի միջեւ առաջացած այս խզումը շրջանցելու համար 20-30 տարի առաջ գրականութիւնը մուծում էր բարբառային մտածողութիւն։ Բայց այդ բանն այսօր չի կարող արդարացնի իրեն, որովհետեւ սերնդափոխութիւնը խարխլել է բարբառի գործածութեան սահմանները։

Քանի որ ժողովրդական եւ ժողովուրդ ասելով ոմանք դեռեւս գիւղացին նկատի ունեն, ուստի՝ սովորոյթի ուժով ժողովրդական լինելու համար

digitised by A.R.A.R.@

գրում են անհետացող կամ արդէն անհետացած գիւղացու լեզուամտածողութեամբ։ Բայց այդ բարբառային լեզուն, որը դեռեւս գործածում են ոմանք, կորցրած լինելով ազգագրական հիմքն ու ողջ համալիրը, կանգուն է մնացել միմիայն լեզուի ներքին հանգամանքների շնորհիւ։ Այդ ԼԵԶՈՒԱՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ պէտք է փոխուի, որովհետեւ նրան սնող կենցաղը, ազգագրական հոգեբանութիւնն ու միջավայրը ոչ թէ մեռած նահապետական գիւղն է, այլ Երեւանն է ու իր խօսուածքը[4]։

Վկայ՝ այսօրուայ գիւղական երիտասարդութեան լեզուն (35ից ցածր), որը յար եւ նման է 60-70ական թուերի Երեւանի խօսուածքին։

Այսպիսով՝ Երեւանը, որը ազգի հոգեւոր-մշակութային կենտրոնն է, այսօր դառնում է նաեւ լեզուամտածողութեան կենտրոն, որին պէտք է ձուլուեն բոլոր մտածողութիւնները, բայց ոչ թէ անհետ կորչելու այդ լեզուի մէջ, այլ է՛լ ավելի հարստացնելու այն։

Հենց սա է բարբառների ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ քանդող հանգամանքը։

Երեւանում այսօր արդէն կարելի է նշմարել եւս մի հետաքրքիր ու մտածել տուող երեւոյթ։

Երեւանում խօսուածքը, ինչպէս ասացինք, տարբեր ազգագրական գօտիների խօսուածքների խառնուրդն է։

Քանի որ ասենք, Բութանիան, Վարդաշէնը, Նուբարաշէնը, Նոր Արէշը, Կիլիկիան եւ միւս թաղերը հիմնականում արտասահմանից գաղթած հայեր էին բնակւում, Սիլաչի, Կոնդ, Նորք թաղամասերում՝ մեծամասամբ բնիկներ, իսկ մնացած շրջաններում Հայաստանի ու Սովետ Միութեան տարբեր շրջաններից եկած հայութիւն, ապա հենց ինքը՝ Երեւանն այսօր ունի մի քանի ազգագրական գօտիներ, որոնք վերանալու վրայ են թէեւ, բայց թէ՛ լեզուամտածողութեան, թէ՛ վարք ու բարքի տեսակէտից ինքնուրոյն «ազգագրական» գօտիներ են (Կոնդ, Սիլաչի, Ղռեր, Նորք, Վարդաշէն, եւայլն)։ Այս գօտիները անընդհատ ներթափանցում են իրար մէջ (լեզուի տեսակէտից)։ Բայց վերջին շրջանի մեր գրական որոշ երկերում նկատւում է Երեւանի ազգագրական գօտիները գրականութիւն մուծելու թոյլ փորձեր, որը, իմ կարծիքով, յառաջիկայ 4-5 տարում դառնալու է գրական ԿԱՐԾԱՏԵՒ շարժում եւ միտում։ Այս շարժումը նոյն դերն է խաղալու Երեւանի «ազգագրական գօտիները» գրականութիւն բերելու իմաստով, ինչ դեր որ խաղացին 50-70ական թուերի մեր գիւղագիրները՝ Հայաստանի տարբեր շրջանների ազգագրական գօտիները գրականութիւն բերելու տեսակէտից։ Երեւանի «գօտիները» գրականութիւն բերելուն զուգընթաց հետզհետէ ծնուելու են այս բոլոր գօտիները իրար համագրեալ տեսքով, մի ընդհանուր քաղաքային գրականութիւն ստեղծելուն լծուած գրող-բանաստեղծներ։

Այսպիսով՝ հայկական քաղաքն ու քաղաքացին մուտք պիտի գործեն գրականութիւն։ Իսկ քանի որ գրականութեան արտայայտման ձեւը լեզուն է, ուստի՝ ժողովրդին պատկերելու համար անհրաժեշտութիւն է առաջ գալու գրել նրա ԼԵԶՈՒԱՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆՆ ու բառապաշարը հիմք ընդունելով։

Ինչպէս ասացինք, մինչեւ հիմա այն կարծիքն է տիրում, թէ ժողովրդին պատկերելու համար պէտք է գիւղացի վերցնել եւ նրա լեզուով խօսել, որովհետեւ իբր գիւղացին է ժողովուրդը։

Ոչ-գիւղական թեմաներով գրողներն էլ հիմնականում մտաւորականներին են պատկերում՝ ըստ երեւոյթին կարծելով, թէ գրական լեզուով խօսում է միայն մտաւորականութիւնը։ Այնինչ հիշտ հակառակն է։

Հեռուստատեսութեան ու մամուլի լեզուն եւ ՄԱՆԱՒԱՆԴ ԱՌՈԳԱ-

digitised by A.R.A.R.@

ՆՈՒԹԻՆԸ, որը մենք չափանիշ ենք դարձրել որպէս գրական լեզու, գործածում են միմիայն ՕՏԱՐԱԿԻՐԹ քաղքենիները։ Մեր բոլոր շնորհալի, հալակիրթ լրագրողների ու գրողների լեզուն եւ առոգանութիւնը հազար անգամ աւելի մօտ է սիլայու բարբառին, այսինքն՝ Երեւանի խօսուածքին, քան այսօրուայ չափանմոյշ գրական լեզուին։ Մի խօսքով՝ այսօրուայ գիտական գրքերի ու թերթերի գրական հայերէնը ժողովրդի համար նոյնքան գրաբար, նոյնքան գրքունակ է, որքան որ հին հայերէնը՝ կանխող դարակէսին։

Հետեւաբար կրկին առաջ է գալիս ժողովրդի արեանն ու էութեանը մօտ խօսակցական, այսինքն՝ աշխարհաբար լեզուամտածողութեամբ գրելու պահանջ։

Բայց այն գրականը, որը չափանմոյշ է դարձել մեր մամուլի ու հեռուստատեսութեան համար, գործածում են միայն օտարակիրթ քաղքենիները։ Այդ գրականը խզուել է խօսակցականից. հետեւաբար դարձեալ անհրաժեշտութիւն է առաջանում այն մօտեցնել խօսակցականին։ Ի՞նչ պէտք է արուի, որպէսզի մեր գրական լեզուն, հիմնուելով Երեւանի ու Գիւմրիի խօսուածքների վրայ, միաժամանակ պարունակի պատմական Հայաստանի ազգագրական միւս գօտիները։ Երեւանի խօսուածքին հնչաառոգանական երեւոյթները եւ լեզուամտածողութիւնը ուշադիր հետազօտելիս կը տեսնենք, որ ամէն ինչ արուած է արդէն։ Երեւանի խօսուածքը, ինչպէս քիչ առաջ ասացինք, ՀԱՄԱԴՐՈՒԹԹՆ է իր մէջ ձուլուած բազմաթիւ բարբառների ու լեզուամտածողութիւնների. մի երեւոյթ, որը շարունակւում է։ Բայց միաժամանակ արդէն փաստ է գրական լեզուի ու խօսակցական լեզուի խզումը։ Այդ անջրպետը ԿՐՃԱՏԵԼՈՒ ՁԱՓԵՐԻՑ Է ԿԱԽՈՒԱԾ ՀԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱԼԻՔ ՕՐԸ։ Ուրեմն՝ կրկին անհրաժեշտութիւն է առաջ գալիս հասկանալի խօսակցականով գրելու պահանջ, այսինքն՝ գրական եւ խօսակցական լեզուների մերձեցում. կրկին Աբովեանին հանգունակ սիրագործ է պէտք, որ առանց վախենալու գրականութիւն բերի այն լեզուն, որով խօսում է ազգի մեծամասնութիւնը։ Մի վճռական եւ մեր գործը դիւրացնող տարբերութեամբ միայն։ Եթէ Աբովեանը հայոց լեզուի մտածողութիւնը փրկելու համար ստիպուած էր իր բառապաշարի մէջ պահել բազմաթիւ թուրք-պարսկական բառեր (բառապաշարի մօտ մէկ քառորդը), ապա այսօրուայ գրողի գործը անհամեմատ հեշտ է, որովհետեւ Երեւանի եւ Գիւմրիի խօսուածքների բառապաշարի գրեթէ 90 տոկոսը մաքուր հայերէն բառեր են։ Իսկ մնացած օտար բառերը փոխարինելիս՝ խօսակցական լեզուի մտածողութիւնը բացարձակապէս չի տուժելու։

Սա խիստ կարեւոր եւ վճռական գործօն է։

Բայց արդեօ՞ք դա հնարաւոր է այսօր։ Արհեստական ճանապարհով դա անել հնարաւոր չի, որովհետեւ գործ ունենք կենսաբանական տեսակէտից ամենակենդանի ու յարափոփոխ երեւոյթներից մէկի՝ լեզուի հետ։

Այն, ինչ մենք պէտք է անենք արհեստականօրէն, արդէն ՓԱՍՏ է Երեւանի խօսուածքում, մնում է օգտուենք պատրաստի լեզուից եւ հարստացնենք գրականը ՈՉ ԹԷ ՄԻԱՑՆ բառապաշարով, այլ՝ ԱԻԵԼԻ ՇԱՏ՝ լեզուամտածողութեամբ։

Իսկ ԱՑՍՕՐՈՒԱՑ օրով հարստացնել գրականը, կը նշանակի այն մօտեցնել խօսակցական լեզուի ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆԸ (քերականական կառուցուածք, դարձուածք, հնչերանգ-առոգանութիւն, եւայլն)։

Երեւանի խօսուածքը խիստ ամուր արմատներ է գցել ժողովրդի մէջ։ Մեր մտաւորականների խօսակցական լեզուն հազար անգամ աւելի մօտ է

digitised by A.R.A.R.@

Կոնդի խօսուածքին, այսինքն՝ Երեւանի բարբառին, քան այսօրուայ գրական լեզուին։

Բայց մարդիկ խօսում են այլ կերպ, գրում՝ այլ կերպ։

Կրկին ժողովրդին լուզող թեմաները, նրանց կեանքն ու կենցաղը փոթորկող ու լցնող երեւոյթները թողած, գրականութիւնը մեծ մասամբ նիւթ է քաղում կա՛մ անցեալի պատմութեան մէջ (փչենք Մխիթարեան հայրերի կլասիցիզմը), կա՛մ այսօրուայ քաղքենի բիւրոկրատիայի մէջ (հմմտ. Տէմիրճիպաշեան, Ինտրա, մասամբ՝ Նար-Դոս եւ Տէրեան), որի լեզուից արդէն վտարուել է ըղձական եղանակը. փոխանակ «պիտի խոսեմ»՝ «պիտի խօսել», փոխանակ «երկար չի շարունակուի»՝ «երկար չի կարող շարունակուել», փոխանակ «չես կարող նստես»՝ «չես կարող նստել», եւայլն, եւ միացել անորոշ դերբային։ «Որ» հաստատական շաղկապը նուաճել է «թէ»ի տիրութիւնները եւ արշաւում է «որպէսզի, որովհետեւ, քանի որ»ի վրայ։ Բարդ ստորադասական խրթին նախադասութիւնները նեղել են հայոց լեզուի տրամաբանութիւններից ու էութիւնից ելնող նոյնաձեւ պարզ նախադասութիւններին։ Զարաշահում են դերբայական դարձուածքով նախադասութիւնները, եւայլն, եւայլն։

Ո՞վ է գրականութիւն ստեղծելու ժողովրդի համար։ Իսկ այսօր ժողովուրդ հասկացութիւնը, ինչպէս տեսանք, որակական փոփոխութիւն է կրել։ Գիւղացին կամաց-կամաց դիրքերը զիջում է բանուորին։ Եւ գրականութիւնը, որ երէկ օգտւում էր գեղջուկ բանահիւսութիւնից ու աւանդութիւնից, այսօր պէտք է ստեղծուի նորաստեղծ այն բանահիւսութիւնից, որով ժողովուրդը կերակրում է ինքզինքը (ծիծաղականներ, զրոյցներ, աւանդութիւններ, երգեր, եւայլն)։

Երէկուայ բանահաւաքը ժողովում էր գեղջուկ բանահիւսութիւնը, այսօրուայ բանահաւաքը պէտք է ժողովի, եթէ կարելի է ասել «բանուոր» բանահիւսութիւնը, որի վրայ ոչ ոք ուշք չի դարձնում։

Ահա թէ ինչ վիճակի է արդի գրականութիւնը։

Բայց սա չի կարող երկար շարունակուի։

Խմորումները առկայ են։ Մենք հաւատում ենք Աբովեանին հանդուգն անհատի գալստեանը, որը առանց վախենալու գրի այն լեզուով եւ մանաւանդ թեմաներով եւ այն լեզուով, որով որ խօսում է ժողովրդի մեծամասնութիւնը։ Նոր Աբովեանի շաւիղները հարթուած են արդէն։ Մենք սպասում ենք նրան, որի սխրագործութիւնը լինելու է նոր ժողովրդական լեզուամտածողութիւնն ու թեմաները գրականութիւն բերելը՝ սկզբնաւորելու համար հայ գրականութեան նորագոյն փուլը։

Ի՞նչ հիմքեր ունենք այդպէս մտածելու։

Այս հարցին պատասխանելու համար շատ թռուցիկ քննենք այսօրուայ գրականութեան մէջ առկայ երակները, որոնցից հիմնականը երեքն են.

Ա) Գիւղական կամ աւելի լաւ է ասենք քաղաքացիացուած գիւղական մտածողութեան երկեր (Հր. Մաթեւոսեան, Հ. Սահեան, եւ այլք)։

Բ) Եթէ կարելի է ասել մտաւորականութեան համար ստեղծուած եւ նրանց բաւարարող գրականութիւն (ի նկատի ունեմ միջավայրն ու հերոսները)։ Սա երեք հիմնական ճիւղաւորում ունի.

1.-Ա խմբի գրականութեան հետեւորդներ, այսինքն՝ քաղաքայնացուած գիւղական մտածողութիւն ունեցողների հետեւորդներ, որոնք նիւթ են առնում մտաւորականութեան կեանքը։ Այս գրողները մեծամասամբ քաղաքացիներ են, որոնք սակայն գեռեւս լստակօրէն չեն կարողացել անջատուել Ա խմբի գրականութիւնից ու թեմայից (ամենախոշոր դէմքը Ռ. Դաւոյեան)։

digitised by A.R.A.R.@

2.- Նրանց շաղով են գնում 30-35 տարեկան գրողները, որոնք ծնուել-մեծացել են քաղաքում եւ ստեղծում են բաւական հետաքրքիր ու մտածել տուող գործեր, ձգտում են քաղաքային հոգեբանութիւնն ու լեզուամտածողութիւնը մուծել գրականութիւն (Դ. Յովհաննէս, Յովհ. Գրիգորեան, Ա. Շէկոյեան, արձակի մէջ աւագ սերնդի ներկայացուցիչներ Աղ. Այվազեանը, Եր. Աւագեանը, Ռ. Յովսէփեանը եւ այլք)։

3.-«Ինտելեկտուալիստներ»։

Գ) Բանուորների, առեւտրական եւ արհեստաւորական խաւի կեանքից վերցրած թեմաներ։ Ճնշող մեծամասնութեամբ՝ զաւեշտանման թատերախաղեր («Տաքսի-տաքսի», եւայլն)։

Վերջին երակը ամենաաղքատն է եւ չափածոյի ու արձակի տիրոյթներում գրեթէ ներկայացուցիչ չունի, եթէ չհաշուենք ռաբիս յորջորջուող արդի ժողովրդական երգերի խօսքերը, զանազան զրոյցներն ու ծիծաղականները։ Այս խմբի գրականութիւնը պաշտօնապէս դեռ չի հաստատել իր լեզուն եւ միջավայրը։ Հիմնական ուժերը դեռ չեն թափել լիշեալ երակի վրայ, ուստի՝ երբեմն մարխոշ եւ համով լինելով երաժշտական կոմեդիայի թատրոնում, բաւական ցածր որակի են՝ գրականութիւն կոչուելու համար։ Դրանք լիշեցնում են ԺԹ դարակէսի զաւեշտները, որոնք հարթեցին անցեալ դարավերջի գրականութեան շաւիղները (գիւղագիրներ եւ քաղաքագիրներ Հրանտը, Կիւրճեանը, Սունդուկեանը, Թլկատինցին, Զարդարեանը եւ այլք)։

Սրանք թէեւ գեղարուեստական արժէք չունեն, բայց իրենց բառապաշարով եւ ժողովրդական լեզուի առոգանութեան շնորհիւ խօսակցականի առոգանութիւնը բեմերից լսելուն կարօտ հանդիսատեսին դուր են գալիս։

Ա խմբի գրականութիւնը (քաղաքայնացուած գիւղական մտածողութեան երկերը) մեզ սիրելի է, որովհետեւ դրանով փարատում ենք մեր լիշողութիւնը ջերմացնող, բայց վաղուց վերացած կամ վերանալու վրայ ԺԹ դարի գիւղը։ Այն յաղուրդ է տալիս գիւղի կորստից ծնուած մեր մորմոքին, որը երբեմն-երբեմն ունենում է միջին սերունդը, բայց նոր սերնդի մէջ որակ չի կազմում, ուստի՝ այդ գրականութիւնը անցած փուլ է նրա համար։

Ամենաանդէմը «ինտելեկտուալիստների» գրականութիւնն էր, որովհետեւ մշակում էր գիւղից քաղաք եկած եւ միանգամից քաղաքացի դարձած գիւղացիների կողմից, որոնք իրենց ներսում զսպելով գիւղը երգելու ներսից բխող պահանջը, ճգնում էին իրենց արեան կանչը խեղդելու հաշւին պատկերել չմարսուած քաղաքն ու եւրոպական մշակոյթը։ Այս երակի մշակների մէջ մեծ տոկոս էին կազմում խելք, ճաշակ ու քանքար ունեցող քաղաքային մտածողութիւն կրող գրողներ, որոնք քաղքենիութեան միջավայրից սերուած լինելով, չէին համարձակւում սխրանքի գնալ եւ նիւթ վերցնել Կոնդի կամ Երրորդ Մասի միջավայրից։

Ժամանակի հեղեղը իրենց աշխարհաքաղաքացի յորջորջող այս շնորհալի այրերին շատ շուտ դուրս հանեց ասպարէզից, որովհետեւ նրանք սնում եւ սնուել էին տալիս ազգի ամենափոքրամաս խաւին ու խաւից։ Այդ խաւը, որին գրականութիւն էր բերում տիեզերաքաղաքացի գրողը, ազգի յատակում սողացող ամենաանողնաշարաւոր, ամենաապազգային, հոգեբանօրէն ամէնէն այլասերուած, զանազան կրօնական մոլագարութիւններով ու անաստուածութեան բարդոյթներով վարակուած, հոգեբանօրէն ու լեզուամտածողութեամբ ժողովրդի մեծամասնութիւնը կազմող հատուածից ու նրա մտածողութիւնից հեռացած խաւն էր։

Այս գրողների մտածողութիւնն ու թեման նոյնքան օտարահակ, չինծու եւ քաղքենի էր, որքան ինքը՝ խաւը՝ թէեւ ի հարկէ կային նաեւ եր-

digitised by A.R.A.R.@

ջանիկ խոտորումներ։ Սրանք գրում էին խօսակցական լեզուից հեռացած, կեղծահունչ, օտարաբան եւ հիւթազերծ գրականով։ Թեմաները գրեթէ կապ չունէին մեր ժողովրդի հոգեբանութեանը։ Բ խմբի գրականութեան ամենաանդէմ դրսեւորումը հանդիսացող վերը նշուած ճիւղը մերժելի չէ, ինչպէս թւում է շատերին։

Այն թէեւ դատապարտուած էր մոռացութեան, բայց մոռացուելուց եւ մահանալուց առաջ ունեցաւ մեզապէտք առաքելութիւն։ Այդ առաքելութիւնը արդի համաշխարհային գրականութեան եւ արուեստի ներմուծումն էր մեր մէջ՝ հեշտացնելով քաղքենիութեան միւս ծայրայեղութիւնից մեր գրականութիւնը ազատանելու գործը։

Այդ ծայրայեղութեան մունետիկները ազգային, ժողովրդականի պիտակների շուքում փորձում էին քաղաքացիութիւն տալ իրենց կեղծիք դուրս ամէն ինչ ժխտելու գործելակերպին։ Նրանք ազգային թեմաների ու հայրենասիրական ճղճղան քարոզներով լաւակնութիւն ունէին կոմպեսացնելու իրենց վայրենի ճաշակն ու ողբալի տգիտութիւնը։

Հետեւաբար քաղքենիութեան այս երկու իրար թշնամի ծայրայեղութիւններն էլ դատապարտուած լինելով մոռացութեան, միմիայն ազգակ եղան հայ նորագոյն գրականութեան ծնունդը նշանաւորող։

Վաղուայ հայ գրականութեան ուղին հարթում են Բ խմբի 2րդ ենթախմբի գրողները եւ մասամբ նաեւ՝ Գ խմբի թատերագիրները։ Որովհետեւ, ինչպէս նշեցինք եւ շեշտելու ենք բազմիցս, մեր գրականութիւնը յարութիւն է առնելու բարբառների կենցաղն ու լեզուամտածողութիւնը համադրող քաղաքային կեանքից ու լեզուամտածողութիւնից։ Հենց Բ խմբի 2րդ ենթախմբի գրողների գործերում է, որ գիւղագրութիւնը, այսինքն՝ հին ժողովրդականը հերթափոխելու է քաղաքայինին, այն է՝ նոր ժողովրդականին՝ առանց ճեղքուածքի ու թռիչքների։ Այդ անցումը, ի տարբերութիւն «ինտելեկտուալիստների» անբնական թռիչքին, տրամաբանական եւ բնականոն հերթափոխն է ազգի ընկերային-քաղաքական զարգացման մի փուլից միւսը։

Մի քանի տարի անց ծնուելու են գրողներ, որոնք փրկելու են Կոմիտասը, Կոնդը, Սիլաչին, Սարի Թաղը, Երրորդ Մասը, Կայարանն ու Բութանեան։ Այդ թաղերի հոգեբանութիւնը, խառնուածքը, նրանց կենցաղն եւ ապրելակերպը մեռնելու վրայ են թէեւ, բայց կարեւոր ազդակ են եղել ՀԱՅ ՔԱՂԱՔԱՑԻՆ կեանքի զարգացմանը նպաստող։ Հայ քաղաքն այսօր ՀԱՅԿԱԿԱՆ քաղաք է այլեւս եւ նոյնքան է տարբերւում եւրոպ. քաղաքից, որքան հայ գիւղը եւրոպական գիւղից ԺԹ դարավերջին։ Երրորդ մասը, Կայարանը, Բութանեան, Սարի Թաղը, Նորքը եւ այլ թաղերը սերունդների համար փրկող գրողներից շատերը նոյն դերը պիտի կատարեն քաղաքային կեանքը նկարագրելու մէջ, ինչ դեր որ կատարեցին գիւղագիրները՝ գիւղը նկարագրելու մարզում, Սունդուկեանը Թիֆլիսը փրկելու մէջ, Պռոշեանը Աշտարակը փրկելու գործում։ Որքան մաքուր, անկեղծ ու ճշմարիտ նկարագրեն նրանք, այնքան երկար պիտի ապրեն որպէս ազգագրական փաստ արձանագրող երեւոյթներ (Պռոշեանը, ինչպէս Սասունը փրկած Դաշտենցն ու Գալշոյեանը եւ այլք)։

Այսպիսի գրողները մինչեւ 90ական թուերի կէսերը պիտի հեղեղեն մեր գրական շուկան։

21րդ դարի շեմին հրապարակ են իջնելու նոր Դուրեաններ ու Աբովեաններ, Զօհրապներ ու Զարենցներ, որոնք պիտի ազգի որակական-ընկերային կազմի փոփոխութեան անցման փուլը դարձնեն խաչմերուկ եւ տնկուեն կենտրոնում, որպէս մեր անցած ու գալիք ճամբէքը լուսաւորող

digitised by A.R.A.R.@

մարգարէներ։ Այդ գրողների լեզուամտածողութիւնը[5] *հայ քաղաքային բնակչութեան լեզուամտածողութիւնն է լինելու անպատճառ, իսկ թեման՝ հայ այսօրուայ քաղաքացին։ Մենք նրանց գործերում զգալու ենք լեզուամտածողութեան եւ նիւթի այն եզակի ներդաշնակութիւնը, որը միջին հայերէնով ստեղծուած գրականութիւնը համազօրեց ոսկեդարեան գրաբարի գրականութեանը, «Վէրք»-ը բարձրացրեց գեղեցիկ ու հարուստ գրաբարով գրուած «Հայկ դիւցազն»-ից։*

Մեր գրականութեան ապագան Երեւանի խօսուածքն է։

Ո՞վ է այն սխրագործը, որ պիտի Երզնկացու, Թլկուրանցու ու Աբովեանի հանգոյն համարձակութիւնն ունենայ «պղծելու» ոսկեդարբառ գրաբարը։

Պատմութեան շրջափոխութեան ենթակայ տրամաբանութիւնը մեր հայեացքը ուղղում է 10-15 տարեկան պատանիների աչքերին, որոնցից մէկին տրուած է սկզբնաւորելու հայ 5000-ամեայ գրականութեան նորագոյն շրջանը։

9 Յունիսի 1982 թ.
Երեւան

ՌԱՖԱՅԷԼ Պ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.-Լեզուամտածողութիւն ասելով հասկանում եմ նախ եւ առաջ տուեալ ժամանակի ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ձեւը որպէս համալիր։ Այսինքն՝ ոչ թէ *միայն* բառապաշարը, այլ *աւելի շատ*՝ լեզուի շարահիւսութիւնը։

2.-Միջին հայերէնի ու աշուղականի տարբերութիւնն այն է, որ եթէ առաջինը գրաբարալեզու Բերթութեան եւ գուսանական գրականութեան խառնուրդ էր, ապա վերջինս՝ միջին հայերէնի ու գեղջուկ բանահիւսութեան համադրյթ։ Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար հարկ ենք համարում նշել աշուղ-աշուղականի եւ գուսան-գուսանականի տարբերութիւնը, որը հայ գուսանագիտութեան չլուծուած խնդիրներից է։ Աշուղականը մտնում է գուսան երեւոյթի մէջ եւ դրա մի փուլն է (17-20դդ.). գուսանութիւնը, որը հայերիս մէջ գոյութիւն ունէր աշուղութեան ծնունդից հարիւրամեակներ առաջ, ունէր երկու հիմնական երակ՝ գեղջուկ գուսանութիւն եւ քաղաքային գուսանութիւն։ Քաղաքային գուսանութիւնը Քրիստոնէութեան մուտքից յետոյ արդէն սկսել էր խարխլել դիրքերը, որովհետեւ մեր մատենագիտութեան մէջ ապրած բազմաթիւ ուղղակի եւ անուղղակի փաստերի պնդմամբ, հալածւում էր Քրիստոնէական եկեղեցու կողմից։ ԺՌ-ԺԴ դարերից յետոյ, երբ Հայաստանն ընկաւ արեւելեան ցեղերի տիրապետութեան տակ, ազգային աւանդների վրայ հիմնուած Քաղաքները հետզհետէ դատարկուեցին հայերից, հայկական քաղաքային կեանքը տեղի տուեց, արմատաւորուեց արեւելեան կացութածեւը։ Հայաստանի Քաղաքների այս փոփոխութեան հետեւանքով գուսանական արուեստի Քաղաքային երակը ստացաւ արեւելեան գունաւորում՝ ԺԶ դարավերջին մեղեդու կառուցուածքը մեծապէս համալրելով դեռեւս ԺԴ-ԺԵ դարերից սաղմնաւորուած արեւելեան աշուղական եղանակներով։

digitised by A.R.A.R.@

Գիւղական գուսանութիւնը անհամեմատ աւելի քիչ ազդեցութիւն կրեց ՔԱՂԱՔԱՑԻՆ ԵՐԵՒՈՑԹ հանդիսացող արեւելեան աշուղութիւնից:

Գիւղական գուսանութիւնը, որը ամրացել էր Դ-Է դարերում հայկական քաղաքներից վտարուած քաղաքային գուսանների, ուշ միջնադարում միաւորուեց գեղջուկ երաժշտութեանը եւ այլ երաժշտութեան շերտերում գոյատեւեց մինչեւ 20րդ դարը, որպէսզի Շերամով կրկին վերածնունդ առնի որպէս առանձին երեւոյթ: Կառուցուածքային տեսակէտից աշուղութիւնը, ի տարբերութիւն գուսանական անկաշկանդ ու ազատ երգաստեղծութեան, զբաղում էր տաղաչափական եւ երաժշտական որոշալի կաղապարներով, որոնց պահպանումը պարտադիր էր բոլոր ազգերի աշուղների համար (40ի չափ տաղաչափական ձեւեր, մօտ այդքան էլ դասական եղանակներ): Գուսանականը այդպիսի սահմանափակում չունէր: Գուսանը իր ամէն մի ոտանաւորին յարմարեցնում էր ինքնուրոյն եղանակ:

3.-Ուրիշներից տարբերուող հայկական քաղաք ասելով, ի նկատի ունեմ հայկական ոգով բնաւորութեան, խառնուածքի ու հոգեբանութեան ՀՆՈՑ, որն իր ազգայինի, հայկականի «քանակութեամբ» չի զիջում այսօրուայ գիւղին, իսկ 21րդ դարաշեմին՝ չի զիջելու նաեւ երէկուայ գիւղին:

4.-Կարող եմ առարկողներ լինել եւ ասել, բա Գիւմրի՞ն: Այստեղ նոյն երեւոյթն է: Լեզուն պահել է ոչ թէ բարբառի ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ, այլ՝ միմիայն բառապաշարը, բերականութիւնն ու առոգանութիւնը: Այսօրուայ Գիւմրիի լեզուամտածողութիւնը եթէ համեմատելու լինենք ազգագրական հանդէսներից փաստուող երէկուայ Գիւմրիի լեզուամտածողութեանը, անմիջապէս կը զգանք տարբերութիւնները:

5.-Ես միշտ շեշտում եմ լեզուամտածողութիւն, բայց ոչ լեզու, որովհետեւ վաղուայ գրողը գրաբարով էլ գրի, միեւնոյնն է, եթէ գրեց արդի լեզուամտածողութեամբ՝ հասկանալի է լինելու մեզ եւ փոթորկելու է մեր հոգին: Մի խօսքով՝ կարեւորը ո՛չ թէ լեզուի բերականութիւնն է, այլ՝ մտածողութեան ձեւը:

digitised by A.R.A.R.@

ՄԱՐՈՒԵ

Անգլիական Արդի Բանաստեղծութիւնը

Երկրորդ աշխարհամարտի աւարտի թոհուբոհին մէջ, քանի մը երիտասարդ գրողներու տրուեցաւ Movement *(Շարժում) անունը։ Զիրենք միացնող միակ գիծը թերեւս պայմաններուն դէմ իրենց ունեցած դժգոհութիւնն ու ըմբոստութիւնն էր, իսկ անոնց լաւագոյն յատկանիշը՝ երկար ատեն նոյն շրջանակին մէջ կաշկանդուած չմնալու փաստը։ Իրապէս, շատ կարճ շրջանէ մը ետք, իւրաքանչիւրը գնաց ի՛ր որոշած ուղիով եւ Շարժում խմբակը տարրալուծուեցաւ։*

Բանաստեղծական այս շարժումին գլխաւոր յատկանիշները՝ հանդարտ ոճ, կուռ կառոյց եւ մշակուած ենթահող, երեւան եկան իբրեւ հակազդեցութիւն քառասնական թուականներու զգացական գիծերուն։

Այս շրջանին էր, որ անգլիական բանաստեղծութեան մէջ յատակացան երկու ուղիներ։ Առաջին ուղին արդիապաշտութիւնն էր, գլխաւորուած՝ Իլերթի եւ Փաունտի կողմէ, իսկ երկրորդը՝ աւանդապաշտութիւնն էր, ձեւով մը շարունակութիւնը Georgian *դպրոցին։ Այս երկու ուղղութիւններուն պաշտպանները շատ յաճախ իրարու հետ կ'ունենային բուռն բանավէճեր, որոնց թիրախ կը դառնար, օրինակ, Ֆիլիփ Լարքինը, նկատի ունենալով, որ ան էր այդ շարժումին գլխաւոր դէմքը, ինչպէս նաեւ՝ Թոմ Կանը, Տոնալտ Տէյվին եւ Քինկզլի Ամիսը։*

ՖԻԼԻՓ ԼԱՐՔԻՆ

(1922-1985)

Շարժում խմբակին ամէնէն ցայտուն դէմքը։

Իր գործին ամբողջութեան մէջ Ֆիլիփ Լարքին կը մնայ խորհրդապաշտ բանաստեղծ մը, ազդուած՝ Երիցէն՝ իր ասպարէզի առաջին շրջանին, իսկ աւելի ուշ՝ Հարտիի խորհրդապաշտութենէն։ Այս երկու ազ-

digitised by A.R.A.R.@

գեցութիւնները իր գործին մէջ ո՛չ միայն իրարու չեն հակադրուիր, այլեւ կը վերածուին բանաստեղծական զարմանալի տրամախոհութեան մը, շրջորհիւ բանաստեղծի իր ամուր, բայց դեռ չբացայայտուած տաղանդին։

Տեսաբանական եւ վերլուծական էջերուն մէջ, Ֆիլիփ Լարքին հիմնովին կը հակադրուի արդիապաշտութեան, ինչպէս կը գրէ All What Jazz, A Record Riary (1970) հաւաքածոյի ներածականին մէջ.

«Փարիզի, Փաուընտի թէ Փիքասոյի կիրարկած արդիապաշտութեան իմ գլխաւոր ընդդատութիւնս այս է,— անոնց գործերը մեզի ո՛չ հանոյք կը պատճառեն եւ ոչ ալ կրնանք տոկալ անոնց։ Անոնք մեզ կը հմայեն այնքան ատեն, որ մենք պատրաստ ենք ապշելու եւ ըմբոստանալու, եւ կը պահեն իրենց հմայքը, որովհետեւ աւելի՛ խորհրդատոր եւ աւելի՛ ըմբոստ են։ Անոնք մնայուն ազդեցութիւն չեն գործեր։ Ահա թէ ինչու իւրաքանչիւր արդիապաշտ աւելի եւ աւելի խորապէս կը մխրճուի բրտութեան եւ խայտառակութեան մէջ»։

Ասիկա ուղղակի հակադարձութիւն է Իլիոթի ա՛յն խօսքին, թէ՝ «Բանաստեղծները մեր քաղաքակրթութեան մէջ, ինչպէս որ է այսօր այդ քաղաքակրթութիւնը, պարտին ըլլալ դժուար»։ Լարքինի գործերուն համար թէեւ յաճախ ըսուած է, թէ անոնք դժուար ընկալելի են, սակայն իր գրութիւններուն մէջ զգալի է երկու պարագաներու յստակացում մը. առաջին՝ երբ «ինչ որ անտեղիօրէն արտառոց է», եւ երկրորդ՝ «ինչ որ իրապէս դժուարահասկնալի է, որովհետեւ հարցը, որ կը ներկայացուի, ինքնին բարդ է»։

Poems of the 1950 գործին մէջ, Լարքին կ՚ըսէ.

«Կը հաւատամ, որ իբրեւ սկզբունք՝ իւրաքանչիւր բանաստեղծութիւն պէ՛տք է ունենայ իր թարմ, նորաստեղծ տիեզերքը. ուրեմն՝ պէտք չունի հաւատալու կամ առընչուելու աւանդութիւններու»։

Այստեղ է ահա, որ Լարքին հակասական մտածումներ կը բանաձեւէ, որովհետեւ մէկ կողմէ կը մերժէ արդիապաշտներու գաւանած «բանաստեղծութեան եղափոխութեան տեսակէտը», իսկ միւս կողմէ՝ երկար ճամբայ կը կտրէ, իր բանաստեղծութեան տալու համար հարազատ անգլիական շունչ, որ կու գար վաղ շրջանի բանաստեղծներէ, ինչպէս Ուրդսուրթէն, Հարտիէն եւ Օտընէն, որոնց հետ ան ունէր հասարակաց կարգ մը եզրեր. անոնք բոլորն ալ կը գործածէին ձայնի չափաւորականութիւն մը եւ շատ հասկնալի լեզու մը՝ «ինչպէս որ մարդիկ կը գործածեն իրենց առօրեային մէջ»։ Նաեւ՝ այս բանաստեղծները, բոլորն ալ, սերտ առընչութիւն ունէին իրենց ապրած հողին եւ քաղաքներուն հետ եւ այդ կապը, իբրեւ մնայուն հարց՝ արծարծուած է իրենց գործերուն մէջ։ Սակայն ինչ որ Լարքինը զարգացուցած է անգլիական արդի բանաստեղծութեան գլխաւոր դէմքերէն մէկը, մերօրեայ կեանքն ու միջավայրը ճանաչելի եւ ժողովրդավար մօտեցումով ներկայացնելու իր կարողութիւնն է։

Նախապէս իրարու հակադրուած երկու աւանդներ ձուլելու իր տաղանդը բարեբար ազդեցութիւն գործած է նոր բանաստեղծներու վրայ, որոնք իրեն շնորհիւ կրցած են գրել նոր բանաստեղծութիւններ, առանց որ յարձակողական դիրքորոշումներ որդեգրեն հակա-արդիականութեան կամ յետ-արդիականութեան հանդէպ, ինչպէս՝ Թէտ Հիուկզ, Սիմոս Հէնի, Փոլ Մալտուն, Ճէյմս Ֆենթոն։

Իր ամբողջ կեանքը յուսարձակներէ եւ հրապարակներէ հեռու անցուցած այս բանաստեղծը կը գաւանի՝ «Չեմ կրնար հաւատալ, որ մարդ պէտք ունի ցնցիչ կենսափորձերու, յայտնութիւններով լեցուն թարմ բանաստեղծութիւն գրելու համար»։

digitised by A.R.A.R.@

Մանկութեան շրջանին անմրցելի ընթերցող եղած Լարքին շատ յաճախ օրական մէկ գիրք կարդացած է, «հակառակ անոր, որ առաւօտներն ու յետմիջօրէները ստիպուած էի ընդմիջել՝ դպրոց յաճախելու յոգնեցուցիչ դադարներով», ինչպէս կ'ըսէ ինք։

Լարքին աւարտած է Օքսֆորտի անգլիական գրականութեան բաժինը եւ ուսանողութեան տարիներուն մաս կազմած՝ Jazz ակումբին, որմէ ներշնչուած՝ հետագային գրած է All What Jazz անուն գործը (1970)։

Պատերազմին, հակառակ ուրիշ ուսանողներու զինուորագրումին, Լարքին կը շարունակէ իր ուսումը, որովհետեւ աչքերուն տկարութեան պատճառով զինք զինուորութեան անկարմար անձ մը կը նկատեն։ Համալսարանը աւարտելէ ետք, կը ստանձնէ քանի մը պատահական պաշտօններ, մինչեւ որ կը դառնայ նախ Ուիլինկթրն եւ ապա Հիլ համալսարաններուն գրադարանապետը, պաշտօն մը՝ զոր կը վարէ մինչեւ իր մահը՝ 1985։ 1984ին իրեն կ'առաջարկուի Poet Laureate կոչումը, որ իր մերժումէն ետք կը տրուի Թէտ Հիուկզի։ The Whitsun Weddings (1964) հաւաքածոն 1965ին իրեն կ'ապահովէ Queen's Gold Medal for Poetry տիտղոսը, իսկ High Windows (1974) հաւաքածոյէն ետք կը ստանայ պատուոյ տոքթորի կոչում՝ Պելֆասթի, Էյլրսթրրի, Ուարուիքի, Սուսէքսի եւ Սենթ Անտրուի համալսարաններէն։

Իր գործերուն մէջ Լարքին ստեղծած է միջակ դասակարգի իրապաշտ մարդու աշխարհը, մասամբ օգտագործելով այդ դասակարգին յատուկ տրամաբանական վէճի ոճը, ինչպէս՝ Reasons for Attendance բանաստեղծութեան մէջ եւ մասամբ ալ դիմելով առօրեայ սովորական ըսելաձեւերու, ինչպէս՝ I'm afraid, maybe, sure, o hell, եւայլն։

Գրական կարգ մը քննադատներ զինք կը նկատեն «անլուսօրէն յոռետես», «ամենատխուր սիրտը յետ-պատերազմեան շուկային», եւ կը շեշտեն իր գլխաւոր խոցը՝ «զարհուրանքը գոհունակութենէն»։ Բայց, ինչպէս ինք կը նշէ՝ «Բանաստեղծութիւն գրելու մղումը բնաւ չի կրնար ժխտական ըլլալ։ Ամէնէն ժխտական բանաստեղծութիւնն իսկ դրական է իբրեւ արարք»։ Այս կեցուածքը յստակօրէն դրսեւորուած է իր դառն, զայրացկոտ կամ սաթիրիք գործերուն մէջ (օրինակ՝ The Card Players)։ Սակայն այդ զայրոյթը միշտ ալ զսպուած է լեզուին ուժականութեամբ։ Հակառակ այս բոլորին, իր բանաստեղծութիւնները սահմանափակ չեն, իր արծարծած հարցերը եթէ քննարկումի ենթարկենք՝ կը տեսնենք, որ իր յոռետեսութիւնը առածային չէ, մահուան հանդէպ իր կեցուածքը կը հակադրուի Հարտիի կեցուածքին, իսկ հոգեկան անդորրը ընկերային եւ բնութեան ծէսերուն մէջ գտնելու իր որոշումը վերջնական է։

Ինչ որ չփոթի կը մատնէ իր քննադատները եւ զանոնք կը մղէ զինք միակտուր յոռետեսութեամբ ամբաստանելու, ստացուած եւ ժառանգուած բոլոր հաւատալիքներու իր մերժումն է, որմէ յառաջացած պարապը Լարքին կը լեցնէ ա'յն հաւատքով, որ իւրաքանչիւր անհատ պէտք է գտնէ եւ զարգացնէ իր ներանձնական աղբիւրները։ Այս մասին ան կ'անդրադառնայ յստակօրէն, երբ Հարտիի քերթուածներուն շուրջ խօսելով՝ կ'ըսէ, թէ հոն «տառապանքի հանդէպ զգայնութիւնն ու այդ տառապանքին տուն տուող պատճառներուն գիտակցութիւնը» կ'առընչուին «հոգեկան բարձրամակարդակ անձնականութեան»։ Ասոր կարեւորագոյն պատճառը, բոլոր ժամանակներու գլխաւոր բացարձակին՝ կրօնքին բացակայութիւնն է, ինչպէս յստակ է իր շատ նշանաւոր բանաստեղծութեան՝ «Ծկեղեցի կը յաճախենք»-ին մէջ, (The Less Deceived հաւաքածոյէն), ուր հարցը Աստուծոյ գոյութեան հաւատալ կամ չհաւատալը չէ, այլ՝ ի՞նչ դնել անոր տեղը։

digitised by A.R.A.R.@

Ինչպէս յաճախ կը խոստովանի, ինք մտահոգուած է ո՛չ թէ կրօնքով, այլ՝ եկեղեցի երթալով։ «Ա՛յդ իրողութեան փորձեցի ակնարկել խորագիրին մէջ, նաեւ՝ նշել կեանքի ա՛յն հանգրուանները, երբ մարդ եկեղեցի կ'երթայ.— ծնունդ, ամուսնութիւն եւ մահ»։

Ուրիշ բանաստեղծութիւններու մէջ Լարքին բնութիւնը կը ներկայացնէ ոչ իբրեւ ինքնանպատակ նկարագրութիւն, այլ՝ մարդկային կեանքի շուրջ մտորումներ կատարելու նպատակով, ինչպէս՝ «Կ'երթանք, կ'երթանք» բանաստեղծութեան մէջ։

Ընկերային պայմաններն ու յարաբերութիւնները, ըստ Լարքինի, մարդը կը մղեն դէպի ինքնակղզիացում։ Միշդ է, որ մարդիկ այս ձեւով կ'ըլլան աւելի ինքնավստահ եւ ինքնաբաւ, սակայն նաեւ կ'իյնան յանձնապաստանութեան թակարդին մէջ։ Այս անհամաձայնութիւնը՝ ընկերային պարտաւորութիւններու եւ անոնցմէ ծնած յուսախաբութիւններուն միջեւ, աւելի սուր տարողութեամբ կը դրսեւորուի իր սիրոյ մտերմիկ բանաստեղծութիւններուն մէջ, ինչպէս՝ Faith Healing *(*The Whitsun Weddings *հաւաքածոյէն)։ Այսպէս՝*

Ամէն մէկուն մէջ կը ննջէ
Զգայնութիւնը՝ կեանքն ապրելու ըստ սիրոյ.
Շատերու մօտ կարողութիւնը՝ սիրելով
Տարբերութիւնը ջնջելու, մեծ մասին մօտ
Կը վերածուի ափսոսանքի, թէ ի՜նչ կրնային ընել,
Եթէ սիրուած ըլլային։

Սէրը, նուազագոյնը տեսականօրէն, իտէալական լուծումն է Լարքինի ներկայացուցած կղզիացումին, այնպիսի՛ կեանքի մը մէջ, ուր անդորրութեան բացարձակ միջոցներ չկան։ Այս համոզումը իրեն համար վստահելի փրկութեան գրաւական չէ, ինչպէս եղած է քսաներորդ դարասկիզբի գրողներուն՝ Bloomsbury Group*ի ակնոցով դիտուած։ Լարքին կը հետախուզէ միջոցը՝ սիրոյ ակնկալութիւններուն եւ սիրոյ շնորհածներուն միջեւ։*

Այն անդորրը, զոր սէրը չի կրնար տալ, Լարքին կը փորձէ գտնել ընկերային նուազ հմայիչ երեւոյթի մը՝ աշխատանքին մէջ։ Այս կէտէն առաջնորդուելով, Լարքինի քննադատները կ'եզրակացնեն, որ իր գժգոհութեան գլխաւոր պատճառը միօրինակութիւնն է, եւ իրենց խօսքը կը հիմնաւորեն Toads *բանաստեղծութեամբ (*The Less Deceived *հաւաքածոյէն)։*

Միշդ է, որ աշխատանքը հմայիչ արարք մը չէ, սակայն անոր կրկնութեամբ է, որ մարդ հեռու կը մնայ մահուան գաղափարէն եւ ինքզինք կը պահէ կեանքի տրոփին մէջ։ Բանաստեղծը կը տագնապի, երբ քննադատներ իր գործերուն համար կ'ըսեն, թէ «տարօրէն միօրինակ եւ ձանձրացուցիչ կեանք մը կը ներկայացնէ»։

«—Կ'ուզէի գիտնալ,— կը պատասխանէ Լարքին,— թէ իրենք ինչպէ՞ս կ'անցընեն իրենց օրերը։ Թերեւս վիշապնե՞ր որսալով»։

Լարքին դժուար արտադրող բանաստեղծ մըն է, տարին երեք բանաստեղծութիւն։ Բայց ան լաւ գիտէ իր տաղանդը օգտագործելու գաղտնիքները եւ կրնայ օգտուիլ իր կարողութիւններէն, գիտակցելով իր սահմանափակումներուն։

Ֆիլիփ Լարքին կը մնայ անգլիական արդի բանաստեղծութեան յետպատերազմեան շրջանի ջինջ ձայնը, որ, յաճախ հաճոյացնող չըլլալով հանդերձ՝ խորաթափանց է եւ մարդկային։

digitised by A.R.A.R.@

ՆԵՐԿԱՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Փոդին ձայնը բարձր, ուժգին, գիս կը ֆաշէ
Միայն պահ մը, դէպ՝ լուսաւոր պատուհանը՝
Պարողները դիտելու, բոլորն ալ վար Քսանիինգէն,
Այտը հրատապ այտին, մեծ ցանկութեամբ շարժելով,
Ցստակօրէն երջանկութեան կշռոյթով։

Կամ թէ այդպէս կը կարծեմ, դիտելով ծուխն ու տապը,
Աղջիկներուն հոյակապ գոյութիւնը. ինչո՞ւ այստեղ դուրսն ըլլալ,
Նաեւ ինչո՞ւ ներսն ըլլալ. սեռ, այո, բայց սեռն ի՞նչ է.
Վստահաբար մտածելը, թէ գոյգերն են, որ կը գտնեն
Երջանկութեան մեծ բաժինը, յստակօրէն սխալ է։

Նուազագոյնն ինծի համար
Այն՝ ինչ կը հմայէ գիս, կոշտապեզու զանգակն է
(արուեստները եթէ կ'ուզէք), որուն ինքնուրոյն ձայնը
Ինքնուրոյնութիւնս կը շեշտէ.
Ան կը խօսի. ես կը լսեմ. ուրիշներն ալ կրնան լսել,
Սակայն ո՛չ իմ փոխարէն եւ ոչ ալ ես՝ իրենց փոխան։ Ուրեմն՝ այսքան
Երջանկութեան առընչութեամբ։ Ուստի՝ ես դուրս կը մնամ,
Հաւատալով ա՛յս բանին, եւ բոլորս կը գոհանանք,
Եթէ անշուշտ ոչ ոք ինքզինք չէր խաբած։ Կամ սուտ խօսած։

ՆՈԹԵՐ

Այս քերթուածին մէջ բանաստեղծը յստակ համոզում մը կը ներկայացնէ. ամբողջական ըլլալու համար, մարդ պարտի մի՛շտ օրգանական կապ պահել ե՛ւ արուեստներուն, ե՛ւ առօրեայ կեանքի հաճոյքներուն հետ։ Հոս զգալի է միջին տարիքի, ամուրի եւ երիտասարդական եռանդէ հեռու մնացած մարդու ձայնը։

Անգլերէն բնագիրը գրուած է բանաստեղծական ուժեղ թերնիֆով եւ խօսակցական պարզ ոճով։

ՏԱՂ ՄԵԿՆՈՒՄՆԵՐՈՒ

Երբեմն կը լսեն, բիւրերորդ անգամ,
Տապանագրի պէս՝
Զգուանքով լքեց ամէն եղած բան
Եւ անհետացաւ.
Եւ ըսողը միշտ վստահ կ'ըլլայ, թէ
Համամիտ ես այս յանդուգն, նախնական
Մաքրող արարքին։

Իսկ ես կը խորհիմ, թէ անոնք ցիշդ են.
Բոլորս կ'ատենք մենք մեր տունները
Եւ հարկադրանքը այնտեղ ըլլալու.
Կ'ատեմ սենեակս,

digitised by A.R.A.R.@

Առարկաները՝ կոտրուած ու հին,
Աղուոր գիրքերը, լաւ անկողինը,
Կեանքս՝ կատարեալ կարգ-կանոնի մէջ.
Ուստի՝ լսելը։

Ան բոլորին դէմ գործադուլ ըրաւ.
Կը խլրտէ գիս եւ կը գրգռէ,
Ինչպէս օրինակ՝ *յետոյ հանուեցաւ,*
Կամ՝ *ա՛ռ քեզի, քած,*
Վստահ եմ, ես ալ կրնամ ընել ա՛յն՝ ինչ որ ինքը ըրաւ.
Իսկ այդ կ՚օգնէ, որ
Մնամ մի՛շտ զգաստ եւ արդիւնաւոր.
Սակայն այսօր իսկ կրնամ հեռանալ,

Այո, դեզերիլ փողոցներուն մէջ,
Եւ կամ կծկուիլ նատու ցոուկին
Բարութեամբ հաստատ,
Եթէ բոլորն այդ չըլլայ այդքան կեղծ,
Մասնատոր եղած Բայլ մը դէպի ետ,
Արարելու նոր նպատակակէտ,
Գիրք, յախնապակի,
Կեանք մը կատարեալ, ծաղրելիօրէն։

ՆՈԹԵՐ

Երազային կեանքի մը եւ առօրեայի սովորութիւններու բախումէն ծը-նած այս բանաստեղծութիւնը հաւանաբար կ՚ակնարկէ այն միջակ գրող-ներուն, որոնց համար արկածախնդրութիւններով լեցուն կեանք մը նա-խապայմանն է որակաւոր գրութիւններու ծնունդին։

Հետաքրքրական է դիմացինին կեցուածքը հասկնալու եւ արդա-րացնելու բանաստեղծին փորձը, բայց աւելի հետաքրքրական եւ համոզիչ կը մնայ ի՛ր եզրակացութիւնը։

ԵԿԵՂԵՑԻ ՑԱՅԱԽԵԼ

Անգամ մը, որ վստահ ըլլամ, թէ ներսը ոչինչ կ՚ընթանայ,
Կը մտնեմ ներս, դուռը ետեւէս կամացուկ մը փակելով։
Եկեղեցի մը եւս՝ նստարաններ, փսիաթ եւ Բար,
Փոքր գիրքեր, ծաղիկներու ցողունններ, Կիրակիէն մնացած,
Արդէն թօշնած. Բանի մը մետաղեայ սպաս.
Վեր՝ սուրբ կողմը՝ փոքր, կոկիկ երգեհոնը
Եւ ձգտուած, հարկատր, չանտեսուելիք լռութիւնը,
Ատուած գիտէ ո՞ր օրերէն Բացխու դրուած։ Գաւխս բաց
Եւ անճարակ ակնածանքով օգակներս[*] կը Բակեմ,

Կը մտնեմ ներս։ Օրհնեալ ջուրի աւազանին կը հպիմ։
Կեցած տեղէս տանիքը նոր կը թուի. մաքրուե՞ր է,
Թէ նորոգուեր։ Ինչ-որ մէկը կրնայ գիտնալ. ես չեմ գիտեր։

digitised by A.R.A.R.@

Գրակալին առջեւ անցած, ամբողջ գլուխ մը սաղմոսներ
Կը կարդամ եւ կը փակեմ.
Շատ աւելի բարձր ձայնով, բան կ'ուզէի,
Արձագանգներն պտոյտ կու գան։ Եւ՝ի դրան
Տետրակը կը ստորագրեմ, իրլանտական վեցբենսնոց մը կը նուիրեմ
Եւ դուրս կու գամ մտմտալով, թէ կենալը չէր արժեր։

Սակայն ահա կեցեր էի։ Յանախ կ'ընեմ
Եւ մի՛շտ ալ այսպէս կորսուած կը մնամ,
Հարց տալով, թէ ի՞նչ փնտռելու եկեր էի. հարց տալով, թէ
Երբ ա՛լ դադրին գործելէ,
Մենք ի՞նչ բանի պիտ' վերածենք.
Եթէ երբեք բանի մը մեծ մատոռ պահենք՝ ցուցադրելու
Մագաղաթները, սրբատուփերը եւ պատկերները անոնց՝
Կդպանքներու տակ պահած եւ մնացեալն ալ
Վարձու տալով անվճար՝ անձրեւներու եւ հօտերու։
Պիտի խուսափի՞նք անոնցմէ՝ իբրեւ տեղէ չարաբաստիկ,

Թէ մութէն ետք կասկածելի կիներ պիտի
Բերեն իրենց գտակները՝ որոշ բարեր շօշափելու.
Քաղցկեղի դէմ դեղաբոյսեր հաւաքելու, թէ պիտի գան
Թելադրուած գիշերներ՝ մեռած մէկը տեսնելու։
Որոշ ուժ մը եւ կամ ուժի ուրիշ ձեւ մը պիտի մնայ
Խաղերու մէջ, խօսքերու մէջ դիպուածական
Նախապաշարումները սակայն, հաւատքին պէս պէտք է մեռնին.
Եւ ի՞նչ պիտի մնայ արդեօք. անհաւատութիւնն երբ երթայ.
Խոտը, սալայատակը մոլախոտով ծածկուած, մորենիներ, որմեր, երկինք,

Ուրուագիծ մը ամէն շաբաթ քիչ մը նուազ ճանաչելի,
Նպատակ մը քիչ մը աւելի տարտամ։ Եւ հարց կու տամ՝
Ո՞վ է արդեօք այն վերջինը, այն ամէնէն վերջինը,
Որ պիտի գայ այցելելու այստեղ իբր ինչ որ էր,
Մէկը խումբէն անոնց, որոնք պիտի գրեն, արձանագրեն, գերանները
գիտնան ինչ են.
Հաւատացեալ մը Ծնունդի, որ կը սպասէ
Զգեստներ եւ նուազախումբ, երգեհոն եւ գմոնենի,
Թէ՞ պիտի ըլլայ արդեօք ներկայացուցիչն իմ։

Եւ ծանձրացած, անտեղեակ, գիտնալով որ տարտղներ է,
Բայց հոգալով այս խաղաձեւ գոյութիւնը,
Աբուարձանին մացառներուն ընդմէջէն, որովհետեւ
Ան կը պահէ անբաժան, երկար ատեն եւ անփոփոխ
Ի՞նչ եղած էր բաժանումով սկիզբէն՝ ամուսնութիւն, ծնունդ եւ մահ,
Եւ իրենց հետ առընչուող մտքերը — որո՞ւ համար պատեր էին
Այս շատ յատուկ կառոյցը. թէեւ գաղափար չունիմ,
Թէ պճնուած, գեղազարդուած մեծ մարագն այս ի՞նչ կ'արժէ,
Բայց կը սիրեմ ըլլալ յաճախ լռութեանը մէջ անոր։

Ծանրակշիռ տունը այս. ծանրակշիռ հողի վրայ,
Որուն մթնոլորտին մէջ, պարտաւորութիւնները մեր կը հանդիպին,

digitised by A.R.A.R.@

Կը գիտակցուին, ճակատագրի անումով կը ներկայացուին.
Իսկ այսքանը չի կրնար անպէտք ըլլալ,
Որովհետեւ պիտի ըլլայ մի՛շտ այն մէկը, որ զարմանքով
Պիտի գտնէ ինքն իր մէջ անօթութիւնը լրջութեան
Եւ անոր հետ պիտի հակի դէպի տեղերն այս,
Որոնք, ինչպէս լաւ էր, յարմար էին իմաստութիւն ամբարելու,
Թերեւս միայն անոր համար, որ շուրջն այնքան թաղուածներ կան։

(*) Հնծանիւ ֆշեղու ընթացքին գործածուող այն օղակները, որոնք տաքատին վարի մասը կամփոփեն։

ՍԹԻՎԻ ՍՄԻԹ

(1902-1978)

1969ին Սթիվի Սմիթ կը տիրանայ Queen's Golden Medal for Poetry *տիտղոսին։ Ունի խիստ ինքնուրոյն ոճ, զոր կապկելը եւ կամ անոր հետեւիլը շատ դժուար է։*

Ս. Սմիթի հրատարակած առաջին գիրքէն իսկ (A Good Time was Hard by All – 1937) *ակնյայտ էր, որ անոր բանաստեղծութիւնը յագեցած է զարմանալի արտառոցութեամբ եւ հմայքով։ Ան մեծ ճարտարութեամբ խորք ու բովանդակութիւն կու տայ տխմար կամ զուարճալի թուացող երեւոյթներուն, կրնայ ղեկավարել պարզամտութիւններու շարք մը, որոնց յաջորդականութիւնը սակայն տագնապեցնող զուարճութիւն կը պատճառէ կամ զուարթ տագնապի մը կը մատնէ ընթերցողը։ Հակառակ երեւութական պարզունակութեան եւ զուարթութեան, իր տողատակերուն մէջ կարելի է զգալ դառն իրականութիւններու պղպպատեալ շեղը։*

Իր ամբողջ կեանքի ընթացքին Սթիվի զարմանալի յարաբերութիւն մը ունեցած է քրիստոնէութեան հետ, յաճախ տարուբերելով սիրոյ եւ ատելութեան միջեւ։ Երբ կը կարդանք իր ա՛յն գործերը, ուր կրօնական հարցն է գերիշխողը, կարծես կը յաջողինք զգալ, թէ իր լռութեան խորը թաքնուած վախ մը կայ, զոր կը փորձէ փարատել զուարճութեամբ։ Օրինակ, Was he Married? *խորագրուած գործը ցայտուն կը դարձնէ Յիսուսի անձին մէջ գտնուող եւ հեռու մարդոց հետ առընչութիւն չունեցող անմարդկային եւ սնապարծ գիծ մը։ Բանաստեղծութեան վերջին վեց տողերուն մէջ կարելի է զգալ, որ հեղինակը թէեւ համաձայն է քրիստոնէութեան մարդկային սկզբունքներուն, բայց չի թաքներ քրիստոնէութեան աստուածաբանական գաղափարները։ Այս հերձուածային կեցուածքը տանելի կը դառնայ բանաստեղծութեան երգիծական շիտին, արտառոցութեան եւ երկիւղութեան թարեհամբոյր ոճին շնորհիւ։ Գործը զէշ կատակի տպաւորութիւն կը ձգէ, բայց խորապէս ապրուած է եւ ունի լուրջ մօտեցում։*

Իր կեանքին շուրջ մանրամասնութիւններ չկան։ Երեք տարեկանին որբանալէ ետք, երկար տարիներ ապրած է տարիքոտ մօրաքրոջ մը հետ, որուն մասին հետագային գրեր է Novel on Yellow Paper (1936) *վէպը։*

Անգլիական արդի բանաստեղծութեան թերեւս ամէնէն տարօրինակ եւ դժուար դասակարգելի գրողն է Սթիվի Սմիթ։ Իր ինքնուրոյնութենէն

digitised by A.R.A.R.@

գատ (որ առաջին նախապայմանն է իսկական բանաստեղծի մը), իր գործին գլխաւոր յատկանիշը երգիծանքի եւ քնքշութեան խառնուրդն է։ Իր լաւագոյն գործերուն մէջ, ան մեզի կը ներկայանայ պարիկի մը պէս։ Թէեւ մենք կը զգանք, որ այս բարի պարիկը ժամանակին շատ յաջող վհուկ մը եղած է։ Թերեւս ասիկա կարեւոր յատկանիշ մըն է՝ քսաներորդ դարու կին բանաստեղծի մը համար։

ՊՍԱԿՈՒԱԾ ԷՐ

Պսակուա՞ծ էր եւ փորձե՞ր էր
Պահել գիրենք, օրերուն հետ համակրանքով նուազող.
Զաւակները եւ կինը։

Ո՛չ, տառապած չէր բնաւ
Հարուածով մը այսպիսի։

Զգացե՞ր էր անանպատակ, տկար, ցրիւ,
Զցանկացուած բոլորէն եւ խոչընդոտ բոլորին։

Իր օրացրէն վճռական էր,
Իր կոչումը ուժեղ էր եւ իր միտքը՝ առլցուն։

Արդեօք սիրե՞ր էր ուժգին,
Բայց սիրածներն օր մը մեռած գտնելով։

Ան չէր սիրած մարդու յատուկ ձեւերով։

Հարց տուե՞ր էր, թէ դեռ որքա՞ն տեւէ պիտի,
Կամ մտածե՞ր, թէ կարող է Մահուան վրայ, իբրեւ վերջի, վստահիլ։

Այսպէս բնաւ չէր զգացեր.
Երանելի ապագայ մը ունէր արդէն։

Բնաւ չէ՞ր զգացեր ուժգին
Ցաւ, սխալած ըլլալուն։

Ան սխալ չէր, ան միշտ ճիշդ էր.
Տառապեր էր ուրիշներուն եւ ոչ թէ իր սխալներով։

Բայց տառապանք չկայ այնքան, որքան ցաւը սխալելու,
Պարզ պատճառովն ստորակայ ըլլալու։

Ստորակայ չէր անիկա,
Այլ՝ գերակայ։

Ուստի գիտէ՞ր, որ զօրութիւնը յոռի է, բայց թէ պէտք է կառավարել։

Իր մտքերը տարբեր էին։

digitised by A.R.A.R.@

Ընկերներու պէտք չէ՞ր զգար։ Աւելի վատ,
Չէ՞ր մտածեր՝ յանցանքն իրն է, ոչ թէ անոնց։

Ընկերներու պէտք չէր զգար.
Հետեւորդներ ունէր ան, իր պէտքերուն կաղապարուած։

Զգացե՞ր էր կաշկանդուած երբեմն, բայց ստիպուեր՝ հաւասարով
դուրս գալու։

Ինչպէ՞ս կրնար այդպէս զգալ։ Թագաւորն էր Երկինքներու։

...Ցանկարծական պայծառութիւն գտնել շուրջը,
Քմահաճոյքը եւ կամ մեղք մը յաղթահարած ըլլալուն։

Կ'ըսեմ ձեզի, մեղանչած չէր։

Էակնե՞րն են լոկ մարդկային, որ վերն յիշուած
Ցուզումներէն կը տառապին եւ կը սորվին,
Թէ բարտքումն անյուսութեան երգիծանքով չի կրնար գալ։

Այո՛, անոնք այսպէս կը զգան,
Որովհետեւ շփոթահար են այնքան։

Ցանոնք բոլորն ալ պէտք է շքանշանով պատուել.
Անկարող է Աստուած զանիկա կրել։

Աստուած Մարդուն պուպրիկն է, ով դուն յիմար,
Ան զինք այսպէս ստեղծեր է նպատակի մը համար։

Ան կրնար զինք ստեղծել շատ աւելի վատաբար։

Եւ ըրեր է անցեալին մէջ շատ յաճախ։

Սիրոյ աստուած մը ընտրել, ինչպէս ըրեր է եւ կ'ընէ,
Փո՞քր արարք է ուրեմն։

Այո՛, ա՛յդ է։

Աւելի մե՞ծ պիտի ըլլայ, երբ մարդիկը
Սիրեն սէրը, ատելութիւնը ատեն, բայց եւ զանոնք չպաշտեն։

Պիտի ըլլա՛յ աւելի մեծ։

ՆՈԹԵՐ

Հեղինակին քերթողութեան մասին գրուած սեղմ տողերը լաւագոյնս կը ներկայացնեն այս բանաստեղծութիւնը։

digitised by A.R.A.R.@

ԽԵՂԴՈՒԻԼ

Ոչ ոք լսեց զինք, մարդը մեռած,
Բայց ան մնաց հեծելով պառկած.
Հեռու էի շատ աւելի, բան կարծեցիր
Եւ ձեռք չէի շարժեր, այլ կը խեղդուէի։

Խեղճ մարդ, որ կը սիրէր յաճախ զուարճանալ
Եւ մեռած է արդէն հիմա.
Շատ պաղ պէտք է եղած ըլլար, որ իր սէրը չէր դիմացած,
Ըսին իրենք։

Օ՜ ոչ, ոչ, ո՛չ, միշտ ալ պաղ էր
(մեռած մարդը դեռ պառկեր էր հեծելով).
Շատ աւելի հեռու էի ամբողջ կեանքիս ընթացքին
Եւ ձեռք չէի շարժեր, այլ կը խեղդուէի։

ՆՈԹԵՐ

Ողբերգական է խորքը զուարթ թուացող այս քերթուածին։ Շատ յաճախ մենք ալ չենք զգար ուրիշի մը ցաւը կամ այդ ցաւին աղաղակը կը չփոթենք ուրախութեան կանչի հետ։

☆ ☆ ☆

Ցիսունական եւ վաթսունական թուականներու տասնամեակները գրականօրէն զիրար կը շարունակեն, զիրար կ'ամբողջացնեն, որովհետեւ վաթսունական թուականներու գլխաւոր դէմքերը, ինչպէս՝ Ս. Պէքէթ, Հ. Բինթրը կամ Ֆ. Լարքին, յիսունական թուականներուն է, որ հրապարակ իջան եւ յաջորդ տասնամեակին հասան իրենց ասպարէզի ծաղկումին։ Ընկերային առումով սակայն, վաթսունական թուականները ունին իրենց յատուկ դիմագիծը եւ, յար եւ նման քսանական թուականներուն՝ բեմը լայն բացին զանազան նորութիւններու առջեւ։ Ժողովրդական զանգուածները կը հակէին դէպի համայնավարութիւն, աւելի ուշ՝ վերադառնալու համար Պահպանողական կուսակցութեան։ Նոր համալսարաններ կը բացուէին եւ համակարգիչը իր իշխանութիւնը կը տարածէր զանազան մարզերու վրայ։ Մ. Նահանգներ լուսնի վրայ առաջին էջքը կը կատարէր եւ սեռային ազատութիւնը սանձարձակութեան կը հասնէր։ Տասնամեակը կը փակուէր Տէյվիտ Հոքնիի նկարներու, գծանկարներու եւ տպագրներու Լոնտոնի մէջ ցուցադրութեամբ, ցուցադրութիւն մը՝ ուր արուեստը կը փլէր իր պատերը, բացուելու համար դէպի սահման եւ չափանիշ չճանչցող բերիքորիաներ։ Նոյն շրջանին, կարգ մը մարդիկ կայծակի արագութեամբ մեծահարուստներ կամ թշուառներ կը դառնային, առանց նուազագոյն չափով նկատի առնելու ուշիմութեան եւ աշխատանքի մարդկային կարողութիւնը։ Ահա այս վիճակէն է, որ ծնունդ առաւ եւ ուռճացաւ կեանքի անիմաստութեան գաղափարը։

digitised by A.R.A.R.@

Բնական է, որ ընկերային այս ախտերը իրենց անդրադարձը ունենային նոյն շրջանի գրականութեան վրայ, ուր մշակուեցան համապատասխան վիճակներ՝ շնական, հեգնական, խուսափողական կամ ոչնչապաշտական ոճերով։

ԹԷՏ ՀԻՒԿՋ
(1930)

Վաթսունական թուականներու բանաստեղծութեան մէջ տիրական դէմք եղաւ 1930ին ծնած Թէտ Հիւկզ, որուն գործերը ցոյց տուին, թէ այդ շրջանին անճաշակութիւն պիտի ըլլար բարեկիրթ ոճով եւ կեղծիքով բանաստեղծութիւններ գրելը։ Իր խոպոտ ու կոշտ «ձայն»ն ու գրգռիչ կորովը կու գային փոխարինելու Շարժում խմբակի բարեկիրթ ոճը, իր անընկճելի ուժականութիւնն ու բնութեան անտաշութիւնը ներկայացնելու միտումը նախորդներուն մտերմութիւնը կը փոխարինէին արուարձանային գինետուներու, կառատուներու եւ հիւանդանոցներու հետ։

Իր առաջին գիրքէն իսկ (The Hawk in the Rain – 1957) *Հիւկզ կրցաւ ապահովել իր տեղը անգլիական արդի գրականութեան մէջ։*

Թէտ Հիւկզ ծնած է 1930ին, Եորքշայրի մօտ, Միթոլմրոյտ շրջանը։ Ուսումը ստացած է Քամպրիճի մէջ, նախ իբրեւ գրականութեան ուսանող, ապա՝ փոխած է ճիւղը եւ վկայուած հնագիտութեան եւ մարդաբանութեան մէջ։ 1954ին, համալսարանէն վկայուելէ ետք, աշխատած է իբրեւ պարտիզպան, գիշերապահ եւ շարժապատկերի ժապաւէններու սփիւռիոյի մէջ՝ իբրեւ ընթերցող։ Ուսանողութեան շրջանին կը հանդիպի ամերիկացի բանաստեղծուհի Սիլվիա Փլաթի, որուն հետ կ'ամուսնանայ 1956ին։ Այս ամուսնութիւնը իր բարերար անդրադարձը կ'ունենայ երկուքին ալ գործին վրայ։

Հրատարակած է Lupercal (1960), Animal Poems (1967), Woodwo (1967), Crow (1970), Crow Wakes (1971), Eat Crow (1972), Season Songs (1974), Gaudette (1977), Cave Birds (1978), *ինչպէս նաեւ մանկական բանաստեղծութեանց երկու հաւաքածոյ՝* Meet My Folks! (1961) *եւ* Earth Owl and Others Moon People (1963)։

Ունի նաեւ քննադատական էջեր, որոնց գլխաւորները եղած են պաշտպանողական թեղեր, նուիրուած՝ Քէյթ Տուկլասի, որուն Selected Poems (1968) *հաւաքածոն խմբագրած է 1964ին, Էմիլի Տիքընսընի* Selected Poems *ժողովածուն՝ 1968ին, իսկ եուկոսլաւ բանաստեղծ Վասքօ Փոփայի հատընտիրը՝ 1967ին։ Տանիէլ Ուիսպերթի հետ խմբագրած է* Modern Poetry in Translation *թերթը, որ 1960ական թուականներուն թարգմանական բանաստեղծութիւնը հունաւորեց։*

Թէտ Հիւկզի ամբողջ գործը ենթարկուած է երկու գլխաւոր ազդեցութիւններու. անոնց առաջինը Համաշխարհային Առաջին պատերազմն է, աւերի եւ մարդկային հիմնական չափանիշներու խախտումի ժառանգութեամբ, իսկ երկրորդը՝ բնութեան եւ կենդանաբանական աշխարհով հմայուելու իր ծայրայեղ հակումը։

digitised by A.R.A.R.@

Այս երկու կենսափորձերուն մէջէն բանաստեղծը կը բացայայտէ մարդկութեան անկարողութիւնը, հին չափանիշներու սնանկութիւնը եւ հին ձեւերու կամ ոճերու ժամանակավրէպութիւնը։ Կենդանական աշխարհի բրտութիւնն է տիրապետողը իր գործին մէջ։ «Թէտ Հիւկզ պատերազմը չէ, որ կը սիրէ, այլ՝ յաղթողը», ըսած է քննադատ մը։

Իր սկզբնական գործը կը կրէ ազդեցութիւններ, ինչպէս՝ Հոփքինզէ, Տիլըն Թոմըսէ եւ Իլերթէ, բայց մա՛նաւանդ՝ Տ. Հ. Լորընսէ։ Հիւկզի ողջ վաստակին մէջ կը թեւածէ ուուտզուրթեան առանձնութեան եւ ընտրութիւն ընելու անկարողութեան զգացումը։ Արարածները, բոլորն ալ, գերի են իրենց բնազդներուն եւ յաճախ կը ներկայանան այդ բնազդներով շարժող մեքենական կառոյցներու նման։ Հակառակ անոր, որ ան կենդանիներուն նուիրուած մեծ թիւով քերթուածներ ունի, սակայն բնաւ կենդանիներու բանաստեղծ մը չէ, ինչպէս որ է Տ. Հ. Լորընս։ Իր գործերուն մէջ ան կը շեշտէ ո՛չ թէ կենդանիներուն կեղծ նմանութիւնները մարդոց հետ, այլ՝ անոնց տարբերութիւնները։ Իրեն համար կենդանիները միթեր ներկայացնելու, խորհրդանշաններ ստեղծելու ազդակներ են, բանաստեղծական պատրանքի միջոցներ։ Տրուած դէպքերուն ճշգրիտ եւ ամբողջական չըլլալն է, որ կենդանիները կը դարձնէ առանձնայատուկ եւ տպաւորիչ։ Իր լաւագոյն վիճակին մէջ, բանաստեղծը կը ներկայացնէ կեղծ կամ շինծու էակներ, ինչպէս Crow-ն կամ Woodwo-ն։ Հիւկզի տաղանդը կը դրսեւորուի իրական եւ մղձաւանջային աշխարհներու հաւասարակշռումին մէջ։

Հիւկզի ամենանշանաւոր գործը Crow-ն կը մնայ, շարք մը՝ որ միաժամանակ պատճառ հանդիսացաւ մեծ համակրանքի եւ մեծ հակակրանքի։ Հիւկզի ագռաւը առասպելական վայրագ գոյութիւն մըն է, յաճախ գծանկարի մը չափանիշներով, որուն կարողութիւնը կրնայ հիանալի ըլլալ եւ որ քաղաքակրթական բոլոր չափանիշներուն հանդէպ իր մերժումը կը մարմնաւորէ։

1963ին, ամերիկացի նկարիչ Լէոնարտ Պասքին կը խնդրէ Թէտ Հիւկզէն, որ իր գծած մարդակերպ ագռաւին մասին բանաստեղծութիւն մը գրէ։ Բանաստեղծը կ'ընդառաջէ նկարիչին բաղձանքին եւ կը գրէ իր ամէնէն յաջող քերթուածներէն մէկը։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ՝ ԱՐԳԱՆԴԻ ԴՐԱՆ

Ո՞վ է տէրն այս անուշ, տխեղծ ուտիերուն։ Մահը։
Ո՞վ է տէրը այս ծամածուռ ու կնճռոտ դէմքին։ Մահը։
Ո՞վ է տէրն այս հազիւ շնչող թոքերուն։ Մահը։
Ո՞վ է տէրն այս մկանների հիւսուածքին։ Մահը։
Ո՞վ է տէրը ադիքներուն անճարելի։ Մահը։
Ո՞վ է տէրն այս կասկածելի ուղեղին։ Մահը։
Ափեան եռսքին այս անգուսպ։ Մահը։
Եւ աչքերուն այս տկար։ Մահը։
Եւ այս լեզուին չարախօս։ Մահը։
Եր երբեմն արքունութեան։ Մահը։

Տրուա՞ծ, գողցուա՞ծ, թէ փոխ առնուած։
Անշուշտ վերջինը։

digitised by A.R.A.R.@

Ո՞վ է տէրը անձրեւոտ եւ քարոտ հողին։ Մահը։
Տիեզերքի՞ն։ Մահը։
Ո՞վ է ուժեղը յոյսէն աւելի։ Մահը։
Ո՞վ է ուժեղը կամքէն աւելի։ Մահը։
Աւելի ուժեղ, քան սէրը ինքնին։ Մահը։
Աւելի ուժեղ, քան կեանքը ինքնին։ Մահը։

Բայց ո՞վ է ուժեղ Մահէն աւելի։
Փաստօրէն՝ ի՛նքս։
Անցի՛ր ուրեմն։

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՒԵՇՏ

Այր ու կնոջ մարմինները անհոգի
Փռուեր էին ծաղիկներուն եղեմի,
Սառ նայուածքով, բերանաբաց։
Ատուած խոկաց։

Հարցը մեծ էր. յոգնութենէն բնացաւ։

Ծիծաղեցաւ Ագռաւը։
Խածաւ որդը, Ատծոյ միածին որդին
Եւ բաժնեց զայն գաղարող երկու կէսի։

Պուչին կէսը խցկեց այրին մարմնէն ներս,
Դուրս ձգելով վիրաւոր մասը անոր։

Գլխուն մասը, նախ զլուխէն, կնոջ մարմնին զետեղեց,
Ուր շատ խորունկ եւ մինչեւ վեր սողաց ան, մինչեւ հասաւ աչքերուն,
Նայեցաւ դուրս, կանչեց կէսն իր վիրաւոր,
Որ շուտ, շատ շուտ զայ միանայ,
Որովհետեւ, օ՜, խոր ցաւ էր։

Երբոր այրը արթնցաւ, զգաց որ դէպի կինը կը հրուէր։
Երբոր կինը արթնցաւ, տեսաւ այրը, որ իրեն կու գար։
Բայց երկուքն ալ չգիտցան, թէ ի՞նչ եղեր էր։

Ատուած շարունակեց իր քունը։

Ագռաւը շարունակեց ծիծաղը։

ՆՈԹԵՐ

Այս երկու քերթուածները սեղմ գիծերով ներկայացուած են ներածական տողերուն մէջ։

digitised by A.R.A.R.@

ՄՏԱԾՈՒՄ ԱՂՈՒԷՍՆ

Կ'երեւակայեմ կէս գիշերային անտառին պահն այս.
Ուրիշ բան մըն է, որ արթուն է դեռ,
Մինակութեան հետ այդ ժամացոյցին
Եւ պարապ էջին, ուր մատներս իմ ահա կը շարժին։

Պատուհանէն դուրս աստղեր չեմ տեսներ.
Ուրիշ բան մըն է, որ ամեայ մօտ,
Թէեւ մութին մէջ շատ ամեայ խոր,
Առանձնութենէն ներս մութ կը գործէ։

Պաղ եւ քնքշօրէն, մութ ձիւնը ինչպէս,
Ադուէս մը դունչով ոտին կը դպնայ,
Զոյգ մը աչքերը շարքը կը չափեն,
Որ հիմա, հիմա եւ կրկին հիմա

Մօտ ոտնահետքեր ձիւնին կը ձգէ,
Ծառերուն միջեւ եւ զգուշութեամբ
Կաղ շուք մը կ'անցնի կոնդերուն մօտէն՝
Կերպը մարմնի մը յանդուգն այնքան

Գալու բացութեան, աչք մը կ'երերայ
Լայնցող, խորացող կանաչութիւն մը
Եւ պայծառօրէն, կեդրոնացումով
Կու գայ իր գործին,

Մինչեւ գարշ ու տաք ժահովն աղուէսի
Գլխու մութ փոսէն ներս մուտք կը գործէ։
Պատուհանն անաստղ է։ Ոռպէները կ'անցնին։
Էջը տպուած է։

ՆՈԹԵՐ

Կենդանիներու նուիրուած առաջին քերթուածը, զոր բանաստեղծը գրեր է եւ ուր կը խօսի բանաստեղծութիւն գրելու կամ, ամեայ ճիշդ՝ մուսայէ մը այցելութիւն ստանալու մասին։ Թէտ Հիւկգի պարագային բնական է, որ մուսան աղուէսի կերպարանք հագնի։

☆ ☆ ☆

Գրականութեան պատմութեան մէջ կան շրջաններ, երբ այդ պատմութեան հետագայ ուղին որոշող կարեւոր շարժումներ կամ երեւոյթներ տեղի կ'ունենան, ծանծաղացումի երկար շրջանէ մը ետք, ինչպէս որ էր 60ական եւ 70ական թուականներուն, երբ կը թուէր, թէ ոչինչ տեղի կ'ունենար, գոնէ Անգլիոյ պարագային, երբ բանաստեղծութիւնը, հակառակ թատրոնի եւ վէպի ծաղկումին, կ'ապրէր անկումի շրջան մը։

digitised by A.R.A.R.@

Այս շրջանին էր, որ նախ՝ Իրլանտայի եւ աւելի ուշ՝ Անգլիոյ մէջ հրապարակ իջան երիտասարդ բանաստեղծներ, որոնց բանաստեղծական երեւակայութիւնն ու բառեր գործածելու եղանակը շատ աւելի յանդուգն էին, քան նախորդ սերունդինը։ Հակառակ անհատ տաղանդներու երեւումին, կը զգացուէր պակասը բանաստեղծական ուղղութեան մը կամ շարժումի մը։

Բանաստեղծներու այս նոր սերունդը, ազատ ըլլալով յետ-պատերազմեան շրջանի ճնշումներէն, ինչպէս նաեւ չհակադրուելով իր շրջանի մշակութային սպառնալիքներուն, հատաւ գրական այնպիսի՛ նորարարութիւններու, որ Արդիապաշտ (Modernist) *շարժումը կը լիշեցնէ։ Այս մէկը չի նշանակեր, թէ անոնց արուեստը անհոգի է կամ հեռու բարոյական սկզբունքներէ։ Անոնք պարզապէս փոխած էին բանաստեղծ մարդու հասկացողութիւնը, պարզ, հասկցող դրացիի կերպարէն անցնելով մարդաբանի, ներխուժողի կամ աքսորականի կերպարին (կարգ մը բանաստեղծներ իրապէ՛ս աքսորականներ էին)։ Դիտանկիւնի փոփոխութիւնը կարգ մը բանաստեղծներու մօտ ինքզինք կը մատնէ բանաստեղծական փայլատակումներով, պարզ եւ խօսակցական լեզուի փոխարէն՝ ուրիշներու մօտ կը շեշտուի պատմողական տարրը, հոգեկան բարդ վիճակներու մանրամասն նկարագրութիւնը։ Այս բոլորին վրայ կ'ինչէ յարաբերականութեան օրէնքը, որ արդի բանաստեղծութիւնը բաւական հեռու կը տանի փորձառականութենէն, որ 1950ական թուականներուն գրական կեանքի ցայտուն գիծերէն մէկը յաջողեցաւ դառնալ՝ շնորհիւ Ֆ. Լարքինի հետեւողական ճիգերուն։*

Այս նոր բանաստեղծութիւնը յաճախ բաց կամ անաւարտ է, երբեմն ա՛յն աստիճան, որ կարելի չէ հասկնալ ըսել ուզուածը կամ գործին ամբողջ ներքին կառոյցը։ Այս բանաստեղծներուն համար երեւակայութիւնը չարի աղբիւր չէ, ինչպէս որ էր նախորդներուն պարագային (Հիթլէր, Մուսոլինի, նացի եւ խորհրդային ճամբարներ), այլ՝ վերանորոգման ու քնքշութեան հիմնական ու ներուժ աղբիւր մը։

Բանաստեղծական այս ուղիին մէջ մեծ է խրամատը բանաստեղծին եւ իր տիպարին կամ նիւթին միջեւ։ Հոս բանաստեղծը իր աշխարհին բնակիչը չէ, որքան դէտը այդ աշխարհին. զոհը չէ, այլ՝ արարքը ուսումնասիրողը, պատմողն է եւ ոչ թէ խոստովանողը։

ՍԻՄՊՍ ՀԷՆԻ

(1939)

Սիմպս Հէնի ծնած է 1939ին, Տէրի։ Համալսարանական ուսումը ստացած է Պելֆասթի Քուինզ համալսարանին մէջ, ուր աւելի ուշ դասախօս կը կարգուի։ Մէկ տարի դասախօսի պաշտօն վարած է Գալիֆորնիոյ Պըրքլի համալսարանին մէջ։ Այժմ կ'ապրի Տապլին։

Հրատարակած է Death of a Normalist (1966), Door into the Dark (1969), Wintering Out (1972), North (1975), Field Work (1979), Preoccupations: Selected Prose 1968-1978 (1980)։

digitised by A.R.A.R.@

Ընդհանրապէս եւ մա՛նաւանդ հիմնուելով Հէնիի յայտարարութիւններուն վրայ, այս «Երիցէն ետք եկող իրլանտացի գլխաւոր բանաստեղծին» գործը կը դիտուի իբրեւ պարզ եւ անմիջական։ Իրողութիւնը սակայն այն է, որ Հէնիի բանաստեղծութիւնը հեռու է պարզ ըլլալէ եւ զայն ամբողջականօրէն հասկնալու համար, պէտք է նախ հասկնալ նախնիներու, ազգայնութեան, կրօնքի, պատմութեան եւ քաղաքականութեան այն բարդ հիւսուածքը, որ կը գտնուի իր գործին ետին։

Մնած եւ ապրած է Իրլանտայի հիւսիսը։ Առաջին երեւումը եւ ճանաչումը եղած է Լոնտոնի մէջ։ Պատկանած է կաթողիկէ համայնքին, փոքրամասնութիւն մը, որ թէեւ պաշտօնապէս կը պատկանի Մեծն Բրիտանիոյ թագաւորութեան, սակայն միշտ ալ ձգտած է անկախութեան։ Իրլանտական եւ անգլիական գրականութենէն զատ (Երիցց, Ճոյս, Ուուտզուրթ, Հոփքինզ), Հէնի զգացած է նաեւ Ուլսթրը գրականութիւնը, ուր տեղ գրուած են Լուիս Մէքնիս, Ճոն Մոնթակ, Մայքըլ Լոնկլի եւ Տերէք Մահոն։

Այս բոլոր երկուութիւններն ու տարբերութիւնները երեւան կը հանեն Հէնիի զանազան յատկանիշները, զորս կարելի չէ զետեղել անկլօ-իրլանտական եզրին մէջ։

Թերեւս, իր արտաքին ձեւին մէջ, Հէնին կարելի է նկատել վիպապաշտ բանաստեղծ մը, որ սակայն 50ականի եւ 60ականի ցայտուն դէպքերէն ետք գալով (Ֆ. Լարքին, Թ. Հիւկզ)՝ կը բացուի դէպի նոր եւ անկախ հորիզոններ։

Հէնիի հմայքը, լեզուով եւ անոր անվերջանալի կարելիութիւններով, զինք կը դարձնէ արդի մշակոյթի կարեւոր մէկ տարրը, ուր լեզուն սոսկական հաղորդակցութեան միջնորդ մը չէ հեղինակին ու ընթերցողին միջեւ, այլ կը գործէ իբրեւ անկախ տարր։ Հէնիի համոզումը, թէ բանաստեղծը ո՛չ թէ կ'իշխէ լեզուին, այլ կը յանձնուի անոր, կրնայ զգացական ներշնչանք թուիլ, սակայն նաեւ շատ մօտ կը հնչէ արդի կառուցապաշտ եզրերուն, ուր կ'ըսուի, թէ լեզուն է, որ կը գործէ հեղինակին ընդմէջէն եւ ոչ թէ հեղինակը՝ լեզուին ընդմէջէն։

ՊԱՏԻԺ

Կը զգամ խեղդուողին
ձգուածքը վզին, ծոծրակին վրայ,
հովն՝ որ կը խաղայ
մերկ մարմնի առջին։

Հովն որ կը փչէ եւ պտուկները
սաթ ուլունքներու կը վերածէ,
շարժի կը դնէ դիւրաբեկ սարքը
իր մկանոներուն։

Ես կրնամ տեսնել խեղդուած մարմինը
ճահիճներուն մէջ,
ծանրաբարշ քարը,
ծփացող ճիւղերն ու ոստերը։

digitised by A.R.A.R.@

Ամոնց ներքեւ նախ ծառ մը էր
թերատ, չորցած,
որ հանուեր էր
կաղնէ-ոսկոր, ուղեղ-տակառ.

ածիլուած գլուխը՝
սեւցած գարիի ծիղի մը նման,
իր աչքակապը՝ աղտոտ վիրակապ,
իր խեղդակապը՝ մատանի մը լոկ,

պահելու համար
յիշատակները սիրոյ։
Փոքրիկ դաւանանուհի,
նախքան որ քեզ պատժէին,

խարտեաշ էիր ու վատ սնած,
կուպրի նման քու թոխ դէմքդ
գեղեցիկ էր։
Դուն Բաւուքեան նոխազ մը խեղճ։

Կարծես արդէն կը սիրեմ քեզ,
բայց լաւ գիտեմ,
որ լռութեան քարերն պիտի նետէի։
Արուեստագէտ ես դէտքն եմ

Քու ուղեղիդ ցուցադրուած
եւ սեւացած սանտրերուն,
մկանոներուդ հիւսուածքին,
եւ համրուած ոսկորներուդ։

Ես՝ որ անխօս կեցեր էի,
երբ դաւանան բոյրերդ քու
կուպրի բոզերով ծածկուած
Երկաթուղագծին մօտ կ'ողբային,

եւ չտեսնել կը ձեւացնէի
թշնամանքով մշակուած.
կը հասկնամ վրէժը այս՝
տոհմիկ, ճշգրիտ եւ գաղտնի։

ՆՈՏԵՐ

1969ին հրատարակուած Փ. Վ. Կլոպի գիրքը՝ The Bog People, *մեծ ազդեցութիւն գործած է Հէնիի վրայ, իր մանրամասն պրուածքով եւ սքանչելի պատկերներով։ Հոն կը խօսուի դանիական ճահիճներուն մէջ գտնուած անեղծ մարմիններուն մասին (երկաթեայ դարերէն)։ Այս ազդեցութեան արդիւնքն են Հէնիի նշանաւոր քերթուածները՝* The Bog People *շարքը, որուն բաժինները Կլոպի գիրքէն առնուած խորագիրներ կը կրեն,-* The Tollund Man, Nerthus, The Grauballe Man, Come to the Bower, Bog Queen, Punishment, Strange Fruit։

digitised by A.R.A.R.@

Հէնրի համար առընչութիւն մը կայ երկաթեայ դարերու «մայր երկիր» յաստուածոյ նուիրուած զոհաբերութիւններուն եւ Հիւսիսային Իրլանտայի տակնուվրայ եւ բիրտ պատմութեան միջեւ, ինչպէս յստակ կ'երեւի The Tollund Man *քերթուածին երեք բաժիններուն եւ* Punishment *քերթուածին մէջ։ Այս վերջինին մէջ կը նկարագրուի դաւաճանութեան ամբաստանութեամբ սպաննուած կնոջ մը մարմինը. 10րդ քառատողին մէջ ակնարկութիւն կայ երեք աղջիկներու, որոնք կուպրով ծեփուած են՝ իբրեւ պատիժ Իրլանտայի մէջ լրտեսութիւն ըրած ըլլալու յանցանքին։ Յստակ է հեղինակին կեցուածքը։*

Այս քերթուածներէն երկուքը կ'երեւին Wintering Out *անուն եւ վեցը՝* North *խորագրեալ ժողովածուներուն մէջ։*

ԹՈՄԱՍ ՍԹԷՐՆԶ ԻԼԻԷԹ

(1888 - 1965)

Ծնած է 1888ին, Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ մեռած՝ 1965ին, Անգլիոյ մէջ, իբրեւ այդ երկրին քաղաքացին։

Եղած է խմբագիրը The Criterion *պարբերաթերթին եւ տնօրէնը՝* Faber and Faber *հրատարակչատան (1925էն մինչեւ մահը)։ Հսկայ ազդեցութիւն ունեցած է յաջորդ սերունդներուն վրայ՝ թէ՛ իբրեւ նորարար բանաստեղծ եւ թէ իբր քննադատ։*

Իլիէթի իւրաքանչիւր գործին մասին գրուած է այդ գործին տասնապատիկ ծաւալը ունեցող գրականութիւն մը։

Տասնեակ մը գործերու մէջ Իլիէթ կը ներկայանայ իբրեւ հմուտ լեզուագէտ մը (անգլերէնին կողքին տիրապետած է յունարէնի, լատիներէնի, սանսքրիտերէնի, իտալերէնի, ֆրանսերէնի եւ գերմաներէնի), որուն բանաստեղծութիւնը արդիւնքն է հեղինակին լեզուական եւ ոճային խոր հմտութեան, մտածումի խորութեան եւ մարդու ճակատագրին ու գոյութեան հանդէպ ունեցած իր լուրջ մտահոգութեան։

Գրական, քաղաքական եւ կրօնական աւանդապաշտութեան (A Royalist in Politics, a Classicist in Literature and an Anglo-catholic in Religion – 1928) *խանդավառ արտայայտիչը հանդիսացող այս բանաստեղծը, իր գրական եւ ընկերային նորարարութեամբ՝ շատ հեռու է աւանդապաշտութենէն։*

Իլիէթի բանաստեղծութիւնը հասկնալու համար, պէտք է ի մտի ունենալ երկու կարեւոր ազդակներ. առաջին՝ իր բանաստեղծութիւնը բարդ եւ շարունակուող մտածումներու հոսք մըն է, միշատակներու ցանց մը, որ յաճախ միջամուխ կ'ըլլայ մեր ներկայի, վայրկեանի փորձառութեան։ Իր տողերը լեցուն են անցեալի եւ ժամանակակից գրագէտներու գործերէն կատարուած անչակերտ մէջբերումներով։

Երկրորդ ազդակը, որ կ'օգնէ մեզի հասկնալու Իլիէթի բանաստեղծութիւնը, ժամանակի նկատմամբ ցուցաբերած իր ամբողջական մտահոգութիւնն է։ Four Quarters *հատորին մէջ, իր հերոսներէն մէկուն բերնով Իլիէթ կ'ըսէ. «Եթէ անցեալն է, որ կ'որոշէ մեր Ներկան, հետեւաբար՝ Ներկան է, որ կ'որոշէ մեր ապագան»։*

digitised by A.R.A.R.@

«Ժամանակ ներկան ու ժամանակ անցեալը
Թերեւս գոյգով ներկայ են ժամանակ ապագային մէջ
Եւ ժամանակ ապագան՝ ներփակուած անցեալին մէջ»։

Իլիոթի լեզուն յաճախ ենթագիտակիցի հոսք մըն է, արտաքնապէս զանազան բեւեռներու վրայ ցատկող, բայց հիմնուած ներքին կուռ կառոյցի մը վրայ։

«Բանաստեղծութեան մը լեզուն բանաստեղծին ենթակայական, նախաբայական աշխարհի արտաքին, սեռական ձեւն է...»։

Բանաստեղծական իր հատորներէն անկախ (The Waste Land – 1922, The Hollow Men – 1925, Ash Wednesday – 1930, Four Quarters – 1943), *որոնցմէ վերջինը իր լաւագոյնը կը համարուի եւ կը թափանցէ կեանքի եւ մահուան, ժամանակի եւ յաւիտենութեան, կասկածի եւ հաւատքի խորհուրդներուն մէջ։Իլիոթ գրած է նաեւ չափածոյ թատերախաղեր* (Murder in the Cathedral – 1935, The Family Reunion – 1939, The Cocktail Party – 1949, The Confidential Clerk – 1953 *եւ* The Elder Stalesman – 1958), *դասախօսութիւններ* (The Use of Poetry and the Use of Criticsicm – 1933*ին*, *Հարվըրտ համալսարանին մէջ եւ* After Strange Gods – 1934*ին*, *Վըրճինիայի համալսարանին մէջ*), *փիլիսոփայական գործեր* (The Idea of Christian Society – 1933 *եւ* Notes Toward the Definition of Culture – 1948) *եւ քննադատական երկեր* (The Sacred Wood – 1920, *եւ* On Poetry and Poets – 1957)։

ԴԻՄԱՆԿԱՐ ՏԻԿՆՈՋ ՄԸ

Դուն պղծուիլիւն գործեցիր,
Բայց այդ ուրիշ երկրի մէջ էջ
Եւ առաւել պոռնիկը մահացած է։

Մալթայի հրեան

I

Դեկտեմբերեան յետմիջօրէի մը մշուշին, ծովին մէջէն
տեսարանն ինքզինքի կը կերտէ — ինչպէս պիտի թուէր ընել —
«յետմիջօրէն Բեզի համար վերապահեր եմ» ըսելով
եւ չորս մոմով մթնցուած սենեակին մէջ,
լոյսի չորս օղակներ վերը՝ առաստաղին,
մթնոլորտ մը նման այնքան դամբարանին ժիլիէթի,
պատրաստեր են բոլոր ըսուելիք բաները եւ միւսները չըսուելիք.
կրնանք ըսել՝ գացեր էինք լսելու լեռուին այն վերջին,
որ մագերէն եւ մատներուն ծայրերէն փրելիւտներ կը վերծանէր։
«Ի՞նչ մտերիմ, այս Շոփէնը, կը խորհիմ թէ իր հոգին
պէտք է յառնէ բարեկամներու սեղմ շրջանակի մը մէջ միայն,
երկուքը կամ երեքն անոնցմէ, որոնք պիտի չփնացնեն
ծաղկումը այդ, որ կը շփուի, կը վերլուծուի սրահին մէջ»։
—Եւ այսպիսով խօսակցութիւնը կը սահի
տեսնչերու, զգոյշ բռնուած ափսոսանքի ընդմէջէն,
նուազեցնող ձայնին մէջէն չուքակներու

digitised by A.R.A.R.@

եւ հեռատոր փողերու ձայնին խառնուած
ու կը սկսի.
«Դուն չես գիտեր, թէ ի՛նչ կ'արժեն անոնք ինծի, բարեկամներս,
եւ թէ որքան հազուադէպ է, տարօրինակ,
կեանքի մը մէջ մանրուքներէ կազմուած
(որովհետեւ՝ իսկապէս որ չեմ սիրեր այդ... գիտէի՞ր. անշո՛ւշտ կոյր չես,
ի՞նչ ուշիմ ես)
բարեկամ մը գտնել, որ այս յատկութիւնները ունի,
ունի, կու տայ
յատկութիւններ, որոնցմով բարեկամութիւնը կ'ապրի.
որքա՞ն կ'արժէ, կ'ըսեմ քեզի,
կեանքը արդեօք առանց անոնց, ի՞նչ մղձաւանջ
ջուրակներու ոլոր-մոլոր ձայներուն մէջ՝
ճաքած փողերու երգերուն,
ուղեղիս մէջ համրր թոմ-թոմ մը կը սկսի
իր անձնական փրելիւտը մրճահարել,
միանուագ ու քմահաճ,
որ կը յանգի վերջ ի վերջոյ *Ֆոս-նոթի*...
—Թոյլ տուէք մաքուր օդ շնչելու,
ծխախոտի ծուխին մէջ վերանալու,
յուշարձաններով տարուելու
եւ ճշդելու ժամացոյցերը մեր հանրային ժամացոյցով.
յետոյ նստիլ կէս ժամ մը մեր զարեջուրը ըմպելու։

II

Հիմա, որ ծաղկունքի մէջ են լեկները,
իր սենեակին մէջ փունջ մ'ունի եղակներու
եւ հատ մը մատներուն մէջ կը ճմլէ, մինչ կը խօսի.
«ը՞, բարեկամս, դուն չես գիտեր, դուն չես գիտեր
ի՞նչ է կեանքը, դո՛ւն՝ որ զինք ձեռքերուդ մէջ բռներ ես»։
(հանդարտօրէն ցօղունները լեկներուն ճգմելով)
«Դուն թող կու տաս, որ ան հոսի քեզմէ հեռու, թող կու տաս, որ ան հոսի.
պարմանութիւնը բիրտ է եւ զոլումներ չի ճանչնար
ու կը ծպտի պայմաններու, զորս չի տեսներ»։
Ես կը ծպտիմ անշուշտ, եւ
կը շարունակեմ թէյ խմել։
«Թայց մայրամուտներուն այս Ապրիլի,
որ ձեռով մը թաղուած կեանքն իմ կը յիշեցնեն եւ Փարիզը գարունին
անհունօրէն խաղաղ կը զգամ եւ կը գտնեմ,
որ աշխարհը պէտք է գեղեցիկ ըլլայ ու երիտասարդ, ամէն բանի հակառակ...

Իր ձայնը կը վերադառնայ՝ ջուրակի մը նման յամառ
եւ *անաջորդ*, Օգոստոսի յետմիջօրէի մը մէջ,
«Միշտ վստահ եմ, որ ապրումներս կը հասկնաս.
միշտ վստահ եմ, որ կը զգաս,
վստահ՝ որ ձեռքդ կ'երկարես ծովախորշին միւս կողմէն»։

digitised by A.R.A.R.@

Ամիլչէսի կրունկ չունիս, մի՛շտ անյաղթ ես,
պիտի երթաս եւ երբ յաղթես,
կրնաս ըսել՝ հանգրուանին այս ուրիշներ ծախողներ են.
բայց ի՞նչ ունիմ, ես ի՞նչ ունիմ, իմ ընկեր,
Բեգի տարու, ի՞նչ կրնաս ինձմէ ստանալ —
Բարեկամութիւնն ու գութը մէկու մը, որ
ճանապարհին գրեթէ աւարտին է հասեր։

Պիտի նստիմ ես այստեղ՝
բարեկամներուս թէյ հրամցնելու»։

Գլխարկս կը վերցնեմ։ Ինչպէ՞ս կրնամ
իր խօսքերը կոպտութեամբ փոխադարձել,
զիս պիտի տեսնէր՝ առաւօտները պարտէզին մէջ,
երգիծական ու մարգական էջերը կարդալով գբաղած։
Ցատկապէս կը նշմարեմ
անգլիացի կոմսուհի մը, որ բեմ կ'ելլէ.
լեհական հաւաքի մը յոյն մը մորթուեր է եղեր.
դրամատան գեղծարար մը խոստովաներ է ահա։
Երեւոյթս կը պահեմ.
եւ կը մնամ ինքնավստահ,
միայն մինչեւ երբ կը լսուի փողոցի դաշնամուրին
մեքենական յոգնած ձայնը, որ հասարակ մաշած երգեր կը կրկնէ.
պարտէզներէն՝ ամբոյզներու բուրմունքին հետ կը վերյիշեմ
ինչ-որ շատեր ցանկացեր են։
Մտածումներն այս շիտա՞կ են, թէ սխալ։

III

Հոկտեմբերեան գիշերը վար կը հասնի՝
Նախկինին պէս ետ գալով,
բացի հանգիստ չընլալու զգացումէ մը թեթեւ, հանդարտօրէն
կը բարձրանամ աստիճանները, կը դարձնեմ դրան բռնակը
եւ կը զգամ՝ իբրեւ թէ
ծունկերով եւ ձեռքերով բարձրացած ըլլայի.
«Եւ ուրեմն կը մեկնիս. արդեօք ե՞րբ կը վերադառնաս»։
Բայց անօգուտ հարցում մէ այդ,
հազիւ թէ դուն կրնաս գիտնալ, թէ ե՞րբ պիտի վերադառնաս.
այնքան շատ բան պիտի գտնես սորվելու...
Ժպիտս կ'իյնայ ծանրօրէն՝ սենեակին զարդերուն մէջ։

«Թերեւս գրես ինձի...
Ինքնավստահութիւնս կը շողայ բոպէ մը։
Ասիկա Ցի՛շդ հաշուարկածիս նման է.
«Վերջերս յանախ հարց կու տայի ես ինձի
(սկիզբները մեր բնաւ վերջերը չեն գիտեր)
ինչո՞ւ արդեօք բարեկամներ չեղանք մենք...»։
Կը զգամ մէկու մը նման, որ կը ժպտի եւ դառնալով

digitised by A.R.A.R.@

յանկարծակի պիտի բռնէ ցոլացումն իր ապակիի մը վրայ.
ինքնավստահութիւնս արդէն կը խրի, ամբողջական մութի մէջ ենք։

«Որովհետեւ բոլորն այդպէ՛ս կ'ըսէին, մեր ընկերները բոլոր.
վստահ էին, որ ապրումները մեր մօտ պիտի գան այնքան.
ես ինքս հազիւ կը հասկնամ.
նակատագրին պէտք է ձգենք այդ հիմա.
յամենայնդէպս պիտի գրես,
թերեւս այնքան ալ ուշ չէ.
պիտի նստիմ ես այստեղ՝
բարեկամներուս թէյ հրամցնելու»։

Եւ ես պէտք է փոխ առնեմ
իւրաքանչիւր փոխուող ձեւ՝ արտայայտութիւն գտնելու. պարէ՛, պարէ՛
պարող արջու մը նման,
թութակի մը նման լաց, շաղակրատէ մարդակապիկի մը պէս։
Թոյլ տուէք ելլել մաքուր օդ շնչելու, ծխախոտի ծուխին մէջ վերանալու։

Այդպէս։ Բայց թէ յանկարծ, ինչ որ յետմիջօրէի մը մեռնի՞,
յետմիջօրէ մը մոխրագոյն եւ ծխոտ, իրիկուն մը դեղնորակ եւ վարդագոյն
երէկ մեռնի ու ձգէ գիս նստած, մատիտը ձեռքիս,
եւ ծուխը, որ վար կու գայ, տուներու տանիքներուն,
կասկածելի պահ մը լոկ
չգիտնալով ի՞նչ զգալ, կամ արդեօք կը հասկնա՞մ,
կամ ուշի՞մ եմ, ապիկա՞ր, ուշացա՞ծ եմ, թէ շատ կանուխ...
Առաւելութիւնը իրը պիտի չըլլա՞յ ի վերջոյ.
մեղեդին այս յաջող է՝ «մահուան անկումովը» իր,
հիմա որ մենք մահուան մասին կը խօսինք —
Արդեօք պիտի ունենայի՞ իրատունքը ժպտելու։

ՆՈԹԵՐ

Ժողովածուներու մէջ յաճախ երեւցող այս գործը՝ «Ճ. Ակֆրէտ Բրուֆրոքի սիրոյ երգը» քերթուածին հետ ամբողջութիւն մը կը կազմէ։ Երկու տիպարներ՝ կին մը եւ այր մը, որոնք բռնուած են կեանքի ձանձրոյթին մէջ, ո՛չ հաւատքը եւ ո՛չ կարեկցութիւնը կրնան շարժել իրենց զգացումները։

Քերթուածը կը ներկայացնէ երիտասարդի մը երեք այցելութիւնները աւելի տարիքոտ կնոջ մը եւ այդ երիտասարդին ճիգը՝ նուրբ կերպով վերջացնելու իրենց բարեկամութիւնը, մինչ կինը կ'ուզէ շարունակել զայն։

(Շար. 3 եւ վերջ)

ՄԱՐՈՒՇ

digitised by A.R.A.R.@

Նվիրներ ՎԵՐԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՈՎ

Ստալինեան տասնամեակներուն եւ «Ստալինի ժառանգորդներուն» երեսնամեակին եղան արտասահման «գործուղուած» կուսակցական, քաղաքական ու պետական անձնաւորութիւններ, որոնք իրենց «ականատեսի» յուշերն ու տպաւորութիւնները գրի առին, ի հարկէ այնպէս՝ ինչպէս լէին տեսած ու լէին զգացած: Պարզ էր այն առեն ու աւելի յստակ է հիմա, որ այդ գործուղուած գործիչները սովոր էին նկարագրել հանդիպումներ, որոնք տեղի չէին ունեցած, արձանագրել յայտարարութիւններ, որոնք չէին կատարուած, ու սեւագրել տպաւորութիւններ, որոնք կամայական բնոյթ ունէին:

Զօրութեամբ կը հասկցուի, որ շատ զգոյշ պէտք է ըլլալ անոնց վաւերականութեան մասին, որով նաեւ փերպահութիւնը պարտադիր կը դառնայ այդ մարդոց եղած արագ գնահատականներուն նկատմամբ:

Այս եզրակացութեան անգամ մը եւս յանգեցանք, երբ Երեւանի «Ազատամարտ» շաբաթաթերթին մէջ կարդացինք Համասեղ-Մահարի նամակագրութիւնէն նմոյշներ, Ա.Ա.ի մեկնաբանութեամբ:

Նամակներէն մէկը, Մահարիին ուղղուած Համասեղի 1 Յունուար 1966 թուականիրը կը խօսէր նշանաւոր գրագէտին տուած այցելած հայաստանցի հիւրերու մասին եւ այն տպաւորութիւնը կը ստացուէր, որ հոն նկարագրուածին պէս տեղի ունեցած է ամէն բան, այսինքն՝ նոյն սահմաններուն մէջ սկսած ու աւարտած է հանդիպումը, մէկ կողմէն Սփիւռքի գմեգակ պայմաններուն մէջ վաստակած գրագէտի մը հանդիպած ըլլալու երախտագէտ զեղումով եւ, միւս կողմէ՝ իր յարկին տակ հայրենիքէն հիւրեր ընդունող հոգիի մը հրճուագին մթնոլորտին մէջ: Գաղափարական տարբեր դիրքերու վրայ գտնուելով հանդերձ, յարգալիր՝ իրարու հանդէպ:

Իր նամակը գրած օրերուն, Համասեղի համար այդպէս ներկայացած էր հիւրի եւ հիւրընկալի փոխյարաբերութիւնը եւ երկու հիւրերէն Ստեփան Վարդանեանը շատ սիրելի եւ համակրելի անձ մըն էր իրեն համար: Իսկ նամակին տպագրութենէն եւաք, «Ազատամարտ»ի ընթերցողներուն համար նոյն անձը, Ստեփան Վարդանեան, կը շարունակէ մնալ Համասեղեան առաջին տպաւորութեամբ հանգերձուած մէկը՝ «իսկապէս համակրելի», «սիրելի»:

Համասեղի համար Վարդանեանը նման տպաւորութիւններ գործող մէկը եղած էր մինչեւ այն առեն, երբ այս վերջինը նախ «Սովետական գրականութիւն» ամսագիրին (1966, Ապրիլ) մէջ եւ ապա առանձին գիրքով լոյս ընծայեց իր տպաւորութիւնները՝ «Ամերիկան մթնում է...», ուր ստուգեան, կողմնակալութեան ու կոյր մոլեռանդութեան թանձրակուտակ մուխ մը դիպած էր նաեւ Համասեղի աշխարհահայեացքին, կուսակցական պատկանելիութեան ու հայ մարդու անոր խոհերուն ու ապրումներուն վրայ:

Որպէսզի այսօրուան ընթերցողին աւելի շօշափելի դառնայ քառորդ դար առաջ տեղի ունեցած այդ հանդիպման նկարագրութիւնը, մենք նպատակայարմար համարեցինք հետագայ էջերուն ներկայացնել անոր ամբողջութիւնը: Եղածը, ինչպէս շուտով պիտի նկատէ ընթերցողը, դժուար է հաշտեցնել քաղաքակիրթ աշխարհին կիրարկած բարոյական չափանիշներէն որեւէ մէկուն հետ, ա՛յն առումով մանաւանդ, որ մարդ մաքուր հոգիով կը փափաքի հիւրութեան երթալ վաստակած մարդոց տունը, զրպարտութիւններ խմբագրելու յեսին մարով չ'երթար, կը զգուշանայ նենգափոխել անոնց հաւատոյ հանգանակները եւ ի լուր եւ ի տես անոնց ապրումներուն եւ ֆիզիքական ու կենցաղային նշաններուն, կը շանայ պարկեշտ մնալ, մա՛րդ մնալ...

digitised by A.R.A.R.@

ՍՏ.ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂ. ԵՏԵՒՈՒՄ ՄՆԱՑԱԾ ՍԽԱԼ ՃԱՄԲԱՆԵՐ

Յաջորդ օրն ինձ սպասում էին հետաքրքիր հանդիպումներ։ Առաւօտեան հիւրանոց եկաւ Յուլիկ Սուքիասեանը։ Յաղթանգամ, պատկառելի դիմագծերով, վաթսունն անց մեր հայրենակիցն իր անմիջականութեամբ, պարզութեամբ եւ ջերմ, անկեղծ հարազատութեամբ շուտով նուաճեց իմ համակրանքը։

Անտհմանօրէն բարի է այդ մարդը եւ... լաւ։ Բարի բոլոր նրանց նկատմամբ, ովքեր սիրում են Հայաստանը, պաշտպանում են մեր հանրապետութիւնը, չար՝ լկամների, գաղրախօների, հակառակորդների նկատմամբ։

—Երկու բան չեմ կարողանում տանել,– ասում է նա,– մէկ՝ երբ որդին ըմբոստանում է մօր դէմ, մէկ էլ՝ երբ հայն ամբաստանում է Հայաստանը։

Մուտով մեզ միացաւ Արիա Փափազեանը։

Դեռեւս երէկ երեկոյեան, զրանաւակայանում, պայմանաւորուել էինք, որ համաձայնութեան գէպքում այսօր պէտք է այցելեմ Համաստեղին։

Ես մի քիչ ծանօթ եմ նրա ստեղծագործութիւններին. կարդացել եմ «Գիւղ» եւ «Անբիւ» շարքերի զոյգրիկ պատմուածքները, գիտեմ, որ նա քաղաքական հայեացքներով մեզ հետ չէ։

Մենք եւ մեզ միացած Ռուբէն Գրիգորեանը ուղեւորւում ենք գէպի Վոթիր Թաուն, ուր մեր բարեկամներից Այպեր ճանճիկեանը ասելու է Համաստեղի հետ հանդիպման հնարաւորութեան եւ ժամկէտի մասին։

Վոթիր Թաուն։ Բոստոնի կենտրոնից ընդամէնը 20 բոպէում աւտոմեքենայով կարելի է հասնել այդ հայաշատ արուարձանը. մէկ–երկու յարկանի չէնքեր փողոցի աջ ու ձախ կողմերում, խանութներ, կաֆետերիաներ, ռեստորաններ, բազմազգի ռեպլամներ։

Սուքիասեանը բացատրում է. սա հայի խանութ է, սա ճաշարանը դրացիական է, սա շարքը միայն հայերն առեւտուր կ'ընեն...

Ճանճիկեանը տնային զեղարուեստական կարասիքի խանութ ունի, ուր ցուցադրուած են աշխարհի տարբեր մասերից բերուած զեղեցիկ կարասիք՝ արձանիկներ, լուսամփոփներ, բազմոցներ եւ այլ բազմաթիւ իրեր։

Նա մեզ դիմաւորում է խանութի կենտրոնում, ծանօթացնում է կնոջ հետ, ապա ներկայացնում. խանութի վերնայարկը տանող աստիճանների վրայ կանգնած ցածրահասակ տղամարդուն.

—Համաստե՛ղ։

digitised by A.R.A.R.@

Ճիշտն ասած ես յանկարծակիի եկայ։ Մենք եկել էինք այդտեղ հանդիպման մասին պայմանաւորուելու. մինչդեռ...

Ճանճիկեանը բացատրում է.

—Երբ հեռախօսեցի, ըսի, որ Հայաստանէն լրագրող մը կ'ուզէ ձեզի հանդիպիլ, պարոն Համաստեղն այնքան ուրախացաւ, որ ձեզմէ առաջ հոս հասաւ։

Մենք ծանօթանում ենք։ Ես բարձրաձայն նկատում եմ, որ պարոն Համաստեղը արտաքինով եւ, մանաւանդ, շարժուձեւով շատ նման է Հայաստանում համընդհանուր ճանաչման արժանացած մի մարդու։

—Ո՞վ է այդ մարդը,— հետաքրքրւում է գրողը։

—Վարդան Աճեմեանը,— միայն անուն ազգանուն տալով բաւարարւում եմ ես...

Սակայն անմիջապէս համոզւում եմ, որ գրուցակիցս լսած չէր Վարդան Աճեմեանին։ Եթէ Աճեմեանին չլսէր, մեր հանրապետութեան մասին ուրիշ շա՞տ բան գիտի արդեօք։

Համաստեղն արդէն պայմանաւորուել է Ճանճիկեանի հետ։ Նա խնդրում է մեզ՝ Գրիգորեանին եւ ինձ, հիւր լինել իրենց տանը։ Համաձայնւում ենք։

Ճանուոթի առջեւ սպասում է նրա ոչ այնքան նոր մեքենան։ Նստում է զեկին. Գրիգորեանի հետ տեղաւորւում ենք յետնամասում։

Համաստեղը սեփական տուն ունի քաղաքի մէկ ուրիշ արուարձանում։ Մի քանի սենեակից բաղկացած մէկ յարկանի տունը թաղել է բարձունքին, ուր կարելի է բարձրանալ փայտէ աստիճաններով։

Ընդարձակ հիւրասենեակում մեզ դիմաւորում է գրողի գերդաստանը։ Տիկին Սրբուհին ուրախութիւնն աչքերում մեզ բարի գալուստ է մաղթում։ Անողոք ժամանակը նրա երիտասարդի գեղեցկութիւնից խնայել է միայն բարի, ժպտացող աչքերը։ Դէմքին աւերածութիւնները շատ են։ Անհարկի կնճիռները որպէս ժամանակի եւ կենաց դժուարին ուղու վկաներ ակօսել են հիւրընկալ կնոջ դէմքը, կարծես ընդգծելու համար այն վեհութիւնը, որը տարրերում է տարեց մօրը աշխարհի մնացած կանանցից։

Աւագ դուստրը՝ Լորիկը այնքան է ինքնամփոփ ու լուռ, որ աւելի ճիշտ կը լինէր նրան ուղղակի Սուսիկ անուանել։

Կրտսերը՝ Աբմինէն, ալացիկ իրանով, գեղեցիկ դիմագծերով պարմանուհի է, սեւ, խոշոր, խելք աչքերով, անզուգական ժպիտն այտերի գոգտրիկ փոսիկներում։

Լորիկն աշխատում է ապահովագրական ընկերութիւնում, Աբմինէն ուսուցչուհի է եւ միաժամանակ սովորում է։

Բոլորը հիանալի խօսում են հայերէն։ Բոլորն ուրախ են, որ Հայաստանից հիւր ունեն իրենց տանը։ Չէ՞ որ մինչ այդ ոչ ոք Հայաստանից չի եկել այստեղ։

Զրոյցի ենք նստում հիւրասենեակին կից, երանցից առանց միջնորմի բաժանուած փոքրիկ սրահում, որը երեւի ծառայում է որպէս աշխատանքային առանձնասենեակ։ Մի քանի հնամաշ բազմոցներ, սեւ, հին գաշնամուր, հնօրեայ սեղան, յատակին էժանագին գորգեր։

Աղջիկները մեզ մենակ են թողնում։ Տիկին Սրբուհին առաջարկում է գրուցը համեմել ոգելից գինով։

Համաստեղը դէմ չէ. մենք եւս ընդդիմանալու վճռական փորձ չենք անում։ Տանտէրը ներողութիւն է խնդրում ու մի քանի բոպէով մեզ թողնում տիկին Սրբուհու ուշադրութեանը։

—Ինչպէ՞ս էք այստեղ, այս ամառ երկրում ապրում, տիկին Սրբուհի,— հարցնում է Գրիգորեանը։

—Ապրելու համար շատ բան մը հարկաւոր չէ,— տխուր պատասխանում է տանտիրուհին,— երեխաները մեծ միխիթարանք են մեզի համար։

—Շարունակո՞ւմ է գրել։

—Կը գրէ, ինչպէս չէ, շա՛տ կը գրէ։

digitised by A.R.A.R.@

—Իսկ Դուք կարդացե՞ր էք Համաստեղին,— հարցնում է ամուսնու գրական բախտով ապրող կինը։

—Ասում եմ, որոշ բաներ կարդացել եմ, որ մի շարք պատմուածքներ ինձ շատ են դուր եկել։

—Ո՞ր պատմուածքները նկատի ունիք,— հետաքրքրվում է գոների արանքում յայտնուած Համաստեղը, փորձելով ուրքան կարելի է սովորական բնոյթ տալ հարցին։

Ես թուարկում եմ մի քանիսը՝ «Անձրեւը», «Զալօն», «Աղջի Եղսիկ»ը, «Քաջ Նազար»ը։

Նկատում եմ, որ Համաստեղի աչքերում թացանում է յուզմունքը։

Օտար երկրում ստեղծագործող մարդու համար թանկ է հայրենի ժողովրդի ճանաչումը։

—Այնտեղ իմ գիրքերս չեն ծախեր,— աւելի շատ ափսոսանք, քան բողոք եմ լսում նրա ձայնում։

—Ինչո՞ւ, հօ Դուք դաշնակցական չէք,— ուզում է միամիտ ձեւանալ Գրիգորեանը։

Համաստեղին դուր է գալիս վերջինիս անմիջականութիւնը։

—Ինչպէ՞ս չէ, պաշտօնապէս անդամ եմ։

—Ես մի ժամանակ կռուել եմ դաշնակցականների դէմ, քանմէկ թուականին։ Միայն թէ այն ժամանակուայ դաշնակները նման չէին Ձեզ, այլ փափախով, մաուզերը կողքից։

Համաստեղը ծիծաղում է։

—Դուք հիմա՞ ալ այդ կարծիքն ունիք անոնց մասին։

Գրիգորեանը նայում է տանտիրոջ աչքերին։

—Առածն ասում է՝ կաքմիր կոմն իր կաշին չի փոխում։

Համաստեղը տանտիրոջ իրաւունքով առաջարկում է փորձել խմիչքը։

—Թուրքական օղի է, կը հաւնի՞ք։

Ես կատակում եմ.

—Ցեղով էլ ասում են, թէ դաշնակցականները թուրքերին չեն սիրում։

Փորձում ենք օղին։

Ուրքան էլ ես ինտերնացիոնալիստ եմ, չեմ կարողանում անբաւականութիւնից զէմքս չկնճռոտել։ Կեանքումս երբիք աւելի անհամ բան չեմ խմել. տիկին Սրբուհին նկատում է այդ։

Քիչ յետոյ բաժակիս կողքին աւելանում է երկրորդը՝ աւելի փոքրը, լիկէօրատիպ խմիչքով։

—Թերեւս ասիկա կը փորձէ՞ք։

Շնորհակալութիւն եմ յայտնում յարգելի տանտիկնոջը, սակայն թուրքական օղիով լի բաժակը ինձնից չեմ հեռացնում։

—Հարկաւոր է ամէն ինչ փորձել, ուրիշ ե՞րբ հնարաւոր կը լինի թուրքական օղի խմել դաշնակցականի տանը։

Հետաքրքրւում եմ՝ թէ չի՞ փորձել արդեօք պարոն Համաստեղը հայրենիք այցելել։

Ո՛չ, չի փորձել. ասիմներ եղել են, հրաւէր, բայց... տիկին Սրբուհու առողջական վիճակը խանգարել է։ Տիկին Սրբուհին գլուխը հակել է իր բաժակին։

—Ձեր պատմուածքներից երեւում է, որ Դուք շատ էք սիրում հայրենին,— փորձում եմ ինչ-որ բան ասել ես։

Համաստեղը աչքերից հեռացնում է ժպիտը։

—Հայրենին լսիրել չես կրնար, իսկ հոս, այս երկրին մէջ, աքսորականներու պէս կ'ապրենք, քառասուն տարիէ աւելի ուրիշի երկրին մէջ, հայրենիքէն հեռ՞։

digitised by A.R.A.R.@

Ցիշեցնում եմ, որ հայրենիքի գոնները բաց են նրա զաւակների առաջ, նոյնիսկ մոլորուածների։

Տիկին Սրբուհին նախազգալով, որ բանավէճը գնալով թէժանալու է, մեզ հրաւիրում է ճաշասենեակ։ Փորձում ենք հրաժարուել, սակայն ապարդիւն՝ հիւրասէր տանտէրերը խնդրում են կիսել իրենց մի կոր հացը։

Սեղանը ծանրաբեռնուած է հայկական ուտելիքով՝ բաստուրմա, սուջուխ, աբուլիան համեղ խորոված։ Օղին թուրքական է։ Գիտեմ, որ դրանից լեռոյ ամբողջ երկու օր գլուխս տրաքելու է, սակայն տանտիրոջ հետ հաւասար խմում եմ։

Նորից զրոյցը քաղաքական բանավէճի բնոյթ է ստանում։ Վիճում ենք մեր ժողովրդի բախտի, նրա անցեալի, այսօրուայ եւ ապագայի բազմաթիւ հարցերի շուրջը։ Մեր հայեացքները չեն համընկնում, տարբեր են մեր մօտեցումները եւ տարբեր՝ դիրքերը։

Գրիգորեանն ու ես ներկայացնում ենք մեր վերածնուած հայրենիքը, հայ պետականութիւնը. նման ենք գործից եկած մարդկանց։ Համաստեղը դիտորդ է, հակառակ դիրքերում կանգնած դիտորդ, որն, ի տարբերութիւն իր շատ զազափարակիցների, պատրաստ է ընդունել մեր հանրապետութեան նուաճումները, ժողովրդի վերածննդի փաստը, միայն...

—Այդ ամէնը՝ քաղաքները, գործարանները, դիւղերը հայ ժողովուրդին տաղանդին եւ շնորհքին արդիւնքն են։

—Հայ ժողովուրդը շինարար ժողովուրդ մըն է,- կարծես ի միջի այլոց նկատում է նա, որոշակիօրէն հակացնելով, որ անկախ կարգերից, Հայաստանն այսօր այլ կերպ լինել չէր կարող։

Չհամաձայնուել նրա հետ այն հարցում, որ մեր ժողովուրդն իսկապէս շինարար ժողովուրդ է, չի կարելի։ Բայց մի՞թէ Համաստեղին յայտնի չէ այդ շինարար ժողովրդի անցեալը, մի՞թէ նա չգիտէ, որ պատմութեան քառուղիներում թողնելով հայկապ բերդաքաղաքների, տաճարների ու ամրոցների աւերակները, նա ընդամէնը 40-45 տարի առաջ ստիպուած էր իր գոյութիւնը քարշ տալ գետնափոր, քարանձաւանման հիւղակներում, պատսպարուել կաւածեփ խրճիթներում, տառապել աղքատութիւնից, համաճարակներից, խաւարից, դրան տակ մշտապէս պատրաստ պահելով գաղթականի ուսապարկը։ Մի՞թէ նրան յայտնի չէ, որ Թուրքիայի եւ Պարսկաստանի հարեւան շրջաններում այժմ, քան թուականի համեմատութեամբ, համարեա՝ ոչինչ չի փոխուել, մինչդեռ Հայաստանը, Ադրբէջանը, Վրաստանը դարձել են զարգացած արդիւնաբերութեան, լայնաշունչ գիւղատնտեսութեան, առաջաւոր գիտութեան ու մշակոյթի հանրապետութիւններ։ Մի՞թէ նա իսկապէս միամտօրէն հաւատացած է, որ եթէ չլինէին սովետական կարգերը, չլինէր եղբայրական ժողովուրդների մեծ միութիւնը, հայ ժողովուրդը կը կարողանար հասնել այսօրուայ բարձունքներին։

Համաստեղը փորձում է պաշտպանութեան տակ առնել այն կուսակցութեանը, որի պաշտօնական անդամը լինելու դժբախտութիւնն է ունեցել, շանում է բացատրել նրա կործանարար քաղաքականութեան հետեւանքով մեր ժողովրդի գլխին եկած արհաւիրքները։

Սակայն դժուար չէ հասկանալ, որ վաստակաշատ գրողն այդ անում է՝ կուռելով սեփական խղճի հետ։

Սովետները Հայաստանը ժառանգեցին, երբ այն հոգեվարք էր ապրում։ Օտարների քմահաճոյքին եւ սեփական տնօրէնների արկածախնդրական քաղաքականութեանը զոհ գարձած մի բուռ ժողովուրդ ծուէն-ծուէն էր եղել, տեղահանուել, մեռնում էր մայթերին, եկեղեցիների պատերի տակ, տանը, ճանապարհներին...

Մեռնում էր դարերից եկած մի անմեռ ժողովուրդ։

Ի՞նչ դեղատոմսեր էին առաջարկում դաշնակցական շոշները, որոնք կառավարութիւն կազմելու լանգնութիւն էին ունեցել։ Ո՞ւմ չդիմեցին, ո՞ւմ դուռը չթակե-

digitised by A.R.A.R.@

ցին «ազատ, անկախ» Հայաստանի այդ բախտախնդիր ղատագովները, անվճար առաջարկելով մեր երկրի մանդատը:

Իսկ Ռուսաստանին, Սովետական Ռուսաստանին, որը միակ բարեկամն էր մեր ժողովրդի, թշնամի էին: Թշնամի էին, որովհետև այնտեղ իշխանությունը բանուորներին էր, գիւղացիներինը:

Պահ եղաւ, որ նրանք ստրկամտօրէն «բարեկամութիւն» էին հայցում նոյնիսկ թուրք շարդարարներից, կռուելով մեր ժողովրդին վրացիների, ադրբեջանցիների հետ, որոնց գարերի բարեկամութեամբ էինք կապուած: Ցեղոյ, երբ երկիրը, ժողովուրդը սկսեցին բուժել մահացու վէրքերը, դաշնակները դրսից հայհոյում էին, չարախնդում, պարսաւում:

Երբ աշխատաւորները, հետեւելով կոմունիստներին, աւելի ամուր էին սեղմում գօտիները, զրկանքների, մեծ զրկանքների գնով ստեղծում էին իրենց նոր, այսօրւայ հայրենիքը, բարգաւացնում էին քաղաքներ ու գիւղեր, ջրանցքներ էին փորում ու մշակովի տարածներ կերտում, օտար ընկերում թառած, երկրի համար մատը մատին չտուած պարոնները լուտանքներ էին թափում, ամբաստանում սեփական ժողովրդին, նրա գործերը:

Ստալինկրատի ճակատամարտերի օրերին Հայաստանի սահմանամերձ խնճուղիները ծածկուեցին խոռոչներով, որոնցում պէտք է ականներ գրուէին, կարմիր բանակի փոքրաթիւ զօրամասերի մարտիկները ամէն գիշեր սահմանապահ գիրքերում հերթապահում էին, որովհետև սահմանի այն կողմում սպասում էին Ստալինկրատի անկմանը, որպէսզի շարժեն զօրքերը, նորից նոյն զօրքերը նոյն Հայաստանով: Իսկ դաշնակցական խմբապետները հիտլերեան համազգեստներով պճնած կռւում էին մեր դէմ, որպէսզի Ստալինկրատը շուտ ընկնի:

Անցաւ պատերազմը: Մանր հիւանդութիւնից դեռեւս լրիւ չամոքուած մոր նման Սովետական Հայաստանը ձեռքերը պարզեց աշխարհի բոլոր ծագերում փռուած իր զաւակներին. եկէ՛ք ձեր պապերի երկիրը, եկէ՛ք ապրէք այստեղ ու կառուցէք: Նա հեքիաթների կախարդական սփոցներ ու մոգական գաւազանի մէկ հարուածով խոյացած պալատներ չառաջարկեց: Ով գալիս էր, պէտք է աշխատէր, բոլորի հետ հաւասար կիսէր դժուարութիւնները, եթէ հարկ կար՝ տանէր զրկանքներ, որպէսզի ծաղկէր երկիրը, երջանիկ լինէին սերունդները: Ով ասուն է կառուցում, նա ինչ-որ չափով չի կարող չզրկել իրեն:

Իսկ Սփիւռքում, եկեղեցու պատին կպցրած մոմի նման հալւում ու մարում է հայոց լեզուն, երեխաներն իրենց ժողովրդի պատմութիւնն ուսումնասիրում են ուրիշ լեզուներով, երգերը երգում ուրիշ լեզուներով:

Այն բրիւսելցի տղան արդէն հայ չէ. նրա ծնողներն են հայ եղել:

Դաշնակները դարձեալ հակատակ են: Նրանք խանգարում են հայրենադարձութեանը, համոզում են հայերին Մերձաւոր Արեւելքից մեկնել Քանատա, Աւստրալիա, ԱՄՆ, մասնաւորաբար նեռուել ուծացման խառնաբանը:

Այստեղ Համատեղը փորձում է ընդհատել մեզ:

—«Դաշնակցութիւնը» դէմ չէ հայրենադարձութեանը... որքան որ գիտեմ:

Մեզ մնում է միայն ժպտալ:

Տիկին Սրբուհին ոչ միայն ազնիւ կին է, այլեւ սկզբունքային մարդ:

—Համաստե՛ղ,- առանց վրդովմունքի դիմում է նա ամուսնուն,- հոգիդ վրան ձեզ մի վերցներ, մեր բարեկամները ճիշդ կ'ըսեն:

—Ես միշտ ալ կողմ եղած եմ հայրենադարձութեանը, միշտ ըսած եմ՝ գացէք Հայաստան, եթէ նոյնիսկ տասէն երկուսը փրկուի, նորէն գացէ՛ք, որովհետև ատկէ մեր ժողովուրդը կը շահի միայն:

Զգում եմ, որ հօթանասունամեայ գլուխը չուզում է. նա համաձայն չէ Դաշնակցութեան հետ, բայց չի կարողանում բարձրաձայն ասել այդ մասին:

digitised by A.R.A.R.@

43 տարի «պաշտօնական անդամ է եղել», համարեա՝ ամբողջ գիտակցական կեանքը: Երբ արդէն 70 տարեկան ես ու յետեւում են մնացել ճանապարհները, դժուար է խոստովանել, որ տասնամեակներ առաջ ճամբարաժուռում սխալուել ես, ուղիղ գնալու փոխարէն՝ թեքուել դէպի աջ ու երկար տարիներ յոգնաբեկ ի զուր թափառել մոլոր ուղիներում:

Գուցէ ես սխալւում եմ, գուցէ Համատեղը դեռ չի հասցրել վերագնահատել մի շարք բաներ, որոնք վերագնահատման կարիք ունեն:

Տիկին Սրբուհին անապատելիօրէն ամփոփում է մեր բանավէճը:

—Բարեկա՛մս,- գիտում է նա ինձ,- մինչեւ հիմա աշխարհիս մէջ ոչ մէկը իր սեփական հրաժարականովը կեանքից չի հեռացած: Թողէք, որ գաշնակցութիւնը մինչեւ վերջ կրէ իր խաչը: Անոր վերջին շատ չէ մնացած:

Մտածում եմ: Մի խաչ է, Աստուած իր հետ, թող կրի, թէ չէ վազը, միւս օրը գերեզմանին ինչ պիտի դնեն:

Ճաշասենեակ են մտնում Լորիկն ու Արմինէն: Զրոյցն ուեղի «աշխարհային» բովանդակութիւն է ստանում:

Որքան էլ անդուր է թուրքական ոդին, խմում ենք օղմախի կենացը, առողջութիւն մաղթում տիկին Սրբուհուն, յաջողութիւններ՝ գերդաստանին:

Համատեղը մեզ նուիրում է իր մի քանի գրքերը:

Տիկին Սրբուհին ցանկութիւն է յայտնում մինչեւ Ճանճիկեանի խանութը ուղեկցել մեզ: Դա ուրախացնում է մեզ, առաւել՝ Համատեղին: Վաղուց տիկին Սրբուհու տրամադրութիւնն այդքան բարձր չի եղել:

Արդէն դրսում խորհուրդ եմ տալիս այցելել Սովետական Հայաստան:

—Թէկուզ թուրքական հաշուարկների համար, կը հաշուէք, կը տեսնէք, թէ տասից քանիսն են «փրկւում»:

Նա սեղմեց իմ ձեռքը:

—Տիկին Սրբուհին ուկար է, մինակ չեմ կրնար թողուլ:

Ես հաւատում եմ Համատեղի անկեղծութեանը: Սակայն կարծում եմ պատճառը միայն դա չէ: Ինձ թւում է, թէ նա խուսափում է Սովետական Հայաստանի հետ երես առ երես հանդիպելուց, որովհետեւ համոզուած է, որ իր մտատանջութիւններն ու կասկածները կարող են արտայայտուել բարձրաձայն, ի լուր ամէնքի:

Մինչդեռ նա պատրաստ չի գրան: Դեռեւս պատրաստ չի («Ամերիկան մթնում է...», Երեւան, 1966)

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

«ԱՅԴ ԽԼՈՒՐԴԻՆ ՀԵՏ»...

«Սովետական գրականութիւն» ամսագրին մէջ կամ «Ամերիկան մթնում է...» խորագրուած հատորի էջերուն տեղաւորուած Ստեփան Վարդանեանի խնդրոյ առարկայ գրութիւնը կարդացողներէն ոմանք զայրոյթով լեցուցան օրին, իսկ ուրիշներ քմծիծաղով դիմաւորեցին համաչնավար գրիչներուն մօտ սովորական դարձած հերթական յերիւրանքը: Ըստ սիրող կարծիքին, Համաստեղը չէր կրնար այդպէս անճրկիլ բազմամեղ համայնավարութեան մէկ անյայտ պաշտօնեային դիմաց, ոչ ալ Սրբուհի Համաստեղ կրնար սա Հեւի շարադուշակ յայտարարութիւն ընել, թէ՝

«—Բարեկամս,— դիմում է նա ինձ,— մինչեւ հիմա աշխարհիս մէջ ոչ մէկը իր սեփական հրաժարականովը կեանքից չէ հեռացած: Թողէք, որ Դաշնակցութիւնը մինչեւ վերջ կրէ իր խաչը: Ա-նոր վերջին շատ չէ մնացած»:

Ստեփան Վարդանեանի «որսացած» այս եւ նման յայտարարութիւններուն ու «պապանձումներուն» մէջ ենթադրելի էր յերիւրուած բան մը եւ յերիւրանքը բացայայտուեցաւ շուտով, նոյնինքն Համաստեղի կողմէ:

Վարդանեան-Համաստեղ հանդիպման նկարագրութիւնը չվրիպեցաւ Սփիւռքի մամուլին ուշադրութենէն: Ի միջի այլոց, «Ազդակ» օրաթերթին մէջ եւս այդ մասին յոյս տեսան յաջորդական երկու նշմարներ, զորս կը ներկայացնենք հետագայ էջերուն, Վարդանեանի սարքած սուտերը եւ Համաստեղի ճշմարտութիւնը նոր սերունդներուն եւս իմանալի դարձնելու կրկնակ մղումներով:

Երեւանէն մեկնած եւ Ամերիկա այցելած Վարդանեան անունով անորոշ մարդ մը, այսինքն՝ չփոթ ստեղծելու համար ճամբայ հանուած տուրիստ մը, իր տպաւորութիւններն ու հանդիպումները ամփոփող ուղեգրութիւն մը հրատարակութեան տուած էր «Սովետական գրականութիւն» ամսաթերթի Ապրիլի համարին մէջ՝ «Ամերիկան մթնում է» խորագրով:

Այս «մթնող» Ամերիկային մէջ՝ «Համաստեղ. Ներեւում մնացած ճամբաներ» ենթախորագրին տակ, տուրիստը նկարագրած է Համաստեղի տան մէջ, Համաստեղին բացած սեղանին շուրջ, Համաստեղի հետ ունեցած իր հանդիպումը, ու ըսած բաներ, որոնք, ընդհանրապէս, տուրիստական նկարագիր մը ունին, այսինքն՝ լրջութենէ հեռու են, պարզեւչտ չեն, անհեթե՛թ են: Տուրիստը Համաստեղի սեղանին փռած է ինչ որ սովետական բան կայ, մինչ գրագէտը, հիւրընկալի լրջութեամբ մտիկ կ'ընէ, կը ժպտի, ու երբեմն միայն, այլ միշտ մեղմօրէն կը յայտնէ իր կուսակցութեան տեսակէտները եւ իր համոզումները: Իսկ միւսը.

«Համաստեղը փորձում է պաշտպանութեան տակ առնել այն կուսակցութեանը, որի պաշտօնական անդամը լինելու դժբախտութիւնն է ունեցել, ջանում է բացատրել նրա կործանարար գաղափարականութեան հետեւանքով մեր ժողովրդի գլխին եկած արհաւիրքները»:

Իր գոց որված դասերը արտասանելէ ետք՝ Դաշնակցութեան կապակցութեամբ Համաստեղի կատարած մէկ հաստատումին ի լուր՝ տուրիստը «կը զգա՛յ».

digitised by A.R.A.R.@

«Զգում եմ, որ եօթանասունամեայ գրողը յուզում է. Նա համաձայն չէ Դաշնակցութեան հետ, բայց չի կարողանում այդ բարձրաձայն ասել»:

Օրին ցաւեցանք, երբ կարդացինք այս տողերը:

Մեզի ներկայացուած Համաստեղը՝ Համաստեղը չէր:

Այդպիսի Համաստեղ մը գոյութիւն չունէր, չէր կրնար գոյութիւն ունենալ:

Իր մտածումներէն վախցողը Համաստեղ չէր ըլլար:

Մարդ մը ներկայացնելու այդ ձեւը պարկեշտ ձեւ մը չէր, տուրիստական էր, սովետակա՛ն էր: Ցաւեցա՛նք:

Զմոռնանք, որ Համաստեղը Հայաստանէն եկած հայ մարդ մը հիւր ընդունած էր, «բոլորն ուրախ էին, որ Հայաստանից հիւր ունեն իրենց տանը», սեղան բացած էր այդ մէկուն, սովետական քարոզներ լսելու համար դուռ բացած չէ՛ր, եւ ոչ ալ քաղաքական ու կուսակցական վէճերու ի խնդիր հրաւէր ուղղած: Այս պայմաններուն մէջ, բնական է, պիտի մնար բարեկիրթ, լուրջ: Ու մնաց բարեկիրթ, լուրջ: Հայերու դէմ՞ հայ մարդ մը, որուն մտքէն չէր անցներ, թէ հիւրերը հիւրընկալի իր ժպիտներուն եւ չափի զգացումը պահելու հոգածութեան կրնան տարբեր խորք մը տալ եւ վերածել իր սեղանը հաւատաքննութեան տեսանի մը: «Գիւղ»ի խոնարհ գիւղացին իրաւունք ունէր մտածելու. «Չէ՞ որ մինչ այդ ոչ ոք Հայաստանից չի եղել այստեղ»:

Օրին ցաւեցանք, այլ չուզեցինք խօսիլ այդ մասին: Յետոյ Համաստեղը կար: Երնեկ իր «անհամաձայնութիւնը» բարձրաձայն պոռալ «այն կուսակցութեանը, որի պաշտօնական անդամը լինելու դժբախտութիւնն է ունեցել»:

Այսօր չկայ Համաստեղը. բայց կայ իր մէկ նամակը ու նամակին մէջ ի՛նքն է նորէն, իր ուխտին ու համոզումներուն հաւատարիմ, իր տեսակէտներուն տէր, բարի, գիւղացի, որ եօթանասուն տարեկանին տակաւի՛ն կը մտածէ, որ կրնայ իր տունը մտած մարդէն «որպէս բարեկամ բաժնուիլ»:

Նամակը գրուած է Նարդունիին ու տպուած «Ցառաջ»ի 8 Դեկտեմբերի թիւին մէջ: Համաստեղ վրդովումով կը գրէ.

«Տեսայ «Ազրազ»ն ալ այդ Վարդանեանին ըսելիք ունեցաւ: Ես ալ կ'ուզէի հիւմորով պատասխանել. բայց ինծի ըսին որ չ'արժեր պատասխանել: Խաբարուած նկարագիրներ են ու կատուի մը պէս պարտիայի փէշերուն քսուող: Իմ խօսածներէս մէջբերում ըրած չէր, երբ իրեն կը բացատրէի Դաշնակցութիւնը, իր պատմութեան ընթացքին, մինչեւ Հայաստանի մը գոյութիւնը, որ հիմա էժան հայրենասիրութիւն կը քարոզէ: Ինծի համար անակնկալ էր իր ելոյթը, որովհետեւ որպէս բարեկամ բաժանուեցանք այդ խլուրդին հետ»:

Կասկած կա՞ր մի թէ, որ այդ այդպէս էր ու անակնկա՛լ էր: Եթէ Հայաստանէն դուրս ելլողը բանաստեղծ չէ, երգիչ չէ, գիրասան չէ, պա՛րզ է, որ այն միւսն է, խլո՛ւրդն է, ու իր հանդիպումներն ու բաժանումները նոյն ոճը ունին միշտ՝ խլրդային են, խորհրդայի՛ն են... («Ազդակ» օրաթերթ, 12 Դեկտեմբեր, 1966):

XX

digitised by A.R.A.R.@

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ

Գրողի մը կամ հանրային ոեւէ գործոնի համար, թերեւս չկայ յաւուրթ աւելի մեծ պարագայ, քան սխալ հակցուելու, շրջուած հակցուելու պարագան, ինչպէս պիտի տարագէր մեծն Օշական՝ իր անձին ու գրականութեան գէմ շղթայագերծուած ծանօթ գրոհին առթով։

Կը հաւատաս ժառանգական ակօսով քեզի հասած գեղեցկութիւններու, նուիրագործուած խուէյներու, կեանքէն վեր ու մահէն վեր դասուած արրութիւններու. ամբողջ երիտասարդութիւնդ կը նուիրես անոնց, եռանդդ, խօսքդ, գրիչդ, լիսուն տարիդ, կը գոհաբերես ի՛նչ որ թանկագին կը համարես, լաւագոյնդ, եւ երբ պարտք մը կատարողի թեթեւ գոհունակութիւն մը ապրելու պահը ներկայացած կը կարծես, ահաւասիկ ճիշդ այդ պահուն, կը գտնուին մարդիկ, մանրահոգի մանրուքներ, որոնք կը ներկայացնեն քեզ հակառակ ձեւով, «շրջուած» ձեւով։

Այդպէս եղաւ Օշականի պարագային։

Գլուխ վերապահութեամբ մը՝ այդպէս եղաւ նաեւ Համաստեղի պարագային։

Օշական շրջուած հակցուած ըլլալու վիշտով մեռաւ։

Մանրուքի մը պատճառով վիշտով մեռաւ նաեւ Համաստեղ։

Ինք անգամ մը խօսած էր այդ մասին եւ մենք արձագանգած էինք իրեն։ Կը թուի, թէ Վարդանեան կոչուած մարդուն խլրդային ելոյթը կարծուածէն աւելի խոցած է եօթանասունամեայ գրագէտին սիրտը, որ խօսած է վերեւ յիշուած արարածին «ժանգոտած յօդուածին» մասին, այս անգամ «Ցուսաբեր»ի խմբագրին ուղղուած նամակի մը մէջ, դարձեալ դառնութեամբ, սխալ հակցուած, ներկայացուած մարդու մը ցաւագին չեչտով։

«Ուզեցի ծանօթացնել իրեն Դաշնակցութիւնը, որուն մասին տգէտ են եւ նախապաշարեալ։ Զգիտեմ ինչ հաշուով, ուզած է գիս սադիստ ներկայացնել։ Բլուրին վրայի մեր խոշոր տունը փոքրացուցեր է։ Կահ-կարասիները ներկայացուցած է մաշած, գորգերը՝ էժանագին, իսկ օդին՝ թրքական։ Եւ ըսել, որ մենք այնքան ուրախութեամբ եւ սրտբաց ձեւով ընդունեցինք Հայաստանի մեր երկու հիւրերը, որոնք փափաք յայտնած էին գիս տեսնելու։ Լաւ կ'ընէինք եթէ անտեսէինք իր յօդուածը, որ ինչպէս հաւատացած եմ, արտայայտութիւնը չէ հայրենական մեր եղբայրներու զգացումներուն»։

Զգիտեմ. ի՞նչ հաշուով։

Ի՞նչ հաշուով։

Բայց պարզապէ՛ս պաշտօնով։ Այլապէս հայ մարդ մը կրնար ուրախանալ միայն, որ հայ գրագէտ մը իր արդար վաստակով, օտար քաղաքի մը մէջ կրցած է անօթի չմնալ, կահ-կարասիներ ունի եւ կահ-կարասիները մաշած չեն, գորգերը ճոխ են, սեղանը՝ առատ։ Այդ պատկերին դէմ՝ հայ մարդը կրնար ուրախանալ միայն, բայց իր հոգիին ու աչքերուն մէջ ի յառաջագունէ մութ դիզուած ու Ամերիկայի մէջ ամէն ինչ մութ տեսնելու պաշտօնով ճամբայ հանուած մարդը, ո՛չ միայն պզտիկ լուսամուտ մը չէ ձգած իր մթնած հոգիին վրայ, այլեւ թրքացուցած է մինչեւ իսկ իրեն հրամցուած Համաստեղի օդին։ Կը թուի, թէ որքան ալ մեծ ուրախութեամբ եւ սրտբաց ձեւով ընդունինք «շուրջերկրեայ թափչքներ» կատարող այս մարդերը, քան չի փոխուիր կացութենէն, կը մնան իրենց պաշտօնին վրայ եւ իրերն ու իրողութիւնները կը ներկայացնեն իրենց յանձնառութիւններուն համաձայն, իրենց ներքին պատկերով մութ, պղտո՛ր։

Բայց կը մնայ միայ պարագան, մխիթարականը, Համաստեղի հաւատքը, ըստ որում՝ իր ներքին տունը եւ արտաքին տունը աղքատացնող, ներքին կահ-կարասիները եւ շօշափելի կահ-կարասիները մաշեցնող, գորգերը էժանացնող եւ օդին թրքացնող այս աղքատ, մաշած, էժան ու հայու սրտով չտրոփող մարդուն խարդախութիւնը «արտայայտութիւնը» չէ հայրենական մեր եղբայրներու զգացումներուն» («Ազդակ» օրաթերթ, 19 Դեկտեմբեր 1966)։

XX

digitised by A.R.A.R.@

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՀԱՐՈՒՆ

Յունուար 1 1966

Մեր շատ սիրելի Գուրգէն

Դեկտ. 14ի նամակն ստացայ: Կը սպասէի: Գրած եմ, որ Բու նամակներդ այնքան կարեւոր են, իմ օրուայ մտածումներուն խառնուած: Մետաքս թելերով հիւսուած կապ մը Հայաստանի հետ:

Քիչ մըն ալ զարմացայ, որ այդ շատ լաւ տղան, Ստեփան Վարդանեանը, մեր հանդիպումէն՝ իրեն հետ բերած է Բեզի եւ իրեն համար ոչ այնքան լաւ տպաւորութիւն մը, որ *«Համաստեղը Խորհրդային Հայաստանի կենացը խմած չէ»*: Մենք չենք կրնար ըմբռնել այդ «խորհրդայինը» որ ստեղծեց Ստալին ու Բերիա ու խաթարեց ինչ որ մարդկային էր ու մանաւանդ ազգային: Դուք ճաշակեցիք այդ դառն պտուղը: Այն օրերուն մենք հոգեպէս աֆսորուեցանք ձեզի հետ եւ մեր հոգիի դռները թակեցին: Հայ ժողովուրդը որքի մը պէս դաժան խորթ մօր մը յանձնուած էր: Այդ «խորհրդայինն» էր, որ կիրք ու նախապաշարում ստեղծեց Սփիւռքին եւ մանաւանդ Դաշնակցութեան դէմ: Երկու կարեւոր ընելիքներ ունէին մեր բանաստեղծներն ու գրականագէտները *(անընթեռնելի է)* փառաբանութիւն ընել բռնակալին եւ Դաշնակցութեան հայհոյել: Այդ շրջանի գրականութիւնը կարելի է ոչնչ լաթի մը պէս վառել միայն: Միշտ ալ ուզած եմ չափը պահել իմ մտածումներուն եւ հաւատքին մէջ: Կուսակցական կիրք ունեցած չեմ: Եթէ կայ բան մը որ իմ մէջ չափ չունի այդ Հայկականութիւնն է եւ ես կը հաւատամ, որ Հայաստանի մէջ ինչքան ուժեղանայ հայկականութիւնը, այնքան հետզհետէ մաշումի կենթարկուի սա օտար «խորհրդայինը»: Մենք համաձայն ենք հովանաւորութեան *օրինակասիրոն*ի բայց որ հայ ժողովուրդը իր հոգիին ու մարմնին տէրը պէտք է ըլլայ: Եթէ այսօր կը խանդավառուենք հայ մշակոյթի վերելքով Հայաստանի մէջ, հայ ժողովուրդը իր ներքին պայքարներով ու տանջանքներով ձեռք բերած է: Դեռ երէկ էր, որ թէ դուրսէն ու թէ ներսէն մտրակի սաստումներ կային: Այսօրուայ մեր մշակոյթի Հայկականութիւնն է, որ ներքնապէս պիտի ուժեղացնէ Հայաստանը: Ինձի համար շատ մեծ հաճոյք էր Հայաստանէն հիւր ունենալ մեր տան մէջ: Սեղանի շուրջ էինք, սկսանք խմել: Ուրախ էի, որ Սրբուհին ալ լաւ տրամադրութեան մէջ էր, այդ օր ան ես մասնակցեցաւ մեր վէճերուն եւ զրոյցներուն:

Մոսկուայէն, Ռուբէն Գրիգորեան, համակրելի ժպիտով, կակուղ աչքերով, շատ չէր մասնակցեր մեր զրոյցներուն, սակայն կը սիրէր կրկնել, որ ինք 40 տարուայ կոմունիստ է եւ կը պարծենար շատ բարի արտայայտութիւնով.

digitised by A.R.A.R.@

տեսակ մը հպարտ պարծանք էր իրեն համար, որ տեղական դրամի նման առաւելապէս տեղական արժէք ունէր: Ինձի համար անակնկալ էր, երբ մեր շատ հաճելի զրոյցներու ընթացքին, Վարդանեանը յանկարծ, վերէն ինկած օդաքարի մը նման հարցուց.

—Համաստեղ, դուք դաշնակցակա՞ն էք:

—Անշուշտ, երբ դուք տակափն ծնած չէիք:

—Մեղք... եթէ դաշնակցական չըլլայիք, այժմ ձեր գործերը կը հրատարակէին Հայաստանի մէջ,- եւ կրկնեց «մեղք» բառը:

—Եթէ մեղք մը կայ,- ըսի,- ան ալ կարելի է Հայաստանի խորհրդային գծին եւ նախապաշարումին վերագրել: Ինչու՞ «մեղք» երբ իմ գործերը հայ ժողովուրդի նկարագիրը արտայայտող արժէքներ են եւ առաւելապէս գեղարուեստական արժէքներ ունին:

—Թէ ի՞նչ գտած ես Դաշնակցութեան մէջ,- հարցուց եւ արդէն զրոյցը տարածուեցաւ: Ուզեցի ըսել, Բարացած նախապաշարում կայ Դաշնակցութեան հանդէպ, այդպէս ալ դատիարակուած էք դպրոցով եւ «անհատի պաշտամունքի» շրջանի գրականութիւնով, ամէն բան գլխի վրայ դարձնելով: Ուզեցի ըսել, որ դաշնակցականները ինձի պէս առանց կոտոշի մարդիկներ են եւ անոնց մէջ կայ ուժեղ հայկական աւանդութիւն մը մանաւանդ որ գիտէ գոհեր տալ եւ հերոսներ ստեղծել ֆիտայական շրջանէն սկսեալ մինչեւ Հայաստանի Հանրապետութիւն, որու սահմանները արիւնով գծուեցան: Այսօրուայ Հայաստանը կրնար թուրքինը ըլլալ, մանաւանդ որ մենք այնտեղ մեծամասնութիւն չէինք, եթէ Սարդարապատն ու Ղարաքիլիսէի կռիւները չըլլային, եթէ չի մաքրուէր օտար տարրերէն: Այժմ սկսած էք պատմական արժէք տալ Սարդարապատին, Դաշնակցութիւնը մէջէն դուրս հանելով՝ «խորհրդային» ընելու համար «ժողովրդային» բառը գործածած էք: Ժողովուրդը երբ չառաջնորդուի, չկազմակերպուի, կը դառնայ ամբոխ: Կ'ուզէք տէր դառնալ Անդրանիկին եւ Քիչ կը մնայ անոր բերանը Մարքսէն խօսքեր դնէք խորհրդային դարձնելու համար, հեռու պահելու համար Դաշնակցութեանը: Տէր կը դառնաք Վարուժանի, Սիամանթոյի, երբ անոնք որպէս դաշնակցական նահատակուեցան: Անոնք եւս կ'ուզէք հեռացնել:

Նման յետ-առաջ-հեռաւոր-մօտաւոր խօսքեր եղան. կ'երեւի խմելիքն էր, որ զիս Քիչ մըն ալ շատախօս դարձուց (ընաւորութեամբ քչախօս եմ) եւ այդ՝ բոլոր հաճելի տրամադրութեամբ: Իսկապէս համակրելի էր Վարդանեանը. եւ այդ բոլոր զրոյցներուն մէջ ուզեցի նաեւ ըսել, որ մեզի համար Հայաստանն ու հայ ժողովուրդն է էականը: Այսօր կը խանդավառուինք Հայաստանով, մեր Երեւանով, որովհետեւ համեմատօրէն խաղաղ պայմաններու մէջ հայկականութիւնն է, որ կ'ուժեղանայ, բան մը, որ դուրսէն չի գար, վանեցու, մշեցու ոգին է, որ կ'արտայայտուի մեր գրականութեան, մեր բանաստեղծութեան եւ մշակութային վերելքին մէջ. մեզի համար հիմնականը այդ ոգին է:

Այդ զրոյցներու ընթացքին էր, որ Քառասուն տարուայ կոմունիստ Ռ.Գրիգորեանը, գաւաթը վերցուց՝ ըսելով. «Մենք կը խմենք խորհրդային Հայաստանի կենացը»: Ես ալ իմ կարգին գաւաթ վերցուցի եւ ըսի. «Մենք այժմ մոռնանք «խորհրդայինը» եւ խմենք Հայաստանի եւ հայ ժողովուրդին կենացը»:

Այդ էր միայն տարբերութիւնը իմ, 40 տարուայ կոմունիստի եւ սիրելի Վարդանեանին միջեւ: Իմ զրոյցներս առաւելապէս Հայաստանով ու հայ ժողովուրդով տարուած էին: Ձէ, կուսակցական կիրք ունեցած չեմ. իմ մէջ այդ՝ Հայկականութիւնն է եւ այդ նոյնքան ուժեղ է նաեւ Քու մէջ, սիրելի Գուրգէն: Եթէ գամ, «միասին պիտի խմենք Հայաստանի ու հայ ժողովուրդին կենացը»: Գուցէ թերութիւն է, որ հաշիւներ ու փառասիրութիւն ունեցած չեմ: Ինկած եմ

digitised by A.R.A.R.@

իմ գոյութենէն բան մը տալու հայ ժողովուրդին եւ զանազան նկատումներով Հայաստանի հրատարակչականը տակաւին որեւէ բան հրատարակած չէ ինձմէ, երբ լայն ու երկար տեղեր կը տրուին Հայաստանի թերթերուն մէջ Սփիւռքի միջակութիւններուն։ Կ'ուզէի, որ իմ աշխատութիւններուն հաղորդակից դառնար հայ ժողովուրդը. ինչ որ լաւ բան ըրած եմ, հայ ժողովուրդին կը պարտիմ, թերութիւնները իմս են։

Իրաւ, շատ խօսեցայ։ Կարծեմ *քահչէ* տարի։ Այո՞։ Ուզեցի Քեզի հետ երկար զրոյց մը ընել։

Ըսե՞մ, որ այստեղ ինձմէ բոլորովին անկախ կազմուած է յանձնախումբ մը իմ գրական գործունէութեան 50ամեակը տօնելու։ Ցոբելեանին կ'ուզեն համազգային բնոյթ տալ։ Թէ ինչ պիտի ըլլայ, ես ալ չգիտեմ։ Պիտի ըլլայ 1966ի Մարտին կամ Մայիսին։ Այս մասին հետաքրքրութիւն կայ Լիբանանի եւ Պարսկաստանի մէջ. իսկապէս շատ ալ սրտովս չէ, Սրբոնու վիճակը շատ է մտահոգիչ։ Ճիշդ է, վերադարձաւ հիւանդանոցէն, բայց որ հիւանդութիւնը իրեն հետ է։ Հիւանդանոցին մէջ չի կրցաւ ձգել։ Շաբաթ անգամ հիւանդանոց կ'երթայ արեան եւ զանազան քննութիւններու համար։ Բժիշկները կը հսկեն, որ գէթ եղածը պահեն։

Կը յուսամ լաւ է առողջութիւնդ, սիրելի Գուրգէն, լաւ են առողջութիւնները Անտոնիանցի եւ փոքրիկ Գուրգէնիկին։ Շատ սիրալիր բարեւներ Սրբուհիէն, Լորիկէն, Արմինէէն Քեզի, Անտոնիանցին եւ Գուրգէնիկին։ Հաղորդէ մեր բարեւները մեր լաւ բարեկամներուն, տիկ. Բ.Գրիգորեանին, Վ.Համազասպեանին եւ Ա.Կապուտիկեանին եւ հարցնողաց։

Տակաւին շնորհիւ լուսանկար մը չունեցան մեր օրիորդները, որ ղրկեն Քեզ։ Հանոյքով ստացան Քու լաւ լուսանկարը։ Վարդանեան մեր տնեցիներուն լուսանկարները հանեց։ Կը յուսամ օրինակ մը կու տայ Քեզ։ Մօտերս պիտի ունենանք լուսանկար։ Այն ատեն կը ղրկենք։ Այսօր նոր տարուան առաջին օրն է եւ իմ առաջին նամակը Քեզի։ Մի քանի օր առաջ Նոր Տարուայ տոմս մը փոստին յանձնեցի շնորհաւորելու ձեր եւ ձեր տան Նոր տարին. ու առողջ ըլլաք, աւելի նորանոր յաջողութիւններ գրական աշխատանքներուդ։ Բարեւներ մեր նոր բարեկամ Ս.Վարդանեանին (*«Ազատամարտ»*, 1991, թիւ 5)։

Շատ սիրով՝
ՀԱՄԱՍՏԵՂ

Համակրելին ու ...խլուրդը

Կանխող էջերուն տրուած գրութենէն ճիշդ քառորդ դար հոլ, շնորհիւ Երեւանի «Ազատամարտ» շաբաթաթերթի լոյս ընծայած Համաստեղի վերի նամակին, ընթերցող հասարակութեան մէկ խաւը առիթ ունեցաւ կարդալու Համաստեղ-Վարդանեան հանգիպումը ընդգրկող երկրորդ նկարագրութիւնը։

Առաջին ակնարկով իսկ կը զգացուի երկուքին հակայ տարբերութիւնը։

Հայաստանը, հայութիւնը, հայկական ոգին ամէն բանէ վեր դասող եւ անոնց վրայ որեւէ նոր որակ գումարող ամէն ուժի յարգանք ընծայող դաշնակցական

digitised by A.R.A.R.@

մարդն է մէկ կողմէ եւ, միւս կողմէ՝ գաղափարական հակառակորդին հաւատարմութիւնը ամէն գնով մատի փաթթոց գարձնելու միտող «կարմրագգեստ» պաշտօնեան, որ ինքն իրեն թոյլ կու տայ նոյնիսկ դիմացինին հետ վարուիլ որսկանի խայծերով.

—Մեղ՞... եթէ դաշնակցական չըլլայիք, այժմ ձեր գործերը կը հրատարակէին Հայաստանի մէջ։

Ստեփան Վարդանեան եւ զինք ու իր նմանները նման առաքելութիւններով ճամբայ հանող հաշուագէտները քիչ անգամ հասկցան, որ հրաւէրներով ու հրատարակչական խայծերով կաշառուելու թուլութիւնը ամէն մարդու մէջ հաստատելի բնաւորութեան գիծ չէ։ Նման ապտիւներու կրնային ընդառաջել եւ արդէն ընդառաջեցին իրենց արժէքին հանդէպ կասկած ունեցող կիսակատարները, մէկ ալ՝ գրական որձառումներէ չերկնչող աճպարարները։

Դառնանք եւ, վերտին կարդանք կամ մտարերենք Ստեփան Վարդանեանի գրութիւնը ու հարց տանք, որ եթէ Համաստեղ այդ գրութեան ոգին մատնող որեւէ նշան կռահած ըլլար անոր խօսքերուն, ակնարկներուն ու առաջարկներուն մէջ, Մահարիին ուղղած նամակին մէջ խնդրէս համակրելի պիտի գտնէ՞ զայն կամ պիտի գրկէ՞ր «բարեւներ մեր նոր բարեկամ Ս.Վարդանեանին»։ Կը կասկածենք։ Միւս կողմէ՝ կրնայ եւ ճիշդ ըլլալ Համաստեղի առաջին տպաւորութիւնը։ Համաստեղի յարիին տակ ան համակրելիութեան սահմաններուն մէջ մնացած ըլլալ կը թուի ու Մահարիին ներկայացած առեն յաջողած է գարձեալ պահել ինքզինք. «Համաստեղուբեանց մասին պատմեց սիրով եւ մեծ համակրանքով»։

Կը նշանակէ, թէ նոյն անձը տեղ մը ա՛յս է, եւ ուրիշ տեղ՝ ա՛յն։ Հոս իր էութեան հետ է, հոն՝ պաշտօնի վրայ, հոս համակրելի է, հոն՝ խլուրդ։

Վերջին հօթանասուն տարիներուն, կրկնած ենք քանի՞-քանի՞ անգամ, մեր կեանքին մէջ բոլորովին նոր գործօն մը եղաւ նոյն անձին մէջ երկու էութիւն կրող այս տիպարը, որ տեսածին, լսածին, ապրածին, զգացածին եւ տրամաբանածին ճիշդ հակառակը ըսաւ, պատմեց, գրեց սարսափելի առնասրտութեամբ մը, յերիւրածը իբրեւ իրականութիւն ներկայացնելու ահաւոր անպատասխանատուութեամբ։

Հոս բանանք պզտիկ փակագիծ մը՝ ըսելու համար, որ արտասահման գործուղուած գործակալները չէին միայն, որ ստութիւն խմբագրեցին իրենց հնապանդ ընթերցողներուն, այլ ներս հրաւիրուած հնապանդները իրե՛նք եւս նոյնը ըրին, լրծանաչուրթի փառաբանելով այն բոլոր երեւոյթները, որոնք ուսմունքային թէ արձանային իրենց առօրեականութեամբ բեռ էին մեր ժողովուրդին, կոտտացող վէրք էին, նուաստութեան մարմնող պատճառ։ Կը պարզուի, որ համայնավարութեան տիրակալութեան օրաք դուրս եկած ուղեգիրն ու ներս առնուած յուշագիրը նոյն ցուցմունքներով շարժած են եւ անոնց կուտակած թուղթերը անջնջելի ամօթը կը կազմեն մեր գիր ու գրականութեան։

Գոցենք փակագիծը...

Ու ըսենք, որ ճշմարտութիւնը անպատիժ չի ձգեր իրեն դաւաճանող ի պաշտօնէ գործակալները եւ անպաշտօն վարձկանները, որքան ալ ուժի դիրքերուն վրայ իրենք գիրենք անխոցելի համարեն առաջիններն եւ միւսները իրենու իրենց պաշտամունքը իրապարտութեան քողով ծածկելու խորամանկութիւններ սարքած ըլլան։

Համայնավար աշխարհին թէ ազատ երկիրներու տակ բիւր-բիւրե՞ր ենթարկուեցան այդ անողոք պատիժին, քանի՞-քանի՞ Վարդանեաններ ներսէն ու քանի՞-քանի՞ ուրիշներ դուրսէն, ոմանք գուցէ ակամայ, ուրիշներ՝ սուուգապէս կամաւ, ա՛նքան՝ որ Համաստեղի մասին «այդ խլուրդին» յերիւրած սուտերը աճապարեցին իրրեւ ճշմարտութիւն ներկայացնել իրենց թերթերէն, յանուն կարմիրներուն, կարմրելու ունակութիւնը մոռցած մարդոց անհուն շնականութեամբ։

digitised by A.R.A.R.@

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

"ՇԻՐԱԿ" ՀԱՆԴԷՍԻ ԱՌԱՋԻՆ ԹԻՒԸ

Հայաստանի գրողներու միութեան Կումայրիի մասնաճիւղը օժտուեցաւ իր յատուկ հրատարակութեամբ՝ «գրական-գեղարուեստական-քաղաքական-հասարակական» «Շիրակ» երկամսեայ հանդէսով, որուն առաջին թիւը լոյս տեսաւ այս տարեսկիզբին, 5000 տպաքանակով: Գագիկ Յովհաննիսեանի գլխաւոր խմբագրութեամբ լոյս տեսած «Շիրակ» երկամսեայի առաջին համարը, որ կը բաղկանայ 128 էջերէ, ի մի կը խմբէ 11 գրողներու գեղարուեստական, պատմական եւ հասարակական գրութիւնները, ինչպէս նաեւ՝ Գրիգոր Եպս. Բունիաթեանի եւ Վահագն Դաւթեանի ողջոյնի խօսքը, Լեւոն Արսէնեանցի «Լուսանկարային ժամանակագրութիւն» լուսանկարներու շարքը եւ Խաչիկ Ասատրեանի հաւաքած «Գիւմրուայ հանաքներ» անեկդոտները:

Գրիգոր Եպս. Բունիաթեանի անվերնագիր եւ կարճ ողջոյնի խօսքը, յայտնելէ ետք, որ «աղէտը իր ամբողջ ահաւորութեամբ չկարողացաւ կտրել շիրակցու մէջքը», շրջանի տպագնդաւոր գրողներու ծանօթացման եւ նոր անուններու բացայայտման կոչուած «Շիրակ»ի ծնունդը ողջունելով կը մաղթէ, որ հանդէսը իրաւամբ ըլլայ պայծառ մտքի եւ զգեցիկ ու ճշմարիտ խօսքի ճառագայթուն փարոս մը, որպէսզի ո՛չ միայն իր մասնակցութիւնը բերէ հոգիներու ազնուացման առաքելութեան, այլեւ՝ «Ամէն հայի հոգում ու հոգեբանութեան մէջ ամրացնի այն համոզումը, որ սիրելի Հայաստան աշխարհի ո՛ր մասում էլ մենք ծնունենք ու ապրենք, մէկ եւ միեւնոյն հայ ժողովրդի անբաժան մասն ենք՝ իր

նոյն առօրեայով եւ նոյն ապագայով»:

«Ողջոյն եւ բարի երթ» խորագրեալ Վահագն Դաւթեանի սրտի եւ հոգու խօսքը, առաջին հերթին, կ'ընդգծէ մշակութային կշիռն ու իբրայատկութիւնը իր հարուստ աւանդներով ու զանձերով Հայաստանի ամէնէն ինքնատիպ շրջաններէն մէկը հանդիսացող Շիրակ աշխարհին, որուն բառին ու բանին, բանահիւսութեան ու բանաստեղծութեան, երգին ու նկարչութեան, ճարտարապետութեան ու բարքերուն հանդէպ շիրակցիին ցուցաբերած գարուար սէրն ու գուրգուրանքը պերճախօս փաստերն են այն ճշմարտութեան, որ «Շիրակ» հանդէսը պիտի բարձրանայ «այդ աւանդներուն ամրակուռ հիմքի վրայ»: Ապա, յայտնելէ ետք, որ «գեղարուեստական ստեղծագործութիւնը տարերային, մեծ մասամբ ենթագիտակցական երեւոյթ է, եւ խորհուրդ-

digitised by A.R.A.R.@

ՈՒԵ տալն առնուազն անհեթեթութիւն է», պատութեան կենսական նախապայմանը վեր առնելով, «որպէս հին լրագրող»՝ Վ. Դաւթեան կ'առաջարկէ յատուկ կարեւորութիւն ընծայել հացի ու շուրի չափ անհրաժեշտ հրապարակագրութեան, Եիրակի սահմանակից Զաւախքի շնորհալի գրողներուն եւ Եիրակը բնորոշող ժողովրդական սրամտութիւններուն եւ գուարճալի պատմութիւններուն:

Ողջոյնի խօսքերէն ետք, «Եիրակ» կը բացուի Համլէտ Մովսիսեանի «1988ի ազդաւները» հրապարակագրական գրութեամբ, որուն կը յաջորդեն Գեուլնարա Խոյէյեանի եւ Սիփան Եիրակի բանաստեղծութիւնները: Ապա, խմբագրական կարճ նոթով մը Պօղոս Մնապեան արձակագիրն ու հրապարակագիրը ներկայացնելէ ետք, ընթերցողին կը հրամցուի Համայնավարութեան կեղծիքն ու ոգրանքները դիմակազերծած արձակագիրին «Ես այդ շուճն եմ»ը:

28 էջերու տարածքին եւ ամբողջութեամբ «Ես այդ շուճն եմ» գրքոյկը վերահրատարակելէ ետք, «Եիրակ» իր էջերուն կը հիւրընկալէ 7 Դեկտեմբեր 1988ի երկրաշարժին զոհ գացած բանաստեղծներէն մէկուն՝ Արարատ Մըկրտումեանի քանի մը անտիպ քերթուածները:

Օրին մերժուած գործ մը՝ հանրածանօթ մանկավարժ, հասարակական գործիչ, շարք մը գիտական աշխատութիւններու եւ դասագիրքերու հեղինակ, փիլիսոփայութեան դոկտոր Հայկ Յակոբի Յովհաննիսեանի (1875-1958) 1927ի սկիզբները գրած եւ պատմական տուեալներու վրայ հիմնուած «Երկրաշարժերը Հայաստանում (602-1927)» յօդուածն է, որ «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրութեան յանձնուած է Լենինականի 1926ի աշնանաշրջանի երկրաշարժէն քանի մը ամիս ետք, սակայն չէ հրատարակուած եւ տասնամեակներ շարունակ քնացած է պատմութեան կեդրոնական արխիւի մէկ թղթապանակին մէջ: Ապա, «Եիրակ»ը սկսի հրատարակել մերժուած մէկ այլ գործ մը՝ Հանրի Թրուայէի «Մոսկուացին» վէպի թարգմանութիւնը, որ կը պատկանի վաստակաւոր ուսուցիչ եւ թարգմանիչ Սամուէլ Զազայեանի գրիչին:

«Պարոյր Սեւակի մեկնումը» խորագրեալ յօդուածով, հայրենի քննադատ Կարլէն Դանիէլեան նոր լոյսեր կը սփռէ Պ. Սեւակի գրական կեանքի ոգիականին, բայց ի մասնաւորի «Եոիցի լոյս» հատորին առիթով բանաստեղծին դէմ Քա.Կէ.Պէ.ի շղթայազերծած հալածանքներուն, բանաստեղծին ապրած դժբախտութեան եւ Սեւակի հոգիին մէջ ծաւալող «անապատային լռութեան» վրայ:

Լենինականի եւ առհասարակ հայ թատրոնի հարուստ պատմութեան վերջին 25ամեակի խոր վերլուծութիւնն ու արժեւորումը կը կատարէ Լեւոն Մուրադեան՝ «Վերջին Բառորդ դարը» խորագրեալ ուսումնասիրութեամբ, որ գրուած է Կումայրիի թատրոնի 125ամեակին առիթով:

Կը յաջորդէ ռուս անուանի գրող Կոնստանտին Սիմոնովի «Իմ զրուցակցի յիշողութիւնները Ստալինի մասին» փաստագրական յօդուածին թարգմանութիւնը, որ կը վերաբերի Ստալինը մօտէն ճանչցած եւ անոր հետ գործակցած հայազգի ծովակալ Յովհաննէս Իսակովի յուշերուն: Լեւոն Արսէնեանցի «Լուսանկարային ժամանակագրութիւն» խորագրեալ ֆօթօ-ռըփորթաժէն ետք, «Եիրակ»ի անդրանիկ համարը կը փակուի Խաչիկ Ասատրեանի հաւաքած «Գյումրուայ հանաքներ» մանրապատումներով եւ Արամայիս Սահակեանի «Տէր Աստուած, տէ՛ր կանգնիր ինձ» անուն կարճ բանաստեղծութիւնով:

digitised by A.R.A.R.@

"ԱԶԱՏՄԱՐՏ"Ի ՅԱՒԵԼՈՒԱԾԸ՝ "ՎԱՐՈՒԺԱՆ"...

Հ.Ց.Դ. Բիւրոյի հայրենի պաշտօնաթերթ «Ազատամարտ» շաբաթաթերթը օժտուեցաւ իր գրական-մշակութային յաւելուածով՝ «Վարուժան»ով, որուն առաջին թիւը լոյս տեսաւ 1 Յուլիս 1992ին։

«Ազատամարտ»ի էջերուն ծաւալն ու քանակը ունեցող (մեծադիր 16 էջ) «Վարուժան»ի առաջին էջին ճախ անկիւնը գետեղուած է Հայ ժողովուրդի վճռականութիւնն ու ուխտը թարգմանող խորհրդապատկեր մը, իսկ վարի աջ անկիւնը՝ հաւատքի ու պայքարի նոյն ոգին գրականացուցած Ռափայէլ Պատկանեանի «Երդում» խորագրեալ բանաստեղծութիւնը։

«Ազգը մշակոյթով է ազգ» խըմբագրականը, որ կը սկսի Հայաստանի այժմու կացութեան քննարկումով, կը ծանրանայ մշակութային գործօններու կարեւորութեան վրայ։

«Արդարեւ, մենք պիտի շուտափայթ ունենանք մեր բանակն ու մեր զէնքը, բայց եւ մեր գրչի գօրութեամբ պիտի շարունակենք պաշտպանել ու վեհացնել մեզ, մեր վրձինը շարունակի պիտի պատկերել մեր տաք ու հզօր ոգին, եւ մեր բարդ հոգու արգասիք մեր անզուգական երգը պիտի վերստին ու փառահեղ թեւածի՝ ի հաստատումն մեր ոգու վեհութեան ու անկրկնելիութեան» հաստատումը ընդգծելով՝ «Վարուժան» կու գայ եզրակացնելու, որ քաղաքական, տնտեսական, ընկերային եւ հոգեբանական դժուարին ու բարդ ժամանակներ հանդիսացող մեր օրերուն, խիստ նշանակութիւն ունին հաւաքական գիտակցութիւնն ու միացեալ շանքերը՝ հիշդ կոզմնորոշուող «մշակութանպաստ մըթնոլորտ» ստեղծելու համար։ Եւ նկատի ունենալով, որ մեր մշակոյթի բազմաթիւ արժէքներ դեռ նոր պիտի արժեւորուին, իսկ «նորանոր փայլուն էջեր պիտի ձօնուին ազատագրական պայքարի մեր նոր օրերին», «Վարուժան» կը խոստանայ մէկ կողմէ «վերաբմաստաւորել մինչեւ այժմ գանազան պատճառներով սխալ իմաստաւորուածը» եւ, միւս կողմէ՝ «ապառիչ ու ճշմարիտ գնահատական տալ հին ու նոր մեր արժէքներին»։

Ռաֆայէլ Դաւոյեանի «Թագուհի-Մայր Եուշի» բանաստեղծութիւնը կ'երգէ փառքը Հայ Դատի առաջնորդ Թագուհի-Մայր Եուշիին՝ որուն «մէջ այսօր դրուած խորհուրդն անգիր / մեր պատմութեան վրայ յաւերժ պիտի զնգայ»։

«Մտաւորական հերկ» խորագրեալ էջով՝ հայրենի երիտասարդ գրականագէտ Գրիգոր Յակոբեան քնարոյ մէջբերումներով, ընդգծումներով եւ հեղինակներու ու յօդուածներու նշումով կ'ուրուագծէ համառօտ պատկերը Պոլսոյ «Ազատամարտ» շաբաթաթերթի գրական

digitised by A.R.A.R.@

յաւելուածներուն՝ «Գրական «Ազատամարտ»ը 1910-1911 թուականներին» խորագրեալ ակնարկով։

Հայերէն իր առաջին ստեղծագործութիւնները Պոլսոյ «Ազատամարտ»ի էջերուն ստորագրած Կոստան Զարեանի գործերէն կը ներկայացուին երեք բանաստեղծութիւններ՝ «Հայաստան», «Գիշերը» եւ «Մուրացկաններ», որոնք «Հայաստանում ապագրւում են առաջին անգամ»։

Վրոյր Խաչատրեանի «Կոստան Զարեանի վերադարձը» խորագրեալ կարճ ակնարկին հետ հրատարակուած վերոնշեալ բանաստեղծութիւններէն ետք, հայրենաբնակ ընթերցողը կ'ըմբոշխնէ մեծանուն այլ գրագէտի մը՝ Ռուբէն Զարդարեանի քիչ ծանօթ գրութիւններէն մէկը՝ «Երգչուհին» անուն

ԱԶԳԸ ՄՇԱԿՈՅԹՈՎ Է ԱԶԳ

Վերջին մի քանի տարիներին Հայաստանում մշակութային կեանքի անկումն ակներեւ է։ Միգուցէ մշակոյթ ստեղծո՞ւմ է. միգուցէ գրողները, երգահաններն ու նկարիչներն իրենց տներում ու արուեստանոցներում շարունակո՞ւմ են ներշնչուել ու արարել, բայց եւ ակնառու փաստ է, որ մշակոյթի նկատմամբ հետաքրքրութիւնը մեզանում վերջերս շեշտակիօրէն նուազել է։ Առարկայական պատճառներ, ի հարկէ, կան. քաղաքական լարուած կեանքը, մտաւորականութեան տնտեսական վիճակը, առեւտրի ու առուծախի աշխուժացումը, ճշմարիտ ու կեղծ գործարարութիւնը, գների ամն ու ընկերային կացութեան դժուարութիւնները, պատգամաւորների էստրադայնացումն ու ժողովրդականացումը եւ, առաջին հերթին, մեր կենաց-մահու կռուի առաջնայնութիւնը...

Այս ամէնն, ի հարկէ, մեր կեանքն է, բայց հայերս երբեք սովորութիւն չենք ունեցել այս ամէնով զբաղուել մշակոյթի հաշուին։

Արդարեւ, մենք պիտի շուտափոյթ ունենանք մեր բանակն ու մեր զէնքը, բայց եւ մեր գրչի զօրութեամբ պիտի շարունակենք պաշտպանել ու վեհացնել մեզ, մեր վրէժինը շարունակի պիտի պատկերել մեր տաք ու հզօր ոգին, եւ մեր բարդ հոգու արգասիք մեր անգուգական երգը պիտի վերստին ու փառահեղ թեւածի՝ ի հաստատումն մեր ոգու վեհութեան ու անկրկնելիութեան։

Պատճառները թուարկեցինք, մոռանալով հաւանաբար գլխաւորը. խորհրդային մշակոյթից ազատ մշակոյթի անցման ճանապարհին երեւի բնական ու անհրաժեշտ է այսօրինակ դադարը։ Ինչեւէ, հիմա զգում ենք, որ այս դադարը այլեւս չի կարող երկար տեւել։

Ազգային զարթօնքի այս հինգ տարիներին մեր ժողովուրդը չափից աւելի անբնական կեանքով ապրեց եւ մի տեսակ ձտարացաւ իր հանապազօրեայ արհեստին ու աշխատանքին։ Վաղուց արդէն ժամանակն է, որ ամէն մէկս վերադառնայ իր գործին եւ դրանով օգտակար լինի Արցախի Դատին։ Ժամանակն է, որ կանայք վերադառնան իրենց հոգսերին ու գործերին, իսկ տղամարդիկ՝ իրենց։ Եւ մշակոյթի մեր պատուարժան ու քանքարաւոր այրերը նմանապէս հարկ է, որ վերյիշեն ու վերահաստատուին ի վերուստ միայն իրենց տրուած շնորհներն ու առաքելութիւնը։

Դժուարին ու բարդ ժամանակներ են, եւ մեր պետութիւնից ու կառավարութիւնից մեծ ջանքեր են պահանջւում, որպէսզի ամէն մէկը հնարաւորութիւն ունենայ վերստին զբաղուել իր գործով։

digitised by A.R.A.R.@

նորավէպը, զոր 1893ին Գրիգոր Զօհրապ հրատարակած էր «Մասիս»ի էջերուն, գաւառացի գրագէտին երախայրիքին մէջ նկատելէ ետք «ապագայ տաղանդաւոր գրագէտին»։

Ապա, Հայաստանի Հանրապետութեան երկրորդ տարեդարձին նուիրուած «Հայրենիք»ի բացառիկէն (1920, թիւ 3) «Վարուժան» կը ներկայացնէ Աւետիս Ահարոնեանի «Փա՛ռք յաղթուածներին» հանրածանօթ արձակ էջը։ Գէորգ Դեւրիկեանի «Որ չընդհատուի երգը» անուն ակնարկը, համեմուած՝ գրական երանգներով եւ տաք ու վարակիչ շունչով, կը ներգրաւէ ընթերցողը՝ Սիմոն Աշիքգէօզեանի անգուգական կերպարին ընդմէջէն վեր բարձրացնելու առհմին հերոսական պատմութիւնը։ Այսպէս, անցեալը կը դառնայ ոգեշնչող թթխմոր Մարտունաշէնի ու Գեղաշէնի

Ազատ գների պայմաններում հետզհետէ անհնար է դառնում գրողի գրքի հրապարակումը, նկարիչն արդէն ի զօրու չէ ներկայ գներով որակեալ ներկեր հայթայթել, իսկ երգիչն ու երգչուհին շարունակ մեծահարուստ հովանաւոր են փնտռում՝ իրենց ողջ ժամանակն այդ անվերջ փնտռտուքի մէջ մսխելով...։ Եթէ չենք ուզում մեծապատիւ մուրացկաններով լցնել մեր հայրենիքը, պիտի բոլորով միասին այս ամէնի մասին մտածենք։ Վաղն ամէն ինչ որոշելու ու վճռելու է պետութիւնը։ Իր խօսքը կ'ասի նաեւ հայ մեծահարուստը, եթէ նա իր վաստակած դրամը առաքելական գիտակցութեամբ նուիրաբերի մշակոյթի գործին։ Իսկ մինչ այդ մենք միասնական ջանքերով ինքներս պիտի ստեղծենք մշակութանպաստ մթնոլորտ, որպէսզի թ'ւ մեր պետութիւնը, թ'ւ մեր մեծահարուստ բարեգործն անսխալ կողմնորոշուելու հնարաւորութիւն ունենան։

Ճշմարտութեան դէմ չմեղանչելով խոստովանենք, որ վերջին եօթ տասնամեակների մեր մշակոյթը խիզախաբար գոյատեւեց եւ, կարելի է ասել, շարունակուեց։ Մշակոյթի մեր գործիչներից շատ-շատերը, կուլ չգնալով սոցռեալիզմի «սկզբունքներին» ու «չափանիշներին», իրենց պզտիկ հնարաւորութիւնների սահմաններում ճիգեր գործադրեցին, որպէսզի ի սպառ չգերեզմանուի ազգային մշակոյթը։ Մեզանում գտնուեցին խիզախ հրատարակիչներ ու խմբագիրներ, որոնց շնորհիւ այսօր ստիպուած չենք լինելու կլոր ու դատարկ զրոյից սկսել։ Փառք Աստծոյ, որ մշակոյթի ասպարէզում մեզանում գտնուեցին մարդիկ, ովքեր ոչ մի գնով չկամեցան դառնալ կամակատար ստրուկներ։

Ինչեւէ, որոշ բան արուած է, եւ ահագին բան դեռ կայ անելու։ Մեր մշակոյթի շատ ու շատ արժէքներ դեռ նոր պիտի բացուեն մեզ համար եւ, համոզուած ենք, նորանոր փայլուն էջեր պիտի ձօնուեն ազատագրական պայքարի մեր նոր օրերին։ Պիտի ջանանք նորէն վերահաստատուել մինչեւ այժմ զանազան պատճառներով սխալ իմաստաւորուածը, եւ նմանապէս պիտի ջանանք սպառիչ ու ճշմարիտ գնահատական տալ հին ու նոր մեր արժէքներին։

Ահա այս առաքելութիւնն է, որ նորաստեղծ «Վարուժան»ը պիտի համարձակուի վերագրել իրեն, բոլորիս ստեղծագործ ջանքերի միասնութեան յոյսով ու հաւատով տոգորուած։

Մենք արարող ազգ ենք, եւ երկարատեւ անձրեւներից յետոյ անկախութեան եւ ինքնուրոյնութեան եռագոյնը մեր մշակոյթի արեգակի ներքոյ պիտի էլ աւելի երփներանգ փողփողայ ու ծիածանուի։։

«ՎԱՐՈՒԺԱՆ»

digitised by A.R.A.R.@

բարձունքներուն ծաւալած ազատագրական պայքարին, «իրաւամբ դասնակցական կոչուած ազատասիրական երգերը»՝ զսպանակ Արցախեան գոյապայքարէն ծնած յեղափոխաշունչ նոր երգերուն, աւանդն ու հաւատարմութիւնը կը շարունակուի եւ պայքարի ու նահատակութեան դրօշը կը փոխանցուի սերունդէ սերունդ։

«Իշխանութիւն եւ հպատակ ժողովուրդ» ծաւալուն գրութիւնը կը պատկանի Խրիմեան Հայրիկի գրիչին։ Ժողովուրդ-իշխանութիւն փոխադարձ պարտաւորութիւններն ու իրաւունքները յստակացնող Հայրիկին այս գրութիւնը իր «ազնիւ ոգեակ»-ին հետ կը խօսի առաջին դէմքով եւ յորդորներու տրամաբանութեամբ, ինչ-որ դայն կ'օժտէ յաւելեալ ջերմութեամբ եւ անմիջական շունչով։

Կը յաջորդէ Գուրգէն Գասպարեանի «Հերոսների տոհմաբանութիւնը Բաֆֆու «Սամուէլ» պատմավէպում» ուսումնասիրութիւնը, որ մասնագիտական մօտեցումով եւ ամենայն բծախնդրութեամբ քննութեան նիւթ կը դարձնէ Բաֆֆիի օգտագործած պատմական աղբիւրներն ու այն սկզբունքները, որոնցմով առաջնորդուած է մեծանուն վիպագիրը՝ իր նշեալ վէպի կառուցման ընթացքին։

Վիգէն Ղազարեանի «Թուերի խորհրդաբանութիւնը խորանների մեկնութիւններում», Համլէտ Պետրոսեանի «Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչը Նիւթեղէն եւ ոգեղէն» եւ Գուրգէն Գասպարեանի կողմէ արեւելահայերէնի վերածուած Մովսէս Խորենացիի «Սուրբ Հռիփսիմէի եւ նրա վկայակիցների յիշատակին եւ նրան տօնին նուիրուած ներբողեան հրաշազարդ յօրինուածներով» խորագրեալ էջերը կը ստեղծեն ներդաշնակ միութիւն մը։ Հայ դասական գրաբար գրականութեան եւ ճարտարապետութեան հետ առընչուող նիւթերու նուիրուած իրերայաջորդ երկու ուսումնասիրութիւններն ու թարգմանութիւնը կը հետապնդեն յստակ նպատակ,— Ոսկեդարի եւ մօտիկ անցեալի մեր գանձերն ու գոհարները ծանօթացնել ծրագրուած կերպով, որպէսզի անոնք դառնան սեփականութիւնը նաեւ նորահաս սերունդներուն։

Անոգաստ պայմաններու մէջ շատ բան զոհաբերած, բայց հակառակ կամաւոր կաշկանդումներուն գեղանկարչական եւ քանդակագործական անվիճելի վաստակ նուաճած Երուանդ Քոչարի ինքնուրոյն արուեստը բարձր գնահատող «Երուանդ Քոչար» խորագրեալ յօդուածէն ետք, «Վարուժան»ի վերջին էջով կը հրամցուին Յակոբ Օշականի «Հրաշքը» խորագրեալ արձակ խոհը եւ Յովհաննէս Թումանեանէն հինգ անտիպ մանրապատումներ։

Մեսրոպեան ուղղագրութեամբ հրատարակուած եւ Պոլսոյ «Ազատամարտ»ի ու «Մեհեան»ի Հայաստանեայց Գրականութեան ոգիին ու աւանդներուն հարազատ ժառանգորդը հանդիսացող Երեւանի «Ազատամարտ»ի «Վարուժան» անուն յաւելուածը, իր 16րդ եւ վերջին էջով, կը ներկայացնէ դիմանկարը մերօրեայ նահատակ Սիմոն Ազիզգէօզեանի։ Հայրենի գեղանկարիչ Սէյրան Խաթլամաճեանի «Սիմոն Ազիզգէօզեան» գծանկարով փակուող «Վարուժան»ի առաջին թիւը հայ մամուլի անգաստանէն ներս մուտք կը գործէ հաստատ քայլերով եւ յստակ դիմագիծով։ Կը հաւատանք, որ առաջին համարով կայացած այս գեղեցիկ հանդիպումը պիտի վերածուի մնայուն ու զարգացող բարեկամութեան՝ իւրաքանչիւր թիւի հետ զարգացող բարեկամութիւնը վերածելով գրական-մշակութային յարաճուն վայելքի։

digitised by A.R.A.R.@

...ԵՒ "ՄԻՏՔ" ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՅԱՒԵԼՈՒԱԾԸ

«Վարուժան»ի լոյս ընծայումէն երկու ամիս ետք, «Ազատամարտ»ի խմբագրութիւնը ընթերցողներուն հրամցուց «Միտք» գիտատեսական յաւելուածը, որուն առաջին թիւը լոյս տեսաւ Օգոստոսի սկիզբը:

32 փոքրածաւալ էջերէ բաղկացած «Միտք»ի կողքին վրայ տեղ գտած է Միքայէլ Վարանդեանի մէկ նկարը, իսկ անոր կողքին՝ զարգացապաշտ մտաւորականութեան անհրաժեշտութիւնը ընդգծող մտածում մը։ Կը յաջորդէ «Խօսք ընթեցողին» խմբագրականը, որ ազատ խօսքի բեմ հանդիսացող Հ.Ց.Դ. հարիւրամեայ մամուլի աւանդները վեր առնելէ ետք, կը պարզէ ընթերցողներուն, որ այս յաւելուածը կը ակի հրատարակուիլ մէկ կողմէ շաբաթաթերթին էջերուն հանդէս գալ ցանկացող մտաւորականներու թիւին բարձրացումը նկատի առած եւ, միւս կողմէ՝ 70 տարի շարունակ խեղդմիւռուած մեր պատմութեան արբագրուած բովանդակութիւնը հայրենի ժողովուրդին ծանօթացնելու, անցեալին ստեղծուած եւ ժամանակի քննութեան դիմացած թանկարժէք աշխատասիրութիւնները հրապարակելու, ինչպէս նաեւ՝ աշխարհի տարածքին տեղի ունեցող շրջադարձային հարցերը օրը օրին պարզաբանելու եւ գիտական քննարկումի ենթարկելու նպատակով։ Ապա խմբագրականը կ'անդրադառնայ հայ մտաւորականութեան պարտադրուած նիւթական եւ բարոյական դժուարին կացութեան, թուղթի տագնապին, օր ըստ օրէ թանձրացող ապամշակութային մթնոլորտին, կատարելու համար հիմնական նշանակութիւն ունեցող սա հաստատումը. «Ստեղծագործական աշխատանքից օտարուած մտաւորականութեան զէթ մի մասին օգնելու, մարդկանց ներուժ կարողականութիւնը ի յայտ բերելու եւ այս եղանակով ազգային մնայուն արժէքներ գոյացնելու նրանց ձգտումներին սատար լինելու գիտակցութեամբ է Հ.Ց.Դաշնակցութիւնը թղթի եւ տպագրութեան այս սուղ պայմաններում նախաձեռնում վերոնշեալ գործը», որուն էջերը բաց պիտի մնան այն բոլոր ուսումնասիրութիւններուն ու գրութիւններուն առջեւ, որոնք կ'ունենան գիտական պատշաճ մակարդակ։



«Միտք»ի լոյս ընծայման հրամայականները եզրափակելով, խմբագրականը կ'աւելցնէ, որ սոյն յաւելուածը ոչ մէկ ճիգ պիտի խնայէ, որպէսզի մեր ժողովուրդի երկու հատուածներուն կամրջումը հաստատուի ամուր ենթահողի վրայ։ Հետեւաբար՝ «Հրապարակումներ կը լինեն արտերկրի հայութեան, տարբեր գաղթօճախների վերաբերեալ։ Տեղ կը գտնեն սփիւռքահայ գիտնականների եւ մշակութային գործիչների ստեղծագործութիւնները»։

«Արեւմտահայ ինքնապաշտպանական կռիւները 1915 թուականին» *խորագրեալ յօդուածով, Ռուբէն Սահակեան նկարագրական եղանակով կը*

digitised by A.R.A.R.@

ներկայացնէ հայ ժողովուրդի արժանապատուութիւնը բարձր պահած հերոսամարտերէն ոմանք, ինչպէս՝ Ներքին Թիմարի, Հայոց Ձորի Անկշտան գիւղի, Վարագայ վանքի, Եատիրի, Գաւաշի, Արտամետի եւ Հայոց Ձորի ու Վանայ լիճի շրջանի հայկական այլ գիւղերու ինքնապաշտպանական մարտերը։

Կը յաջորդէ «Հայաստանի Հանրապետութիւն (1918-1920) - Խորհրդային Հայաստան» խորագիրը կրող Սերհակ Ամիրեանի յօդուածը, որ կը փորձէ պատմական փաստերով համակարգել իրարու հիմնովին հակոտնեայ քաղաքական այն առընչութիւններն ու կապակցութիւնները, որոնք Հայաստանի Հանրապետութիւնը կը կապեն Խորհրդային փարչակարգին։ Այս յօդուածէն անմիջապէս ետք, «Խմբագրութեան կողմից» խորագրեալ բացատրականով մը «Միտք»-ը կ'ընդգծէ. «Հարկ է նշել, որ մենք համամիտ չենք բնաւ հեղինակի մի շարք սկզբունքային հարցադրումներին եւ յատկապէս դրանց լուծման փորձերի հետ»։ Եւ սեղմ ապացոյցներու ձեւով կ'ամփոփէ հեղինակին թիւրիմացութիւնները, վիճելի եզրակացութիւնները եւ այն բոլոր սուեալները, որոնց վրայ հիմնուած է Ս. Ամիրեանի թէզական «մտայարդարանք»։

Սամուէլ Քրմոյեանի «Հայոց յաւերժական զաւակը» յօդուածը, սեղմ գիծերու մէջ, կը ներկայացնէ ամբողջական դիմանկարը Նախաշիձէի ահաբեկիչ անպարկեշտ Դրոյին՝ իբրեւ մէկ յուսապայծառ էջը Հ.Յ.Դաշնակցութեան ահաբեկչական վաստակին։

1960ական թուականներու առաջին տարիներուն Խմբկին Ի. Հայաստանի տարածքին ձեռք ձեռք անցած եւ ապա Ս. Վրացեանի նախաձեռնութեամբ «Մի թուղթ» վերնագրով հրատարակուած Նիկոլ Կարապետեանի «Բաց Ճամակ Աշոտ Յովհաննիսեանին» ծանօթ գրութիւնը վերահրատարակելով՝ «Միտք» կը յայտնէ այն մտածումը, որ Ն. Կարապետեանի «այսօր իսկ ժամանակաշուէջ» «Բաց Ճամակ»ը «շատերին այն կարող է ձերբազատել մոլորութիւններից» եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը ներկայացնել իր ողջ էութեամբ՝ իբրեւ հայ ազգային շահերու համար պայքարող զօրաւոր ուժ։

«Ժամանակագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» շարքի առաջին էջին կը յաջորդէ «Միտք»-ի առաջին համարին եզրափակիչ յօդուածը՝ Սուրէն Սահակեանի «Դաշնակցական "տեռորիստների" գործի պատմութիւնը» խիստ շահեկան գրութիւնը, որ փաստերու սուեալներով կը ներկայացնէ Զեկայի ծրագրումով եւ հետապնդումով գործագրուած Դաշնակցութեան հաշուեյարդարն ու այն դաւը, որ տուեց մինչեւ Ստալինի մահը եւ հայ ժողովուրդին արժեց տասնեակ հազարաւոր անմեղ նահատակներ, աքսորականներ ու բանտարկեալներ։

Ցաւակ դիմագիծ եւ նկարագիր ունեցող «Միտք»-ի առաջին թիւը կը փակուի մերօրեայ անձնուրաց նահատակներէն՝ Վարդան Ստեփանեանի (Դուշման) կեանքն ու գործը ներկայացնող կենսագրական սուեալներով։

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ՄԻՋՆԱՐԱՐ - 5

(արձակ)

ԹԱՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

“Ներբող Աստուածածնին”

(ուսումնասիրություն)

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ (գոյգ թիւ)	5·000 Լ·Ո
Տարեկան բաժնեգին	30·000 Լ·Ո

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (գոյգ թիւ)	1·000 Ս·Ո

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40 Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كازنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ԱՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝

Centre Culturel SHAGHZOYAN

Bourdj Hammoud — Liban

digitised by A.R.A.R.@